Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Ժուլ-Վեռն
[illegible]

II

478

MP
115775

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԿՂԶԻ

ԸՆԿԵՑԻԿ ՄԱՐԴԸ

ՀԵՂԻՆԱԿ
ԺԻՒԼ ՎԷՐՆ

ԹԱՐԳՄԱՆԵՑ
Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ԶՄԻՒՌՆԻԱ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՂԲԱՐՑ ՏԷՏԷԵԱՆ
1877

LIBRARY OF BOSTON

478-կէ

ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՌ-Արմ ՍՍՌ
Ա. Մ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

343-2013

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԿՂԶԻ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԸՆԿԵՑԻԿ ՄԱՐԴԸ

ԳԼՈՒԽ Ա.

Կապարէ հատիկին վրայ — Մակոյկի մը շինութիւնը — Որսորդութիւններ — Կաուրիին կատարը — Մարդու ներկայութիւնը յայտնող բան մը չկայ — Նաւի ու Հարպերթի մէկ ձկնորսութիւնը — Դարձած կրիայ — Անյայտ եղած կրիայ — Կիւրոս Սմիթին բացատրութիւնը.

Օր օրի վրայ եօթն ամիս կար որ օդապարիկներն Լինքոլն կղզւոյն մէջ ընկեր էին։ Այն ատենէն 'ի վեր՝ մարդկային էակ մը չէր երևցած իրենց, թէև աղէկ անդլին պտըտեր զններ էին։ Կղզւոյն երեսը մարդու ներկայութիւնը յայտնող բնաւ մուխ մը չէին տեսած. բնաւ, ո՛չ հինուց, այլ նորերս շինուած ձեռակերտ մը չկար որ ցոյց տար թէ այն տեղէն մարդ անցեր էր։ Ոչ միայն կ'երևէր թէ կղզին միշտ անբնակ մնացեր էր, այլ հարկ էր կարծել որ երբէք բնակելի չէր կրնար լինիլ։ Իսկ հիմակ բոլոր այս ենթադրութիւններն կապարէ պարզ հատիկի մ'առջև 'ի գերև կ'ելնէին, հատիկ մ'որ անմեղ կրծող կենդանիի մը վրայ գտնուեր էր։

Եւ արդարեւ՝ այդ կապարը հրացանէ մ'ելեր էր, և այնպիսի հրացան մ'ուրիշ ինչ արարած կրնայ գործածել եթէ ոչ մարդս։

Երբոր Բէնքրոֆ կապարէ գնդիկը սեղանին վրայ դրաւ, իր ընկերները խոր զարմացումով անոր երեսը նայեցան։ Այս դիպուածին բոլոր հետեւութիւնները յանկարծ իրենց միտքը գրաւեցին, դիպուած՝ որ թէեւ երեւոյթով աննշան, իրօք խիստ մեծ կարեւորութիւն ունէր։ Եթէ յանկարծ գերբնական էակ մ'երեւէր այնքան սաստիկ չպիտի այլայլէին որքան այլայլեցան այս դիպուածին վրայ։

Կիւրոս Սմիթ ամենէ առաջ այս զարմանալի ու անակնկալ իրողութեան թելադրած ենթադրութիւնները բանաձեւեց խելքին։ Կապարէ հատիկն առաւ, այս այն կողմը դարձուց, բթամատին ցցամատին մէջ շօշափեց զայն ու յետոյ.

«Կարող ես հաստատել, հարցուց Բէնքրոֆի, թէ այս կապարէ հատիկէն սպաննուած պէքարին հազիւ թէ երեք ամսու էր։

— Կարող եմ, Պարոն Կիւրոս, պատասխանեց Բէնքրոֆ։ Դեռ ես իր մօրը կաթը կ'ուտէր երբոր փոսին մէջ գտայ զայն։

— Լաւ ուրեմն, առանց չափազանցելու, ասով կ'հաստատուի որ շատ շատ երեք ամիս 'ի վեր՝ Լինքօլն կղզւոյն մէջ հրացան մը պարպուեր է։

— Եւ թէ կապարէ հատիկէ մը, յարեց Գեդէոն Սփիլէթ, զարնուեր է, թէեւ չէ թէ կարեւոր կերպով, այս պզտիկ կենդանին։

— Այդ անտարակուսելի է, վրայ բերաւ Կիւրոս Սմիթ, և այս դիպուածէն առած հետեւութիւնները պէտք է հանել. այս կամ մեր գալէն առաջ՝ կղզին մարդաբնակ էր, կամ շատ շատ երեք ամսէ 'ի վեր մարդիկ այս տեղ եկած են։ Այս մարդիկ կամովի՞ն թէ ակամայ եկած են, ցամաքն ելնելով կամ նաւաբեկութեան հանդիպելով։ Այս կէտը վերջէն պիտի պարզուի։ Իսկ թէ ինչ ազգէ են այս բնակիները, եւրոպացի՞ թէ ոչ մալէյացի, մեր ցեղին թշնամի՞ն թէ բարեկամը, անկարելի է գուշակել, բայց թէ արդեօք տակաւին կղզին կ'բնակին կամ թէ

հեռացան, դարձեալ յայտնի չէ մեզի։ Սակայն այս խնդիրները յատկապէս այնքան կարեւոր են մեզի համար, որ դիւրին չէ մեզ անստուգութեան մէջ մնալ աւելի երկար ժամանակ։

— Ո՛չ, հարիւր անգամ ոչ, հազար անգամ ոչ, գոչեց նաւորդը սեղանէն ելնելով։ Լինքօլն կղզին մեզմէ զատ մարդ չկայ։ Տէր վկայ, կղզին մեծ չէ, և եթէ մարդաբնակ լինէր, անշուշտ բնակիչներէն մէկ քանին պիտի տեսնէինք։

— Արդարեւ, ասոր հակառակը զարմանալի պիտի լինէր, ըսաւ Հարպէրդ։

— Սակայն աւելի զարմանալի պիտի լինէր, կարծեմ, գիտել տուաւ թղթակիցը, եթէ այս պէքարին կապարէ հատիկով մը ծնած լինէր։

— Միայն թէ, ըսաւ ծանրապէս Նապ, Բէնքրոֆ ունեցած չլինի...

— Կը տեսնես այս, Նապ, պատասխանեց Բէնքրոֆ։ Ինչ. միթէ հինգ վեց ամսէ 'ի վեր ծնօտիս մէջ կապարէ հատիկ մը ունեցած պիտի լինէի առանց գիտնալու։ Բայց ո՞ւր պահուած պիտի լինէր, յարեց նաւորդը, բերանը բանալով այնպէս որ երեսուն երկու հատ փառաւոր ակռաներն երեւան հանեց։ Լաւ նայէ, Նապ, եթէ այս ակռաներուս շարքին մէջ մէկ հատիկ գոգաւոր ակռայ գտնես, կ'հաւանիմ որ վեց հատը մէկէն խլես հանես։

— Նապին ենթադրութիւնն անընդունելի է, պատասխանեց Կիւրոս Սմիթ, որ, թէեւ գլուխը նոյն պահուն ծանր մտմտուքով պաշարուած էր, չկրցաւ խնդուքը բռնել։ Ստոյգ է որ կղզւոյն մէջ շատ շատ երեք ամիս առաջ հրացան մը պարպուեր է։ Բայց տրամադիր եմ հաւատալու որ այս եզերքն ելնող արարածներն շատ քիչ ատենէ վեր եկած պիտի լինին կամ միայն անցած են. վասն զի՝ եթէ այն ատենն որ Ֆրանքլէնի լեռը կը քննէինք, մարդ գտնուած լինէր, պիտի տեսնէինք կամ պիտի տեսնուէինք։ Ուրեմն հաւանական է որ, միայն քանի մը շաբաթէ 'ի վեր, ալեկոծութենէ քանի մը նաւաբեկներ ինկած պիտի

լինին այս եղերքը։ Ինչ որ է, պէտք է որ այս մասին ստոյգ տեղեկութիւն ունենանք։

— Ես կարծեմ թէ պարտաւոր ենք խոհեմութեամբ վարուիլ, ըսաւ թղթակիցը։

— Իմ կարծիքս ալ այդ է, պատասխանեց Կիւրոս Սմիթ, վասն զի կը վախնամ որ մալէյացի ծովահէններ այս կղզին եղած չլինին։

— Պարոն Կիւրոս, հարցուց Նաւաստը, միթէ աւելի ընտրելի չէ՞, խուզարկութիւն ընելէ առաջ, մակոյկ մը շինել որով կարող լինինք թէ գետն 'ի վեր նաւարկել, թէ 'ի հարկին կղզւոյն եղերքը շրջիլ։ Պէտք չէ որ յանկարծակի բռնուինք։

— Գաղափարդ լաւ է, Բէնքրօֆ, պատասխանեց չափագէտը, բայց չենք կարող սպասել։ Արդ՝ գոնէ ամիս մը պէտք է մակոյկ մը շինելու համար...։

— Այո, լաւ մակոյկ մը, պատասխանեց Նաւաստը. սակայն բաց ծովը նաւարկելու համար մակոյկ մը պէտք չէ մեզի, և շատ շատ հինգ օրուան մէջ, խօսք կ'տամ ձեզի մակոյկ մը շինել Մէրսիին վրայ նաւարկելու համար։

— Հինգ օրուան մէջ, գոչեց Նապ, նաւակ մը պիտի շինես։

— Այո, Նապ, հնդկային ձևով նաւակ մը։

— Փայտէ՞, հարցուց խափշիկն այնպիսի դէմքով մ'որ չհաւատալ կ'յայտնէր։

— Փայտէ, պատասխանեց Բէնքրօֆ, կամ աւելի լաւ ըսեմ կեղևէ։ Նորէն կ'ըսեմ, Պարոն Կիւրոս, որ հինգ օրուան մէջ գործը կրնայ գլուխ ելնել։

— Հինգ օրուան մէջ, լաւ, պատասխանեց չափագէտը։

— Բայց մինչև այն ատեն պէտք է որ զգուշութեամբ պահպանութիւն ընենք, ըսաւ Հարպէրդ։

— Մեծ զգուշութեամբ, բարեկամներ, պատասխանեց Կիւրոս Սմիթ, և ձեզի պիտի աղաչեմ որ որսորդութեան համար Քարեայ-Պալատէն անդին արշաւանք չընէք։»

Ճաշը Բէնքրօֆի յուսացածին չափ զուարթ չեղաւ։

Այսպէս ուրեմն կղզին՝ մեր գաղթականներէն զատ՝ ուրիշներ ալ կ'բնակէին կամ բնակեր էին։ Կապարէ հատիկին գտնուածէն 'ի վեր՝ այս անժխտելի իրողութիւն մ'էր, և այսպիսի յայտնութիւն մը բնականապէս գաղթականներուն սաստիկ մտատանջութիւն պիտի պատճառէր։

Կիւրոս Սմիթ ու Գետէոն Սբիլէթ՝ քնանալէն առաջ, այս բաներու վրայ երկարօրէն խօսեցան։ Իրարու հարցուցին թէ արդեօք, դիպուածով, այս պատահմունքը յարաբերութիւն մը չունէ՞ր չափագէտին անբացատրելի ազատումին և ուրիշ տարօրինակ պարագաներու հետ, որոց քանի մ'անգամ հանդիպեր էին։ Սակայն Կիւրոս Սմիթ թեր ու դէմ վիճաբանելէն ետև այս խնդրոյն վրայ, վերջապէս ըսաւ.

«Մէկ խօսքով՝ իմ կարծիքս կ'ուզե՞ս իմանալ, սիրելիդ իմ Սբիլէթ։

— Այո, Պարոն Կիւրոս։

— Ահա ըսեմ. եթէ կղզւոյն ամեն կողմը խուզարկենք անգամ, դարձեալ բան մը չպիտի գտնենք։»

Հետևեալ օրն անմիջապէս՝ գործի սկսաւ Բէնքրօֆ։ Իր միտքը շրջանակով և տախտակով մակոյկ մը շինել չէր, այլ պարզապէս ծփուն և յատակը տափակ ակատ մ'որով Մէրսիի վրայ նաւարկելը դիւրին լինէր, մանաւանդ աղբերակներուն մօտերը, ուր ջուրը շատ խորունկ չէր։ Ծառի կեղևներ՝ իրարու կցուած, բաւական պիտի լինէին այդ թեթև նաւակը յօրինելու, և եթէ բնական արգելքներ պատահելով՝ հարկ լինէր զայն կրել, այն ատեն ոչ ծանր ոչ փարթամ պիտի երևէր։ Բէնքրօֆ՝ կեղևէ նաւուն շերտերը բուլթ գամերով կ'յուսար կցել և այսպէս իրարու հետ սղմելով բոլորովին ջրէ ազատ պահել։

Ուստի պէտք էր գտնել ծառեր որոց ճկուն ու ամուր կեղևն այս գործին յարմարի։ Արդ՝ վերջին ուրականէն մի շատ եղևիններ տապալեր էին, որ այս շինութեան բոլորովին կրնային ծառայել։ Այս եղևիններէն մէկ քանին գետնին փռուած էին և բաւական էր միայն անոնց կեղևը հանել. բայց այդ էր ամենէ դժուա-

րին գործը, քանի որ գաղթականները ընտիր գործիք չունէին ։
Ի վերջէ՝ յաջողեցան ։

Երբոր նաւորդը, չափագէտին օգնութեամբը, այսպէս կ'պա-
րապէր, ժամ մը չկորսնելով, Գետէոն Սբիլէթ և Հարպէրթ
անգործ չէին նստած ։ Գաղթականներուն մառանկարարներն եղեր
էին ։ Թղթակիցն անդադար կ'զմայլէր պատանեկին վրայ, որ ա-
ղեղ ու սուրն գործածելու մասին նշանաւոր ճարտարութիւն ստա-
ցեր էր ։

Նոյնպէս Հարպէրթ մեծ համարձակութիւն կ'ցուցնէր և սառ-
նութիւն, զոր կարելի էր իրաւամբ անուանել՝ «արիութեան բա-
նադատումը ։»

Երկու որսորդ ընկերներ՝ կիւրոս Սմիթին խորհուրդը պահե-
լով Քարեայ-Պալատին շուրջը՝ երկու մղոնի չափ հեռաւորու-
թենէ անդին չէին անցներ. բայց անտառին առաջին շարքը բա-
ւական որս կ'պարունակէր, ինչպէս կաքաւ, աղաւնի, ղենչէ
և այլն, և եթէ գարանները շատ որս չէին բռներ ցուրտը դադ-
րելէն 'ի վեր, գէթ Ճագարնոցն իր սովորական հասոյթը կ'տար,
որով կարելի էր Լինքոլն կղզւոյն բոլոր գաղթականները կերա-
կրել ։

Շատ անգամ՝ այս որսորդութեանց ատեն Հարպէրթ կ'խօսա-
կցէր Գետէոն Սբիլէթի հետ կապարէ հատիկին գիպուածին և
չափագիտին անկից հանած հետևութեանց վրայ, և օր մը —
հոկտեմբեր ամսուն 26ին էր — անոր ըսաւ.

«Բայց, Պարոն Սբիլէթ, միթէ կարգէ դուրս բան մը չըլլա՞ր
քեզի որ եթէ այս կղզւոյն վրայ նաւաբեկներ ըլլան, դեռ նա
Քարեայ-Պալատին կողմերն երեցած չըլլին ։

— Շատ զարմանալի է, եթէ դեռ այն տեղն են, պատաս-
խանեց Թղթակիցը. բայց բնաւ զարմանալի չէ, եթէ անդ չեն ։

— Այսպէս, կ'կարծե՞ս թէ այն մարդիկ արդէն կղզիէն հե-
ռացած ըլլին, վրայ բերաւ Հարպէրթ ։

— Շատ հաւանական է, պատանի. վասն զի եթէ աւելի եր-
կար ատեն մնային, և մանաւանդ՝ եթէ դեռ անդ ըլլէին, ան-
շուշտ դիպուածով մ'իրենց ներկայութիւնը պիտի յայտնուէր ։

— Բայց եթէ կարող եղան մեկնելու, դիտել տուաւ պատա-
նին, միթէ ասոնք նաւաբեկեալներ չէի՞ն ։

— Ո՛չ, Հարպէրթ, կամ գէթ պիտի ըսեմ թէ ժամանակա-
ւոր նաւաբեկներ էին ։ Շատ կարելի է, արդարև, որ սաստիկ
հով մը զիրենք այս կղզին քշած ըլլի, առանց իրենց նաւուն վնաս
հասցնելու, և թէ երբ հովը դադրեցաւ, վերստին ճամբայ ե-
լած ըլլին ։

— Բան մը կայ, պէտք է խոստովանիլ, ըսաւ Հարպէրթ, այն
ինքն Պ. Սմիթ աւելի կ'վախնայ քան կ'փափաքի որ մեր կղզին
մարդիկ չգտնուին ։

— Արդարև, պատասխանեց Թղթակիցը, կարծէ թէ միայն
Մալէյացիք այս կղզին կրնան գալ, և այս պարոններն անշահ ա-
ւազակներ են որոնց պէտք է խոյս տալ ։

— Անկարելի չէ, Պարոն Սբիլէթ, վրայ բերաւ Հարպէրթ,
որ օրին մէկն անոնց արշաւանքին հետքը չգտնենք, և թերևս այս
ըսածս քիչ ատենէն պատահի ։

— Հակառակը չեմ խօսիր, տղաս ։ Ամայի ձգուած իջևան մը,
մարած կրակ մը, կրնան մեզ անոնց հետքը ցոյց տալ, և այս
բանս պիտի հետազօտենք մեր յաջորդ երկրագննութեան ժամա-
նակ ։»

Այն օրն որ երկու որսորդներն այսպէս կ'խօսակցէին, Մեր-
սիի մօտ գտնուող անտառին մէկ կողմը կ'գտնուէին, որ շատ
նշանաւոր էր սքանչելի ծառերովը ։ Ուրիշ ծառերու մէջ գրե-
թէ երկու հարիւր ոտք բարձր մէկ քանի փառաւոր կոնաւորներ
ծառեր կը տեսնուէին, որոց Նոր-Զելանտայի բնիկներն կորի
(kauri) անունը կ'տան ։

«Միտքս բան մը կ'գայ, Պարոն Սբիլէթ, ըսաւ Հարպէրթ ։
Եթէ այս ծառերուն մէկուն կատարն ելնէի, կարելի է բոլոր
կղզին բաւական ընդարձակ շրջանի մը մէջ պիտի տեսնէի ։

— Միտքդ լաւ է, պատասխանեց Թղթակիցը. բայց պիտի կա-
րենա՞ս այս հսկաներուն մինչև կատարը ելնել ։

— Պիտի փորձեմ, պատասխանեց Հարպէրթ ։

Պատանին, թեթեւաշարժ ու ճարպիկ, առաջին ճիւղերուն վըրայ ելաւ, որոց դիրքը կ'դիւրացնէր այս վերելքն, և քանի մը վայրկենի մէջ՝ ծառին կատարը հասած էր, որ անտառին բոլորակի ոստերուն յօրինած այս ահագին դալարաւէտ դաշտէն վեր կ'ցցուէր։

Այս բարձր կէտէն՝ աչքը կրնար տարածուիլ կղզւոյն բոլոր հարաւային մասին վրայ, Ճիրանի-Գլուխէն՝ հարաւ-արեւելեան կողմը, մինչև Սողունի հրուանդանն, հարաւ-արեւմտեան կողմը։

Հիւսիս-արեւմտեան կողմը Ֆրանքլէն լեռը կ'կանգնէր, որ հորիզոնի մէկ քառորդը լիովին կ'ծածկէր։

Բայց Հարպէրդ՝ իր դիտարանին բարձունքէն, կղզւոյն այս բոլոր անծանօթ մասը կրնար դիտել, որ կասկածելի օտարականներու՝ ապաստարան տուեր էր կամ կ'տար։

Պատանին յետին ծայր ուշադրութեամբ դիտեց։ Նախ ծովու վրայ աչքը բան մը չէր տեսներ։ Ոչ առագաստ մը, ոչ հորիզոնի, և ոչ կղզւոյն ափերուն վրայ։ Սակայն՝ թանձր ծառեր ծովեզրը գոցելուն՝ կարելի էր որ նաւ մը, մանաւանդ կայմաբեկ նաւ մը՝ ցամաքին մօտ էր, և, հետեւաբար՝ Հարպէրդին անտեսանելի կ'մնար։

Դարձեալ բան մը չկար՝ Խոր-Արեւմուտքին անտառներուն մէջ։ Անտառն անթափանցելի գմբէթ մը կ'յօրինէր, որ մի քանի քառակուսի մղոն կ'տարածուէր, առանց լուսաւէտի (clairiere), առանց բացատի (éclaircie)։ Մինչև անգամ անկարելի էր Մէրսիին ընթացքը տեսնել և լեռին այն կէտը նշմարել ուր մէջ իր աղբիւրը կը գտնուէր։ Կարելի է ուրիշ վտակներ դէպ 'ի արեւմուտ կ'հոսէին, բայց հնարաւոր չէր այս բանս ստուգել։

Եթէ իջեւանի նշան մը Հարպէրդի աչքին չէր զարներ, գոնէ՝ չէ՞ր կրնար արդեօք օդին մէջ ծուխ մը նշմարել որ մարդու ներկայութիւնը յայտնէր։ Մթնոլորտը յստակ էր, և ամենաթեթև շոգին երկնից երեսն որոշակի պիտի տեսնուէր։

Հարպէրդ՝ պահ մը կարծեց տեսնել թեթեւ ծուխ մ'որ արեւմտեան կողմէն վեր կ'ելնէր. բայց երբ աւելի լաւ դիտեց հասկըցաւ որ կը սխալէր։ Ուշի ուշով նորէն նայեցաւ, և իր աչքը սուր էր... սակայն, պարապ տեղը, իրօք բան մը չկար։

Հարպէրդ նորէ ծառէն իջաւ, և երկու որսորդները Քարեայ-Պալատը վերադարձան։ Անդ՝ Կիւրոս Սմիթ պատանիին պատմածները մտիկ ըրաւ, գլուխը ցնցեց և բան մը չըսաւ։ Յայտնի էր թէ չպիտի կրնային այս խնդիրը լուծել մինչև որ բոլոր կղզին լիապէս չքննէին։

Երկու օր ետք՝ — Հոկտեմբերի 28ին — ուրիշ դէպ մը տեղի ունեցաւ, որու բացատրութիւնն անորոշ մնաց։

Քարեայ-Պալատէն երկու մղոն հեռու աւազափին վրայ ման գալու ատեն՝ Հարպէրդ և Նապ բարեբաղդ գտնուեցան ծովակրիայի (chélonée) կարգէն փառաւոր կենդանի մը բռնել։ Մեծ կրիայ մ'էր, որու պատեանը սքանչելի կանաչ նշոյլներ կ'արձակէր։

Հարպէրդ այս կրիայն նշմարեց որ ժայռերուն մէջէն սահելով դէպ 'ի ծով կ'դիմէր։

«Հասիր, Նապ, ինձի հասիր» պոռաց նա։

Նապ վազեց անոր քովը։

«Ի՛նչ աղուոր կենդանի է, ըսաւ Նապ. բայց ինչպէս բռնել պէտք է։

— Շատ դիւրին է, Նապ, պատասխանեց Հարպէրդ։ Այս կրիայն կռնակի վրայ դարձընենք, և այն ատեն չկրնար խոյս տալ։ Առ նիզակդ և իմ ըրածս ըրէ։»

Զեռունն, վտանգը զգալով իր պատեանին ու լանջապանակին մէջ քաշուեր էր։ Ոչ իր գլուխը կ'տեսնուէր և ոչ իր թաթերը, և ժայռի պէս անշարժ կ'մնար։

Այն ատեն Հարպէրդ ու Նապ իրենց գաւազանները կենդանիին լանջոսկրէն (sternum) անցուցին և իրենց ոյժը միացնելով յաջողեցան մեծ դժուարութեամբ զայն կռնակի վրայ դարձընել։ Այս կրիայն՝ որ երեք ոտք երկայն էր, գոնէ չորս հարիւր լիպրէ պիտի կշռէր։

«Լաւ, գոչեց Նապ, ահա այս որսը մեր Բէնքրոֆ բարեկամին մեծ ուրախութիւն պիտի պատճառէ։»

Արդարեւ՝ Պէնքրոֆ բարեկամը պիտի ուրախանար, վասն զի այս կրիաներուն միսը, որոնք ջրաբոյսերով կ'սնանին, շատ համեղ է։ Նոյն պահուն՝ հազիւ թէ կ'ցուցընէր կրիայն իր գլուխը, որ պզտիկ, տափակ էր, բայց վարի դին ոսկրոտ կամարի մը ներքեւ ծածկուած ժամային (temporal) մեծ փոսերուն պատճառաւ լայն կ'երեւէր։

«Հիմակ այս մեր որսէն ինչ պիտի ընենք, ըսաւ Նապ։ Չենք կարող Քարեայ-Պալատը քաշել տանիլ։

— Այս տեղ պիտի թողունք զայն, քանի որ չէ կարող դառնալ, պատասխանեց Հարպէրդ, եւ ապա կ'գանք ու սայլակով զայն կ'առնունք կ'տանինք։

— Շատ լաւ։»

Սակայն, աւելի ապահով լինելու համար, Հարպէրդ հոգ տարաւ, թէեւ Նապ աւելորդ կ'գտնէր, խոշոր կոպիճներով կենդանին ծանրացընել։ Յետոյ՝ երկու որսորդները Քարեայ-Պալատը դարձան՝ աւազափին շաւիղը բռնելով, որ նոյն միջոցին ջրերը քաշուած լինելուն՝ լայնարձակ էր։

Հարպէրդ ուզելով յանկարծական զարմանք մը պատճառել Պէնքրոֆին՝ «փառաւոր կրիային» վրայ բան մը չըսաւ. բայց երկու ժամ ետք՝ Նապ եւ ինք սայլն առած կենդանիին եղած տեղը գացին։ Սակայն այն «փառաւոր կրիայն» չկար։

Նապ ու Հարպէրդ նախ իրարու երեսը նայեցան, ապա իրենց չորս կողմը նայեցան։ Բայց ճիշտ այն տեղն էր որ կրիայն ձգեր էին։ Պատանին կոպիճներն անգամ գտաւ. ուստի ստոյգ էր որ չէր սխալեր։

«Հէ՛, հէ՛, ըսաւ Նապ, ուրեմն այդ կենդանիները կ'դառնան եղեր։

— Այսպէս կ'երեւի, պատասխանեց Հարպէրդ, որ շփոթեր էր եւ աւազին վրայ ցիր ու ցան կեցած կոպիճները կ'դիտէր։

— Լա՛ւ, եկու նայէ՛ որ Պէնքրոֆ պիտի դժգոհի։

— Իսկ Գ. Սմիթ ալ կրիային աներեւոյթ լինելը դիւրաւ պիտի չկրնայ բացատրել, մտածեց Հարպէրդ։

— Լա՛ւ, ըսաւ Նապ, որ այս դժպատահութիւնը կ'ուզէր ծածկել, բան մը չըսենք մեր ընկերներուն։

— Ընդ հակառակն, Նապ, պէտք է խօսիլ» պատասխանեց Հարպէրդ։

Եւ երկուքն ալ սայլն առնելով՝ զոր անօգուտ տեղը բերեր էին, Քարեայ-Պալատը վերադարձան։

Երբոր փայտարանը հասան, ուր չափագէտն ու նաւորդը միասին կ'աշխատէին, Հարպէրդ պատմեց անցած դարձածը։

«Վա՜յ անճարակներ, գոչեց նաւորդը։ Ինչպէս ձեռքէ փախուցիք այդ կրիայն որ մեղի կրնար գէթ յիսուն անգամ թան հայթայթել։

— Բայց, Պէնքրոֆ, պատասխանեց Նապ, յանցանքը մերը չէ եթէ կենդանին փախաւ. վասն զի պէտք է գիտնաս որ զայն կռնակի վրայ դարձուցեր էինք։

— Ուրեմն, բաւական լաւ չէք դարձուցեր, պատասխանեց ծաղրաբանութեամբ անհամոզելի նաւորդը։

— Բաւական լաւ չե՛նք դարձուցեր» գոչեց Հարպէրդ։

Եւ պատմեց թէ ինչպէս հոգ տարեր էր կոպիճներ դնելու կրիային վրայ։

«Ուրեմն հրաշք մ'է այս, պատասխանեց Պէնքրոֆ։

— Պարոն Կիւրոս, կարծէի թէ, ըսաւ Հարպէրդ, երբ մի անգամ կրիաները կռնակի վրայ պառկին, չեն կարող իրենց թաթերուն վրայ դառնալ, մանաւանդ երբ խոշոր են։

— Այդ իրաւ է, տղաս, պատասխանեց Կիւրոս Սմիթ։

— Ուրեմն, ինչպէս եղաւ որ...

— Ծովէն որչափ հեռու թողուցիք այդ կրիայն, հարցուց չափագէտը, որ իր աշխատութիւնը դադրեցընելով, այդ դիպուածին վրայ կ'մտածէր։

— Շատ շատ, տասն հինգ ոտքի չափ հեռու, պատասխանեց Հարպէրդ։

— Եւ միթէ ջրերը վա՞ր էին, նոյն միջոցին։

— Այո՛, Պարոն Կիւրոս։

— Լաւ ուրեմն, պատասխանեց չափագէտը, ինչ որ կրնայն ցամաքին վրայ չէր կարող ըլլալ, թերևս ջրին մէջ կրցաւ ըլլալու: Կ'երևի թէ մակընթացութեամբ դարձաւ և հանդարտօրէն ծովուն խորը գնաց:

— Ա՛խ, ո՛րչափ անճարակ ենք, ըսաւ Նապ:

— Ճիշդ ես ալ պատիւ ունեցայ ձեզի այդ ըսելու» պատասխանեց Բէնքրոֆ:

Կիւրոս Սմիթ այս բացատրութիւնը տուեր էր, որ անշուշտ ընդունելի կ'երևէր: Բայց միթէ ինք այս բացատրութեան ճշդութեան վրայ համոզուած էր: Չենք համարձակիր այո՛ ըսելու:

ԳԼՈՒԽ Գ.

Մակոյկին առաջին փորձը — Բեկորք ծովեզրին վրայ — Բեկորքին ծայրը — Սնտուկին ցուցակը — Գործիք, զէնք, գործիք, զգեստներ, գիրքեր, ամաններ — Բէնքրոֆին պակաս եղածը — Աւետարանը — Սուրբ Գիրքէն տուն մը.

Հոկտեմբերի 29ին, կեղևայ մակոյկը բոլորովին շինուեր լմնցեր էր: Բէնքրոֆ իր խոստումը բռներ էր, և տեսակ մը մակոյկ, որու փոճոկը կրեժեղա ծառին բեկտու փայտերու միջոցաւ կցուած էր, հինգ օրուան մէջ շինուեր էր: Այս նաւակին բոլոր մասերն էին ետևի կողմը նստարան մը, մէջ տեղն երկրորդ նստարան մը, որպէս զի հեռաւորութիւնը պահուի, առջևի կողմն երրորդ նստարան մը, ծնօտ մը (plat-bord) երկու թիակներու ցցակները (toles) բռնելու, ղեկավարելու համար ճկուղէկ մը (godille). Երկայնութիւնը տասն երկու ոտք էր և միայն երկու հարիւր լիտր ծանրութիւն ունէր:

Իսկ մակոյկը ծովը նետելու գործողութիւնը շատ պարզ եղաւ: Թեթև մակոյկն աւազին վրայ դրին, ջրափին ծայրը, Քարեայ-Պալատին առջև, և երբ մակընթացութիւնը հասաւ, զայն վեր վերցուց: Բէնքրոֆ՝ որ անմիջապէս մէջը ցատկեց, և ետևի թիակով ղեկավարեց, կրցաւ փորձով տեսնել որ այն իրենց գործին շատ յարմար պիտի գար:

«Կեցցէ՛, գոչեց նաւորդն, որ այսպէս իր յատուկ յաղթանակը հռչակելու չվարանեցաւ: Այս մակոյկով կարելի է շրջիլ . . .

— Աշխարհիս բոլորտիքը, հարցուց Գեդէոն Սփիլէթ.

— Ո՛չ, կղզւոյն բոլորտիքը: Եթէ նաւուն յատակը քանի մը կոպիճներ դնենք, կայմ մը յառաջակողմը, և առագաստ մը, զոր օրին մէկը Պարոն Սմիթ պիտի շինէ մեզի համար, բաւական են հեռու տեղեր գնալու: Լաւ ուրեմն, Պարոն Կիւրոս, և դուք, Պարոն Սփիլէթ, դու, Հարպէրդ, և դու, Նապ, պիտի չգաք մե՞ր նոր նաւը փորձելու: Կատակը մէկ դի. պէտք է սակայն փորձել թէ պիտի կրնա՞յ մեզ ամենքնիս պարունակել:»

Իրօք, պէտք էր այս փորձն ընել: Բէնքրոֆ՝ ղեկը շարժելով նաւակն աւազափին մօտ բերաւ՝ նեղ անցք մը զոր ժայռերու միջևը կ'գտնուէր, և համաձայնեցաւ որ նոյն օրն իսկ մակոյկը կրնան փորձել, եզերքը քերելով մինչև առաջին հրուանդանն, ուր հարաւային ժայռերը կ'լմննային:

Նապ մակոյկը մտնելու ատեն, ըսաւ.

«Բայց այդ քու նաւակդ բաւական թրջած է, Բէնքրոֆ:

— Բան մը չէ, Նապ, պատասխանեց նաւորդը: Պէտք է որ փայտը չորնայ: Երկու օրէն ետք՝ ջուր չպիտի տեսնես, և մեր մակոյկն իր փորը ջուր չպիտի ունենայ ինչպէս գինով մ'իր ստամոքսին մէջ: Մտէք նայիմ նաւակը:»

Ուստի ամենքը մտան, և Բէնքրոֆ եզերքէն հեռու քշեց նաւակը: Օդը պայծառ էր, ծովը հանդարտ, այնպէս որ կարծես թէ իր ջրերն լճակի մը նեղ եզրներուն մէջ փակուած էին, և մակոյկը կարող էր դիմադրաւել զայն այնպէս ապահովութեամբ

որպէս թէ Մէրսիի հեղասահ ջրերուն վրայ գտնուէր ։ Երկու թիերէն մին՝ Նապն առաւ, միւսը Հարպէրդ. իսկ Բէնքրոֆ նաւակին ետեւի կողմը նստաւ, որպէս զի ղեկավարէ ։

Նաւորդը նախ ջրանցքէն անցաւ և կղզեկին հարաւային ծայրը քերելու գնաց ։ Հարաւէն թեթեւ քամի մը կ'փչէր ։ Ոչ ջրանցքին, ոչ բաց ծովուն մէջ ծփանք կար ։ Քանի մ'երկար տատանումներ՝ որ հազիւ նաւակը կ'շարժէին, վասն զի սաստիկ բեռնաւորուած էր, ծովուն երեսը կանոնաւորապէս կ'ուռեցընէին ։ Ծովափէն գրեթէ կէս մղոնի չափ հեռացան, այնպէս որ Գրանիթէն լեռին բոլոր շրջապատը կարող լինէին դիտելու ։

Յետոյ՝ Բէնքրոֆ՝ դէպ 'ի ափունքը դարձընելով նաւակը, գետին բերանը հասաւ ։ Այն ատեն մակոյկը եզերքը բռնելով Ճամբան շարունակեց, և այս եզերքը, մինչև հեռաւորագոյն ծայրը բոլորելով՝ Ցաղօրնի մօրուտ դաշտավայրը լիովին կ'ծածկէր ։

Այս հրուանդանն, որու հեռաւորութիւնը կ'աւելնար ափերուն կորութենէ, Մէրսիէն երեք մղոն հեռու կ'գտնուէր ։ Գաղթականներն որոշեցին երթալ մինչև ծայրը, և միայն այնչափ անդին անցնիլ որչափ որ պէտք էր հարևանցի ակնարկ մը նետելու մինչև Ճիրանի–Գլուխը ։

Ուստի ծովափը քերեց մակոյկը շատ շատ երկու պարանաչափ հեռաւորութեամբ, խոյս տալով այն խութերէն որ նոյն կողմերը լեցուն էին և զոր մակընթացութիւնը ծածկելու սկսեր էր ։

Պատը քանի կ'երթար կ'ցածնար գետին բերանէն մինչև հրուանդանը ։ Կրանիգի կոյտեր էին, ատդին անդին ցրուած, միջնորմէն բոլորովին տարբեր, որ Մեծ–Տեսքին սարահարթը կ'յօրինէր, և խիստ վայրենի երևոյթ մ'ունէր ։ Այս սուր սեպին վերայ որ անտառին առջևէն երկու մղոնի չափ կ'տարածուէր, բնաւ բոյս չկար, և այս հրուանդանը բաւական լաւ կ'ձևացընէր հսկայի մը թևը որ դալարաւէտ ծովածոցէ մ'ելած լինէր ։

Մակոյկը՝ երկու թիակներուն շնորհիւ, դիւրաւ կ'յառաջանար ։ Գեդէօն Սբիլէտ՝ մէկ ձեռքը մատիտ, միւսը տետր մը բռնած՝ մեր 'ի վերայ կ'գծագրէր եզերքը ։

393-283

Նապ, Բէնքրոֆ և Հարպէրդ՝ իրենց աչքին նոր երևցած կալուածքին այս մասը քննելով կ'խօսակցէին, և՝ մակոյկը քանի վար իջնէր դէպ 'ի հարաւ, Մանդիպուլի երկու գլուխները կարծես թէ իրենց տեղէն կ'շարժէին և Միութեան խորշն աւելի լաւ կ'գոցէին ։

Իսկ Կիւրոս Սմիթ չէր խօսեր . կ'նայէր, և իր ակնարկին յայտնած անվստահութենէ՝ կ'երևէր որ միշտ նորատեսիլ երկիր մը կ'դիտէր ։

Սակայն՝ երեք քառորդի չափ նաւարկելէն ետև՝ մակոյկը հրուանդանին գրեթէ ծայրը հասեր էր, և Բէնքրոֆ անոր շրջանն ընելու կ'պատրաստուէր ; երբոր Հարպէրդ՝ ոտք ելնելով՝ սև բիծ մը ցուց՝ և ըսաւ .

«Ի՞նչ կը տեսնեմ վարը՝ աւազափին վրայ ։»

Ամենուն աչքը ցոյց տրուած կէտը դարձաւ ։

«Արդարև, ըսաւ թղթակիցը, բան մը կայ ։ Կարծես թէ կէս մ'աւազին մէջ մխուած կորստէք (épave) մ'է ։

— Ա՛հ, գոչեց Բէնքրոֆ, կ'տեսնեմ թէ ինչ է ։

— Ի՞նչ է ուրեմն, հարցուց Նապ ։

— Տակառնե՛ր, տակառնե՛ր, որ կրնան լեցուն լինիլ, պատասխանեց նաւորդը,

— Դէպ 'ի ափը քշէ՛, Բէնքրոֆ» ըսաւ Կիւրոս Սմիթ ։

Մակոյկը՝ քանի մը թիակի շարժումէն՝ պզտիկ ծովածոցի մը խորը մտնելով ցամաքին կը մօտենար, և ճամբորդներն աւազափին վրայ կ'ցատկէին ։

Բէնքրոֆ չէր սխալած ։ Այն տեղ երկու տակառիկ կային, կէս մ'աւազին մէջ խրուած, բայց դեռ ամրապէս կապուած էին լայն սնտուկի մ'որ, անոնց վրայ մնալով, այսպէս ծովուն վրայ տատաներ և 'ի վերջէ եզերքն եկեր ընկեր էր ։

«Ուրեմն կղզւոյն մօտերը նաւաբեկութիւն մը պատահած է արդեօք, հարցուց Հարպէրդ ։

— Շատ հաւանական է, պատասխանեց Գեդէօն Սբիլէտ ։

— Բայց ինչ կայ այս սնտուկին մէջ, գոչեց Բէնքրոֆ ...

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ—Арм ССР

բնական անհամբերութեամբ մը։ Ի՞նչ կայ այս սնտուկին մէջ։ Գոցուած է, և բան մը չունինք որ անոր ծածկոյթը կոտրենք։ Լաւ ուրեմն, քարերով խորտակենք . . . ։»

Եւ նաւորդը՝ ծանր քար մը վերցնելով՝ սնտուկին մէկ կողմը պիտի խորտակէր, երբ չափագէտը զանի կեցուց և անոր ըսաւ․

«Չես կարող անհամբերութիւնդ մեղմել գոնէ մէկ ժամու չափ։

— Բայց, Պարոն Սիրուս, մտածէ՛ անգամ մը։ Կարելի է անոր մէջ կ'գտնուին բոլոր մեզի պէտք եղած բաները։

— Քիչ առնէն պիտի տեսնենք, Փէնքրօֆ, պատասխանեց չափագէտը․ բայց խօսքիս միտ դիր, մի խորտակեր այդ սնտուկը, որ կրնայ մեզի օգտակար լինիլ։ Քարեայ-Պալատը փոխադրենք զայն, և այն տեղ աւելի դիւրութեամբ և առանց կոտրելու կրնանք բանալ։ Արդէն այս փոխադրութեան համար պատրաստ է, և քանի որ մինչև այս տեղ ծովուն վրայ ծփալով հասաւ, դարձեալ կրնայ ծփալ մինչև գետին բերանը։

— Իրաւունք ունիս, Պարոն Սիրուս, և ես կը սխալէի, պատասխանեց նաւորդը․ բայց մարդ միշտ ինքզինքին տէրը չէ ։»

Չափագէտին խորհուրդն իրաւացի էր։ Արդարև՝ մակոյկը չպիտի կարենար կրել այս սնտուկին մէջ հաւանօրէն գտնուած բոլոր իրերը, որ շատ ծանր պիտի լինէին, քանի որ զայն վերցնելու համար երկու հաստ պարապ տակառներ պէտք եղեր էին։ Այսպէս՝ աւելի լաւ էր նաւակին ետին կապել և մինչև Քարեայ-Պալատին եզերքը տանիլ։

Եւ հիմակ պէտք է հասկընալ թէ ուսկից եկած է այս սնտուկը։ Կարևոր խնդիր մ'էր այս։ Սիրուս Սմիթ և իր ընկերներն ուշադրութեամբ իրենց բոլորտիքը նայեցան և նոյն ծովեզերքին վրայ հարիւրաւոր քայլեր առին և աստին անդին պտըտեցան։ Աւերի բեկոր մ'իրենց աչքին չերևցաւ։ Ծովն ալ դիտեցին։ Հարբերթ ու Նապ բարձր ժայռի մը վրայ ելան, բայց հորիզոնն ամայի էր։ Բան մը չկար, ոչ կայմազուրկ նաւ մը, և ոչ առագաստաւոր նաւ մը։

Սակայն աներկբայ էր որ նաւաբեկութիւն մը տեղի ունեցեր

էր։ Կարելի էր խել որ այս գիւտածը կապարէ հաւիկին գըտուածին հետ յարաբերութիւն մ'ունէր։ Կարելի էր որ օտարականներ ելած էին կղզւոյն մէկ ուրիշ կողմը։ Կարելի էր որ դեռ այն տեղ կը գտնուէին։

Բայց գաղթականներուն քնալէս ըրած խորհրդածութիւնն այս եղաւ որ սոյն օտարականները մալէյացի ծովահէններ չէին կարող լինիլ, վասն զի այն սնտուկն ամերիկացիի կամ եւրոպացիի ձեռքէ ելած պիտի լինէր։

Ամենքը մօտեցան սնտուկին, որ հինգ ոտք երկայնութիւն և երեք ոտք լայնութիւն ունէր։ Կաղնի փայտէ շինուած, մեծ զգուշութեամբ գոցուած և թանձր մորթով մը ծածկուած էր, զոր պղնձէ գամեր կ'բռնէին։

Երկու մեծ տակառներն՝ որոց զարնելով կ'հասկցուէր որ պարապ էին, գոյեր և անոնց վրայ հաստ չուաններու միջոցաւ սնտուկը կապեր էին, այնպիսի հանգոյցներով, որոց համար Փէնքրօֆ իսկոյն ըսաւ թէ նաւային հանգոյցներ էին։

Սնտուկը բոլորովին լաւ ու անվնաս պահուած կ'երևէր, և այս բանս դիւրին էր բացատրել այս կերպով թէ աւազափի վըրայ ընկեր էր և չէ թէ ժայռերու վրայ։ Մինչև անգամ կարելի էր հաստատել զայն լաւ մը քննելով՝ որ ծովուն վրայ երկար ատեն մնացած չէր, և թէ նոր հասեր էր այն ծովեզրը։ Չէր երևեր որ ջուրը ներսի դին թափանցած լինէր, և անոր պարունակած իրերն անշուշտ անվթար մնացած պիտի լինէին։

Յայտնի էր որ այս սնտուկն ալէկոծ նաւու մը մէջէն ծովը նետուած էր, և ճամբորդները յուսալով որ ծովեզրը պիտի երթայ ընկնի՝ հոգ տարեր էին ծփուն բաներու վրայ դնելով զայն թեթևցընել, որպէս զի վերջէն գտնեն։

«Այս սնտուկը մինչև Քարեայ-Պալատը պիտի տանինք, նաւակին ետևը կապելով, ըսաւ չափագէտը, և անոր մէջ գտնուած բաներուն ցուցակը պիտի շինենք․ յետոյ՝ եթէ մեր ենթադրած նաւաբեկութենէ ապրող մարդիկը գտնենք՝ անոնց պիտի յանձնենք։ Եթէ մէկը չգտնենք . . .

— Մեզի համար պիտի պահենք, գոչեց Պէնքրոֆ. բայց, յանուն Աստուծոյ, ի՞նչ կրնայ գտնուիլ անոր մէջ։»

Մակընթացութիւնն արդէն սնտուկին հասնելու սկսեր էր, որ անշուշտ ծովուն վրայ պիտի տատանէր։ Զուաններէն մին որով տակառները կապուեր էին, մասովին քակելով իբրեւ պարան գործածեցին որպէս զի ծփացող կազմածը նաւակին կապեն։

Յետոյ՝ Պէնքրոֆ եւ Նապ աւազը փորեցին իրենց թիակներով, որպէս զի սնտուկին տեղափոխութիւնը դիւրացնեն, եւ քիչ ատենէն նաւակը զայն քաշելով սարաւանդը դառնալու սկսաւ, եւ այս սարաւանդին՝ Բեկորքի սարաւանդ (Tlotson point) անունը տուին։

Նաւաձիգ բեռը (remorque) ծանր էր, եւ տակառներն հազիւ կ'զօրէին սնտուկը ջրին երեսը պահելու։ Հետեւապէս նաւորդը շարունակ վախի մէջ էր որ սնտուկը քակուելով ծովուն խորը չիջնէ։ Բայց բարեբաղդօրէն՝ իր երկիւղն անհիմն ելաւ, եւ իր մեկնելէն ժամ ու կէս ետք — այսչափ ատեն պէտք եղեր էր այս երեք մղոնի հեռաւորութիւնը կտրելու համար — մակոյկը Քարեայ-Պալատին առջեւ գտնուած եզրին կ'մօտենար։

Այն ատեն մակոյկ ու սնտուկ աւազին վրայ հանեցին, եւ որովհետեւ ծովն արդէն կ'քաշուէր, քիչ ատենէն ցամաքը նստան։ Նապ գացեր էր գործիք բերելու որ սնտուկը բանան, այնպէս որ կարելի եղածին չափ չաւրեցին զայն եւ իսկոյն անոր մէջ գտնուած բաներուն ցանկը շինեցին։

Պէնքրոֆ յայտնապէս ցոյց կ'տար որ սաստիկ յուզուած էր։ Նաւորդն սկսաւ նախ երկու տակառիկները քակել, որ՝ շատ լաւ վիճակի մէջ գտնուելով՝ կարելի պիտի լինէր զանոնք գործածել անշուշտ։ Ապա լծակով մը նիգը կոտրեցին եւ շուտ մը ծածկոյթն ընկաւ։

Սնտուկին ներսի դին երկրորդ փաթոյթ մը կար զինկէ, որ յատկապէս դրուած պիտի լինէր բոլոր պարունակած բաներն՝ որ եւ է պարագայի մէջ՝ խոնաւութենէ զերծ պահելու համար։

«Ա՜խ, գոչեց Նապ, արդեօք ասոր մէջ գտնուածներն անուշեղէննե՞ր են։

— Յուսամ որ անուշեղէն չեն, պատասխանեց թղթակիցը։

— Եթէ միայն այս սնտուկին մէջ գտնուէր... ըսաւ նաւորդը կիսաձայն։

— Ի՞նչ կ'ուզէիր որ գտնուէր, հարցուց անոր Նապ, որ անոր ըսածը լսեց։

— Ո՛չ ինչ։»

Զինկէ ծածկոյթը բոլոր երկայնութեամբը ճեղքեցին, յետոյ սնտուկին երկու կողմը դարձուցին, եւ սկսան այլ եւ այլ առարկաներ հանել ու աւազին վրայ դնել։ Ամեն անգամ որ նոր բան մը կ'հանէին, Պէնքրոֆ ցնծութեան նոր աղաղակներ կ'արձակէր, Հարպերդ ծափ կ'զարնէր, եւ Նապ կ'պարէր... խափշիկի մը պէս։ Այն տեղ գիրքեր կային որ կրնային Հարպերդի խելքը գլխէն առնուլ ուրախութենէ եւ խոհանոցի անօթներ զոր Նապ համբոյրներով պիտի ծածկէր։

Ի վերջէ՝ գաղթականներն իրաւունք ունէին չափազանց գոհ լինելու, վասն զի այս սնտուկը գործիք, զէնք, գործիք, զգեստներ, գիրքեր կ'պարունակէր, որոց ճիշտ ցուցակն ահա այս է, ինչպէս որ գրուեցաւ Գէտէոն Սփիլէթի տետրին մէջ.

Գործիք.
3 Շատասայր դանակ.
2 Փայտատի տապար.
2 Ատաղձագործի կացին.
3 Քերիչ.
2 Ուրագ.
1 Երկսայրի տապար.
6 Մկրատ.
2 Խարտոց.
3 Մուրճ.
3 Գայլիկոն.
2 Դուր.
10 Պարկ գամ ու պտուտակ.
3 Տարբեր մեծութեամբ սղոցներ.
2 Տուփ ասեղ։

Զէնք. 2 Հրացան քարով.
2 Հրացան պարուճակով.
2 Կեդրոնաքոյ ատրճանակ.
5 Վաղր.
4 Նաւու թուր.
2 Տակառիկ վառօդ, մէն մին 25 լիտրէ պարունակող.
12 Տուփ պայթիչ խայծ։

Գործիք. 1 Վեցեակ.
1 Կրկին աչոցք.
1 Հեռադիտակ.
1 Տուփ կարկին.
1 Գրպանի կողմնացոյց.
1 Ֆարէնհայդի ջերմաչափ.
1 Օդաչափ.
1 Տուփ լուսանկարի ամբողջ կազմածով, ապակի, կուած, քիմիական նիւթեր և այլն։

Զգեստներ. 24 Հատ շապիկ մասնաւոր անկուածէ մ'որ բուրդի կը նմանէր, և որու ծագումն անշուշտ բուսային էր.
66 Հատ գուլպայ նոյն հիւսուածէն։

Անօթներ. 1 Ջեռուցիչ երկաթէ.
6 Պղնձէ անագապատ աման.
3 Երկաթէ պնակ.
10 Պաղեղի քարէ ապաս սեղանի.
2 Եփոց.
1 Կրելի պզտիկ բուռ.
6 Սեղանի դանակ։

Գիրք. 1 Աստուածաշունչ, պարունակող Հին ու Նոր Կտակարանք.
1 Աշխարհացոյց տախտակ.
1 Բառգիրք պոլինէզեան այլ և այլ բարբառներու,
1 Բառգիրք Բնական գիտութեանց, վեց հատոր,
3 Դրակ Ճերմակ թուղթ.
3 Տումար Ճերմակ երեսներով։

«Պէտք է խոստովանիլ, ըսաւ Թղթակիցը, ցուցակը լմննալէն ետև, որ այս սնտուկին տէրը գործնական մարդ մ'էր։ Գործիք, զէնք, գործիք, զգեստ, անօթ, գիրք, բան մը պակաս չէ։ Կարծես թէ կ'յուսար որ պիտի նաւաբեկութեան հանդիպէր և առաջուց ամեն պատրաստութիւն տեսեր էր։

— Իրօք բան մը չպակսիր, մրմնջեց Կիւրոս Սմիթ խոհուն դէմքով մը։

— Եւ անտարակոյս, յարեց Հարպէրդ, այս սնտուկը կրող նաւն ու անոր տէրը մալէյացի ծովահէն չէին։

— Միայն թէ, ըսաւ Բէնքրոֆ, այս մարդը ծովահէններու ձեռքը գերի ինկած չլինէր...։

— Այս ընդունելի չէ, պատասխանեց Թղթակիցը։ Աւելի հաւանական է որ ամերիկեան կամ եւրոպական նաւ մ'այս ծովերն ինկած է, և ճամբորդները՝ գէթ ամենէն կարևոր բաներն ազատել ուզելով՝ այս սնտուկը պատրաստած և ծովը նետած են։

— Միթէ այս է ձեր կարծիքն ալ, Պարոն Կիւրոս, հարցուց Հարպէրդ։

— Այո, տղաս, պատասխանեց ճարտարագէտը. այսպէս պատահած պիտի լինի գործը։ Կարելի է որ ալեկոծութեան միջոցին, կամ անոր նախատեսութեամբ, խիստ օգտակար առարկաներ այս սնտուկին մէջ դրած լինին, վերջէն ծովեզրին վրայ տեղ մը գտնելու յուսով...։

— Մինչև անգամ լուսանկարի տուփը, դիտել տուաւ նաւորդը բաւական կասկածոտ դէմքով մը։

— Այդ կազմածին գալով, պատասխանեց Կիւրոս Սմիթ, լաւ չեմ ըմբռներ թէ ինչ օգուտ ունի, և մեզի ինչպէս նաև բոլոր նաւաբեկեալներուն համար, աւելի արժէք պիտի ունենար, ձեռք մ'աւելի կատարեալ զգեստներ կամ աւելի առատ պաշար։

— Բայց այդ գործիքներուն, այդ անօթներուն, այդ գիրքերուն վրայ արդեօք նշան մը, հասցէ մը չգտնուիր, որով կարենայինք հասկնալ թէ ուսկից հասած են, հարցուց Գեդէոն Սփիլէդ։

Պէտք էր նայիլ։ Ուստի մէկ մի առարկայ ուշի ուշով քննեցին, յատկապէս գրեանքը, գործիներն ու զէնքերը։ Ոչ զէնք, ոչ գործի՝ սովորականէն հակառակ, գործարանատէրին նշանը չունէին․ ասկէ զատ՝ պատուական վիճակի մէջ էին, և կարծես թէ բնաւ չէին գործածուած։

Նոյնը կրնանք ըսել նաև գործոյքին և անօթներուն համար․ ամեն բան նոր էր, և ասկից կ՚իմացուէր, վերջապէս, որ այս առարկաներն պատահմամբ առած չէին սնտուկին մէջ նետելու համար, այլ ընդհակառակն, բոլոր այդ բաները զատ զատ ընտրեր և խնամօք կարգադրեր էին։

Այս իրողութիւնը կ՚հաստատուէր նաև մետաղեայ երկրորդ ծածկոյթէն որ ամեն խոնաւութենէ ազատ պահեր էր և որ արտօրնօք կցուած չպիտի ըլլար։

Իսկ բնական գիտութեանց և պոլինէզեան բարբառներու վերաբերեալ բառարաններուն գալով՝ երկուքն ալ անգլիարէն էին, բայց հրատարակչին անունը և ոչ տպագրութեան թուական մը չէին կրեր։

Նոյնպէս Աստուածաշունչը, որ անգլիարէն լեզուով տպուած էր քառածալ թերթի վրայ և տպագրութիւնն ընտիր էր, և որ ստէպ թղթատուած կ՚երևէր։

Իսկ աշխարհացոյց տախտակը՝ շքեղ գործ մ՚էր, բոլոր աշխարհի մասերը կ՚պարունակէր․ նոյնպէս շատ մը հարթագունդներ, Մերկատորի ստուերագրին համեմատ պատրաստուած էին, և որոց ցուցակը ֆրանսերէն էր — բայց չունէին ոչ տպագրութեան թուական և ոչ հրատարակչի անուն։

Ուստի՝ այս զանազան առարկաներու վրայ չկար նշան մ՚որով կարելի ըլլար հասկնալ թէ ուսկից եկած են, և հետևապէս՝ ոչ պարագայ մ՚որ ցոյց տար այն ջրերէն անցնող նաւուն ազգայնութիւնը։

Բայց այդ սնտուկն ուսկից որ գար՝ Լինքըլն կղզւոյն գաղթականները կ՚հարստացնէր։ Մինչև այն ատեն՝ բնութեան արդիւնքն այլափոխելով՝ իրենք իրենց ամեն բան հնարեր էին, և իրենց խելքին

շնորհիւ՝ յաջողեր էին։ Բայց այնպէս կ՚երևէր որ նախախնամութիւնն զանոնք վարձատրել ուզած էր, մարդկային ճարտարութեան այս զանազան արտադրութիւններն անոնց ուղարկելով։ Ուստի միաձայն յայտնեցին իրենց շնորհակալիքն երկնից։

Սակայն, իրենցմէ մին բոլորովին գոհ չէր։ Այս էր Փէնքրօֆ։ Կ՚երևի թէ սնտուկը չէր պարունակեր առարկայ մ՚որու շատ կ՚բաղձար նա․ և քանի որ սնտուկէն կ՚հանէին այդ բաներն՝ իր ցնծութեան ձայներն հետզհետէ կ՚նուազէին, և երբ ցուցակը լմնցաւ այս խօսքերն ըսաւ․

«Այս ամենն լաւ են, բայց պիտի տեսնես որ այս տուփին մէջ ինծի համար բան մը չպիտի գտնուի։»

Այս լսելով՝ Նապ անոր ըսաւ․

«Ըսէ նայիմ, Փէնքրօֆ բարեկամ, ինչ բանի կ՚սպասէիր ուրեմն։

— Կէս լիպրէ ծխախոտի, պատասխանեց Փէնքրօֆ ծանրութեամբ, և այն ատեն իմ երջանկութիւնս կատարեալ պիտի ըլլար։»

Նաւաստին այս դիտողութեան վրայ՝ ամենքն ալ սկսան խնդալ։

Բայց այն սնտուկին գիւտէն այս կ՚հետևէր որ անհրաժեշտ դարձեր էր կղզին մանրամասնաբար քննել։ Ուստի որոշուեցաւ որ հետևեալ օրը կանուխ՝ ճամբայ ելնեն՝ Մերսիին վեր քալելով այնպէս որ արևմտեան եզերքը հասնելու կարող ըլլան։ Եթէ այն եզերքին վրայ՝ նաւաբեկեալներ ելած էին, վախ կար որ անպաշար պիտի մնային, և պէտք էր անոնց օգնութեան հասնիլ անյապաղ։

Նոյն օրն՝ այլ և այլ առարկաները Քարեայ-Պալատը փոխադրեցին և մեծ սրահին մէջ կարգով տեղաւորեցին։

Հետևեալ օրն — հոկտեմբերի 29ին — Կիրակի մ՚էր, և մեկնելէն առաջ՝ Հարպերթ հարցուց [illegible] թէ արդեօք չէր փափաքեր Աւետարանէն քանի մը կտոր բան կարդալ։

«Ամենայն սիրով» պատասխանեց Կիւրոս Սմիթ։

Սուրբ գիրքն առաւ, և զայն պիտի բանար, երբ Փէնքրօֆ զինք կեցուց, ու անոր ըսաւ․

«Պարոն Կիւրոս ես աւելորդապաշտ եմ։ Ըստ բաղդի բաց, և ո՛ր տունն որ ամէնէն առաջ աչքիդ զարնէ՝ կարդա՛։ Նայինք մեր վիճակին պիտի յարմարի՞։»

Կիւրոս Սմիթ նաւորդին այս խորհրդածութեան վրայ ժպտեցաւ, և անոր փափաքը կատարելով, բացաւ Աւետարանն ճիշդ այն տեղէն ուր նշանակ մ'անոր երեսները կ'զատէր։

Ցանկարծ իր աչքին զարկաւ կարմիր խաչ մը, որ՝ մատիտով գրուած և Ս. Մատթէոսի Աւետարանին Է. գլխուն ութերորդ տունին վրայ գրուած էր։

Եւ այս տունը կարդաց.

Ամ՛որ խնդրէ կ'առնայ, և ով որ փնտռէ կ'գտնէ։

ԳԼՈՒԽ Գ.

Զօռն. — Ջուրը կ'բարձրանայ — Կոճիկներ և լարուածներ — Այլ և այլ դանակներ — Ցախամար — Անտառին դէպը — Հովայաջն եկալեկողութիւններ — Ինչո՞ւ համար «Փոխնորդերոյթ ծառեր» կ'անուանին — Կապիկներու երամակներ — Բարաւզող — Գիշերուան համար օթևան.

Հետևեալ օրը — Հոկտեմբերի 30ին — ամէն բան պատրաստ էր մեկնելու հետազօտութեան համար, որ՝ վերջին դէպքերու պատճառաւ՝ ստիպողական դարձեր էր։ Իրաւի՝ գործերն այնպիսի ընթացք մ'առեր էին որ Լինքոլն կղզւոյն գաղթականները ա՛լ կրնային երևակայել որ օգնութիւն խնդրելու պէտք չունէին, այլ ուրիշներուն տալու։

Ուստի որոշուեցաւ նորէն Մէրսիէն վեր ելնել, այնքան հեռուն որքան որ գետին ընթացքը նաւարկելի լինէր։ Ճամբուն մէկ մեծ մասն այսպէս առանց յոգնելու պիտի կարենային ընել, և

ճամբորդները պիտի կարենային իրենց պաշարն ու զէնքը փոխադրել կղզւոյն արևմտեան ներքին կողմերը։

Իրօք՝ ոչ միայն պէտք եղեր էր տարուած բաներուն հոգը տանիլ, այլ նաև այն բաներուն զոր թերևս դիպուածով պիտի կարենային գտնել և Քարայ-Պալատը բերել։ Եթէ ծովափին մօտ նաւակոծութիւն մը պատահեր էր, ինչպէս որ կ'կարծուէր, բեկորներ անպակաս և լաւ աւար մը պիտի լինէին։ Այս ենթադրութեամբ՝ անշուշտ սայլակն աւելի յարմար պիտի գար քան թէ մակոյկը. բայց այս սայլակը՝ ծանր ու կոշտ լինելուն՝ պէտք էր քաշել, և հետևապէս անոր գործածութիւնը դժուարին կ'լինէր։ Այս տեսնելով Բէնքրոֆ ցաւ յայտնեց որ սնտուկին մէջ՝ ոչ միայն «իր կէս լիպրէ ծխախոտը» չէր գտներ այլ նաև Նիւ-Ճէրսէյի զոյգ մը հուժկու ձիերէն, որ շատ օգտակար պիտի լինէին գաղթականներուն։

Նապ արդէն նաւակը տարեր էր այլ և այլ ուտելիք, այսինքն աղած միս, քանի մը հալօն գարեջուր և խմորեալ ըմպելի, որոնք երեք օրուան պաշար էին — Կիւրոս Սմիթ այսչափ ատեն միայն բաւական կ'սեպէր այս հետազննութիւնն ընելու։ Այս իրաւ է որ ճամբան ալ՝ 'ի հարկին՝ ուտելիք ճարելու կ'յուսային, և Նապ չմոռցաւ իր հետն առնելու կրելի պզտիկ բուռը։

Իսկ գործոյքի կողմէ՝ գաղթականներն փայտատի երկու տապարներն առին, որ թանձր անտառին մէջէն ճամբայ բանալու պիտի ծառայէին. իսկ իբրև գործիք՝ դիտակն առին և գրպանի կողմնացոյցը։

Զէնք ալ առին իրենց հետ՝ երկու քարէ հրացաններն ընտրելով որ այս կղզւոյն մէջ աւելի օգտակար էին քան թէ նորահնար հրացաններն, վասն զի առաջիններուն համար լոկ կայծքար կ'գործածուէր, որու տեղը դնել դիւրին է, մինչդեռ միւսներն պայթիչ խայծի կ'կարօտէին, որ սակայն գործածուելով շուտով կրնար հատնիլ։

Սակայն ատրճանակին մէկն ալ առին և քանի մը փամփուշտներ. իսկ վառօդ, որմէ տակառիկները գրեթէ յիսուն լիտր կը

պարունակէին, զանց չըրին և բաւական առին. բայց չափագէտն ուրիշ պայթիչ նիւթ մը շինել կ'յուսար որով վառօդը պիտի խնայուէր ։

Հրաշէնի հետ առին նաև կաշեայ լաւ պատեան ունեցող սակուրներ, և այս վիճակին մէջ՝ գաղթականները կարող էին այն ընդարձակ անտառն անվախ մտնել՝ յաջողելու յուսով ։

Անօգուտ է աւելցընել որ Փէնքրոֆ, Հարպէրդ ու Նապ այսպէս զինուած, իրենց փափաքին կատարը հասեր էին, թէև Կիւրոս Սմիթ անոնցմէ խօսք առաւ որ առանց հարկի հրացան մը անգամ չպարպեն ։

Առաւօտեան ժամը վեցին՝ մակոյկը ծովը քշեցին ։ Ամենքն անոր մէջ մտան, նոյնպէս Թօփ և Մէրսիի բերանը դիմեցին ։

Ջրերը կէս ժամէ 'ի վեր կ'բարձրանային ։ Ուրեմն քանի մը ժամ ևս նոյն մակընթացութիւնը պիտի շարունակէր և պէտք էր անկից օգուտ քաղել, վասն զի՝ վերջէն՝ տեղատուութիւնը զաւաղ՝ դժուարին պիտի լինէր գետէն վեր ելնել ։ Արդէն ջրերը շատ բարձրացեր էին, վասն զի լուսինն երեք օր ետք պիտի լրանար, և մակոյկն՝ զոր պէտք էր ջըրընթացքին մէջ պահել, երկու բարձր ափերուն միջև արագօրէն քալեց, և ամենևին պէտք չեղաւ թիերով գործածել անոր աւելի արագութիւն տալու համար ։

Քանի մը վայրկեան ետք՝ երկրագնացները հասեր էին այն արմուկն զոր Մէրսին կ'յօրինէր. և ճիշդ այն անկիւնն՝ ուր՝ հօթն ամիս առաջ՝ Փէնքրոֆ առաջին անգամ իր լաստը պատրաստեր էր փայտ կրելու համար ։

Այս բաւական սուր անկիւնէն ետք՝ գետը բոլորելով՝ դէպ 'ի հարաւ-արևմուտ կ'շեղէր, և իր ջրերը մշտադալար կոնաձևեր ծառերու ստուերին տակ կ'հոսէին ։

Մէրսիի ափերուն տեսքը սքանչելի էր ։ Կիւրոս Սմիթ և իր ընկերները անդադար կ'զմայլէին այն չքնաղ տեսարանին վրայ զոր բնութիւնը կ'ընծայէ ջրերու և ծառերու շնորհիւ ։

Քանի կ'յառաջանային՝ անտառային բոյսերը կ'փոխուէին ։ Գետին աջ կողմը խոտերու վրայ կ'երևէին փառաւոր կնձնային տունկեր

(ulmacé). այս հաղուադիւտ կնձնիները, որ շատ յարգի են շինողներու աչքին, և որ ջրին մէջ երկար ատեն դիմանալու յատկութիւն ունին ։ Ցետոյ կ'գային նոյն դասուն վերաբերող բազմաթիւ խումբեր, և ուրիշներու հետ կ'գտնուէին լօռուններ, որոց նուշը խիստ օգտակար եղ կ'արտադրէ ։ Աւելի հեռուն՝ Հարպէրդ [illegible] (lardizabolée) նշմարեց, որոց ճկուն ոստերը ջրին մէջ թրջելով՝ պատուական պարաններ կը մատակարարեն, նոյնպէս մէկ երկու հատ երկնասենիի կոճղեր, որ սըլլազան երանգներով աղուոր ու գոյն մ'ունէին ։

Ամեն ատեն՝ երբոր ցամաքն ելնելու դիւրութիւն կար՝ մակոյկը կանգ կ'առնուր ։ Այն ատեն Գեդէոն Սփիլէթ, Հարպէրդ, Փէնքրոֆ իրենց հրացանն առնելով Թօփին հետ գետեզրը կ'շրջէին ։ Ոչ միայն երէ, այլ նաև օգտակար տունկեր ալ կ'գտնէին զոր պէտք չէր արհամարհել, և նորատի բնագէտն իր փափաքին հասաւ, վասն զի տեսակ մը վայրի շոմին դասու աղաւնայնի (chenopodée) ընտանիքէն և տեսակ տեսակ խաչաձևներ (crucifère) կաղամբի կարգէն, որ անտարակոյս կարելի պիտի լինէր «ընտանեցնել» տեղափոխութեամբ, ասոնք ջրկոտիմ, բողկ, շաղգամ և վերջապէս բազմաստ բուներ, թեթև մը մազոտ, որ մէկ կանգուն բարձրութիւն ունէին և գրեթէ թուխ կուտեր կ'բերէին ։

«Միթէ գիտե՞ս թէ այս տունկն ինչ է», հարցուց Հարպէրդ նաւորդին ։

— Ծխախոտ, պոռաց Փէնքրոֆ՝ որ՝ անշուշտ, իր սիրական տունկն մի միայն իր ծխափայտին հնոցին մէջ տեսեր էր ։

— Ո՛չ, Փէնքրոֆ, պատասխանեց Հարպէրդ. ծխախոտ չէ, մանանեխ է ։

— Թո՛ղ մանանեխ ըլլի, պատասխանեց նաւորդը. սակայն եթէ դիպուածով ծխախոտի տունկ մը նշմարես, կ'աղաչեմ չարհամարհես, բարեկամ ։

— Օրին մէկը պիտի գտնենք, ըսաւ Գեդէոն Սփիլէթ ։

— Իրա՞ւ, պոռաց Փէնքրոֆ ։ Սակայն, եթէ գտնուի, չգիտեմ թէ մեր կղզւոյն մէջ ուրիշ բան մը պիտի պակսի ։

Այս զանազան տունկերը, զոր ուշադրութեամբ արմատէն հաներ էին, մակոյկը փոխադրեցին, որմէ չէր հեռանար Կիւրոս, միշտ մոմուքովը պաշարուած։

Այսպէս թղթակիցն, Հարպէրդ և Բէնքրոֆ շատ անգամ ցամաքն ելան՝ երբեմն գետին աջ կողմը, երբեմն ձախ կողմը։ Այս կողմն այնքան առապար չէր, մինչդեռ միւսն անտառուտ էր։

Չափագէտն՝ իր կողմնացոյցը դիտելով՝ հասկցաւ որ գետին ուղղութիւնն՝ առաջին արմուկէն բռնելով՝ անզգայօրէն հարաւ-արեւմուտ և հիւսիս-արեւելք կ'ընթանար, և գրեթէ ուղղագիծ էր երեք մղոնի երկայնութեան մէջ։ Բայց թերեւս այս ուղղութիւնն աւելի հեռուն կ'փոխուէր և Մէրսին հիւսիս-արեւմուտ կ'զարնէր, այսինքն՝ Ֆրանքլէն լեռին մայթերուն կողմն, որոց ջրերը գետը կ'հոսէին անշուշտ։

Այս արշաւանքներուն մէկուն մէջ՝ Գեդէոն Սբիլէդ յաջողեցաւ զոյգ մը ողջ հաւ բռնել։ Հաւերն երկար ու նիհար կտուցներ, բարակ վիզ, կարճ թեւեր ունէին և կարծես թէ պոչէ զուրկ էին։ Հարպէրդ իրաւամբ տինամու (tinamous) անուանեց զանոնք, և որոշուեցաւ որ շինուելիք հանոցին առաջին հիւրերն ասոնք լինին։

Բայց դեռ հրացանները չէին պարպած, և այս Խոր-Արեւմուտքին անտառներուն մէջ հրացանի առաջին պայթումն ուրիշ գրգիռ չունէր այլ աղուոր թռչունի մ'երեւոյթն որ մարմնագննապէս ծիտու ձայլի մը կ'նմանէր։

«Կը ճանչեմ այդ թռչունը, պոռաց Բէնքրոֆ, և կրնանք ըսել թէ իր հրացանն ակամայ պարպեց։

— Ի՞նչ կ'ճանչես, հարցուց Գեդէոն Սբիլէդ։

— Մեր առաջին արշաւանքին ատեն խոյս տուող հաւը և որու անուամբ անտառին այս մասը մկրտեցինք։

— Ցակամա՛ր մը՞ պոռաց Հարպէրդ։

Իրօք՝ յակամար մ'էր, սիրուն թռչուն մ'որու փետուրներն՝ թէև կարծր, մետաղային փայլ մ'ունին։ Կապարէ քանի մը գնդիկներ զայն վար նետեր էին, և Թօփ նաւակը բերաւ զայն,

նոյնպէս տասն երկուքի չափ լօրէ°, աղաւնիի նմանող հաւեր, կանաչագոյն, որու թեւերուն մէկ մասը կարմրագոյն է, և իր բրուկը շիտակ ու ճերմակ գծով մը։

Այս ընտիր որսին պատիւը պատանիին իրաւունքն էր և ասոր վրայ սկսաւ պարծիլ։ Լօրիներն աւելի լաւ եղէ էին քան թէ յակամարը, որու միսը քիչ մը կարծր էր, բայց դժուարին պիտի լինէր համոզել Բէնքրոֆն որ ուտելի հաւերուն թագաւորը չէր սպաննած։

Առաւօտեան ժամը տասն էր՝ երբոր մակոյկը Մէրսի գետին երկրորդ արմուկը հասաւ, որ իր բերնէն գրեթէ հինգ մղոն հեռու էր։ Նոյն տեղը դադար առին նախաճաշ ընելու համար և այս դադարն՝ մեծ ու աղուոր ծառերուն տակ՝ կէս ժամ տեւեց։

Գետը դեռ վաթսունէն եօթսուն ոտք լայնութիւն ունէր և խորութիւնը վեց ոտք էր։ Չափագէտը դիտեր էր որ շատ մը գետակներ անոր ջրերը կ'առատացընէին, բայց անոնք լոկ աննաւարկելի վտակներ էին։ Իսկ անտառին գալով՝ ինչպէս յակամարի պուրակ նոյնպէս Խոր-Արեւմուտի անտառներ անուամբ, աչք կտրածին չափ կ'տարածուէր։

Մարդու ներկայութիւնը չէր երեւեր տեղ մը, ոչ բարձր անտառներու ներքև և ոչ Մէրսիի քարափեայ ծառերուն տակ։ Խուզարկուները կասկածելի հետք մը չգտան, և ակներև էր որ երբէք փայտատին տապարն այս ծառերը չէր կտրած, երբէք ռահահորդին դանակն մէկ կողմէ միւս կողմը ձգուած ջրային բաղեղները չէր յօշոտած, խիտ մացառներու և երկար խոտերու մէջ։ Եթէ նաւաբեկեալ մը կղզին ելնէր, ծովեզրէն պիտի չհեռանար, և այս տերեւախիտ յարկին տակ պէտք չէր փնտռել կարծեցեալ նաւաբեկութենէ ազատողները։

Ուստի չափագէտը կերպով մը կ'շտապէր Լինքօլն կղզւոյն արեւմտեան եզերքը հասնիլ, որ՝ իր հաշուին նայելով՝ գէթ հինգ մղոն հեռու էր։ Նորէն ճամբայ ելան, և թէպէտ, այնպէս կ'երեւէր որ արդի ուղղութեամբը՝ Մէրսի գետը չէ թէ դէպ ի ծովեզրը՝ այլ Ֆրանքլէն լեռին կողմը կ'հոսէր. բայց ուղեւոր-

ներն որոշեցին մակոյկը գործածել, որչափ ատեն որ իր փոխա-կին ներքև ծփալու համար ջուր գտնուի ։ Այս կերպով շատ նե-ղութեանց առաջը կ'առնուէին, և ժամանակ կ'շահէին, վասն զի պէտք պիտի լինէր սապարով ճամբայ բանալ թանձր պուրակ-ներ կտրելով ։

Բայց քիչ ատենէն ջրերը բոլորովին նուազեցան, ըսել է թէ մակընթացութիւնը կ'դադրէր — և իրաւի նոյն միջոցին պիտի դադրէր — ըսել է թէ Մէրսիի բերնէն մինչև նաւակին կեցած տեղը չէր ազդեր ։ Ուստի պէտք եղաւ փութալ ։ Նապ և Հար-պէրդ իրենց նաւարանները նստան, Բէնքրօֆ թիակներն առաւ և գետէն 'ի վեր ճամբան շարունակեցին ։

Այն լայնութեան ներքև որչափ շքեղ էին անտառները ։ Իրա-ւի՝ ասոնց ներկայութիւնը բուսաբանի մը բաւական էր որ ա-ռանց վարանման յայտնէ թէ Լինքօլն կղզին որ զուգահեռա-կանին ներքև կ'գտնուի ։

«Եւկալիպտոսնե՛ր» գոչեր էր Հարպէրդ ։

Արդարև՝ այն փառաւոր բոյսերն էին, անդր-արևադարձային գօտիին յատուկ սկաները, Աւստրալիոյ և Նոր-Զէլանտայի եւ-կալիպտոսներու համազգիներն, և այս երկու երկիրներն ալ Լինքօլն կղզւոյն ունեցած լայնութեան վրայ կ'գտնուէին ։ Ո-մանք երկու հարիւր ոտք բարձր էին ։ Իրենց կոճղին խարիսխը քսան ոտք շրջապատ ունէր, և իրենց կեղևն՝ որ հոտաւէտ ու-ռեինի ցանցերով պատած էր, մինչև հինգ մատնաչափ թանձր էր ։ Ձիւր այնքան հրաշալի և եզական բան մ'որքան այս մրտենիի տեսակ ահագին ծառերն, որոց կեղևները կողմնակի կ'դառնային լոյսին և չէին արգիլեր արևուն որ իր ճառագայթները մինչև գետինը հասցնէ ։

Այս եւկալիպտոսներու ստորոտն՝ թարմ խոտ մը հողը կ'ծած-կէր և թուփերուն մէջէն փոքրիկ թռչուններու երամներ խոյս կ'տային, որ լուսոյ շառաւիղներուն մէջ թևաւոր կարկեհաններու պէս կ'շողային ։

«Ահաւասիկ ծառե՛ր, գոչեց Նապ, բայց արդեօք բանի մը կ'ծա-ռայե՞ն ։

— Ո՛չ, պատասխանեց Բէնքրօֆ ։ Վիթխարի բոյսերն ալ մարդկային սկաներուն պէս են ։ Միայն տօնավաճառին երևալու համար եղած են ։

— Կարծեմ թէ կ'սխալիս, Բէնքրօֆ, պատասխանեց Գէտէօն Սփիլէթ, և թէ եւկալիպտոսի փայտն երկնօսագործները շատ օգ-տաւէտ կերպով գործածելու սկսած են ։

— Եւ ես պիտի աւելցնեմ, ըսաւ պատանին, որ այս եւկա-լիպտոսներն այն դասուն կ'պատկանին որ շատ օգտակար ձիւղեր ունի ։ Ինչպէս հնդիկ տանձենին (goyavier) որ հնդիկ տանձ կ'տայ, մեխակենին, որ մեխակ կ'բերէ, նռնենին, որ նուռ կ'արտադրէ, ընդաւոր կաղամբն (eugenia caulisflora) որու պտուղներն բաւական լաւ գինի շինելու կ'ծառայեն, մրտենին, որ ոգելից պատուա-կան ըմպելի կ'պարունակէ, հասարակ մրտենին՝ որու հունդերը կրնան պղպեղի տեղը բռնել. «կորովի եւկալիպտոսն» որ տեսակ մը պատուական մանանայ կ'արտադրէ, մէկ խօսքով բոլոր այն ծառերն որ «կենաց ծառեր» կամ «երկաթի փայտ» անունով ծա-նօթ են և մրտենիի այն դասուն կ'վերաբերին որ քառասուն վեց սեռ և տասն երեք տեսակ ունին ։»

Ամենը թող կ'տային որ Հարպէրդ խօսի. նա մեծ եռանդով կ'յիշէր իր բուսաբանութեան պզտիկ դասը ։ Կիւրոս Սմիթ ժպտե-լով անոր կ'նայէր և Բէնքրօֆ անբացատրելի հպարտութեան զգացումով մը.

«Լաւ, Հարպէրդ, պատասխանեց նաւորդը, բայց կրնամ եր-դում ընել որ այդ յիշած բոլոր օգտակար ծառերդ ասոնց պէս սկաներ չեն ։

— Ճիշտ է, Բէնքրօֆ ։

— Այս իմ ըսածս կ'հաստատէ, պատասխանեց նաւորդը, այսինքն՝ սկաները բանի մ'օգուտ չունին ։

— Ահա այդ կերպով կը սխալիս, Բէնքրօֆ, ըսաւ այն ա-տեն չափազէտը, և իրօք այդ ահագին եւկալիպտոսներն որ մեզ կ'հովանաւորեն՝ բանի մ'օգուտ ունին ։

— Եւ ի՞նչ բանի ։

— Իրենց բնակած երկրին օդը մաքրելու. — Գիտէ՞ք Աւստրա-
լիոյ և Նոր-Զելանտայի մէջ ինչպէս կ'անուանեն։

— Ո՛չ, Պարոն Կիւրոս։

— Զանոնք «տենդի ծառեր» կ'անուանեն։

— Մի՞թէ այն պատճառաւ որ տենդ կ'տան։

— Ո՛չ, վասն զի կ'արգիլեն։

— Լաւ, ես ալ այդ խօսքը պիտի նշանակեմ, ըսաւ Թղթա-
կիցը։

— Ուրեմն նշանակէ, սիրելիդ իմ Սպիլէդ, վասն զի ապա-
ցուցած կ'երևի որ եւկալիպտոսները կարող են օդը մաքրել և
մորուտներու ժահահոտութիւնները ցրուել։ Փորձ ըրին տնկելու
այս բնական դեղն Եւրոպայի հարաւային և Ափրիկէի հիւսիսա-
յին կողմերն որոց հողը բոլորովին վատառողջ էր, և որոց
բնակիչներու առողջաբանական վիճակը քիչ քիչ լաւցաւ։ Այս
մրտենիներու ճիւղին վերաբերող ծառերն այն կողմերը դնե-
լով՝ այնուհետև ընդհատական տենդը չտեսնուեցաւ։ Այս կրո-
ղութիւնը ճշմարիտ է, և Լինքոլն կղզւոյս բնակիչներուն համար
բարեբաղդութիւն մ'է այս պարագան։

— Ա՛խ, ինչ կղզի, ինչ օրհնեալ կղզի, գոչեց Բէնքրօֆ.
ձեզի ըսի արդէն, բան մը չպակսիր այս տեղ, բայց միայն. . .

— Այդ ալ պիտի ստանանք, Բէնքրօֆ, այդ ըսածդ ալ պի-
տի գտնենք, պատասխանեց չափագէտը. բայց շարունակենք մեր
նաւարկութիւնը, և մակոյկը յառաջ քշենք այնչափ հեռու որ-
չափ գետը նաւարկելի է։»

Ուստի՝ երկրագնացութիւնը յառաջ տարին, առ նուազն երկու
մղոնի չափ, եւկալիպտոսներով ծածկուած երկրի մը մէջ, որոնք
կղզւոյն այս մասին անտառները կը կազմէին։

Այս ծառերը՝ Մէրսիին երկու կողմն՝ աչք կտրածի չափ կը
տարածուէին, և գետին փոսն, որ բաւական օձապտոյտ էր.
բարձր ու զալարուած քարափներու մէջ կ'անցնէր։ Շատ ան-
գամ այս փոսին մէջ բարձր խոտեր և մինչև իսկ սուր ժայռեր
կ'գտնուէին այնպէս որ նաւարկելը շատ դժուարին կ'ըլլար։

Թփախները չէին թաներ, և Բէնքրօֆ ստիպուեցաւ լծակով մա-
կոյկը քշել։ Կ'երևէր նաև որ գետին յատակը քիչ քիչ կ'բար-
ձրանար, և պիտի գար վայրկեան մ'ուր նաւակը՝ ջրի նուազու-
թենէ, պիտի ստիպուէր կայ առնուլ։

Արդէն արևը հորիզոնին վրայ կ'իջնէր և հողին վրայ ծառե-
րուն երկայն ստուերները կ'ձգէր։ Կիւրոս Սմիթ՝ տեսնելով որ
այն օրը չպիտի կարենային կղզւոյն արևմտեան եզրը հասնիլ,
որոշեց օթևանիլ այն տեղն իսկ ուր նաւակը ջրի պակսութենէ
պիտի կենար։ Կարծէր թէ նոյն եզերքէն հինգ վեց մղոն հեռու
էր. այս հեռաւորութիւնը շատ երկար կ'երևէր իրեն և անխո-
հեմութիւն կ'համարէր յառաջ քալել գիշեր ատեն այն անծանօթ
անտառներուն մէջ։

Ուստի ամեն ճիգ թափեցին որ յառաջանան անտառին մէջէն.
որ քիչ քիչ կ'թանձրանար և աւելի բնակելի կ'երևէր, վասն
զի եթէ նաւորդին աչքերը լաւ կ'տեսնէին, այնպէս երևցաւ իրեն
որ թփերուն տակ կապիկներու խումբեր կ'վազվզէին։ Երբեմն
ալ՝ այս կենդանիներէն մէկ քանին մակոյկէն քիչ մը հեռու կե-
ցան և զաղթականները դիտեցին առանց երկիւղ մը յայտնելու
այնպէս որ, առաջին անգամ մարդիկ տեսնելով՝ անոնցմէ վախ-
նալու չէին սովորած։ Դիւրին էր այս կապիկները հրացանով
տապալել. բայց Կիւրոս Սմիթ այս անօգուտ կոտորածն արգի-
լեց, թէև կատաղին Բէնքրօֆ կ'ուզէր փորձ մ'ընել։ Այս ըն-
թացքը խոհական էր, վասն զի՝ այս կապիկներն ուժեղ և յե-
տին ծայր թեթևաշարժ լինելով՝ կրնային աճարկու դառնալ, և
աւելի աղէկ էր բոլորովին անպատեհ յարձակումով զանոնք
չգրգռել։

Իրաւ է որ նաւորդը պարզապէս իբրև կերակուրի յարմար
կենդանի մը կ'նկատէր կապիկն, և արդարև այս կենդանին, որ
լոկ խոտակեր է, պատուական եղէ մ'է. բայց որովհետև ուտե-
լիք առատ ունէին, աւելորդ էր պարապ տեղը պաշար փճել։

Ժամը չորսին մօտ՝ Մէրսի գետին վրայ նաւարկելը շատ դժուար
եղաւ, վասն զի անոր ընթացքը կ'արգիլուէր ջրային տունկերով

ու ժայռերով։ Քարափները հետզհետէ կը բարձրանային, և արդէն գետին փոսն Ֆրանքլէն լեռին առաջին քարամոյթներուն մէջ կ'մնէր։ Հաւանաբար անոր աղբերակները հեռու չէին կրնար ըլլալ, քանի որ լեռին հարաւային զառիվայրներէն իջած ջրերով կ'լեցուէին։

«Քառորդ մը չանցած՝ պիտի ստիպուինք կայ առնլու, Պարոն Կիւրոս, ըսաւ նաւաստը։

— Լաւ, մենք ալ կ'իջնենք ցամաքը, Բէնքրօֆ, և գիշերուան համար օթևան մը կ'պատրաստենք։

— Քարէայ–Պալատէն որչափ հեռու կրնանք ըլլալ, հարցուց Հարպէրդ։

— Գրեթէ եօթն մղոն, պատասխանեց չափագէտը. բայց գետին պտոյտներն ալ հաշուելով՝ որ մեզ հիւսիս–արևմտեան կողմերը տարին։

— Աւելի յառաջ պիտի երթա՞նք, հարցուց Թղթակիցը։

— Այո, որչափ որ կարելի է պիտի շարունակենք մեր ընթացքը, պատասխանեց Կիւրոս Սմիթ։ Վաղը՝ այգուն՝ մակոյկը պիտի թողունք, երկու ժամու մէջ մեզ միւս ծովեզրէն զատող հեռաւորութիւնը պիտի կտրենք, և բոլոր օրը մեզի կ'մնայ այն կողմերը հետազօտելու համար։

— Օ՛ն առաջ» պատասխանեց Բէնքրօֆ։

Բայց քիչ ատենէն մակոյկը գետին կողմնակի յատակին քսուեցաւ, որու լայնքը նոյն միջոցին գրեթէ քսան ոտք էր։ Իր փոսին վերևը դալարուտ խիտ հովանոց մը կ'բոլորուէր և կէս կիսովին մութը կ'թողուր։ Նոյնպէս քարավազի մը բաւական բարձր որոտումը կ'լսուէր, և որմէ կ'իմացուէր թէ քանի մը հարիւր ոտք հեռու բնական անկք մը պիտի գտնուէր։

Եւ իրաւ՝ վերջին անգամ մ'ալ շրջան մ'ընելով՝ ծառերուն մէջէն ջրվէժ մ'երևցաւ։ Մակոյկը փոսին յատակին զարկաւ, և քանի մը վայրկեան ետք՝ կոճղի մը կապուեցին լայն պարանով մը, աջ գետափին մօտ։

Գրեթէ ժամը հինգ էր։ Արևուն վերջին ճառագայթներն խիտ

ոստերու տակէն կ'սահէր և շեղակի կ'զարնէր քարավազին, որու խոնաւ փոշին հատուածակողմի գոյներով կ'փայլփլէր։ Աւելի վեր՝ Մէրսի գետին փոսն անտառակին ներքև կ'անհետանար, ուր թաղուն աղբերակէ մ'իր ջուրը կ'ընդունէր։ Իր տարածութեան վրայ հոսող այլ և այլ վտակներ՝ վարի կողմը ճշմարիտ գետ մը կ'յօրինէին, բայց իրօք վճիտ առուակ մ'էր առանց խորութեան։

Նոյն վայրն, որ չքնաղ էր, օթևան առին։ Գաղթականները ցամաքն ելան, և կրակ վառեցին լայն լոտեններու փունջին ներքև, որոց ճիւղերուն մէջ Կիւրոս Սմիթ և իր ընկերներն՝ 'ի հարկին, պատսպարան մը պիտի կրնային գտնել գիշերուան համար։

Ընթրիքը շուտ մը լափեցին, վասն զի ամենքն ալ անօթի էին, և քնանալու պատրաստուեցան։ Բայց մութը կոխելուն՝ կասկածելի մռնչիւններ լսուելով՝ կրակը նոյն գիշերուան համար չմարեցին, որպէս զի քնացողներն անոր բոցերէն պաշտպանուին։

Նաւ ու Բէնքրօֆ կարգաւ հսկեցին և վառելի փայտը պակաս չըրին։ Կարելի է որ չխաբուեցան՝ երբ այնպէս երևցաւ իրենց որ օթևանին բոլորտիքը կենդանիներու ստուերներ կ'թափառէին, թէ անտառակին տակ, թէ ոստերուն մէջ. բայց նոյն գիշերն առանց դիպուածի անցուցին, և հետևեալ օրն — հոկտեմբերի 31ին — առաւօտեան ժամը հինգին՝ ամենքը ոտք ելան և մեկնելու պատրաստ գտնուեցան։

ԳԼՈՒԽ Դ.

Գետը 'ի ծովեզրը ճնալու տեղն — Կաղիններու ժամի մը խումբեր — Նոր ջեռոց մը — Ինչու համար ջուրը ցերմեր — Իբրև եղերբ՝ անտառ մը — Սողունի հրոսանքանը — Գեդեոն Սբիլեթ Հարբերտի նախանձը կը գրգռէ — Հնդկեղեգնի շեխն.

Առաւօտեան ժամը հինգին էր որ գաղթականներն՝ առաջին նախաճաշն ընելէ ետև, Ճամբայ ելան՝ կղզւոյն արեւմտեան եզրն ամենէ կարճ Ճամբով հասնելու մտօք : Ո՛րչափ ատեն պէտք էր հասնելու : Կիւրոս Սմիթ երկու ժամ ըսեր էր, բայց այդ ալ իրենց հանդիպելիք արգելքներուն տեսակէն կախում ունէր :

Խոր-Արեւմուտքի այս մասը խիտ անտառներով ծածկուած կ'երևէր, աճագին թաւուտի մը պէս, որ այլազան տունկերով կը բաղկանար : Ուրեմն հաւանական էր որ խոտերու, մացառներու, բաղեղներու մէջէն Ճամբայ մը բանալու և տապար 'ի ձեռին քալելու պէտք պիտի լինէր — անշուշտ հրացան ալ առնելով, եթէ կարեւորութիւն տրուէր առջի գիշեր լսուած վայրի կենդանիներու ձայնին :

Գրանքլէնի լեռին դիրքէն օթեւանին տեղը դիւրին եղեր էր որոշել, և որովհետև հրաբուխն հիւսիսային գին՝ երեք մղոն հեռու կ'բարձրանար, բաւական էր միայն ուղիղ գծով դէպ 'ի հարաւ-արևմուտ դիմել՝ արևմտեան ծովափը հասնելու համար :

Մակոյկին պարանին կապը լաւ մը ստուգելէն ետև՝ Ճամբայ ելան : Բէնքրոֆ ու Նապ իրենց հետը պաշար առին որպէս զի գէթ երկու օր այս պզտիկ խումբը կարենայ կերակրել : Որս չպիտի ընէին, և չափագէտը պատուիրեց իր ընկերներուն որ բնաւ հրացան չպարպեն անօգուտ տեղը, որպէս զի չիմացուի որ ծովափին շրջակաները կ'գտնուին :

Ջրվէժէն քիչ մը վեր՝ տապարի առաջին հարուածները մացառներուն տրուեցան, հերձիներու մէջ, և Կիւրոս Սմիթ՝ կողմնացոյցը ձեռքը բռնած՝ ցոյց տուաւ բռնելիք Ճամբան :

Այն ատեն անտառն այնպիսի ծառեր կ'պարունակէր որոց մեծ մասն արդէն տեսեր էին լճակին և Մեծ-Տեսքին սարահարթին շրջակաները : Ասոնք դեոդարներ (déodar), դուգլասներ (douglas) խժենիներ, եւկալիպտոսներ, վիշապենիներ, իբիսկոսներ (hibiscus) մայրեր և ուրիշ ծառեր, որ սովորաբար միջակ էին, վասն զի իրենց շատութենէ չկրցեր էին աճիլ : Ուստի գաղթականները ծանր ծանր միայն կրցան յառաջանալ այն Ճամբէն զոր կ'բանային քանի կ'քալէին, և որ՝ չափագիտին կարծիքին նայելով՝ վերջէն Կարմիր-Վտակին պիտի միանար :

Մեկնելէն 'ի վեր՝ գաղթականները կղզւոյն լեռնային դրութիւնը կազմող զառիվայրներէն վար կ'իջնէին, և շատ չոր հողի մը վրայ. բայց անոր շքեղ բոյսերէն կ'իմացուէր որ կամ ներքին կողմն այլ և այլ առուներ կ'գտնուէին կամ մօտաւոր գետակ մը կար : Սակայն Կիւրոս Սմիթ չէր յիշեր որ խառնարանին կողմն արշաւելու ատեն՝ Կարմիր-Վտակէն ու Մերսիէն զատ ջրի ընթացք մը տեսած լինէր :

Այս արշաւանքին առաջին ժամերուն ատեն՝ կապիկներու խումբեր նշմարեցին նորէն, որ կարծես թէ մեծ զարմանք կ'յայտնէին մարդիկ տեսնելով որոց տեսքը նոր բան մ'էր իրենց համար : Գեդէոն Սբիլէթ կատակարանութեամբ կ'հարցնէր թէ արդեօք այս թեթեւաշարժ ու կորովի կապիկները զինքն ու ընկերներն իբրև այլասերած եղբայրներ չէին նկատեր :

Եւ իրօք՝ սարդ հետևակ մարդիկ որ ամեն վայրկեան մացառներէն, բաղեղներէն, ծառերու կոճղերէն սաստիկ կ'նեղուէին ու կ'արգիլուէին, չէին փայլեր այս արագոտն կենդանիներու մօտ որ ճիւղէ ճիւղ կ'ոստոստէին և իրենց ընթացքն անարգել կը շարունակէին : Բազմաթիւ էին այս կապիկները, բայց բարեբաղդաբար՝ բնաւ թշնամական տրամադրութիւն մը չէին ցուցըներ :

Նոյնպէս քանի մը վարազներ, ակուտիներ, ագեվաղներ և ու-

րիշ կրծաններ տեսան և մէկ երկու կուղեններ, որոց Բէնքրօֆ քանի մը կապարէ գնդակներ յօժարակամ պիտի ղրկէր եթէ հրաման ունենար։

«Բայց, կ'ըսէր նա, որսորդութիւնը դեռ չսկսաւ։ Ուրեմն խայտացէ՛ք, բարեկամներս, ցատկռտեցէ՛ք և խաղաղիկ թռեցէ՛ք։ Ի դարձին ձեզի քանի մը խօսք պիտի ըսենք։»

Առաւօտեան ժամը ինն ու կէսին՝ Ճամբան՝ որ ուղղակի հարաւ-արևմուտ կ'առնէր, յանկարծ անծանօթ գետակէ մը փակուեցաւ։ Այս գետակն երուանէն մինչև քառասուն ոտք լայն էր, փոսը դարուվար և անոր մէջ ասղես անդին շատ մը ժայռեր ցցուած ըլլալուն՝ ջուրն արագութեամբ և որոտալով կ'հոսէր։ Այս գետակը խորունկ էր և պայծառ, բայց կարելի չէր բնաւ անոր վրայ նաւարկել։

«Ասասիկ մեր Ճամբան կտրեցաւ, պոռաց Նապ։

— Ո՛չ, պատասխանեց Հարպէրդ, գետակ մ'է այս և լողալով պիտի կարենանք անցնիլ։

— Ի՞նչ պէտք կայ լողալ, պատասխանեց Կիւրոս Սմիթ։ Ցայտնի է թէ այս գետակը ծովը կ'վազի։ Անոր ձախ եզերքը մնալով քարափը բռնենք երթանք, և անտարակոյս մեզ շուտ մը ծովեզերքը պիտի հանէ։ Ճամբայ ելնենք։

— Պա՛հ մը կեցէ՛ք, ըսաւ Սբիլէտ։ Բարեկամներ, ի՛նչ անուն պիտի տանք այս գետակին։ Մեր աշխարհագրութիւնն անկատար չթողունք։

— Ճիշտ է, ըսաւ Բէնքրօֆ։

— Անուն մը տո՛ւր, տղաս, ըսաւ չափագէտը՝ խօսքը պատանիին ուղղելով։

— Միթէ աւելի լաւ չըլլնիր համբերել որ գետակը լաւ մը զննենք մինչև բերանը հասնելով, դիտել տուաւ Հարպէրդ։

— Թող այդպէս ըլլի, պատասխանեց Կիւրոս Սմիթ։ Շարունակենք ուրեմն առանց սպասելու։

— Վայրկեան մ'ալ սպասենք, ըսաւ Բէնքրօֆ։

— Ի՞նչ կայ, հարցուց Սբիլէտ։

— Երէ որսալն արգիլուած է, ձկնորսելու արգելք մը չկայ, կարծեմ, ըսաւ նաւորդը։

— Պէտք չէ որ ժամանակ կորուսենք, պատասխանեց չափագէտը։

— Ո՛հ, հինգ վայրկեան միայն կ'ուզեմ, յարեց Բէնքրօֆ, միայն հինգ վայրկեան կ'ուզեմ ձեր նախաճաշին օգտին համար։»

Եւ Բէնքրօֆ՝ ժայռափին վրայ պառկելով՝ թևը յստակ ջուրը մխեց և շատ մը խեցգետիններ, որ ժայռերու մէջ կ'վխտային, դուրս հանեց։

«Այդ պատուական ուտելիք մը պիտի ըլլի, գոչեց Նապ, նաւորդին օգնութեան գալով։

— Միթէ իրաւունք չունիմ ըսելու որ ծխախոտէ զատ՝ ամեն բան կ'գտնուի այս կղզին» մրմնջեց Բէնքրօֆ հառաչ մը հանելով։

Հրաշալի որս մ'ընելու համար հինգ վայրկենի պէտք չեղաւ, վասն զի գետակին մէջ շատ առատ խեցգետին կար։ Այս խեցեմորթներուն խեցին ղուկաքարի կապոյտ գոյնի կ'զարնէր, և պզտիկ ակռայով զինուած ցռուկ (rostre) մ'ունէր։ Գաղթականները պարկ մը լեցուցին և նորէն իրենց Ճամբան շարունակեցին։

Այս գետակին ժայռափը բռնելով՝ գաղթականներն աւելի շուտ և դիւրաւ կ'քալէին։ Այս կար որ Ճամբաներն ամենևին մարդկային հետք չէր երևեր։ Առեն առեն, կ'դիտէին միայն մեծահասակ կենդանիներու ձգած հետքը, որոնք սովորաբար կ'գային այս գետակէն ջուր խմելու, բայց ուրիշ բան չկար, և անտարակոյս Խաղ—Արևմուտքի այս կողմը չէր որ պէքարին ընդուներ էր կապարեայ գնդիկն, որ Բէնքրօֆի մէկ ակռան փշրեց։

Սակայն՝ գէպ 'ի ծովը վազող այս արագասահ գետակը դիտելով՝ Կիւրոս Սմիթ տրամադիր էր հաւատալու որ իր ընկերներն ու ինք արևմտեան եզերքէն իրենց կարծածէն աւելի հեռու էին։

Եւ իրաւի՝ նոյն ժամուն ծովեզրին կողմը ջրերը կ'բարձրանային և գետակին ընթացքը կրնային նա շրջել եթէ իր բերանը միայն քանի մը մղոն հեռու ըլլէր։ Արդ՝ այս արգելքը տեղի

չէր ունենար, և ջրին շառիղը փոսին բնական դար 'ի վարը կ'ընթանար։ Ուստի չափագէտը հարկաւ զարմանք զգաց, և ստէպ կողմնացոյցին նայեցաւ, որպէս զի ստուգէ թէ արդեօք գետակին մէկ ճիւղը զինք Խոր-Արևմուտ կ'տանէ՞ր։

Սակայն՝ գետակը քիչ քիչ կ'լայննար, և իր ջրերն աւելի կ'հանդարտէին։ Իր աջ եզրին ծառերն այնքան խիտ էին որքան ձախ կողմինները, և անկարելի էր որ մարդ պարզ աչքով հեռուն զննէ. բայց այս անտառուտ կոյտերն անշուշտ ամայի էին, վասն զի Թօփ չէր հաչեր, և մտացի կենդանին անտարակոյս գետակին մօտ եթէ օտարական մը գտնուէր իրեան պիտի հանէր։

Ժամը տասն ու կէսին՝ Հարպէրդ՝ որ քիչ մ'առջևէն կ'երթար, սաստիկ զարմանք պատճառեց Կիւրոս Սմիթին, երբ յանկարծ կանկ առնելով գոչեց.

«Ծո՜վը։»

Եւ քանի մը վայրկեան ետք՝ գաղթականներն՝ անտառին ծայրը կենալով կղզւոյն արևմտեան ծովափը տեսան որ իրենց աչքին առջև կ'տարածուէր։

Բայց ինչ հակապատկեր այս ծովափին և արևելեան ծովափին մէջ, ուր դիպուածը զիրենք նետեր էր։ Կրանիթէ պատուար, ծովուն մէջ ժայռ մը և ոչ իսկ աւազափ կար։ Անտառն էր եզերքին սահմանը, և իր վերջին ծառերն, ալիքներէն զարնուելով՝ ջրերուն վրայ կ'ծռէին։

Իրօք եզր մը չէր, ինչպէս որ սովորաբար բնութիւնը կ'յօրինէ, թէ ընդարձակ աւազեայ վայրեր տարածելով, թէ ժայռեր խմբելով, այլ սքանչելի ափ մ'որ խիտ աղուոր ծառերէ կը բաղկանար։ Քարափն այնպէս բն բարձրացած էր որ ամենէ մեծ ծառերու վրայ կ'նայէր, և այս հաստատ հողին վրայ՝ որու խարիսխը կրանիթէ էր, անտառային փառաւոր տունկերն այնպէս հաստատուն կերպով անկուած կ'երևէին, ինչպէս անոնք որ կղզւոյն ներքին կողմը գումարուած էին։

Այն միջոցին գաղթականները փոքրիկ առուակի մը խորշը կը գտնուէին, որ ձկնորսի երկու երեք հատ նաւակ անգամ չէր

կրնար պարունակել, և որ նոր առուակին իբրև պարանոց կ'ծառայէր. բայց զարմանալի դիրք մ'էր այս. գետակին ջրերը փոխանակ ծովը թափելու թեթև զառուվար բերնէ մը, քառասուն ոտքէ աւելի բարձր տեղէ մը կ'վազէր — և այս պարագայէն կարելի էր մեկնել թէ ինչու համար, մակընթացութեան ժամուն՝ գետակին վերնակողմ զգալի չէր եղած։

Իրաւ է՝ Խաղաղականին մակընթացութիւնները, մինչև անգամ բարձրագոյն աստիճանին մէջ՝ երբէք գետակին հաւասարութեան չպիտի հասնէին, որու փոսն իբրև վերին ջրանցք (bief) կ'կազմէր, և անշուշտ՝ դեռ միլիոնաւոր տարիներ պիտի անցնին ջրերն այն կրանիթէ ամբարտակը մաշելէն և անցանելի բերան մը փորելէն առաջ։ Ուստի՝ բոլորն ալ միաձայն՝ այս գետակն անուանեցին՝ «Քարավաղի-Գետակ (Falls-river)։»

Անդին՝ դէպ 'ի հիւսիս՝ անտառէն շինուած եզերքն՝ երկու մղոնի չափ տեղի վրայ կ'տարածուէր. ապա ծառերը կ'սկսէին ցանցառ դառնալ, և հեռուն՝ շատ նկարագրագեղ լեռներ՝ գրեթէ ուղիղ գծի մը վրայ կ'նկարուէին, որ հիւսիս և արևմուտ կ'երկըննային։

Ընդ հակառակն՝ Քարավաղի-Գետակին և Սողունի հրուանդանին մէջ գտնուած ծովափին վրայ՝ ուրիշ բան չկար այլ միայն ահագին անտառներ, փառայեղ ծառեր, ոմանք շիտակ, ոմանք հակած, որոց արմատները ծովուն երկայն ալիքը կ'լուային։

Արդ՝ այս կողմն էր, այսինքն բոլոր Օձապտոյտ թերակղզւոյն վրայ որ գաղթականներն իրենց քննութիւնը պիտի շարունակէին, վասն զի ծովափին այս մասն աւելի ապաւէններ պիտի ունենար քան թէ միւսն որ խոպան ու վայրի լինելով անտարակոյս որ և է նաւաբեկեալներու պատսպարան մը չպիտի ընծայեր։

Օդն աղուոր ու պայծառ էր, և ապառաժի մը բարձունքէն, որու վրայ նախաճաշիկը պատրաստեցին Նապ ու Բէնքրոֆ, կարելի էր շատ հեռուն տեսնել. Հորիզոնը բոլորովին յստակ էր, և ծովուն վրայ առագաստ մը չկար։ Բոլոր ծովափին վրայ՝ որչափ որ աչքը կրնար կտրել, ոչ նաւ կ'երևէր և ոչ բեկոր մը։

Բայց չափագէտն այս մասին հաստատ համոզում մը պիտի կրնար կազմել միայն՝ երբոր բոլոր ծովեզրը քննէր՝ մինչեւ Օձապտոյտ թերակղզւոյն ծայրը։

Նախաճաշիկը շուտով կերան, և ժամը տասն ու մէկ ու կէսին՝ Կիւրոս Սմիթ մեկնելու նշանը տուաւ։ Փոխանակ ապառաժի մ'ողնայարը կամ աւազափը շրջելու, գաղթականները պարտաւորեցան ծառերուն հովանոյն տակէն քալել՝ ծովափէն չհեռանալու համար։

Քարավազի-Գետակին բերնէն մինչեւ Սողունի հրուանդանը գրեթէ տասն երկու մղոն էր։ Գաղթականները պիտի կարենային այս հեռաւորութիւնը կարել չորս ժամու մէջ՝ հարթ ծովափէ մ'անցնելով և առանց արտորալու. բայց այս ժամանակին կրկնապատիկը պէտք եղաւ իրենց նպատակին հասնելու համար, վասն զի անդադար կանգ կ'առնէին ծառերու շրջանն ընելու, մացառներ և ջրային բաղեղներ կտրելու համար, և այս արգելքները շատ կ'երկնցընէին իրենց ճամբան։

Սակայն այս ծովափին վրայ նաւաբեկութեան նշան մը չէր երեւեր։ Իրաւ է որ, ինչպէս Գեդէոն Սփիլէթ դիտել տուաւ, ծովը թերեւս ամէն բան դէպ 'ի անդունդը քշեր էր, և հետեւապէս պէտք չէր հետեւցընել, նաւաբեկութեան հետք մը չգտնելուն, թէ Լինքօլն կղզւոյն այս կողմը նաւ մ'ընկած չպիտի լինէր։

Արդէն ժամը հինգ էր և Օձապտոյտ թերակղզւոյն ծայրն՝ գաղթականներուն գտնուած տեղէն դեռ ևս երկու մղոն հեռու էր։ Բացայայտ կ'երեւէր որ Սողունի հրուանդանը հասնելէն ետև՝ Կիւրոս Սմիթ և իր ընկերները վերադառնալու ժամանակ չպիտի ունենային՝ արեւուն մայր մտնելէն առաջ, մինչեւ այն օթեւանն զոր Մէրսի գետին աղբերակներուն մօտ հաստատեր էին։

Ուստի՝ հարկ կար գիշերը նոյն հրուանդանին խոկ անցընել։ Բայց ուտելիքը պակաս չէր, և այս մասին բաղդաւոր էին ուղեւորները, վասն զի այն կողմերն երէ չէր գտնուեր, որ՝ իրօք՝ ծովափ մ'էր։ Իսկ ընդ հակառակն՝ թռչուններ կ'վխտային, ինչպէս [illegible], [illegible], [illegible], [illegible], թութակ, զարգմանա-

կաւոր պապկայ, փասեան, աղաւնի և ուրիշ բազմաթիւ հաւեր։ Չկար ծառ մ'որ բոյն մը չունենար, և ոչ բոյն մ'ուր ձագուկներ իրենց թեւերը չզարնէին։

Երեկոյեան ժամը եօթին՝ գաղթականներն՝ սաստիկ յոգնած՝ Սողունի հրուանդանը հասան, որ ծովուն մէջ այլանդակ ձեւ մը ունէր խղունջի։ Այս տեղ կ'աւարտէր հրուանդանի ծովափնեայ անտառը, և ծովեզրն իր հարաւային մասին վրայ՝ սովորական եզերքի մը տեսքը կ'առնուր, իր ժայռերով, խութերով և աւազակոյտներով։

Ուստի կարելի էր որ կայմաղուրկ նաւ մը կղզւոյն այս մասին վրայ բոլորովին ընկած լինէր. բայց գիշերը կ'հասնէր, և պէտք եղաւ հետեւեալ օրուան թողուլ քննութիւնը։

Բէնքրոֆ ու Հարպէրթ շուտ մ'օթեւան մը հաստատելու համար յարմար վայր մը փնտռեցին։ Խոր-Արեւմտեան անտառին վերջին ծառերն այն սարաւանդին վրայ կ'լմննային, և անոնց մէջ հնդկեղէգներու փունջեր տեսաւ պատանին։

«Լաւ, ըսաւ, աւասիկ թանկագին գիւտ մը։

— Թանկագի՞ն, պատասխանեց Բէնքրոֆ։

— Անտարակոյս, վրայ բերաւ Հարպէրթ։ Չպիտի ըսեմ քեզի, Բէնքրոֆ, որ հնդկեղէգնի կեղեն, գլուբաբեկ հիւսակի պէս կտրտուելով՝ սակառներ կամ զամբիւղներ շինելու կ'ծառայէ, թէ այս կեղեը, թրմելով՝ Չինաստանի թուղթ շինելու կ'ծառայէ, թէ ցօղունները, իրենց խոշորութեան համեմատ, ցուպեր կ'մատակարարեն, նոյնպէս ծխափայտներ, խողովակներ, թէ մեծ հնդկեղէգները այլ և այլ շինութեանց համար՝ պատուական նիւթ կ'մատակարարեն, թեթեւ և հաստատուն, որոց բնաւ միջատները չեն վնասեր։ Աւելորդ կ'սեպեմ նաև ըսել որ հնդկեղէգներու միջնավարակները սղոցելով և այս վարակը յօրինող շեղ միջնորմին մէկ մասը իբրեւ յատակ պահելով՝ ամուր և վայելուչ ամաններ կ'շինեն որ Չինացւոց մէջ շատ կ'գործածուին։ Ո՛չ, այս ըսելիքս քեզ գոհ չպիտի ընէր։ Բայց...

— Բայց...

— Բայց՝ եթէ չգիտես, պիտի յայտնեմ քեզի որ Հնդկաստանի մէջ ծներեկի տեղ կ'ուտեն այս հնդկեղէգները:

— Երսուն ոտք բարձր ծներեկնե՛ր, գոչեց նաւորդը: Եւ միթէ լաւ են:

— Պատուական, պատասխանեց Հարպէրդ: Միայն՝ երսուն ոտք բարձր եղող բուներ չեն կերածնին, այլ հնդկեղէգի նորաբոյս ծիլերը:

— Սքանչելի՛ է, տղաս, սքանչելի՛, պատասխանեց Բէնքրօֆ:

— Այս ալ ըսեմ որ նոր բուներու ծուծը՝ երբ քացախով եփուին, շատ յարգի համեմ մը կ'դառնայ:

— Երթալով կ'լաւնայ գործը, Հարպէրդ:

— Վերջապէս այս եղէգներն իրենց վարակներէն անուշ հեղուկ մը կ'կաթեն, որով շատ ախորժելի ըմպելի մը կրնայ շինուիլ:

— Լմնցա՞ւ, հարցուց նաւորդը:

— Այո՛, լմնցաւ:

— Արդեօք չը՞ծխուիր այդ եղէգը:

— Չծխուիր, խեղճ Բէնքրօֆ:»

Հարպէրդ և Բէնքրօֆ՝ գիշերն անցընելու համար՝ դիւրաւ գտան յարմար օթեւան մը: Ծովեզրին ժայռերն շատ բաժնուած էին, վասն զի հարաւ-արեւմտեան հովերու պատճառաւ ալիքներն ըստ երեւոյթին ուժգին կ'զարնուէին անոնց որ՝ խոռոչներ ունենալով՝ գէշ օդերէ կրնային պատսպարել զաղթականները: Բայց այն միջոցին որ այս փապարներուն մէկուն մէջ մտնելու կ'պատրաստուէին՝ ահարկու մռնչիւններ զիրենք կեցուցին:

«Ետեւ դարձի՛ր, գոչեց Բէնքրօֆ: Մեր հրացանները լոկ մանր գնդակներ ունին, և այսպէս լաւ մռնչող կենդանիներ իբրեւ աղի հատիկներ պիտի ընդունին մեր այդ գնդիկները:»

Եւ նաւաստին Հարպէրդի թեւէն բռնելով՝ ժայռերուն տակը պատսպարեց, այն միջոցին որ փառաւոր կենդանի մը քարայրին բերանը կ'երեւէր:

Ամերիկայի յովազ մ'էր այն, իր Ասիոյ համասեռներուն գրեթէ հաւասար հասակով, այսինքն գլխուն ծայրէն մինչեւ պոչին բռնած տեղը հինգ ոտքէն աւելի էր: Իր շիկագոյն մորթը կանոնաւորապէս գծուած սեւ բիծերու շարք մ'ունէր, որ իր փորին ճերմակ մորթին հետ աչքի կ'զարնէր: Հարպէրդ գիտեց որ այս կենդանին վագրին վայրագ ոսոխն է, և կուգուարէն շատ աւելի ահաւոր, այս վերջինը միայն գայլին նման լինելով:

Յովազը յառաջ անցաւ և իր չորս դին նայեցաւ, մազերը տնկելով, աչերը հրացայտ, որպէս թէ առաջին անգամ մարդու հոտ կ'առնուր:

Նոյն միջոցին Գեդէոն Սբիլէտ բարձր ժայռերու շրջանը կ'ըներ, և Հարպէրդ կարծելով թէ յովազը չէր տեսած, դէպ անոր պիտի մօտենար, բայց Գեդէոն Սբիլէտ ձեռքով նշան մը ըրաւ անոր և քալելը շարունակեց: Առաջին անգամ չէր որ վագրի կ'հանդիպէր, և կենդանիէն տաս քայլի չափ հեռու մօտենալով՝ անշարժ կեցաւ, ատրճանակը ուսին դրած, մինչեւ իր ջիլերէն մին անգամ չէր դողդողար:

Յովազն ամփոփուելով՝ որսորդին վրայ սրացաւ, բայց ցատկելու միջոցին՝ գնդակ մ'եկաւ իր երկու աչքերուն մէջ տեղը զարկաւ, այնպէս որ կենդանին շնչասպառ ընկաւ մնաց:

Հարպէրդ և Բէնքրօֆ դէպ 'ի յովազը վազեցին: Նապ ու Կիրոս Սմիթ միւս կողմէն հասան, և պահ մը հողին վրայ տարածուած կենդանին դիտելու համար կայ առին, որուն փառաւոր մորթը Գարնայ-Պալատին զարդը պիտի լինէր:

«Ա՛հ, Պարոն Սբիլէտ: Ո՛րչափ կ'զմայլիմ և կ'նախանձիմ վրադ, գոչեց Հարպէրդ խիստ բնական աւիւնով մը:

— Լաւ, տղաս, պատասխանեց Սբիլէտ, դու ալ իմ տեղս նոյն բանը պիտի ընէիր:

— Ե՛ս, այդչափ սառնութիւն...:

— Երեւակայէ՛, Հարպէրդ, որ յովազ մը ճագար մ'է և խիստ հանդարտ կերպով հրացանդ պիտի պարպէիր վրան:

— Կ'նայի՞ս, պատասխանեց Բէնքրօֆ: Ասոր մէջ աւելի մեծ ճարպիկութիւն չկայ:

— Իսկ հիմակ, ըսաւ Գեդէոն Սպիլէդ, որովհետեւ այդ յո-վազն իր որջը թողուց, միթէ արգելք մը կայ, բարեկամներս, որ մենք երթանք անոր մէջ բնակինք այս գիշեր ։

— Բայց ուրիշ յովազներ կրնան գալ, ըսաւ Բէնքրօֆ ։

— Բաւական պիտի լինի միայն քարայրին մուտքը կրակ վա-ռել, ըսաւ Թղթակիցը, և մուտքէն ներս մտնելու չպիտի հա-մարձակին ։

— Ուրեմն երթանք յովազներուն բնակարանը» պատասխանեց Նաւաստին, կենդանիին գլուխն իր ետեւէն քաշելով ։

Գաղթականները լքեալ որջին կողմը գնացին, և այն տեղ՝ Նապ սկսաւ յովազին մորթը հանել, մինչդեռ իր ընկերները քար-այրին սեմին վրայ շատ մը չոր փայտ դիզեցին, որով անտառն առատ էր ։

Բայց Կիւրոս Սմիթ՝ հնդկեղէգներու սուրակը տեսնելով՝ գնաց բաւական կտրեց և կրակին մէջ նետեց ։

Այնուհետեւ՝ քարայրը մտան, որու աւազին վրայ ցիր ու ցան ոսկորներ կային ։ Ամեն վտանգի դէմ՝ հրացանները լեցուցին, վախնալով որ յանկարծակի յարձակում մը չլլան. ապա ընթ-րիք ըրին, և հանգստանալու ատենը գալուն՝ քարայրին բերանը դարձեալ դէզ-դէզ փայտեր դրին վառելու համար ։ Իսկոյն օ-դին մէջ սկսան լսուիլ ճշմարիտ փամփշտային շչիւններ ։ Հնդկե-ղէգներն էին որ բոցէն բռնկելով կ'պայթէին ։ Այս որոտումը միայն բաւական էր ամենէն յանդուգն վայրի կենդանիներն ան-կից հեռացնելու ։

Եւ այսպիսի պայթումներ յառաջ բերելու միջոցը չափագէտին հնարքը չէր, վասն զի Մարքօ-Բօլօի խօսքին նայելով Թաթար-ները շատ դարեր առաջ՝ յաջողութեամբ կ'գործածէին այս մի-ջոցը որպէս զի կեդրոնական Ասիոյ վայրի կենդանիներն իրենց իջեւաններէն հեռացնեն ։

ԳԼՈՒԽ Ժ.

Հարաւային ծովափին քննութեան առաջարկութիւնն — Ծովեզրին ձեւը — Կարծեցեալ նաւաբեկը կ'փնտռուի — Օդին մէջ բեկոր մը — Բնական պզտիկ նաւահանգիստ մը կ'գտնուի — Կէս գիշերին Մերսի գետին եզրը — Նաւակ մ'որ կ'շեղի.

Կիւրոս Սմիթ և իր ընկերներն անմեղ խլուրդներու պէս քնա-ցան քարայրին մէջ զոր յովազն այնքան քաղաքավարութեամբ իրենց թողուցեր էր ։

Արեւ ելնելուն՝ ամէնը ծովեզրն էին՝ ճիշդ հրուանդանին ծայ-րը, և նորէն կ'դիտէին հորիզոնն՝ որ բոլորակին երկու երրորդ մասով տեսանելի էր ։ Չափագէտը վերջին անգամ մ'ալ կրցաւ ստուգել որ առագաստ մը, նաւու մը կողը ծովուն վրայ չէր ե-րեւեր, և հեռադիտակը չկրցաւ նշմարել կասկածելի կէտ մը ։

Նոյնպէս բան մը չկար՝ ծովափին վրայ, գէթ ուղղագիծ մա-սին վրայ որ երեք մղոնի չափ տարածութիւն ունեցող հրուան-դանին հարաւային մասը կ'կազմէր, վասն զի՝ անկից անդին մահ-կաձեւ հողի կտոր մը ծովեզրին միւս մասը կ'ծածկէր, և մինչեւ անգամ Օձապոչոյ թերակղզւոյն ծայրէն միայն Ճիրանի-Գլուխը կ'տեսնուէր, բարձր ժայռերով ծածկուած ։

Հետեւապէս կ'մնար կղզւոյն հարաւային եզրը քննել ։ Արդ՝ մի-թէ այս քննութիւնն ընելու անմիջապէս փորձ պիտի ընէին և այն նոյեմբերի երկրորդ օրն այս գործին պիտի նուիրէին ։

Այս խնդիրն առաջին դիտաւորութեան մէջ չկար ։ Արդարեւ՝ երբոր Մէրսիի աղբերակներուն վրայ ձգուեցաւ նաւակը, որոշուեր էր որ արեւմտեան եզրը քննելէն ետեւ՝ գաղթականներն իրենց ե-ղած տեղը դառնան և Մէրսիի ճամբով Գրանիդ-Պալատը մտնեն ։ Այն ատեն Կիւրոս Սմիթ կարծէր թէ արեւմտեան եզրը իրենց

պատսպարան մ'ընծայել, թէ՛ ձախորդութեան մէջ գտնուող նաւու, թէ կանոնաւոր նաւարկութեամբ հասնող նաւու մը. բայց քանի որ այն ծովափը չունէր նաւահանգստի տեղ մը, կղզւոյն հարաւային եզրը պէտք էր փնտռել ինչ որ արեւմտեանին վրայ չկրցեր էին գտնել։

Գեդէոն Սբիլէտն էր որ երկրաչափութիւնը շարունակել առաջարկեց, որպէս զի ենթադրեալ նաւաբեկութեան խնդիրը բոլորովին լուծուի, եւ հարցուց թէ որչափ հեռու կրնար գտնուիլ Ճիրանի-Գլուխը Թերակղզւոյն ծայրէն։

«Գրեթէ երսուն մղոն հեռու, պատասխանեց չափագէտը, եթէ ծովեզերին կորութիւնն 'ի համար առնունք։

— Երսո՜ւն մղոն, վրայ բերաւ Գեդէոն Սբիլէտ։ Այդ մէկ օրուան երկար արշաւ մը պիտի լինի։ Սակայն, ես կարծեմ թէ՝ հարաւային եզրը բռնելով պարտաւոր ենք Քարեայ-Պալատը դառնալ։

— Բայց, յարեց Հարպէրտ, Ճիրանի-Գլխէն մինչեւ Քարեայ-Պալատը՝ գոնէ տասն մղոն եւս պէտք է հաշուել։

— Ըսենք թէ բոլորը քառասուն մղոն է, պատասխանեց Գեդէոն Սբիլէտ, եւ չվարանինք այդ ճամբան բռնելու։ Գոնէ՝ այդ անծանօթ ծովափը պիտի դիտենք եւ նորէն չպիտի ստիպուինք այս երկրաչափութիւնը սկսելու։

— Շատ իրաւացի է ըսածդ, ըսաւ այն ատեն Բէնքրօֆ։ Բայց մակոյկը՞։

— Մակոյկը մինակ մնայ բոլոր օր մը Մէրսիի ափունքը, պատասխանեց Գեդէոն Սբիլէտ, կրնայ երկու օր ալ մնալ։ Մինչեւ հիմակ չենք կրնար ըսել որ կղզին գողեր կ'գտնուին։

— Սակայն, ըսաւ նաւորդը, երբոր կրիայի պատմութիւնը կը յիշեմ, պէտք եղածէն աւելի վստահութիւն չեմ կրնար ունենալ։

— Կրիա՜յն, կրիա՜յն, պատասխանեց Թղթակիցը։ Միթէ չգիտես որ ծովը դարձուց զայն։

— Ո՞վ գիտէ, մրմնջեց չափագէտը։

— Բայց...։ ըսաւ Նապ։

Նապ բան մ'ունէր ըսելու, այդ բացայայտ էր, վասն զի բերանը կ'բանար խօսելու եւ չէր խօսեր։

«Ի՞նչ ըսել կ'ուզես, Նապ, հարցուց անոր չափագէտը։

— Եթէ ծովեզերին կողմէն մինչեւ Ճիրանի-Գլուխը դառնանք, պատասխանեց Նապ, գլխուն շրջանն ընելէ ետեւ՝ մեր առջեւ խափան մը պիտի ելնէ...։

— Այսինքն Մէրսի գե՛տը։ Ստոյգ է, պատասխանեց Հարպէրտ, եւ ոչ կամուրջ ոչ նաւակ պիտի ունենանք անցնելու համար։

— Լա՜ւ, Պարոն Կիւրոս, պատասխանեց Բէնքրօֆ, քանի մը ծփուն կոճղերով դժուարութիւն չկայ այդ գետէն անցնելու։

— Փոյթ չէ, ըսաւ Գեդէոն Սբիլէտ, օգտակար պիտի լինի կամուրջ մը շինել՝ եթէ կ'ուզենք Խոր-Արեւմուտը դիւրաւ մտնել։

— Կամո՛ւրջ մը, գոչեց Բէնքրօֆ։ Լա՛ւ, միթէ Պ. Սմիթ արհեստով չափագէտ չէ՞։ Անշուշտ կամուրջ մը պիտի շինէ, երբոր ուզենք որ կամուրջ շինէ։ Իսկ Մէրսիի միւս եզրը ձեզ փոխադրելու գործն իմ վրաս կ'առնում, խօսք տալով որ ձեր հագուստին մէկ ծայրն անգամ չթրջեմ։ Դեռ մէկ օրուան պաշար ունինք եւ մեզի պէտք եղածն այս է. անկից զատ՝ չեմ կարծեր որ երէկուան պէս՝ երէն պակսի այսօր։ Ճամբայ ելնենք։»

Թղթակցին առաջարկութիւնը, զոր նաւորդն աշխուժով պաշտպանեց, ամենուն հաւանութիւնը առաւ, վասն զի ամեն մէկը կ'փափաքէր իր կասկածները փարատել, եւ Ճիրանի-Գլխէն վերադառնալ, որով իրենց քննութիւնն աւարտած պիտի լինէր։

Բայց պէտք չէր ժամ մ'անգամ կորսնել, վասն զի քառասուն մղոնի հեռաւորութիւն մ'երկար էր, եւ յուսալի չէր Քարեայ-Պալատը հասնիլ մութը կոխելէն առաջ։

Առաւօտեան ժամը տասին՝ պզտիկ խումբը ճամբայ ելաւ։ Գուշակելով որ թերեւս վտանգներու կ'հանդիպին, այս է երկոտանի ու չորքոտանի կենդանիներ իրենց առջեւ կ'ելնեն, հրացանները դնդակներով լեցուցին, եւ Թօփ, որ առջեւէն պիտի ճամբան բանար, հրաման առաւ անտառին շաւիղը բռնել։

Հրուանդանին ծայրէն սկսելով՝ որ Թերակղզւոյն ծայրը կ՚յօրինէր, ծովեզրը կ՚բոլորնար հինգ մղոն տարածութեան վրայ, որմէ շուտով անցան, թէև մանրազնին քննութենէ ետև՝ բնաւ նշան մը չտեսան որ նաւ մը՝ հին կամ նոր՝ ցամաքին մօտեցած լինի, և ոչ բեկոր մ՚ու օթեանի հետք մ՚երեցաւ, ոչ մարած կրակի մը մոխիրը, ոչ ոտքի նշան մը։

Երբոր գաղթականները հասան այն անկիւնն որու վրայ կոր գիծն աւարտելով հիւսիս-արեւելեան կողմը կ՚ձգուէր Վօշինկթընի խորշը յօրինելով, կարող եղան տեսնել կղզւոյն հարաւային ծովափն իր բոլոր տարածութեամբ։ Քսան հինգ մղոն հեռու՝ ծովեզրը կ՚վերջանար Ճիրանի-Գլխով, որու ատամնաւորածը հազիւ կ՚երեւէր առաւօտեան մշուշով, և որ կրկնանկարի մ՚երեւոյթով կ՚բարձրանար, որպէս թէ երկրին ու ջրին մէջ տեղ կախուած լինէր։

Գաղթականներուն բանած տեղէն մինչև ահագին խորշին խորը, ծովեզրը նախ՝ խիստ հարթ և տափակ լաւ աւազափէ մը կ՚բաղկանար, յետոյն մասին վրայ ծառերու շարք մ՚ունենալով, ապա՝ ծովափն՝ աւելի անկանոն երեւոյթ մ՚առնլով՝ ծովուն մէջ սուր ծայրեր կ՚արձակէր, և վերջապէս քանի մը սեւորակ ժայռեր խառն ՚ի խուռն այլ գեղանկար դիզուեր էին իրարու վրայ և մինչև Ճիրանի-Գլխուն ծայրը կ՚հասնէին։

Այս էր ահա կղզւոյն այս մասին գիրքը, զոր քննիչ գաղթականներն առաջին անգամ՝ կ՚տեսնէին, և որու վրայ միայն նայուածք մը ձգեցին՝ պահ մը կայ առնլէն ետև։

«Եթէ նաւ մ՚այս կողմերը նաւարկէր, ըսաւ այն ատեն Բէնքրօֆ, անտարակոյս պիտի կորսուէր։ Աւազի կոյտեր, որ դէպ ՚ի ծովը կ՚երկննան, և հեռուն՝ խութեր. գէ՛շ ծովեզերք։

— Բայց գոնէ այս նաւէն բան մը պիտի մնար, դիտել տուաւ Թղթակիցը։

— Ծայռերուն վրայ փայտի կտորներ պիտի մնային և ոչ ինչ աւազին վրայ, պատասխանեց նաւորդը։

— Ուրեմն, ինչու՞ համար։

— Վասն զի այս աւազները, ժայռերէն աւելի վտանգաւոր լինելով, ինչ որ գտնեն կ՚ընկղմեն, և քանի մ՚օր միայն բաւական է որ շատ տակառաչափ նաւու մը փոծոկը բոլորովին անհետ լինի։

— Այսպէս, Բէնքրօֆ, հարցուց չափաղէտը, եթէ նաւ մը այս աւազակոյտներուն վրայ կորսուած է, զարմանալի բան մը չպիտի ըլլայ որ այժմ հետք մը չգտնուի վրան։

— Այդպէս է, Պարոն Սմիթ, ժամանակին կամ փոթորկին օգնութեամբը։ Սակայն գարձեալ՝ զարմանալի պիտի լինէր, այս պարագայիս մէջ անգամ, որ կայմի բեկորներ, ցիր ու ցան բաներ ծովը նետուած չլինին, ծովու ալիքներէն հեռու։

— Ուրեմն շարունակենք մեր խուզարկութիւնը» պատասխանեց Սիւրուս Սմիթ։

Կէս օրէն ժամ մ՚ետք՝ գաղթականներն Վօշինկթընի ծովածոցին խորը հասեր էին, և, այս պահուս՝ քսան մղոնի չափ տեղ քալեր էին։

Դադար առին նախաճաշիկ ընելու համար։

Այս տեղ կ՚սկսէր անկանոն ծովեզր մը, որ այլանդակ պատառուածներ ունէր և խութերու երկար գծով մը ծածկուած էր, որոնք աւազի կոյտերուն կ՚յաջորդէին և որ՝ մակընթացութեամբ անտես, քիչ ատենէն երեւան պիտի գային։ Կ՚տեսնէին ծովուն դիւրաշարժ ծփանքը, որ ապառաժներու սարերուն վրայ փշրուելով՝ փրփրադէզ ծալքի պէս կ՚ընդարձակուէին։

Այս կէտէն մինչև Ճիրանի-Գլուխը՝ աւազափը շատ ընդարձակ չէր և ժայռերու ու անտառին սահմանին մէջ սեղմուած էր։

Հետեւապէս գաղթականներուն ուղևորութիւնն աւելի պիտի դժուարանար, վասն զի փլած անթիւ ժայռեր ծովեզրը կ՚գոցէին։ Գրանիտէ պատուարն ալ քիչ քիչ կ՚բարձրանար և ետեւի կողմէն զայն պսակող ծառերէն՝ միայն դալարուտ սարեր կ՚տեսնուէին, որ բնաւ շունչէ մը չէին շարժեր։

Կէս ժամու չափ հանգիստ առնլէն ետև՝ գաղթականները նորէն ճամբայ ելան, և անտես չէին ըներ ոչ կէտ մը՝ ժա-

ներու և աւազափին վրայ։ Բէնքրոֆ ու Նապ մինչև անգամ խութերու մէջ մտնելու յանդգնեցան ամեն անգամուն որ առարկայ մ'իրենց աչքը կ'գրաւէր։ Բայց բեկոր չկար բնաւ, և մայւերուն կերպ մ'այլանդակ ձևէն կ'խաբուէին։ Սակայն կարող եղան ստուգել որ այս ափերուն վրայ առատ էին ուտելի խեցեմորթներ, բայց չէին կարող անկից օգուտ քաղել ու հաւաքել եթէ Մէրսիի երկու գետափներու մէջ հաղորդակցութիւն կար հաստատէին, և եթէ փոխադրութեան միջոցները չկատարելագործէին։

Այսպէս ուրեմն՝ ենթադրուած նաւաբեկութեան մասին ծովափին վրայ բան մը չէր տեսնուեր, և սակայն կարևոր առարկայ մը, օրինակի համար նաւու մը փոճոկը, այն ատեն դիւրաւ պիտի տեսնուէր, կամ իր բեկորները ծովեզրը պիտի քշուէին, ինչպէս որ քշուեր էր անկից քսան մղոն հեռու ընկած սնտուկը։ Բայց բան մը չկար։

Ժամն երեքին մօտ՝ Կիւրոս Սմիթ և իր ընկերներն լաւ մը գոցուած նեղ ծոցի մը մօտ հասան, որու հետ բնաւ առու մը կապուած չէր։ Պզտիկ բնական նաւահանգիստ մը կ'յօրինէր, ծովէն անտեսանելի, որու կ'յանգէր նեղ անցք մը, զոր մայւերն իրենց մէջ կ'պահպանէին։

Այս ծոցին խորը՝ բուռն պայթում մը ժայռոտ ճամբան պատռեր, և հատուած մ'որ թեթև զառ 'ի վայր մ'ունէր, վերին սարահարթը կ'հանէր. այս սարահարթը Ճիրանի-Գլխէն տասն մղոնի չափ հեռու դիրք մը կրնար ունենալ, և հետևապէս, Մեծ-Տեսքէն ուղիղ գծով չորս մղոն հեռու։

Գեդէոն Սբիլէտ իր ընկերներուն առաջարկեց որ այն տեղ դադար առնուն։ Ամէնքն ընդունեցան, վասն զի այս արշաւն ամէնուն ախորժակը սրեր էր, և՝ թէպէտ ճաշի ատեն չէր, ոչ ոք չմերժեց կտոր մը երէ ուտելով կազդուրել։ Այս նախընթրիքն ընելով զաղթականները պիտի կարենային համբերել որ ընթրիքը Քարեայ-Պալատն առնեն։

Քանի մը վայրկեան ետք՝ զաղթականները՝ ծովային սոճինե-

րու փառաւոր փունջի մը ստորոտը նստած՝ կ'լափէին ուտելիքն զոր Նապ պարկէն հաներ էր։

Ծովուն երեսէն յիսունէն վաթսուն ոտք բարձր կ'գտնուէր այն տեղը։ Ուստի աչքը բաւական հեռու կ'գիտէր, և սարաւանդին վերջին ժայռերէն անցնելով՝ մինչև Միութեան ծովախորշը կ'երթար կ'հասնէր։ Բայց ոչ կղզեակն և ոչ Մեծ-Տեսքին սարահարթը տեսանելի չէին և այն միջոցին չէին կրնար տեսնուիլ, վասն զի հողին զարաւանդը և մեծ ծառերու վարագոյրը հիւսիսային հորիզոնն յանկարծ կ'ծածկէին։

Աւելորդ է յաւել որ, թէև խուզարկուները բաւական ընդարձակ ծով մը կրնային դիտել և չափալոտին դիտակն կէտ առ կէտ կ'հետևէր բոլոր այն շրջանաւոր գծին որու վրայ երկին ու ջուրը կ'խառնուէին, դարձեալ նաւ մը չտեսնուեցաւ։

Նոյնպէս, դեռ քննուելիք ծովափին մասին վրայ դիտակը դարձուցին նոյն ուշադրութեամբ աւազափէն մինչև վիմուտքը՝ բայց դիտակին շրջանակին մէջ բեկոր մը չերևցաւ։

«Օ՛ն, ըսաւ Գեդէոն Սբիլէտ, պէտք է համբերել և մխիթարուիլ մտածելով որ մարդ մը չպիտի գայ մեր Լինքօլն կղզին մեր ձեռքէն առնելու։

— Բայց վերջապէս, այն կապարէ գնդիկը, ըսաւ Հարպէրդ։ Եւ սակայն երևակայական բան չէ, կարծեմ։

— Կրա՛կը տանի, ո՛չ, գոչեց Բէնքրոֆ, իր կորած ակռան միտքը գալով։

— Ուրեմն՝ ի՞նչ պէտք է հետևցընել, հարցուց Թղթակիցը։

— Այս կրնայ հետևիլ, պատասխանեց ճարտարագէտը, որ շատ շատ երեք ամիս կայ՝ նաւ մը, կամովին կամ ոչ, ցամաքը զարկաւ . . . ։

— Ի՞նչ. միթէ կրնա՞ս ենթադրել, Պարոն Կիւրոս, որ առանց հետք մը թողլու ընկղմած է, գոչեց Թղթակիցը։

— Ո՛չ, սիրելի իմ Սբիլէտ. բայց դիտէ՛ մի անգամ որ եթէ ստոյգ է թէ մարդկային էակ մ'այս կղզին ոտք կոխեց, նոյնչափ ստոյգ է որ հիմակ անկից ելած է։

— Ուրեմն, եթէ խօսքդ լաւ կ՚հասկընամ, Պարոն Կիւրոս, ըսաւ Հարպէրդ, նաւը գացած պիտի լինի . . . :

— Հաւանական է:

— Եւ այսպէս մեր հայրենիքը վերադառնալու առիթը բոլորովին ձեռքէ հանած եղանք, ըսաւ Նապ:

— Վախնամ որ բոլորովին առիթը փախաւ:

— Լաւ ուրեմն, քանի որ առիթը ձեռքէ ելաւ, մեր ճամբան շարունակենք» ըսաւ Բէնքրոֆ, որ արդէն Քարեայ–Պալասին կարօտը կ՚քաշէր:

Բայց հազիւ թէ ոտք ելաւ, որ Թօփ սկսաւ սաստիկ հաչել՝ շունն անտառէն դուրս ելաւ; և իր բերնին մէջ ունէր տղմոտած կերպասի կտոր մը:

Նապ շան բերնէն խլեց այդ կերպասը: Հաստ կտաւի կտոր մ'էր:

Թօփ շարունակ կ՚հաչէր, և իր երթալ գալէն՝ կարծես թէ իր տէրը կ՚հրաւիրէր դէպ 'ի անտառը:

«Ասոր մէջ բան մը կայ որ կրնայ իմ կասկածէ հանելիք խնդիրը մեկնել, գոչեց Բէնքրոֆ:

— Նաւաբեկեալ մը, պատասխանեց Հարպէրդ:

— Թերևս վիրաւորուած, ըսաւ Նապ:

— Կամ մեռած» պատասխանեց Թղթակիցը:

Եւ ամենքը շան ետևէն վազեցին, այն մեծ շոճիներուն ներքև որ անտառին առաջին վարագոյրը կ՚յօրինէր: Կիւրոս Սմիթ և իր ընկերներն դիպուածի դէմ իրենց հրացաններն պատրաստեցին:

Ստիպուեցան բաւական յառաջանալ անտառին խորերը, բայց սաստիկ զարմացան ոտքի հետք մ'անգամ դեռ ևս չտեսնելով: Մացառ և բազեղ անկոտոր էին, և պէտք եղաւ տապարով խորտակել, ինչպէս որ անտառին ամենէն խոր ու թանձր կողմերն ըրեր էին:

Ուստի դժուարին էր հաւտալ որ մարդկային արարած մ'անկից անցած լինէր, և սակայն Թօփ կ՚երթար կ՚գար, չէ թէ ըստ դիպուածոյ՝ բան փնտռող շան մը պէս, այլ իբրև կենդանի մ'որ կամք ունի և գաղափար մը կ՚հետևի:

Եօթն ութ վայրկեան քալելէն ետև՝ Թօփ կանգ առաւ: Երբ գաղթականները՝ մեծ ծառերով շրջապատուած բացատ մը հասան, իրենց բոլորտիքը նայեցան և բան մը չտեսան, ոչ մացառներու տակ և ոչ ծառի կոճղերու մէջ:

«Բայց ի՞նչ կայ, Թօփ» ըսաւ Կիւրոս Սմիթ:

Թօփ աւելի ուժով հաչեց, սկայաձև սոճի մը ստորոտը ցատկելով:

Յանկարծ Բէնքրոֆ պոռաց.

«Ա՜հ, լա՜ւ. է՜հ, սքանչելի՜:

— Ի՞նչ կայ, հարցուց Գեդէոն Սբիլէդ:

— Ծովու ու ցամաքի վրայ նաւու բեկոր կ՚փնտռենք:

— Այո՛:

— Ահա, այդ բեկորն օդին մէջ կ՚գտնուի:»

Եւ նաւորդը ճերմակ կտաւ մը ցոյց տուաւ; որ սոճին կատարէն կախուէր և որու մէկ կտորը Թօփ գետինը գտնելով բերեր էր:

«Բայց նաւու բեկոր չէ այդ, գոչեց Գեդէոն Սբիլէդ:

— Ներողութիւն կ՚խնդրեմ, պատասխանեց Բէնքրոֆ:

— Ի՞նչ է, ըսէ . . .

— Մեր օդապար նաւակէն, մեր օդապարիկէն մնացածն է, որ վերն, այս ծառին գագաթը մնաց:»

Բէնքրոֆ չէր սխալէր, և ուրախութեան փառաւոր աղաղակ մ'արձակեց յարելով.

«Աստուծոյ պատուական կտաւ: Անով ճերմակեղէն կրնանք շինել երկար տարիներ, թաշկինակներ և շապիկներ: Է՛յ, Պարոն Սբիլէդ, ի՞նչպէս կ՚երևի քեզ կղզի մը, ուր շապիկներ կ՚բուսնին ծառերու վրայ:»

Իրաւ՝ յաջող պարագայ մ'էր Լինքոլն կղզւոյն գաղթականներուն համար՝ օդապարիկին օդին մէջ վերջին անգամ ոստում մ'ընելէն ետև՝ կղզին ընկնիլն ու գտնուիլը: Կամ այս ձևով փամփուշտը պիտի պահէին, եթէ կ՚ուզէին նոր փորձ մ'ընել խոյս տալու օդապարիկով, կամ օգտակար կերպով պիտի գործածէին

այս քանի մը հարիւր կանգուն լաւ բամբակէ կտաւը, երբոր իր ջնարակը սրբուէր։

Ինչպէս դիւրին է երեւակայել, Բէնքրոֆի ուրախութեան ամէնքը միասիրտ մասնակից եղան։

Սակայն պէտք էր այդ փաթոյթը հանել այն կախուած ծառէն, ապահով տեղ մը դնելու համար, եւ այս թեթեւ աշխատութիւն մը չեղաւ։ Նապ, Հարպէրդ ու նաւորդը, ծառին կատարն ելնելով՝ մեծ հնարք ու ճարպիկութիւն 'ի գործ դրին պարապ օդապարիկն առնելու համար։

Այս գործողութիւնը մօտ երեք ժամ տեւեց, եւ ոչ միայն փաթոյթն իր խուփով, զսպանակներով, պղնձէ սարքով գետինը նետեցին, այլ եւ ցանցն, այսինքն՝ անբաւ պարան ու չուան, չափի շրջանակն եւ օդապարիկին խարիսխը։ Կազմածէն զատ՝ փաթոյթը լաւ վիճակի մէջ էր, եւ միայն իր ներքին պաստառը պատռուած էր։

Երկինքէն իջած գանձ մ'էր այս։

«Իրաւ, Պարոն Կիւրոս, ըսաւ նաւաստին, եթէ երբեք կղզիէն հեռանալու որոշենք, օդապարիկ չպիտի մտնենք, այնպէս չէ՞։ Օդային նաւերը մեր ուզած տեղը չեն երթար, եւ արդէն փորձն ունինք։ Եթէ կարծիքս կ'հարցնէք՝ քան տակաւին լաւ նաւակ մը շինենք, եւ թող պիտի տաք ինձ որ այդ կտաւէն երկու առագաստ հանեմ, մին յառաջակայմին, եւ միւսը միջակայմին համար։ Իսկ մնացածը մեր վրան գլուխը շինելու պիտի ծառայէ։

— Վերջէն կ'նայինք, Բէնքրոֆ, պատասխանեց Կիւրոս Սմիթ, կ'նայինք։

— Առ այժմ, պէտք է այս ամեն բաներն ապահով տեղ մը պահենք» ըսաւ Նապ։

Իրաւ՝ կարելի չէր այս կոյտ կտաւը, չուաններն ու պարաններն, որ ահագին բեռ մ'էին, Քարեայ-Պալատը փոխադրելու մտածել, եւ մինչեւ յարմար կառքի մը գտնուիլը, կարեւոր կէան էր այս հարստութիւնները պատսպարել ուրականին դէմ։ Գաղթականներն՝ մէկ տեղ գալով՝ բոլորը մինչեւ ծովեզր քշելու յա-

ջողեցան, ուր բաւական լայն ժայռուտ խոռոչ մը գտնելով մէջ դրին, եւ այս խոռոչն հովէ, անձրեւէ, ծովուն ալիքներէն պահպանուած էր իր յարմար դիրքովը։

«Պահարան մը պէտք էր մեզի, պահարան մ'ունինք» ըսաւ Բէնքրոֆ։ Բայց որովհետեւ բանալիով չգոցուիր, խոհեմութիւն է անոր բացուածքը ծածկել։ Այս զգուշութիւնն երկոտանի գողերու դէմ չէ, այլ չորքոտանիներուն դէմ։»

Երեկոյեան ժամը վեցին՝ ամեն բան մթերուած էր, եւ ծովուն խորշը յօրինող փոքրիկ մահկաձեւ փորուածքին «Օդապարիկի նաւահանգիստ» անունն իրաւամբ տալէն ետեւ՝ Ճիրանի-Գլխուն ճամբան բռնեցին։

Բէնքրոֆ ու ճարտարագէտը կ'խօսակցէին այլ եւ այլ խորհուրդներու վրայ՝ որոց ժամ առաջ գործադրութիւնը յարմար կ'դատէին։ Ամեն բանէ առաջ՝ պէտք էր կամուրջ մը շինել Մերսիի ափին, որպէս զի կղզւոյն հարաւային կողմին հետ դիւրին հաղորդակցութիւն մը հաստատուի, յետոյ՝ սայլակը կրնար դալ օդապարիկն առնուլ, վասն զի մակոյկը բաւական չէր զայն փոխադրելու համար. ապա կամրջով կուր մը պէտք էր շինել, ապա Բէնքրոֆ կարող էր զայն դարձնել պատերազմիկ նաւի (cotre) եւ անով դիւրին պիտի լինի մեզ կղզւոյն բոլորտիքը նաւարկել, ապա եւ այլն։

Սակայն գիշերը կ'մօտենար, եւ արդէն մութ էր երկին, երբոր գաղթականներն Բեկորքի սարաւանդը հասան, ճիշդ այն տեղն ուր Թանկագին սնտուկը գտեր էին։ Բայց ինչպէս այլուր, նոյնպէս այն վայրը չտեսան բան մ'որ նաւաբեկութեան արդիւնքը լինէր, եւ պէտք եղաւ Կիւրոս Սմիթին առաջուց հանած եզրակացութեանց դառնալ։

Բեկորքի ծայրէն մինչեւ Քարեայ-Պալատը՝ դեռ չորս մղոն կար, եւ այդ չորս մղոն տեղէն շուտ մ'անցան, բայց կէս գիշեր անցեր էր, երբ՝ մինչեւ Մերսիի բերանն ծովափին վրայէն գալէն ետեւ՝ գաղթականները գետէն շինուած առաջին արմուկը հասան։

Այն տեղ՝ գետին փոսն ութսուն ոտք լայնութիւն ունէր,

դժուարին էր անցնիլ, բայց Բէնքրօֆ այս դժուարութեան յաղթելու յանձն առեր էր, և հրաւիրուեցաւ որ իր խոստումը կատարէ :

Պէտք է խոստովանիլ՝ որ գաղթականները բոլորովին յոգնած դադրած էին : Այս ուղևորութիւնն երկար տևեր էր, և օդապարիկին դիպուածն ալ իրենց ոտներն ու թևերը բաւական յոգնեցուց : Ուստի Քարեայ–Պալատը դառնալու կ'շտապէին որպէս զի ընթրիք ընեն ու պառկին, և եթէ կամուրջը շինուած լինէր, մէկ քառորդի մէջ իրենց բնակարանը պիտի դառնէին :

Գիշերը շատ մութ էր : Այն ատեն Բէնքրօֆ պատրաստուեցաւ իր խօսքը կատարելու, տեսակ մը լաստ շինելով՝ որ Մէրսիի անցքը պիտի դիւրացնէր :

Նապ և ինք՝ տապարներով զինուած՝ գետակին մօտ երկու ծառ ընտրեցին, որով կերպ մը լաստ շինելու կ'յուսային, և սկսան անոնց արմատէն կտրել :

Կիւրոս Սմիթ և Գետէոն Սբիլէտ՝ քարափին վրայ նստած՝ կ'սպասէին որ իրենց ընկերներուն օգնելու ժամը գայ, մինչդեռ Հարպէրտ վեր վար կ'պտըտէր, առանց շատ մը հեռանալու :

Յանկարծ՝ պատանին, որ գետոյն 'ի վեր ելեր էր, արտորնօք դարձաւ, և Մէրսիին վերնակողմը ցոյց տալով.

«Ի՞նչ է այն որ կ'շեղի վարը» գոչեց նա :

Բէնքրօֆ գործը դադրեցուց և շարժուն առարկայ մը նշմարեց որ ստուերին մէջ շփոթ կ'երևէր :

«Մակո՞յկ մը» ըսաւ նա :

Ամենքը մօտեցան և անհնարին զարմանք զգացին նաւակ մը գտնելով որ գետոյն ընթացքին կ'հետևէր :

«Է՜յ, նաւա՜կ» գոչեց նաւորդն իր արհեստին մէկ հին սովորութեան համեմատ և առանց մտածելու որ թերևս աւելի աղէկ կ'լինէր եթէ լռութիւն պահէր :

Պատասխան չկար : Նաւակը միշտ կ'շեղէր, և արդէն տասը քայլէ չափ հեռու էր՝ երբ նաւաստին պոռաց .

«Բայց այս մեր մակոյկն է : Իր պարանը կտրեր և հոսանքին հետևեր է : Իրաւ է՝ շատ յարմար ժամանակին պիտի հասնի :

— Մե՞ր մակոյկը . . .» մրմնջեց չափագէտը :

Բէնքրօֆ իրաւունք ունէր : Իրօք մակոյկն էր, որու պարանը կտրեր էր, անշուշտ, և որ Մէրսիի ակունքէն մինակ կ'դառնար : Ուրեմն պէտք էր բռնել զայն անցնելու ատեն, գետոյն արագ հոսանքէն՝ մինչև անոր բերանը չքշուած, և յաջողեցան Նապ ու Բէնքրօֆ ճարպիկութեամբ երկայն ձող մը գործածելով :

Մակոյկը գետափին մօտ եկաւ : Չափագէտն՝ ամենէն առաջ մտնելով՝ պարանը բռնեց և մատովը ստուգեց որ այս պարանն իրօք մաշուեր էր ժայռերուն շփուելով :

«Ահասիկ պարագայ մը, ըսաւ թղթակիցը ցած ձայնով մը, պարագայ մ'որ կրնայ ըսուիլ . . .

— Տարօրինա՜կ» պատասխանեց Կիւրոս Սմիթ :

Տարօրինակ թէ ոչ, իրաւ է որ յաջող պարագայ մ'էր : Հարպէրդ, թղթակիցը, Նապ ու Բէնքրօֆ ըստ կարգի նաւակը մտան : Անոնք կասկած չէին յայտներ որ պարանը մաշած չլինի, բայց այս գործին ամենէն զարմանալի կէտն այս էր որ մակոյկը կը հասնէր ճիշտ այն միջոցին երբ գաղթականներն անդ կ'գտնուէին զայն բռնելու համար, վասն զի եթէ քառորդ մ'ուշ հասնէին, մակոյկը ծովը պիտի երթար կորսուէր :

Եթէ փէրիներու ժամանակն ապրէին ; այս դիպուածն իրաւունք պիտի տար մտածելու որ կղզին գերբնական էակ մը կ'բնակէր որ իր զօրութիւնն նաւաբեկեալներուն օգնութեան կ'դար :

Քանի մ'անգամ թիավարելով՝ գաղթականները Մէրսի գետոյն բերանը հասան : Նաւակն աւազափին վրայ հանեցին մինչև Կարկառներու մօտ, և ամենքը Քարեայ–Պալատին ելնարանը դիմեցին :

Բայց նոյն պահուն Թօփ բարկութեամբ հաչեց, և Նա որ ելնարանին առաջին աստիճանը կ'փնտռէր՝ աղաղակ մ'արձակեց . . . :

Ելնարան չկա՛ր :

ԳԼՈՒԽ Զ.

Բէնկրոֆի աղաղակները — Կարկառներուն մէջ գիշեր մը — Հարպերթի նետը — Կիւրոս Սմիթին խորհուրդը — Անակնկալելի լուծում մը — Քարեայ-Պալատին մէջանցքը — Ի՞նչպէս նոր սպասաւոր մը գաղթականներուն ծառայութեան կ'մտնէ .

Կիւրոս Սմիթ կանգ առեր էր առանց խօսք մ'ըսելու ։ Իր ընկերները մութին սկսան փնտռել ելնարանը պատին վրայ, նոյնպէս գետինը, կարծելով թէ հովէն ծռած կամ ինկած կրնար ըլլալ . . . ։ Բայց ելնարանը բոլորովին աներեւոյթ եղեր էր ։ Սակայն արդեօք մրրկով մը մինչեւ առաջին դարակն ելած էր թէ ոչ՝ կարելի չէր հասկնալ գիշերը շատ մութ ըլլալուն ։

«Եթէ կատակ մ'է այս, գոչեց Բէնկրոֆ, անշահ կատակ մ'է ։ Տուն գալ, և սենեակին ելնելու համար ելնարան չգտնել, այնպիսի բան մ'է որ յոգնած մարդիկը չկրնար խնդացընել ։»

Իսկ Նապ՝ ինք՝ բացագանչութիւններ կ'հանէր անդադար ։

«Սակայն հով չկար, դիտել տուաւ Հարպէրդ ։

— Կ'նայիմ որ Լինքոլն կղզւոյն մէջ զարմանալի բաներ կըլլային անցնիլ, ըսաւ Բէնկրոֆ ։

— Զարմանալի՞, պատասխանեց Գեդէոն Սբիլէդ, բայց ո՛չ, Բէնկրոֆ, շատ բնական բաներ են ։ Մեր բացակայ եղած ատենը մէկն եկաւ, մեր բնակարանը գրաւեց և ելնարանը վեր քաշեց ։

— Մէ՛կը, գոչեց նաւորդը ։ Եւ ո՞վ է ուրեմն այն . . . ։

— Միթէ կապարէ գնդիկը նետող որսորդը չէ՞, պատասխանեց թղթակիցը ։ Ի՞նչ բանի կրնայ ծառայել այն, եթէ ոչ մեր ձախորդութիւնը բացատրել ։

— Լաւ ուրեմն, եթէ մէկը ներս մտած է, պատասխանեց Բէնկրոֆ հայհոյելով, վասն զի քիչ քիչ համբերութիւնը կը

հատնէր, անոր ձայն պիտի տամ և անտարակոյս պիտի պատասխանէ ։»

Եւ նաւորդն որոտալի ձայնով մ'երկայն «Օհէ՛» մ'արձակեց, զոր ուժգին կրկնեց արձագանքը ։

Գաղթականներն ականջ դրին, և Քարեայ-Պալատին բարձունքէն տեսակ մը ծիծաղ կարծեցին լսել, և չկրցան հասկընալ թէ ուսկից կ'գայ ։ Բայց Բէնկրոֆի ձայնին ուրիշ ձայն մը չպատասխանեց, թէեւ քանի մ'անգամ կրկնեց պարապ տեղն իր կորովի կոչումը ։

Իրաւի՛ պատահմունք մ'էր այս որ ամենէն անտարբեր մարդիկը կրնար ապշեցընել, և գաղթականները չէին կրնար այս անտարբերները լինել ։ Իրենց գտնուած վիճակին մէջ՝ ամեն դիպուածը իր ծանրութիւնն ունէր, և անտարակոյս եօթ ամսէ 'ի վեր որ այս կղզին կ'բնակէին, երբէք այսպիսի հիանալի դիպուած մը չէր պատահած ։

Ի՛նչ որ է՝ իրենց յոգնութիւնը մոռնալով և այս դէպքին այլանդակութենէ պաշարուելով՝ Քարեայ-Պալատին ստորոտը կեցած, ոչ իրենց մտածելիքն ու ընելիքը գիտէին, ոչ մեկնութիւն մը տալու, և այնպիսի ենթադրութիւններ կ'ընէին որոց և ոչ մին կրնար հաւանական երեւիլ ։

Նապ կ'ցաւէր կ'նեղանար որ իր խոհանոցը չէր կարող մտնել, մանաւանդ անոր համար որ ճամբորդութեան պաշարը հատեր էր և այն միջոցին ուրիշ պաշար ճարելու հնարը չկար ։

«Բարեկամներս, ըսաւ այն ատեն Կիւրոս Սմիթ, բան մը միայն ունինք ընելու, սպասել որ առաւօտ լինի և այն ատեն պարագային համեմատ գործել ։ Բայց սպասելու համար՝ Կարկառներն երթանք ։ Անդ տեղ կրնանք պատսպարուիլ, և եթէ չենք կարող ընթրել, գոնէ կրնանք քնանալ ։

— Բայց ո՞վ յանդուգն արարածն այս խաղը խաղաց մեզի» հարցուց անգամ մ'ալ Բէնկրոֆ, չկրնալով այս դիպուածին վրայ համբերել ։

Ով որ էր այդ յանդուգն արարածը, բան մը միայն կար ը-

նելիք, ինչպէս որ ըսեր էր չափագէտը, Կարկառները դիմել և այն տեղ լուսնալուն սպասել։ Սակայն հրաման տուին Թօփին որ Քարեայ-Պալատին պատուհաններուն տակ կենայ, և երբ Թօփ հրաման մը կ'ստանար՝ առանց դիտողութեան կատարելու սովորութիւն ունէր։

Ուստի քաջ շունը պատին ստորոտը նստաւ, մինչդեռ իր տէրն ու ընկերներն ժայռերուն տակ կ'ապաւինէին։

Թէև յոգնած՝ գաղթականները Կարկառներուն աւազին վրայ չկրցան հանգիստ պառկիլ, եթէ ասոր հակառակին ըսենք Ճշմարտութեան դէմ խօսած պիտի լինինք։ Ոչ միայն շատ անհանգիստ էին և այս նոր պատահմունքին կարևորութիւնը կ'զգային, թէ դիպուածի մը հետևանքը լինէր, որու բնական պատճառներն օրին մէկն երևան պիտի գային, թէ ընդ հակառակն, մարդկային էակի մը գործը լինէր, այլ և իրենց պառկելու տեղերը շատ դէշ էին։ Ի վերջէ՝ քանի որ իրենց բնակարանը՝ որ և է կերպով բռնուած էր, չէին կարող անոր տիրանալ։

Արդ՝ Քարեայ-Պալատը, միայն բնակարան չէր, այլ իրենց մթերանոցը։ Գաղթականութեան բոլոր ինչքն անդ էր. զէնք, գործիք, անօթներ, ուտելիք, պահեստի կերակուրներ և այլն։ Եթէ այս ամեն բաները թալլուէին, այն ատեն գաղթականներն իրենց տնտեսութիւնը նորէն պիտի սկսէին, նորէն զէնք և գործիք պիտի շինէին։ Ի՜նչ ծանր գործ։

Ուստի իրենց մտատանջութիւնը չկրնալով զսպել, այս կամ այն դուրս կ'ելնէր ամեն վայրկեան, գիտնելու համար թէ արդեօք Թօփ լաւ պահպանութիւն կ'ընէ՞ր։

Կիւրոս մինակը կ'սպասէր իր սովորական համբերութեամբն, թէև իր միտքն կ'ըմբոստանար բոլորովին անմեկնելի իրողութեան մ'առջև գտնուելուն, և կ'բարկանար մտածելով որ իր բոլորտիքը, թերևս իր վերևը՝ ազդեցութիւն մը կար որու անուն մը տալ կարելի չէր։

Գեդէոն Սբիլէթ իր կարծիքէն էր բոլորովին, և երկուքն ալ քանի մ'անգամ, թէև մեղմիկ, այս անբացատրելի պարագա-

ներուն վրայ խօսեցան՝ որ 'ի գերև կ'հանէին իրենց խորագիտութիւնն ու փորձառութիւնը։

Անտարակոյս՝ գաղտնիք մը կար այս կղզւոյն մէջ, և ինչպէս պէտք էր թափանցել այս գաղտնիքը։ Իսկ Հարպէրդ միայն կ'երևակայէր և կ'փափաքէր Կիւրոս Սմիթին հարցումներ ուղղել։

Իսկ Նապ վերջապէս ըսաւ իրաւ որ այս ամեն դարձուածներն իրեն վերաբերութիւն չունին, և՛ եթէ իր ընկերները նեղացնելու չվախնար, քաջաբար խափշիկն այն գիշերն ալ այնպէս խորունկ պիտի քնանար որպէս թէ Քարեայ-Պալատին անկողնին մէջ պառկած լինէր։

Վերջապէս՝ ամենէն աւելի Բէնգրօֆ կ'կատղէր, և արդարև սաստիկ սրտմտած էր։

«Խաղ մ'է, խաղ մ'է որ մեզի կ'խաղան, կ'ըսէր նա։ Լա՛ւ, ես այսպիսի խաղեր չեմ սիրեր, և եթէ խեղկատակը ձեռքս ընկնի՝ վա՜յ իր գլխուն։»

Այն ինչ արևուն առաջին նշոյլներն արևելեան կողմն երևցան՝ գաղթականները՝ բաւական լաւ զինուած՝ եզերքն եկան՝ ժայռերուն ստորոտը։ Քարեայ-Պալատն, որ ուղղակի նորել արևուն առաջին ճառագայթներէն կ'զարնուէր, քիչ ատենէն պիտի լուսաւորուէր, և իրօք՝ ժամը հինգէն առաջ՝ պատուհաններն՝ որոց փեղկերը գոց էին, իրենց տերևալից վարագոյրներուն ետևէն երևցան։

Այս կողմէ՝ ամեն բան կարգին էր, բայց գաղթականներուն բերնէն աղաղակ մը փրթաւ՝ երբոր դուռը բոլորովին բաց գտան, թէև իրենց մեկնելէն առաջ գոցեր էին։

Քարեայ-Պալատին մէջ մէկը մտեր էր։ Տարակոյս չկար այս մասին։

Վերին ելնարանն՝ որ սովորաբար վերին դուռէն մինչև դուռը ձգուած էր, իր տեղը կ'տեսնուէր. բայց ստորին ելնարանը մինչև սեմը քաշեր դրեր էին։ Հաւանական էր բոլորովին որ ստահակներն յարձակումէ զերծ մնալու համար այս զգուշութիւնն ըրեր էին։

Իսկ իրենց տեսակն ու թիւն իմանալ՝ դեռ կարելի չէր, քանի որ և ոչ մէկը կ'երևէր ։

Բէնքրօֆ նորէն աղաղակեց ։

Պատասխան չկար ։

«Ապերատնե՛ր, գոչեց նաւորդը ։ Նայեցէք ինչպէս հանդարտ քնացեր են, որպէս թէ իրենց տունը ըլլէին ։ Հէ՜, ծովահէններ, աւազակներ, Ճօհն Պուլի որդիներ ։»

Երբոր Բէնքրօֆ՝ իբրև ամերիկացի՝ մէկուն «Ճօհն Պուլ» անունը տար, ամէնէն մեծ նախատինքն ըրած կ'սեպէր ։

Նոյն պահուն՝ բոլորովին ելաւ արևը, և Քարեայ-Պալատին ճակատն արևուն ճառագայթներուն տակ լուսաւորուեցաւ ։ Բայց թէ դուրսն և թէ ներսն ամէն բան հանդարտ ու անձայն էր ։

Գաղթականները սկսան հարցնել իրարմէ թէ Քարեայ-Պալատը բռնուած էր թէ ոչ. և սակայն ելնարանին դիրքը բաւական ապացոյց մ'էր, և մինչև անգամ ստոյգ էր որ բնակողներն՝ ինչ որ էին, չկրցեր էին խոյս տալ ։ Բայց ինչպէս պէտք էր անոնց մօտենալ ։

Այն ատեն Հարպէրդ մտածեց նետէ մը չուան մը կապել, և այս նետն արձակել այնպէս որ ելնարանին առաջին ձողերէն անցնի, որ դրանն սեմին վրայէն կ'կախուէր ։

Այն ատեն կարելի էր՝ չուանին միջոցաւ ելնարանը մինչև գետինը ձգել և Քարեայ-Պալատին ու հողին մէջ հաղորդակցութիւն հաստատել ։

Իրօք ուրիշ բան չկար ընելու, և քիչ մը ճարպիկութեամբ՝ այս միջոցը պիտի յաջողէր ։ Բարեբաղդօրէն՝ Կարկառներուն մէկ փարփասին մէջ դրեր էին աղեղներ ու նետեր, և այն տեղ կը գտնուէր նաև հարիւր գրկաչափի մօտ թեթև չուան ։ Բէնքրօֆ այս չուանը բացաւ, և անոր մէկ ծայրն փետուրներով լաւ մը զարդարուած նետ մը կապեց ։ Յետոյ Հարպէրդ՝ իր նետն աղեղին վրայ դնելէն ետև, մեծ զգուշութեամբ նշան առաւ՝ ելնարանին կախուած ծայրին ։

Կիւրըս Սմիթ, Գետէօն Սբիլէթ, Բէնքրօֆ ու Նապ ետ ետ

քաշուեր էին, որպէս զի կարենան տեսնել թէ Քարեայ-Պալատին պատուհաններուն վրայ ինչ պիտի անցնի ։ Սբիլէթ՝ ատրճանակն ուսին յենած՝ դրան նշան կ'առնուր ։

Հարպէրդ աղեղը լարեց, սլաքը սուլեց՝ չուանը մէկ տեղ քաշելով և վերջին երկու աստիճաններուն մէջ տեղէն անցաւ ։

Գործողութիւնը յաջողեր էր ։

Հարպէրդ իսկոյն չուանին ծայրը բռնեց, բայց այն միջոցին որ ցնցում մը կ'տար ելնարանը վար իջեցընելու համար, թև մը՝ պատին ու դրան մէջ տեղէն անցնելով՝ զայն բռնեց և Քարեայ-Պալատը մտցուց ։

«Ապիրա՛տ, պոռաց նաւորդը ։ Եթէ գնդակ քեզի հաճելի է, հիմակ պիտի ընդունիս ։

— Բայց ինչ է այն, հարցուց Նապ ։

— Ի՞նչ. միթէ չճանչցա՞ր ։

— Ո՛չ ։

— Բայց կապիկ մ'է, աւիծակապիկ* մը, տմնաւոր կապիկ մը, մատակ կապիկ մը, այծամորթ մը, կապկամանուկ մը, մարդակապիկ մը, կզակապիկ մը ։ Կապիկներ կոխեր են մեր բնակարանը, և մեր տարակայ եղած ատենն ելնարանէն վեր ելեր են ։»

Իւ նոյն միջոցին՝ երեք չորս կապիկ՝ որպէս թէ նաւորդին ըսածը հաստատելու համար, պատուհանները կ'ելնէին՝ որոց փեղկերը բացեր էին, և հազար տեսակ ծեքծեքումներով ու կապկութիւններով տեղւոյն ճշմարիտ կալուածատէրները կ'բարևէին ։

«Քաջ գիտէի որ այս խաղ մ'է, գոչեց Բէնքրօֆ. բայց ահա, խաբեբաներէն մէկը միւսներուն համար պիտի վճարէ ։»

Նաւորդը՝ հրացանն ուսին դրած՝ շուտ մը կապկի մը նշան առաւ, և պարպեց ։ Բոլորն ալ փախան, բաց 'ի մէկէն, որ՝ կարեվէր վիրաւորուած ըլլալուն՝ աւազափին վրայ ինկաւ ։

Այս բարձրահասակ կապիկը՝ իր սեռին առաջին կարգին կը

* Macaque, sapajou, guénon, orang, babouin, gorille, sagouin.

պատկանէր, այս մասին կասկած չկար։ Թէ՛ շիմբանզէ մը (chimpanzé), թէ՛ օրանկ մը (orang), թէ՛ մարդակապիկ մը (gorille) կամ կիպոն մը (gibbon) ըլլար, մարդակերպներուն (anthropomorphe) մէջ կը դասուէր, և այսպէս կը կոչուին անոր համար որ մարդկային սեռի հետ նմանութիւն ունին։ Սակայն Հարպէրդ յայտնեց որ օրանկուտան մ'է. և արդէն գիտենք որ պատանին հմուտ էր կենդանաբանութեան։

«Փառաւո՜ր կենդանի», պոռաց Նապ։

— Որչափ կ'ուզես փառաւոր ըսէ, պատասխանեց Փէնքրոֆ, բայց դեռ չեմ կրնար ըմբռնել թէ ինչպէս մեր բնակարանը պիտի մտնենք։

— Հարպէրդ քաջ աղեղնաձիգ է, ըսաւ թղթակիցն, և իր աղեղն անդ է, թող նորէն սկսի...

— Լաւ, այս կապիկները նենգամիտ են, պոռաց Փէնքրոֆ, և նորէն պատուհանը չպիտի երևնան. չպիտի կարենանք զանոնք սպաննել, և երբ կը մտածեմ թէ ինչ վնասներ կրնան հասցնել սենեակներուն, մթերանոցին մէջ...

— Համբերութի՛ւն, պատասխանեց Կիւրոս Սմիթ։ Այս կենդանիները չեն կրնար երկար ատեն այս ձախող վիճակին մէջ թողուլ մեզ։

— Երբոր վար իջնեն, այն ատեն պիտի հաւնցուիմ ըսածիդ, պատասխանեց նաւորդը։ Բայց նախ, Պարոն Կիւրոս, գիտե՞ս արդեօք թէ այս անզգամներէն քանի հատ կան քարայրը։»

Դժուարին պիտի ըլլար Փէնքրոֆին պատասխանել, իսկ միւս կողմէ ալ դիւրին չէր շատ Հարպէրդի ըրած փորձը կրկնել, վասն զի դրան ներսի դին առնուեր էր ելնարանին ստորին ծայրը, և երբոր նորէն չուանը քաշեցին, չուանը կտրեցաւ և ելնարանը վար ինկաւ։

Սաստիկ շատ դժուարին էր այս վիճակը։ Փէնքրոֆ կը փրփրէր։ Իրենց կացութիւնը ծիծաղաշարժ կողմ մ'ունէր, որ իրեն համար շատ ախորժելի չէր երևեր բնաւ։ Յայտնի էր որ վերջապէս գաղթականները իրենց բնակարանին պիտի տիրանային և

բռնամուտ կենդանիները պիտի վռնտէին, բայց երբ և ինչպէս, ահա այս չէին կրնար որոշել։

Երկու ժամ անցաւ, և նոյն միջոցին կապիկները երևան գալու զգուշացան. բայց միշտ անդ էին, և երեք չորս անգամ դռնէն կամ պատուհաններէն ցռուկ մը կամ թաթ մը հանեցին և հրացանի գնդակներով ընդունուեցան։

«Պահուըտինք, ըսաւ այն ատեն չափագէտը։ Կարելի է որ կապիկները պիտի կարծեն թէ մեկներ ենք և նորէն դուրս պիտի ելնեն։ Բայց թող Հարպէրդ ու Սպիլէտ ժայռերուն ետին դարան մտնեն և երևցողներուն վրայ հրացան պարպեն։»

Չափագէտին հրամանները կատարուեցան, և մինչդեռ թղթակիցն ու պատանին, գաղթականութեան ամենէ ճարտար ձգիչները, յարմար այլ կապիկներու աչքէն հեռու տեղ մը կ'նստէին, Նապ, Փէնքրոֆ և Կիւրոս Սմիթ սարահարթէն մայլցի վեր կ'ելնէին և անտառը կ'հասնէին քանի մը երէ որսալու համար, վասն զի նախաճաշիկի ժամը հասեր էր, և՝ ուտելիքի մասին՝ բան մը չկար։

Կէս ժամ ետք՝ որսորդները քանի մը վայրի աղաւնիներով դարձան, և զանոնք աղէկ մը խորովեցին։ Կապիկ մ'անգամ երևնը չէր ցոյց տուած։

Գեդէոն Սպիլէտ և Հարպէրդ գացին նախաճաշին մասնակից եղան, մինչդեռ Թօփ պատուհաններուն տակը կ'հսկէր։ Յետոյ՝ իրենց տեղը դարձան՝ կերակուր ուտելէն ետև։

Երկու ժամ ետք՝ գաղթականները նոյն վիճակին մէջ էին և փոփոխութիւն մը չէր եղած։ Կապիկները կենդանութեան նշան մը չէին յայտներ, և այնպէս կ'երևէր թէ աներևոյթ եղեր էին. բայց աւելի հաւանական երևցածն այս էր որ՝ իրենց մէկ ընկերին մահուան վրայ վախցեր, հրացաններուն պայթումէն զարհուրեր էին և Քարեայ-Պալասին սենեակներուն խորը կամ մինչև անգամ մթերանոցը հանդարտ կ'մնային։

Եւ երբ գաղթականները կ'մտածէին թէ ինչ հարստութիւններ կ'պարունակէր այն մթերանոցը, չափագէտին ստացած համ

թերութիւնը բուն սրտմտութեան կ'դառնար, և իրաւի՛ այսպէս զայրանալու իրաւունք ունէին։

«Ճշմարիտը, շատ անմիտ ենք, ըսաւ վերջապէս Թղթակիցը, և անշուշտ եթէ հնար մը չգտնենք, այսպէս պիտի սպասենք յաւիտեան։

— Սակայն պէտք է դուրս հանել այս անասունները, գոչեց Բէնքրօֆ։ Կրնանք յաջողիլ, եթէ քսան հատ անգամ լինին, բայց՝ ասոր համար, պէտք է դէմ առ դէմ կռուիլ։ Նայինք ուրեմն, արդեօք անոնց մտնելու հնար մը չկա՞յ։

— Կա՛յ, պատասխանեց այն ատեն չափագէտը, որու մաքէն խորհուրդ մ'անցաւ նոյն միջոցին։

— Մէ՞կ հնար, ըսաւ Բէնքրօֆ։ Լաւ ուրեմն, այդ ամենէ լաւը պիտի լինի, քանի որ ուրիշ ճար չկայ։ Ի՞նչ է ուրեմն։

— Փորձ փորձենք Քարեայ-Պալատն իջնել լճին հին ջրմուղէն, պատասխանեց չափագէտը։

— Ա՜հ, անիծից արմատ, գոչեց նաւորդը, ինչպէս իմ միտքս չեկաւ այդ միջոցը։»

Արդարև՝ մինակ այդ ճամբան կար Քարեայ-Պալատն իջնելու համար, որպէս զի այն կապիկներու խմբին դէմ կռուելով դուրս վանեն։

Իրաւ է որ ջրմուղին բերանը շաղախեալ քարերու պատով գոցուած էր և հարկ պիտի լինէր զայն քակել, բայց վերջէն դիւրին էր զայն վերաշինել։ Բարեբաղդաբար, Կիւրոս Սմիթ դեռ իր խորհուրդն 'ի գործ չէր դրած, որ էր լճակին ջրերով ծածկել ջրմուղին բերանը, վասն զի այն ատեն այս գործողութեան համար բաւական ժամանակ պէտք պիտի լինէր։

Արդէն կէսօր անցեր էր, երբոր գաղթականները, լաւ մը զինուելով ու քարուրագներ և կացիններ առնելով Կարկառներէն դուրս ելան, Քարեայ-Պալատին պատուհաններուն տակէն անցան, Թօփին ապսպրելով որ իր տեղը մնայ, և Մէրսիին ձախ եզրէն վեր ելնելու պատրաստեցան, Մեծ-Տեսքին սարահարթը հասնելու համար։

Բայց այս ճամբուն վրայ հազիւ յիսուն քայլ առեր էին, որ շան կատաղի հաչումները լսեցին։ Կարծես թէ յուսահատական կոչում մ'էր։

Ամէնքը կայ առին։

«Վազենք» ըսաւ Բէնքրօֆ։

Եւ ամէնքն սկսան քարափէն վար իջնել վազն 'ի վազ։

Երբ ճամբուն անկիւնը հասան՝ տեսան որ գործերուն վիճակը փոխուեր է։

Արդարև՝ կապիկներն՝ յանկարծական երկիւղէ մը բռնուելով որու պատճառն անյայտ էր, խոյս տալու կ'ջանային։ Երկու երեք հատ պատուհանէ պատուհան կ'ցատկէին լարախաղացի մը թեթևաշարժութեամբ։ Ելնարանն անգամ կախելու չէին մտածեր, թէև անով դիւրին պիտի լինէր իրենց վար իջնելու, և կարելի է որ իրենց այս սարսափին ժամանակ մեկնելու միջոցը մոռցեր էին։

Քիչ ատենէն հինգ վեց հատ կապիկ հրացանով զարնուեցան, և գաղթականները շատ դիւրաւ նշան առնելով հրացանները պարպեցին։ Ոմանք վիրաւոր, ոմանք սպաննուած՝ սենեակներուն ներսի դին ինկան, սուր աղաղակներ արձակելով։ Միւսները՝ դրսէն գահավիժելով՝ ինկան խորտակուեցան, և քանի մը վայրկեան ետք՝ դիւրին էր ենթադրել որ կապիկ մ'անգամ ողջ չէր մնացած Քարեայ-Պալատին մէջ։

«Յաղթութի՜ւն, գոչեց Բէնքրօֆ, յաղթութիւն։

— Այդչափ մի՛ պոռար յաղթութիւն, ըսաւ Գետէոն Սբիլէթ։

— Ինչու՞ համար։ Բոլորն ալ սպաննուեցան, պատասխանեց նաւորդը։

— Շատ աղէկ, բայց ներս մտնելու համար մեզի ինչ օգուտ ունին։

— Ջրմուղն երթանք, պատասխանեց Բէնքրօֆ։

— Անտարակոյս, ըսաւ չափագէտը։ Սակայն աւելի լաւ կ'լինէր...։»

Նոյն միջոցին, և Կիւրոս Սմիթին ըրած դիտողութեան իբրև

պատասխան, ելնարանը տեսան որ դրան սեմին վրայ սահեցաւ, ապա բացուելով մինչև վար հողին վրայ իջաւ։

«Ա՜հ, թշուառականներ։ Ի՜նչ յանդգնութիւն, պոռաց Նաւաստին Կիւրոս Սմիթին նայելով։

— Մեծ յանդգնութիւն, մրմնջեց չափագէտն, որ ամենէ առաջ ելնարանին վրայ ելաւ։

— Զգուշացէ՛ք, Պարոն Կիւրոս, գոչեց Բէնքրոֆ, եթէ դեռ կ՚գտնուին քանի մը կղակապիկներ . . .

— Պիտի նայինք» պատասխանեց չափագէտն առանց կենալու։

Բոլոր իր ընկերներն ետևէն գացին, և՝ մէկ վայրկենի մէջ դրան սեմին վրայ հասան։

Ամեն տեղ փնտռտուքի սկսան։ Զկար մէկը սենեակներուն մէջ, և ոչ մթերանոցը՝ ուր փոսս մը չէին բրած կապիկները։

«Է՜հ, հապա ելնարանը, գոչեց Նաւաստին։ Ո՞ր պարոնը վար իջեցուց։»

Բայց, նոյն պահուն՝ աղաղակ մը լսուեցաւ, և մեծ կապիկ մը, որ քարափոսին մէջ պահուըտեր էր, սրահը վազեց՝ Նապէն հալածուելով։

«Ա՜խ, աւազակ» գոչեց Բէնքրոֆ։

Եւ տապարը ձեռքը բռնած կենդանիին գլուխը պիտի պատռէր, երբ Կիւրոս Սմիթ զանի կեցուց և անոր ըսաւ.

«Խնայէ զայն, Բէնքրոֆ։

— Ի՞նչ. ներեմ այս սևուկին։

— Այո՛, այն վար ձգեց ելնարանը։»

Եւ չափագէտն այս ըսաւ այնպիսի եղական ձայնով մը, որ դժուարին էր որոշել թէ իրաւ կ՚ըսէր թէ ոչ կատակ կ՚ընէր։

Սակայն կապկին վրայ ընկան, որ ինքզինք արիաբար պաշտպանելէն ետև՝ գետին ինկաւ։ Գաղթականները զայն կապեցին։

«Ճո՛փ, պոռաց Բէնքրոֆ. և հիմակ ի՞նչ պիտի ընենք զայն։

— Սպասաւո՛ր մը» պատասխանեց Հարպէրդ։

Եւ այսպէս խօսելով պատանին կատակ չէր ըներ բոլորովին, վասն զի գիտէր թէ քառաձեռներու (quadrumane) այս ուշիմ ցեղէն որչափ օգուտ կրնար քաղել մարդ։

Այն ատեն գաղթականները կապկին մօտեցան և մտադիր անոր նայեցան։ Իրօք այն մարդակերպներուն կ՚նմանէր որոց դիմային անկիւնն Աւստրալիացւոց և Հօդանդօդներու դէմքէն շատ տարբեր չէ։

Ուրան մ'էր, որ իբրև այն՝ ոչ բօբօւէնի (babouin) վայրագութիւնն ունի, ոչ առիւծակապկի անխոհեմութիւնը, ոչ կզակապկի աղտոտութիւնը, ոչ անապի կապկին (magot) անհամբերութիւնը, ոչ շանագլուխ կապկին (cynocéphale) վատ բնազդները։ Այս մարդակերպներուն սեռին համար կ՚պատմեն այնքան բաներ որ գրեթէ մարդկային իմացականութիւն կ՚ցուցնեն։

Երբ տան մէջ գործածուին, կարող են սեղանի վրայ սպասաւորել, սենեակներ սրբել, լաթեր մաքրել, մուճակներ սրբել, ճարպիկութեամբ դանակ, դգալ և պատառաքաղ գործածել, և մինչև անգամ գինի խմել . . . Ճիշդ ամենէ լաւ, երկոտանի և անփետուր սպասաւորներուն պէս։ Յայտնի է թէ Պիւֆֆօն այս տեսակ կապիկ մ'ունեցաւ, որ իրեն երկար ատեն ծառայեց, իբրև հաւատարիմ և եռանդուն սպասաւոր մը։

Այն միջոցին՝ Քարեայ-Պալատին սրահին մէջ կապուած կապիկը մեծ սատանայ մ'էր, վեց ոտք բարձր, զարմանալի համեմատութեամբ մարմին մը, լայն կուրծք, միջին խոշորութեամբ գլուխ ունէր, վաթսունը հինգ աստիճանի հասնող դիմային անկիւն մը, կլոր գանկ, ցից քիթ, ողորկ, փափուկ, փայլուն մազերով ծածկուած մորթ մը — վերջապէս մարդակերպներու կատարեալ տիպար մը։ Իր աչքերն որ մարդու աչքերէ աւելի պզտիկ էին՝ մտացի աշխուժութեամբ մը կ՚փայլէին. իր սպիտակ ակռաները կ՚շողային, և կաղնեգոյն պզտիկ գանգուր մօրուք մ'ունէր։

«Աղուոր մանչ մը, ըսաւ Բէնքրոֆ։ Միայն եթէ իր լեզուն գիտնայինք, պիտի կարող ըլլայինք հետը խօսիլ։

— Այսպէս, ըսաւ Նապ, կատակ չէ այս, տէ՛ր իմ։ Իբրև ծառայ պիտի բռնենք զայն։

— Այո՛, Նապ, պատասխանեց չափագէտը ժպտելով։ Բայց մի՛ նախանձիր։

— Եւ յուսամ որ պատուական ծառայ մը պիտի դառնայ, յարեց Հարպէրդ։ Նորահասակ կ'երևի, դիւրին պիտի լինի իր դաստիարակութիւնը, և զանի ընտելացընելու համար՝ բռնութիւն բանեցընելու և ոչ իսկ սուր ակռաները խլելու պիտի չստիպուինք, ինչպէս որ ոմանք կ'ընեն այսպիսի պարագայի մէջ։ Ի հարկէ պիտի կապուի մեզի, քանի որ հետը սիրով պիտի վարուինք։

— Այո՛, սիրով պիտի վարուինք» պատասխանեց Բէնքրոֆ, որ իր բոլոր ոխը մոռցեր էր «խեղկատակներուն» դէմ։

Յետոյ ուրանկին մօտենալով.

«Լաւ ուրեմն, տղաս, հարցուց անոր, ի՞նչպէս ես։»

Ուրանը թեթև խանչիւն մը հանելով պատասխանեց, որմէ կ'իմացուէր որ շատ դայրոյթ չունի։

«Դուն ալ գաղթականութեան մէկ անդամը պիտի լինիս, հէ՞, հարցուց նաւաստին։ Պ. Կիւրոս Սմիթին ծառայութեան մէջ պիտի մտնես։»

Նորէն կապիկը մռմռաց, իբրև հաւանութեան նշան։

«Եւ իբրև ամսական՝ միայն կերակուրով գոհ պիտի լինիս։»

Կապիկը երրորդ անգամ հաստատական խանչիւն մը հանեց։

«Իր խօսակցութիւնը քիչ մը միօրինակ է, գիտել տուաւ Գեդէոն Սբիլէթ։

— Լա՛ւ, պատասխանեց Բէնքրոֆ, ամէնէ քիչ խօսող ծառաներն ամէնէ լաւ ծառաներն են։ Ասկից զատ՝ վարձք չկայ — կը լսե՞ս, տղայ, առջի տարիները՝ վարձք պիտի չընդունիս։ Բայց վերջէն կրկնապատիկը պիտի տանք, եթէ քեզմէ գոհ լինինք։»

Այսպէս գաղթականութեան նոր անդամ մ'աւելցաւ, որ իրեն շատ ծառայութիւններ պիտի ընէր։

Իսկ անոր տրուելիք անուան գալով՝ նաւաստին խնդրեց որ՝ արդէն իրեն ծանօթ եղած կապկի մ'ի յիշատակ՝ Ժիւբիդէր անուանին և համառօտութեամբ Ժիւբ։

Եւ ահա այսպէս, առանց երկար պայմաններու, վարպետ Ժիւբ Քարեայ-Պալատը հաստատուեցաւ։

ԳԼՈՒԽ Ժ.

Գործադրելիք խորհուրդներ — Մէրսիի վրայ կամուրջ մը — Մեծ-Տեսա-րին սարահարթը կղզի մը շինել — Շարժական կամուրջ — Ցորենի բերք — Գետակ — Պզտի կամուրջներ — Հաւնոց — Աղաւնոց — Երկու օնակա — Լծուած սայլակը — Օդապարիկին նաւահանգիստին արշաւանք մը.

Այսպէս Լինքօլն կղզւոյն գաղթականներն իրենց բնակարանին տիրացեր էին, առանց հին ջրմուղէն անցնիլ ստիպուելու, որով որմնագործութեան աշխատանքէ ազատեցան։ Ստուգիւ բարեպատեհ պարագայ մ'էր որ ջրմուղը բանալու որոշուած միջոցին, կապիկներու խումբն յանկարծահաս և անմեկնելի սարսափէ մը բռնուելով, Քարեայ-Պալատէն դուրս նետուեցան։ Ուրեմն այս կենդանիները գուշակեցի՞ն արդեօք որ ուրիշ ճամբով իրենց վրայ յարձակում մը պիտի լինէր։ Այս կերպով միայն կարելի է մեկնել իրենց նահանջին պատճառը։

Նոյն օրուան առջի ժամերը՝ կապիկներու դիակներն անտառը տարին թաղեցին. ապա՝ գաղթականներն այդ օտարականներուն պատճառած անկարգութիւնը դարմանելու աշխատեցան — անկարգութիւն այլ ոչ վնաս, վասն զի թէև սենեակներուն կահկարասին տակն ու վրայ ըրեր էին, բայց գոնէ բան մը չէին խորտակեր։

Նապ նորէն վառեց իր բուռերը և խոհանոցին մէջ պահուած ճրէով սննդարար կերակուր մը պատրաստեց, որու ամենքն ալ ախորժակով մասնակից եղան։

Ժիւբն ալ չմոռցան, առատ շոճի նուշեր և արմատներ տուին անոր և լաւ մը կերաւ։

Բէնքրոֆ անոր թևերը քակեր էր, բայց յարմար դատեց ոտքերուն կապերը չհանել մինչև որ անոր հլութեան վրայ վստահ չլինի։

Յետոյ՝ պտուկներէն առաջ՝ Կիւրոս Սմիթ և իր ընկերները, սեղանի մը բոլորտիքը նստած՝ քանի մը խորհուրդներու վրայ վիճաբանեցան, որոց գործադրութիւնը ստիպողական էր։

Ամենէ կարևորն ու ստիպողականը Մերսիի վրայ կամրջի մը շինութիւնն էր, որպէս զի կղզւոյն հարաւային մասը Քարեայ-Պալատին հետ հաղորդակցութեան մէջ դնեն, ապա պէտք էր գոմ (corral) մը շինել արտիկներու և ուրիշ բրդոտ կենդանիներու համար, զոր պէտք էր որսալ։

Ինչպէս կ'տեսնուի՝ այս երկու ձեռնարկութիւնները նպատակ ունէին հագուստի խնդիրը լուծել, որ այն ատեն ամենէ կարևորն էր։ Արդարև՝ կամրջին միջոցաւ օդապարիկին փաթթոյթը դիւրաւ պիտի փոխադրուէր և ճերմակեղէն պիտի հայթայթէր, իսկ գոմն ալ պիտի ծառայէր բուրդ պատրաստել և անով զգեստներ շինել։

Կիւրոս Սմիթին դիտաւորութիւնն էր Կարմիր-Վտակին ակունքը հաստատել գոմը, որպէս զի որոճողներն արօտ գտնեն և թարմ ու առատ սնունդ մը։

Արդէն Մեծ-Տեսքին սարահարթին և ակունքին մէջ գտնուած ճամբան մասամբ բացուած էր, և առաջին սայլակէն աւելի յարմար սայլակով փոխադրութիւններն աւելի դիւրին պիտի ըլլային, մանաւանդ եթէ լծելու համար կենդանի մ'որսալու յաջողէին։

Բայց եթէ անպատեհութիւն մը չկար գոմը Քարեայ-Պալատէն հեռու գտնուելուն, խնդիրը կ'փոխուէր հաւնոցին համար, որու վրայ Նապ գաղթականներուն ուշադրութիւնը հրաւիրեց։ Արդարև՝ պէտք էր որ հաւերը խոհարարապետին ձեռքին տակը ըլլային, և այս հաւնոցին համար ամենէն յարմար տեղն երևցաւ լճակին այն ջրափունքն որ հին ջրմուղին կ'յանդէր։ Ջրային թռչունները միւսներուն պէս կարող էին այն տեղ զարգանալ, և զոյգ մը տինամուներն, որ վերջին արշաւանքի ատեն բռնուեր էին, ընտելացընելու համար առաջին փորձերը պիտի ըլլային։

Հետևեալ օրը — Նոյեմբեր 3 — կամրջին շինութեան համար գործերն սկսան և ամենքն այս կարևոր շէնքին մասնակից

գտնուելու պէտքը տեսան։ Գաղթականները՝ սղոցներ, տապարներ, մկրատներ, մուրճեր շալկեցին, և մէյմէկ ատաղձագործ դարձած՝ աւազափն իջան։

Այն տեղ՝ խորհրդածութիւն մ'ըրաւ Բէնքրօֆ։

«Եւ եթէ՝ մեր բացակայութեան ատեն՝ վարպետ Ժիւբին խելքին փչէ և վեր քաշէ ելնարանն զոր երէկ այնքան վեհանձնութեամբ վար կախեց, այն ատեն ի՞նչ պիտի ընենք։

— Ուրեմն վարի ծայրէն կապենք» պատասխանեց Կիւրոս Սմիթ։

Եւ իսկոյն աւազին մէջ մխելով երկու գերանի կապեցին ամրապէս ելնարանին ծայրերը։ Յետոյ՝ գաղթականները՝ Մերսիի ձախ եզրն ելնելով՝ գետակին յօրինած արմուկը հասան։

Այն տեղ կայ առին, որպէս զի գիտեն թէ արդեօք այն տեղ յարմա՞ր է կամուրջը ձգել։ Նոյն վայրն ամենէ յարմարը գտան։

Իրաւ՝ այս կէտէն մինչև օդապարիկի նաւահանգիստը, որ առջի օր գտնուեր էր հարաւային եզերքը, միայն երեք ու կէս մղոնի հեռաւորութիւն կար, և կամրջէն մինչև նաւահանգիստ դիւրին պիտի ըլլար կառքելի (carrossable) ճամբայ մը յարդարել, որով Քարեայ-Պալատին ու կղզւոյն հարաւային մասին մէջ հաղորդակցութիւնը պիտի դիւրանար։

Կիւրոս Սմիթ երկար ատենէ 'ի վեր երկնած մէկ խորհուրդն իր ընկերներուն առաջարկեց, որու գործադրութիւնը շատ պարզ էր և միանգամայն օգտակար։ Այս խորհուրդն էր Մեծ-Տեսքին սարահարթը բոլորովին կղզիացընել, որպէս զի ամեն չորքոտանիներու և չորքձեռաններու յարձակումէն զերծ պահէ։ Այս միջոցով՝ Քարեայ-Պալատը, Կարկառները, հաւնոցն և սարահարթին բոլոր վերին մասը, որ վար ու ցանք պիտի յատկանար, կենդանիներու աւերումներէն պահպանուած պիտի մնային։

Ամենադիւրին էր գործադրել այս խորհուրդը, և աւասիկ չափագիտին մտածած գործադրութեան եղանակը։

Արդէն սարահարթն երեք կողմէ՝ բնական կամ արուեստական առուակներով պահպանուած էր այսպէս։

Հիւսիս-արեւմտեան կողմէ՝ Կրէնդ լճակին եզրով, հին ջրմուղին բերանը կռթնած անկիւնէն մինչեւ լճակին արեւելեան եզրը գտնուած ճեղքուածն, ուսկից ջրերը կ'հոսէին.

Հիւսիսային կողմէ՝ այս ճեղքուածքէն մինչեւ ծովը, նոր առուակով մը՝ որ փոս մը բացեր էր սարահարթին եւ աւազաքին վրայ, եւ՝ իրօք՝ բաւական էր այս վտակին փոսը փորել որպէս զի կենդանիներն անկից չկարենան անցնիլ.

Վերջապէս հարաւային կողմէ՝ այս գետաբերանէն մինչեւ Մերսիի արմուկը, ուր կամուրջը պիտի շինուէր։

Արդ սարահարթին արեւմտեան մասը, որ գետին արմուկին եւ լճակին հարաւային անկեան մէջ կ'գտնուէր եւ որ մղոնէ մը նուազ տարածութիւն ունէր, ամեն եկող գացողներու բաց էր։

Բայց շատ դիւրին էր նոյն տեղ փոս մը փորել, լայն ու խորունկ, որ լճակին ջրերով պիտի լեցուէր, եւ որուն աւելցուկն երկրորդ ջրվէժով մը Մերսիի փոսը պիտի թափէր։ Լճակին եզերքը քիչ մը պիտի իջնէր, անշուշտ, ջրերուն այս նոր հոսելովը. բայց Կիւրոս Սմիթ գիտեր էր որ Կարմիր-Վտակին ջրերը բաւական առատ էին եւ իր խորհուրդը գործադրելու կ'օգնէին։

«Այսպէս ուրեմն, յարեց Կիւրոս Սմիթ, Մեծ-Տեսքին սարահարթը ճշմարիտ կղզի մը պիտի դառնայ, ամեն կողմէ ջրերով շրջապատուած, եւ մեր կալուածքին միւս մասերուն հետ միայն Մերսիի վրայ մեր ձգելիք կամրջով հաղորդակցութիւն պիտի ունենայ, նոյնպէս ջրվէժին վերին եւ ստորին կողմը ձգուած պզտիկ կամուրջներով, եւ վերջապէս մեր շինելիք ուրիշ երկու կամրջով, մին այն փոսին վրայ, զոր փորել կ'առաջարկեմ, եւ միւսը Մերսիի ձախ եզրին վրայ։ Արդ՝ եթէ այս մեծ ու փոքր կամուրջները կարենանք ըստ հաճոյս բառնալ, Մեծ-Տեսքին սարահարթն ամեն յանկարծական արշաւանքէ ազատ պիտի մնայ։»

Կիւրոս Սմիթ՝ իր միտքը լաւ եւս ընկերներուն հասկցընելու համար՝ սարահարթին տեղագրական ցուցակը շիներ էր, եւ իր խորհուրդը բոլոր մասերովն անմիջապէս ամենքն ալ ըմբռնեցին։ Ուստի բոլորն ալ միաբերան ընդունեցան, եւ Բէնքրօֆ իր առաջնորդի տապարը շարժելով պոռաց.

«Նախ՝ կամուրջին ձեռք զարնենք։»

Այս էր ամենէ ստիպողական գործը։ Ծառեր ընտրեցին, վար առին, քշտեցին, մանր գերաններ, տախտակներ շինեցին։ Այս կամուրջն՝ Մերսիի աջ եզրին կռթնող մասին վրայ հաստատ պիտի լինէր, խոլ ձախ եզրին յանգող կողմը շարժական, այնպէս որ հակակշռով կարելի լինի բառնալ, թումբի տեսակ մը կամուրջներու պէս։

Դիւրին է իմանալ որ այս տաժանելի ու ծանր աշխատութիւն մը պահանջեց, եւ թէպէտ՝ ճարտարութեամբ յառաջ մղեցին, բայց դարձեալ բաւական ժամանակի պէտք եղաւ, վասն զի Մերսին գրեթէ ութսուն ոտք լայնութիւն ունէր։

Ուստի հարկ եղաւ գետին փոսին մէջ գերաններ մխել, որպէս զի կամուրջին տախտակը հաստատ դրուի, եւ երկու հատ կամար շինուի ծանր բեռներ վերցընելու համար։

Բարեբաղդաբար՝ ոչ գործիք կ'պակսէր փայտ տաշելու, ոչ երկաթ՝ սնդելու, ոչ մարդու մը հնարամտութիւնն՝ որ քաջավարժ էր այս տեսակ գործերու, վերջապէս ոչ իր ընկերներուն եռանդն, որոնք՝ եօթն ամսէ ՚ի վեր՝ հարկաւ ձեռքի մեծ ճարտարութիւն ստացեր էին։

Եւ պէտք է ըսել, Գետէոն Սբիլէդ ամենէն անճարակը չէր, եւ ճարպիկութեան կողմէ նաւաստիին հետ անգամ կ'մրցէր, «որ երբէք այդչափ բան չէր յուսար պարզ օրագրապետէ մը։»

Երեք բաղմաշխատ շաբաթներ տեւեց Մերսիի կամրջին շէնքը։ Գործաւորներն իրենց աշխատութեան տեղը կերակուր կ'ուտէին, եւ նոյն միջոցին օդը խիստ պատուական լինելուն՝ միայն իրիկունները Քարեայ-Պալատը կ'դառնային ընթրելու համար։

Այն ժամանակները՝ գիտեցին որ վարպետ Ժիւբ դիւրաւ կ'ընտելանար իր նոր տէրերուն հետ, որոց յետին ծայր հետաքրքիր աչքով կ'նայէր։ Սակայն՝ Բէնքրօֆ՝ զգուշութեան համար՝ բոլորովին արձակ համարձակ չէր թողուր կապիկը, վասն զի կ'ուզէր սպասել, իրաւամբ՝ որ ամեն գործերը լմննան եւ սարահարթին սահմանները բոլորովին անանցանելի դառնան։

Թօփ և Ժիւբ շատ սիրով էին և իրարու հետ յօժարակամ կը խաղային, բայց Ժիւբ ամէն բան ծանր ծանր կ՚կատարէր։

Նոյեմբերի 20ին՝ կամուրջը լմնցաւ։ Իր շարժուն մասն՝ որ հաւասարակշիռ եղեր էր հակաբեռներով, դիւրաւ կ՚ամբառնար, և թեթև ձիգ մը բաւական էր զայն վերցնելու համար. իր ծխնիին և յետին պահանգին մէջ՝ որու վրայ կ՚կռթնէր կամուրջը, երբ որ գոցուէր, քան ոտնաչափ միջոց մը կար, որ բաւական լայն լինելուն՝ կենդանիները չէին կարող անցնիլ։

Այն ատեն գաղթականները խօսք ըրին օդապարիկին փաթոյթն երթալ առնուլ, քանի որ կ՚ուզէին բոլորովին ապահով վիճակի մէջ պահել, բայց զայն փոխադրելու համար՝ հարկ կար սայլակ մը տանիլ մինչև Օդապարիկին նաւահանգիստը, և հետևապէս հարկ կար նաև Խոր-Արևմուտքի թանձր ծառերուն մէջէն ճամբայ մը բանալ։ Այս ալ քիչ մը ժամանակի կարօտ գործ մ՚էր։

Ուստի Նապ և Բէնքրօֆ մինչև նաւահանգիստը գացին քննութեան, և երբոր ստուգեցին որ խռուշին մէջ պահուած կտաւը բնաւ վնաս մը չէր կրեր, որոշեցին Մեծ-Տեսքի սարահարթին վերաբերող գործերը շարունակել առանց ընդհատելու։

«Այս կերպով մեր հաւնոյն աւելի լաւ վիճակի մէջ կրնանք դնել, ըսաւ Բէնքրօֆ, վասն զի այն ատեն ոչ աղուէսներու այցելութենէ և ոչ ուրիշ վնասակար կենդանիներու յարձակումէն պիտի վախնանք։

— Այս ևս կայ, յարեց Նապ, որ կարող ենք սարահարթը հերկել, վայրի տունկեր փոխադրելով անկել...

— Եւ մեր երկրորդ ցորենի արտը պատրաստե՛լ» գոչեց նաւորդը յաղթական կերպով մը։

Եւ իրաւի՝ ցորենի առաջին արտը, որու մէջ մէկ հատիկ ցորեն ցանուած էր, զարմանալի կերպով յառաջ գացեր էր՝ Բէնքրօֆի խնամոց շնորհիւ։ Չափագիտին արդէն իմացուցած տասը հատ հասկը բուսեր էր, և որովհետև ամէն մէկ հասկ ութսուն հատիկ ցորեն կ՚պարունակէր, գաղթականութիւնն ութ հարիւր ցորենի տէր կ՚գտնուէր — վեց ամսուան մէջ — և այս՝ ամէն տարի կրկին բերք կ՚խոստանար։

Այս ութ հարիւր ցորենը, բաց հանելով յիսուն հատ, որ խոհեմութեամբ պահեստի դրուեցան, նոր արտի մը մէջ պիտի ցանուէին, և նոյն հոգը պիտի տանէին ինչպէս որ մէկ հատիկ ցորենին տարին։

Արտը պատրաստեցին, չորս դին հաստատուն ցանկ մը շինեցին, բարձր ու սրածայր, որու վրայէն չորքոտանիները դժուարաւ պիտի կարենային ցատկել։ Իսկ թռչուններն ալ վանելու համար՝ բաւական եղան ձայնարկու դառնակներ (tourniquet) և ահաւոր խրտուիլակներ, զոր Բէնքրօֆի այլանդակ երևակայութիւնը հնարեց։ Այն ատեն եօթ հարիւր յիսուն հատիկները կանոնաւոր ակօսներու մէջ ցանեցին, և բնութիւնը մնացածը պիտի կատարէր։

Նոյեմբերի 21ին, Կիւրոս Սմիթ սկսաւ գծագրել փոսն որ արևմտեան կողմէ սարահարթը պիտի գոցէր, Կլէնդ լճակին հարաւային անկիւնէն՝ մինչև Մէրսիի արմուկը։ Այն տեղ երկու երեք ոտք բուսական հող կար, իսկ վերեն՝ կրանիտ։ Ուստի պէտք եղաւ նորէն բորակաւոր կլիսէրին շինել, և այս նիւթն իր սովորական արդիւնքն ունեցաւ։

Սարահարթին կարծր հողին վրայ՝ տասն երկու ոտք լայն և վեց ոտք խորունկ փոս մը փորուեցաւ՝ և այս գործը տասն հինգ օր անգամ չառաւ։ Նոյն միջոցաւ՝ լճակին ժայռոտ եզրին վրայ նոր ծակ մը բանալով՝ ջրերն այս նոր փոսին մէջ թափեցան, առու մը յօրինելով և այս առուակին «Կլիսէրին-Վտակ» անունը տուին, և Մէրսիի գետին մէկ ատուն դարձաւ։

Ինչպէս որ չափագէտն արդէն յայտներ էր, լճակին մակերևոյթն իջաւ, բայց գրեթէ աննշմարելի կերպով։ Վերջապէս այս ցանկն աւարտելու համար՝ առուակի վտակին փոսը շատ մը լայնցուցին, և կրկին ցանկով մը բոլոր ափերը պահպանեցին։

Դեկտեմբեր ամսուն առաջին տասն հինգ օրուան մէջ՝ այս աշխատանքը բոլորովին գլուխ հանեցին, և Մեծ-Տեսքին սարահարթը՝ այսինքն տեսակ մ՚անկանոն հնգանկիւն, որ շուրջ [illegible] մղոն շրջապատ ունէր, և որ ջրային գօտիով մը պատուած [illegible]

որ և է յարձակումէ բոլորովին ազատ մնայ։ Այս դեկտեմբեր ամսուն մէջ տաքը շատ սաստիկ եղաւ։ Սակայն գաղթականները բնաւ չուզեցին իրենց ձեռնարկութիւնները դադրեցնել, և որովհետև ստիպողական էր հաւնոցը շինել, սկսան անով զբաղիլ։

Անօգուտ է ըսել որ սարահարթը բոլորովին գոցելէն ՚ի վեր՝ վարպետ Ժիւփն ազատ թողուցին։ Իր տէրերէն չէր հեռանար և խոյս տալու ամենևին փափաք չէր յայտներ։ Հանդարտ, թէև շատ ուժեղ կենդանի մ'էր, և զարմանալի թեթևաշարժութիւն մը ունէր։ Ա՜հ, երբոր պէտք լինէր Քարեայ-Պալատին ելնարանէն վեր ելնել, ոչ մէկը կարող կ'լինէր անոր հետ մրցիլ։ Արդէն մէկ քանի գործերու կ'գործածէին կապիկը․ փայտի բեռներ կը կրէր և Կլիսէրին-Վտակէն հանուած քարերը սայլակով կ'փոխադրէր։

«Դեռ որմնադիր մը չէ, բայց արդէն կապիկ մ'է» կ'ըսէր Հարպէրթ կատակով, այս «կապիկ» մականունին ակնարկելով, զոր որմնադիրներն իրենց աշակերտներուն կ'տան։ Երբէք աւելի յարմար անուն մը չէ եղած։

Հաւնոցն երկու հարիւր քառակուսի կանգուն տեղ բռնեց, որ լճակին հարաւ-արևելեան կողմէն ընտրեցին։ Պատնէշով մը պատեցին, ու այլ և այլ ապաստաններ պատրաստեցին այն տեղ բնակելիք կենդանիներու համար։ Ճիւղերէ շինուած խուղեր էին, զանազան մասերու բաժնուած, որ պատրաստ էին իրենց բնակիչներուն համար։

Առաջիններն եղան զոյգ մը տինամուները, որ քիչ ատենէն բազմաթիւ ձագուկներ տուին։ Ասոնք իբրև ընկեր ունեցան լճակին եզերքը գտնուած վեց հատ բադեր։ Ասոնք չինական այն սեռին կ'պատկանէին՝ որոց թևերը հովանոցի պէս կ'բացուին, և որ, իրենց փետուրներուն փայլունութեամբը՝ ոսկեփայլ փասեաններուն հետ կ'մրցին։

Քանի մ'օր ետք՝ Հարպէրթ տեսակ մ'աքաղաղներ բռնեց որ հոլով և փետուրներով շինուած պոչ ունէին և շուտով ընտելացան։ Նոյն հաւալուսներ, ձկներ, ջրային հաւեր [illegible]

իջան հաւնոցին եզերքը, և բոլոր այս կենդանիներն՝ ատեն մը կռուելէն ետև՝ մերժելով, գոչելով, դրդալով՝ վերջապէս իրարու հետ վարժեցան և այնպիսի համաձայնութեամբ շատցան որ գաղթականներն ապահով եղան ապագային մէջ միշտ հաւ ունելու։

Կիւրոս Սմիթ՝ իր գործը կատարելագործել ուզելով՝ հաւնոցին մէկ անկիւնն աղաւնոց մ'ալ հաստատեց։ Սարահարթին բարձր ժայռերուն վրայ յաճախող աղաւնիներէն տասն երկու հատ անոր մէջ դրին։ Այս թռչունները դիւրաւ վարժեցան իրենց նոր բնակարանը դառնալ ամեն իրկուն, և աւելի հակում ցոյց տուին ընտելանալու քան թէ իրենց համասեռ հաւփայները, որ, սակայն, վայրենի վիճակի մէջ միայն կ'սերին։

Վերջապէս հասեր էր ժամը օդապարիկին փաթոյթը գործածել՝ ճերմակեղէն շինելու համար, վասն զի՝ ամեն բանէ զուրկ մարդիկ միայն կրնային մտածել որ օդապարիկն այն ձևով պահեն, որպէս զի օրին մէկը տաք օդով լեցնելով անհուն ծովու մը վրայ ճամբորդեն և կղզիէն հեռանան, սակայն Կիւրոս Սմիթ, որ գործնական մարդ էր, այդ բանը մաքէն չէր անցըներ։

Ուրեմն փաթոյթը Քարեայ-Պալատը բերելու պէտք կար, և գաղթականները ջանացին իրենց ծանր սայլակն աւելի թեթև և դիւրաշարժ ընելու։ Բայց եթէ կառքը պակաս չէր, շարժիչ մը դեռ գտած չէին։ Միթէ կղզին բնիկ որոճող մը չկար որ ձիու, էշու, կովու գործն ընէ։ Այս էր խնդիրը։

«Ճշմարիտը, քարշող անասուն մը մեզի շատ օգտակար պիտի լինէր, կ'ըսէր Բէնքրոֆ, մինչև որ Պ. Կիւրոս հաճի շոգեշարժ սայլակ մը, կամ վայրաշարժ մ'անգամ շինելու․ վասն զի՝ օրին մէկն՝ անտարակոյս՝ երկաթուղի մը պիտի ունենանք Քարեայ-Պալատէն մինչև Օդապարիկի Նաւահանգիստը, Փրանքլէն լեռին վրայ ալ գիծ մը ձգելով։»

Եւ պարկեշտ նաւաստին այսպէս խօսելով՝ ըսածին կ'հաւատար։ Ո՜հ, երևակայութիւն, երբոր հաւատն ալ անոր կ'միանայ։

Բայց չափազանցութեամբ չխօսելու համար, լծելի պարզ չորքոտանի մը Բէնքրոֆի գործը կրնար կատարել, և որովհետև

Նախախնամութիւնն յատուկ սէր ունէր անոր, քիչ ատենէն փա-
փաքը կատարեց։

Օր մը — դեկտեմբեր 23ին — գաղթականները ձայներ լսե-
ցին։ Նապ կ'աղաղակէր և Թոփ կը հաջէր իրարմէ աւելի ուժով։
Շուտ մը գաղթականները՝ որ Կարկառներուն մէջ զբաղած էին,
վազեցին՝ ցաւալի դիպուածէ մը վախնալով։

Ի՞նչ տեսան։ Երկու մեծահասակ աղուոր կենդանիներ, որ ան-
խոհեմութեամբ սարահարթին կողմն անցեր էին, որու փոքր կա-
մուրջները չէին գոցուած։ Կարծես թէ երկու հատ ձիեր կամ
գեթ երկու էշեր էին, մին արու, միւսը մատակ, նուրբ ձևեր,
դեղձան մազեր, ճերմակ սրունք ու պոչ ունէին, խայտաբղէտ
սև շերտեր կային իրենց գլխուն, վզին և մարմնոյն վրայ։ Ծանր
ծանր կ'յառաջանային, առանց երկիւղ մը յայտնելու, և ար-
թուն աչօք կը նայէին այս մարդերուն, չկրնալով հասկընալ որ
անոնք իրենց տէրերը պիտի դառնային։

«Ասոնք ծեբրաներ (զեբր)-են, գոչեց Հարպէրթ, չորքոտանիներ
որ վագրաձիի և ցլու մէջ տեղ կը բռնեն։

— Ինչու համար էշեր, չես ըսեր, հարցուց Նապ։

— Վասն զի իրենց ականջներն երկայն չեն և աւելի վայե-
լուչ կազմուածք ունին։

— Էշ կամ ձի, պատասխանեց Բէնքրօֆ, ասոնք «շարժիչ-
ներ» են, ինչպէս կ'ըսէր Պ. Սմիթ, և իբրև այն՝ բռնուելու ար-
ժանի են։»

Նաւորդն, առանց երկիւղ տալու երկու կենդանիներուն, մին-
չև Գլիսէրին-Վտակին պզտիկ կամուրջը սահեցաւ խոտերուն մէ-
ջէն, զայն վեր վերցուց, և զեբրերը գերի մնացին։

Հիմակ պէտք էր զանոնք բռնել և բռնի ընտելցընել։ Ուստի
որոշուեցաւ որ քանի մ'օր թողուն որ ազատ երթան գան սարա-
հարթին վրայ, ուր առատ խոտ կար. և չափագէտն անմիջապէս
ախոռ մը շինել տուաւ հաւնոցին մօտ, որու մէջ լաւ խշտեակ
մը պիտի գտնէին զեբրերը և ապաստարան մը գիշերը։

Այսպէս՝ այս զոյգ մը փառաւոր կենդանիներն լայնօրէն ձգուե-

ցան որ շարժին, և գաղթականները զգուշացան անգամ անոնց
մօտենալու՝ որպէս զի չվախցունեն։

Սակայն՝ շատ անգամ՝ զեբրերը սարահարթէն մեկնելու պէտքն
զգացին, որ իրենց համար շատ նեղ էր, քանի որ լայնարձակ
վայրերու և խորունկ անտառներու վարժեր էին։

Այն ատեն ջրին եզերքը բռնելով կ'քալէին, որ անանցանելի
պատուար մ'էր իրենց համար, և սուր աղաղակներ հանելով կը
զլային. յետոյ խոտերուն մէջէն կ'սկսէին արշաւել, մինչև որ
հանդարտելով երկար ժամեր անշարժ կ'մնային դիտելով այն մեծ
անտառներն որ բոլորովին իրենց համար գոցուած էին։

Սակայն բուսային թելերով սանձեր ու կապերդ փոկեր
շինուեցան, և զեբրերը բռնելէն քանի մ'օր ետք, ոչ միայն լծե-
լու համար կառքը պատրաստ էր, այլ և Խոր-Արևմուտքի ան-
տառին մէջէն շիտակ ճամբայ մը բացեր էին, Մէրսիի արմու-
կէն մինչև Օդապարիկի նաւահանգիստը։ Ուրեմն դիւրին էր կառքն
անդ տանիլ, և դեկտեմբերի վերջերն էր որ առաջին անգամ զե-
բրերը փորձելու սկսան։

Բէնքրօֆ արդէն վարժեցուցեր էր այս կենդանիներն իր ձեռ-
քին մէջ կերակուր ուտելու, և առանց դժուարութեան կ'թողուին
որ իրենց մօտենան. բայց երբ անգամ մը լծուեցան, սկսան վեր
կանգնիլ, և մեծ նեղութեամբ կարող եղան զանոնք զսպելու։

Սակայն այս նոր ծառայութեան քիչ քիչ պիտի վարժէին զե-
բրերը, վասն զի վագրաձիին չափ ըմբոստ չլինելով զեբր հա-
րաւային Ափրիկէի լեռնոտ տեղերը կառքի կ'լծուի, և մարդիկ
կարող եղան զայն ընտելցնել Եւրոպայի մէջ՝ համեմատաբար
ցուրտ գօտիներու տակ։

Այն օրը՝ բոլոր գաղթականները՝ Բէնքրօֆէն զատ՝ որ կեն-
դանիներուն առջևէն կ'քալէր, կառքը հեծան և Օդապարիկի նա-
ւահանգիստը դիմեցին։ Աւելորդ է ըսել որ այս նոր բացուած
ճամբուն վրայ շատ անգամ կառքը տատանելով յառաջացաւ,
սակայն առանց արգելքի մը հանդիպելու, և նոյն օրն իսկ, օդա-
պարիկին փաթթոցն ու այլ և այլ սարքն կառքին մէջ դրին։

Երեկոյեան ժամն ութին՝ կառքը Մերսիի կամրջէն անցնելէն ետև՝ գետին ձախ եզերքէն կ'իջնէր և աւազափին վրայ կանգ կ'առնուր։

Ցիտերը քակեցին, սնտուկը տարին, և Բէնքրոֆ անկողին մտնելէն առաջ գոհունակութեան հառաչ մը կ'արձակէր՝ որ Քարեայ-Պալատին մէջ աղմկալի արձագանք հանեց։

ԳԼՈՒԽ Ը.

Ճերմակեղէն — Փոկի կաշիէ մուճակներ — Հրաբայտի շինութիւն — Այլ և այլ սերմանիք — Ձկնորսութիւն — Կրիայի հաւկիթներ — Վարպետ Ժէօբին յառաջդիմութիւնը — Գոմը — Արջառներու որս — Բուսական և կենդանական նոր հարստութիւններ — Հեռաւոր հայրենեաց յիշատակներ.

Յունվար ամսուն առաջին շաբաթը՝ գաղթականութեան ճերմակեղէն լաթերը պատրաստելով անցաւ։ Սնտուկին մէջ գտնուած ասեղները՝ եթէ ոչ քնքուշ, կորովի մատներու մէջ կ'գործէին, և կարող ենք հաստատել որ ինչ որ կարուեցաւ շատ ամուր կարուեցաւ։

Դերձանը պակաս չէր, վասն զի Կիւրոս Սմիթին խորհրդով օդապարիկի երիզները կարելու համար գործածուած դերձաններն 'ի գործ դրին։ Գետէոն Սփիլէթ և Հարպէրթ զարմանալի համբերութեամբ քակեցին այդ երիզները, վասն զի Բէնքրոֆ այս աշխատութիւնը ձգելու ստիպուեր էր, վասն զի իրեն շատ ծանր կ'երևէր. բայց երբոր դործը կարելու եկաւ, չկար Բէնքրոֆի չափ ճարտար կարող մը։ Արդէն յայտնի է որ նաւաստիները նշանաւոր յարմարութիւն ունին կարելու արուեստին մէջ։

Վերջէն օդապարիկի պաստառ լաթերը լուացին՝ տունկերը մոխիր դարձընելէ յառաջ եկած օշինդով և անկալով, այնպէս որ բամբակն իր ջնարակը կորսնելով իր բնական ճկունութիւնն ու առձգութիւնը ստացաւ. ապա մթնոլորտին ամփոփիչ ազդեցութեան ենթարկուելով կատարելապէս սպիտակ գոյն մ'առաւ։

Բաւական շապիկներ ու գուլպաներ շինուեցան, հարկաւ գուլպաները բանուած չէին. այլ կարուած կտաւէ։ Ո՛րչափ խնդութիւն զգացին գաղթականներն երբոր ճերմակեղէններ հագան — անտարակոյս կարծր ճերմակեղէններ էին, բայց այնչափ բարակը փնտռելու փափաք չունէին — և սաւաններու մէջ պառկեցան, այնպէս որ Քարեայ-Պալատին խշտեակները խիստ վայելուչ անկողիններ դարձան։

Ահա այս ատենն էր որ փոկէ մուճակներ շինեցին և կարող եղան Ամերիկայէն բերուած սոլերներն ու կօշիկները փոխել։ Կրնանք ըսել թէ այս նոր մուճակները լայն ու երկար եղան և բնաւ քալողներուն ոտքը չցաւցուցին։

1866 տարւոյն սկիզբները տաքերը սաստիկ եղան, բայց անտառներուն մէջ որսը շարունակեցին գաղթականները։ Նոյն վայրերուն յատուկ վայրի կենդանիներ ու թռչուններ պակաս չէին արդարև, և Գետէոն Սփիլէթ ու Հարպէրթ այնքան լաւ հրացանաձիգ էին որ հրացանի հարուած մ'անգամ չէին վրիպեր։

Կիւրոս Սմիթ միշտ կ'ըսէր անոնց որ մթերքը խնայեն. ուստի սնտուկին մէջ գտնուած վառօդին ու գնդակներուն տեղ ուրիշ բան մը հնարելու միջոցներ մտածեց, որպէս զի զանոնք ապագային համար պահէ։

Եւ ստուգիւ՝ կրնա՞ր գիտնալ թէ դիպուածն ո՛ւր կրնար նետել զինքն ու իրենները, երբոր իրենց կալուածներէն հեռանային։ Ուստի անծանօթին ամէն պահանջումներուն դէմ զինիլ պէտք էր և վառօդ ու գնդակ խնայել, անոնց տեղ ուրիշ դիւրագիւտ նիւթեր գործածելով։

Կիւրոս Սմիթ կղզւոյն մէջ կապարի հետք մը չէր գտած և անոր տեղ երկաթի կտորք գործածեց՝ որմէ դիւրին էր շինել։ Այս հատիկները կապարէ հատիկներուն ծանրութիւնը չունենա-

լով՝ մտածեց զանոնք աւելի խոշոր ընել և հրացանի մէջ քիչ լեցընել, թողլով որ որսորդներու ճարպիկութիւնն այս թերութիւնը լրացընէ։

Իսկ վառօդի գալով՝ Կիւրոս Սմիթ կրնար շինել, քանի որ իր ձեռքին տակ ունէր բորակ, ծծումբ և ածուխ, բայց այս գործողութիւնը մեծ աշխատութիւն կ'պահանջէ, և առանց մասնաւոր գործոյքի՝ դժուարին է լաւ վառօդ շինել։

Ուստի Կիւրոս Սմիթ նախադաս համարեց Հրափայտ (pyroxyle) հնարել, այսինքն պայթիչ բամբակ (fulmi-coton), նիւթ մ'որու մէջ բամբակն անհրաժեշտ չէ, վասն զի իբրև խուցէկ (cellulose) կ'մտնէ անոր մէջ։ Արդ՝ այս խուցէկն ուրիշ բան չէ այլ բոյսերու նախնական հիւսը, և գրեթէ մաքուր վիճակի մէջ կ'գտնուի՝ ոչ միայն բամբակի այլ կանեփի ու վուշի հիւսքի թելերուն մէջ, թղթի, հին լաթի, շամբուկի ծուծին մէջ և այլն։

Արդ՝ Կարմիր-Վատակին բերնին մօտ շատ շամբուկներ կային, և արդէն գաղթականներն իբրև սուրճ կ'գործածէին այս տունկերուն հունդերը, որ այծխոտերևի (caprifoliacé) ընտանիքին կը պատկանին։

Այսպէս ուրեմն բաւական էր շամբուկի ծուծը քաղել, իսկ հրափայտի շինութեան համար պէտք եղած միւս նիւթերը, պարզապէս մխիչ ազոտային թթու էր։ Արդ՝ Կիւրոս Սմիթ՝ ծծմբոյ-թթու ունենալով՝ դիւրաւ արտադրեր էր ազոտային-թթուն՝ աշխատելով բորակին վրայ՝ որ բնութիւնն իրեն կ'հայթայթէր։

Ուստի որոշեց հրափայտ շինել, թէև գիտէր որ ծանր անպատեհութիւններ ալ ունէր այս նիւթը. այսինքն՝ անհաւասար արդիւնք կ'տար, շուտով կ'բռնկէր, քանի որ հարիւր եօթանասուն աստիճանի մէջ կ'բորբոքի փոխանակ երկու հարիւրի, և վերջապէս յանկարծական կիզում մ'որ կրնար խորտակել հրազէնները։ Իսկ ասոնց հակառակ՝ հրափայտն այս առաւելութիւններն ունէր. խոնաւութենէ չէր աւրուեր, հրացանի փողերը չէր աղտոտեր և իր մղիչ (propulsif) ույժը սովորական վառօդէն քառապատիկ աւելի էր։

Հրափայտը շինելու համար՝ բաւական է քառորդ չափ ծխիչ ազոտի թթուի մէջ դնել շամբուկը, ապա առատ ջրով լուալ և չորցընել։ Ինչպէս կ'տեսնուի՝ գործողութիւնը շատ պարզ է։

Կիւրոս Սմիթ միայն սովորական ազոտի թթու ունէր, և չէ թէ ծխիչ ազոտի թթու, կամ միաջրեայ (monohydraté), այսինքն թթու որ ճերմակ շոգի կ'հանէ խոնաւ օդի հետ հաղորդակցելով, բայց այս վերջնոյն տեղ եթէ սովորական ազոտի թթու գործածէր երեքէն մինչև հինգ չափու քանակութեամբ կեդրոնացեալ ծծմբոյ թթուի հետ խառնելով, չափազէտը նոյն արդիւնքը պիտի ստանար, և ստացաւ։

Հետևապէս կղզւոյն որսորդները քիչ ատենէն կատարելապէս պատրաստուած նիւթ մը ձեռք ձգեցին, որ՝ խոհեմութեամբ գործածուելով՝ պատուական արդիւնք տուաւ։

Նոյն միջոցին՝ գաղթականներն Մեծ-Տեսքին սարահարթին վրայ երեք արտավար տեղ հերկեցին, և մնացած մասը մարգագետնի համար թողուցին որպէս զի ցիռերն արածուին։

Քանի՛ քանի անգամ արշաւաններ ըրին գաղթականները Ցակամարի և Խոր-Արևմուտի անտառներուն մէջ, և անոնց վայրի բոյսեր բերին, ինչպէս շոմին, ջրկոտիմ, բողկ, շողգամ, որ խոհական մշակութեամբ մը քիչ ատենէն պիտի փոխուէին, և Լինքօլն կղզւոյն գաղթականներն աւելի ընտիր ընդեղէն կերակուրներ պիտի ուտէին։ Նոյնպէս մի շատ փայտ ու ածուխ կրեցին կառքով։ Ամէն մէկ արշաւան ճամբաները շտկելու պատճառ մ'էր, և սայլարկներն քիչ քիչ կ'պնդանային կառքին անիւներուն ներքև։

Ճագարանոցը միշտ սովորական պաշարը կ'տար Գրանիթ-Պալատին խոհանոցին։ Որովհետև Կլիսէրին-Վատակին ծայրէն քիչ մը դուրս շինուած էր ճագարանոցն, ասոր ընիկները չէին կարող ներքին սարահարթը մտնել և՝ հետևապէս՝ աւերել նորատունկ բոյսերը։

Իսկ ոստրէնոցին գալով՝ որ ծովափին ժայռերուն միջեր դետեղուած էր և որու արդիւնքը ամէն կ'նորոգուէր, ամէն օր

տուական ոստրէներ կ'տար։ Ասկէ զատ՝ քիչ առեններ՝ ձկնորսութիւնն ալ՝ թէ լճակին ջրերուն թէ Մէրսիի հոսանքին մէջ՝ արդիւնաւոր եղաւ, վասն զի Բէնքրոֆ՝ երկաթէ կարթերով ուռկաններ ձգած էր ջրին մէջ՝ և աղուոր կարմրախայտներ և տեսակ մը խիստ համեղ ձկներ կ'բռնուէին, որոց արծաթափայլ կողերն դեղնագոյն բիծերով ծածկուած էր։

Հետևապէս՝ վարպետ Նապ՝ որ խոհանոցին գործով կ'զբաղէր, կարող էր կերակուրներու տեսակները շատցընել։ Հաց միայն կ'պակսէր գաղթականներուն սեղանէն, և՝ ինչպէս արդէն ըսինք՝ այնպիսի զրկանք մ'էր այս որու ստուգիւ չէին կարող հանդուրժել։

Նմանապէս՝ այն ժամանակներն՝ ծովային կրիաներ որսալու ելան, որ Մանդիպուլի–Գլխուն եզերքը կ'յաճախէին։ Այն տեղ՝ աւազափին վրայ մանր ուռոյցներ կային, որ բոլորաձև հաւկիթներ կ'պարունակէին, սպիտակ ու կարծր կեղևով, որոց ճերմկուցը թուչուններու հաւկիթներուն պէս թանձրանալու յատկութիւնը չունին։

Արևուն ազդեցութեամբն այդ հաւկիթները կ'բացուէին, որոց թիւն անհամար էր, քանի որ ամեն մէկ կրիայ կարող է տարուէ տարի մինչև երկու հարիւր յիսուն հաւկիթ ածել։

«Ճշմարիտ դաշտ մ'է այս հաւկիթներու, գիտել տուաւ Գեդէոն Սպիլէթ, և մեզի կ'մնայ միայն հաւաքել։»

Բայց բաւական չհամարեցին այդ արդիւնքը, կրիաներ ալ որսալ ուզեցին, որս մ'որով կարող եղան տասներկու հատ Քարեայ–Պալատը փոխադրել, և իրաւի կերակուրի համար շատ յարգի էին։ Երբ Նապ կրիայի թանն՝ համեմուտ խոտերով եփէր և քանի մը խաչաբերներով (crucifère) խառնէր, մեծ գովեստներ կ'ընդունէր։

Պէտք է նաև յիշել այս տեղ յաջող պարագայ մ'որ առիթ տուաւ ձմերուան համար պահեստի պաշար պատրաստել։ Խումբ խումբ կարմրաձկեր (saumon) եկան Մէրսի գետն և շատ մը մղոն վեր ելան։ Այն ժամանակն էր երբ էգերն՝ ձկնելու համար տե-

ղեր փնտռելու կ'ելնեն և արուներուն առջևէն կ'երթան՝ անուշ ջրերուն մէջ մեծ աղմուկ հանելով։

Այս տեսակի բազմաթիւ ձկեր, որ մինչև երկուք ու կէս ոտք երկայնութիւն ունէին, այսպէս գետին խորը մտան, և բաւական եղաւ քանի մը գերաններ իրարու վրայ դնել, շատ մը բռնելու համար։ Այսպէս քանի մը հարիւր հատ որսացին գաղթականները, և ապա աղեցին ու պահեցին ձմերուան համար, երբ գետերու ջրերը սառելով ձկնորսութիւնն անկարելի կ'դառնայ։

Ահա այս առեններն էր որ խելացի Ծիւբ սենեկապանի պաշտօնին հասաւ։ Ծիւբ՝ պարեգօտ մը, ճերմակ կտաւէ վարտիկ մը հագեր էր և գոգնոց մ'ունէր որու գրպաններն իրեն մեծ հաճոյք կ'պատճառէին, վասն զի ձեռքերն անոր մէջ կ'խօթէր և չէր ուզէր բնաւ որ խառնեն։

Նապ շատ աղուոր կրթեր էր Օրանը, և կարծես թէ խափշիկն ու կապիկն իրարու միտք կ'հասկընային՝ երբոր մէկտեղ կ'խօսակցէին։

Ստուգիւ՝ Ծիւբ ճշմարիտ համակրութիւն մ'ունէր Նապին համար և Նապ փոխադարձ կ'սիրէր զայն։ Եթէ Ծիւբին ծառայութեանը պէտք չունենային, թէ փայտ կրելու, թէ ծառի մը կատարը մագլելու համար, իր ժամանակին մեծ մասը խոհանոցը կ'անցընէր և կ'ջանար Նապին հետևիլ և անոր ըրածը տեսնելով ընել։ Վարպետը յետին ծայր համբերութեամբ և մինչև անգամ եռանդով իր աշակերտը կ'կրթէր, և աշակերտն ալ զարմանալի խելք կ'ցուցընէր իր վարպետին տուած դասերէն օգուտ քաղելու համար։

Հետևապէս թող ընթերցողը դատէ թէ օր մ'որչափ հաճոյք պատճառեց Քարեայ–Պալատի բնիկներուն՝ մեր վարպետ Ծիւբն՝ երբ զէնջակը թևին վրայ ձգած՝ եկաւ սեղանին առջև սպասաւորելու, մինչդեռ սեղանակիցներն առաջուց տեղեկութիւն չունէին։ Ճարպիկ, մտադիր Ծիւբ՝ կատարեալ ճարպիկութեամբ իր պաշտօնը կատարեց, ափսէները փոխելով, պնակները բերելով, բաժակները լեցընելով, և այս ամեն գործերն այնպէս ծանրու-

թեամբ կ՚ընէր որ գաղթականները չափազանց զուարճացուց և Բէնքրօֆին խաղը գրգռեց ։

«Ծիւր» ասա՛ր ։

— Ծի՛ւր, քիչ մը ճաշա՛ր ։

— Ծի՛ւր, սկաւառա՛կ մը ։

— Ծի՛ւր, քա՛ջ Ծիւր, բարի՛ Ծիւր ։»

Այս խօսքերը միայն կ՚լսէին, և՝ Ծիւր՝ առանց շփոթելու ամէն բանի կ՚համնէր, ամէն բանի վրայ կ՚հսկէր, և իր մազի գլուխը ցնցեց, երբ Բէնքրօֆ, առջի օրուան կատակը կրկնելով անոր ըսաւ.

«Ճշմարիտը, Ծիւր, պէտք է որ ամսականդ կրկնապատկենք ։»

Անօգուտ է ըսել որ Օրանն Քարեայ-Պալատին վարժեր էր բոլորովին, և սէպ իր տէրերուն կ՚ընկերանար, և խօյս տալու բնաւ փափաք չէր յայտներ ։ Այն ատեն պէտք էր տեսնել թէ ինչ ծաղրելի կերպով կ՚քալէր, Բէնքրօֆին շինած մէկ գաւազանով զոր հրացանի պէս ուսին վրայ կ՚կրէր ։ Եթէ ծառի մը կատարէն պտուղ քաղելու պէտք լինէր, շուտ մը վեր կ՚ելնէր ։ Եթէ սայլակին անիւը տղմին մէջ խրէր, Ծիւր՝ ինչպէս ուս տալով ուժգին կ՚վերցընէր և շիտակ ճամբան կ՚հանէր ։

«Ի՛նչ վարպետորդի է, կ՚գոչէր շատ անգամ Բէնքրօֆ ։ Եթէ որչափ բարի նոյնչափ չար լինէր, կարելի չպիտի լինէր անոր հետ գլուխ ելնել ։»

Յունվարի վերջերն էր որ գաղթականներն կղզւոյն կեդրոնական կողմը մեծ մեծ շինութիւններ սկսան ։ Որոշուեր էր գոմ մը շինել, Կարմիր-Գետակին աղբերակներուն մօտ, Գրանքլէն լեռին ստորոտը, որպէս զի որոճող կենդանիները պահեն, վասն զի եթէ Քարեայ-Պալատին մօտ կենային շատ նեղութիւն պիտի տային, մանաւանդ արտիկներն, որ ձմերուան հագուստներու համար բուրդ պիտի մատակարարէին ։

Ամէն առտու՝ գաղթականներն, երբեմն բոլորը մէկտեղ, շատ անգամ միայն Կիւրոս Սմիթ, Հարպէրդ և Բէնքրօֆ, վառեկին բերանը կ՚ցփնէին ։ Ցիւերուն օգնութեամբ այս ճեմելիքը հինգ

մղոնի ճամբայ մ՚էր, գալարուն գծքէ մը տակէն, և այս ճամբան, որ նոր բացուեր էր, «Գոմի ճամբայ» կոչուեցաւ ։

Այն տեղ՝ ընդարձակ տեղ մ՚ընտրեցին, որ լեռին հարաւային կողմին վրայ կ՚իյնար ։ Մարգագետին մ՚էր, ուր մէջ տեղ տեղ ծառեր կային, և քարանյթի մը ստորոտը գտնուելուն՝ մէկ կողմը կ՚գոցէր զայն ։ Առու մը, զառիթափէն իջնելով մարգագետնին տրամագիծը կ՚ոռոգէր՝ և կ՚երթար Կարմիր-Գետակին մէջ կ՚թափէր ։

Խոտը թարմ էր, և ուրոյն ծառերը ցանցառ էին, հովը անարգել կ՚շրջէր անոր երեսը ։ Ուստի բաւական էր բոլորակի պատնէշ մը քաշել, այնպէս որ անոր ծայրերը բուն քարայթին վրայ կռթնէին, և բաւական ալ բարձր շինել պէտք էր, որպէս զի ամենէն արագաշարժ կենդանիներն չկարենան անկից անցնիլ ։ Այս շրջապատը կարող պիտի լինէր պարունակել ոչ միայն հարիւրի չափ եղջերաւոր անասուններ, արտիկներ կամ վայրի այծեր, այլ և կորիւններ, որ վերջէն պիտի ծնէին ։

Ուստի գոմին շրջապատը գծեց չափագէտը, և պատնէշը շինելու համար պէտք եղած ծառերը կտրելու սկսան, բայց որովհետև ճամբան բանալու ատեն մի շատ կոճղեր աւելցեր էին, այդ կոճղերը սայլակով կրեցին և հարիւրի չափ գերաններ շինելով հողին մէջ տնկեցին ։

Պատնէշին առջևի կողմը բաւական լայն մուտք մը թողուցին, և հաստ թեղօշի տախտակներէ շինուած երկփեղկ դռնով մը գոցեցին, զոր արտաքին ձողերը պիտի ամրացնէին ։

Այս գոմին շինութեան համար գրեթէ երեք շաբաթ պէտք եղաւ, վասն զի՝ պատնէշի գործերէն զատ՝ Կիւրոս Սմիթ տախտակէ ընդարձակ կայաններ շինեց, որոց ներքև անասունները կրնային ապաստանիլ ։ Սակայն հարկ եղեր էր այս շէնքերը շատ հաստատ կառուցանել, վասն զի արտիկներն ուժեղ կենդանիներ էին, և իրենց առաջին անզուսպ շարժումները թերևս վնաս պատճառէին ։ Գերաններն, որոց վերին ծայրը սրած և կրակով կարծրացած էր, իրարու հետ բևեռեալ պահանգներով կցեցին և

տեղ տեղ մոյթեր դնելով բոլոր շէնքին ամրութիւնն ապահովցուցին :

Գոմը լմննալէն ետեւ՝ հարկ եղաւ Փրանքլէն լեռին ստորոտը՝ կենդանիներուն յաճախած արօտներուն մէջ՝ որսի ելնել: Այս գործողութիւնը՝ փետրվարի 7ին, ամառուան աղուոր օր մը սկսան գաղթականները ու ամէնքը մասնակից եղան: Արդէն երկու ցիռերը մարզուած լինելով՝ այս պարագային մէջ մեծ ծառայութիւններ մատուցին, և Գեդէոն Սբիլէթ ու Հարպէրթ անոնց վրայ հեծեր էին :

Այս գործողութեան նպատակն էր արտիկներն ու այծերը ծառերուն մէջէն վանել, անոնց բոլորտիքը շրջանակ մը կազմելով և զայն քիչ քիչ սեղմելով: Հետեւապէս Կիւրոս Սմիթ, Բէնքրօֆ, Նապ, Ծիւր անտառին այլ և այլ կողմերը կեցան, մինչդեռ երկու ձիաւորներն ու Թօփ գոմին բոլորտիքը կէս մղոն հեռուի շրջանի մը մէջ կ'արշաւէին :

Արտիկներ շատ կային կղզւոյն այս մասին մէջ: Այս աղուոր կենդանիներն՝ որ այծեամներու չափ մեծ էին, որ խոյէն աւելի զօրաւոր եղջիւրներ ունէին, որ երկայն մազերով խառնուած գորշագոյն մորթ մ'ունէին, վայրի ոչխարի (argalis) կ'նմանէին :

Այս որսորդութեան օրը շատ յոգնեցան որսորդները: Քանի քանի անգամ գացին եկան, դարձան ու վերադարձան, և ստէպ աղաղակներ արձակեցին: Հարիւրի չափ արտիկներ բռնեցին, իրաւ, բայց ասոնցմէ երկու երրորդ մասը խոյս տուին: Վերջապէս այս որսձող կենդանիներէն երսունի չափ և տաս հատ վայրի այծեր քիչ քիչ դէպ 'ի գոմը քշուեցան, որու բաց դուռը տեսնելով կարծեցին թէ ելք մը պիտի գտնեն՝ և ներս մտնելով բանտարկուեցան :

Սակայն այս որսորդութեան արդիւնքը գոհացուցիչ եղաւ և գաղթականներն իրաւունք չունէին գանգատելու: Այս արտիկներէն շատերն էգ էին, որոցմէ մէկ քանին քիչ ատենէն ձագեր պիտի բերէին: Ուստի ստոյգ էր որ արջառը պիտի բազմանար և քանի մ'ամէն առատ մորթ ու բուրդ պիտի տային :

Այն իրկուն՝ շատ յոգնած դարձան որսորդները Քարեայ–Պալատը. սակայն հետեւեալ օրը վերստին գոմը գացին: Բանտարկեալ կենդանիները թէև փորձ փորձեր էին պատնէշը տապալելու բայց չէին յաջողած, և աւելի հանդարտ կենալու սովրեր էին :

Այս փետրվար ամսուն մէջ՝ կարևոր դէպք մը չպատահեցաւ: Օրական գործերն կանոնաւոր կերպով յառաջ կ'երթային, և մինչդեռ Գոմին և Օդապարիկին ճամբաներն աւելի լաւ կ'շտկէին, երրորդ ճամբայ մ'ալ սկսան, որ շրջապատէն մինչև արևմտեան եզրը պիտի յանգէր: Լինքոլն կղզւոյն միշտ անծանօթ մնացած մասն Օձապտոյտ թերակղզին ծածկող մեծ անտառներն էին, որ վայրի կենդանիներու պատսպարանն էր և Գեդէոն Սբիլէթ միտքը դրեր էր զանոնք այն տեղէն վանելու :

Ձմեռը չհասած՝ գաղթականներն անդուլ հոգ տարին վայրի տունկեր մշակելու, որ անտառէն Մեծ–Տեսքին սարահարթին վրայ փոխադրուեր էին: Հարպէրթ ամեն անգամ որ արշաւանք մը ընէր միշտ հետը օգտակար բոյսեր կ'բերէր: Երբեմն եղերդային բոյսեր առած կ'գար, որու հունդն իսկ ճզմելով պատուական եղ կ'արտադրէր. երբեմն՝ հասարակ թրթնջուկ՝ որու հակալնդային (antiscorbutique) յատկութիւններն արհամարհելի չէին, երբեմն՝ այն թանկագին ելունդներն՝ որ հարաւային Ամերիկայի մէջ ամեն ժամանակ կ'մշակուին, այն գետնախնձորներն, որու տեսակներն այսօր երկու հարիւրէն աւելի կ'հաշուին :

Իսկ բանջարանոցն՝ որ հիմակ շատ աղէկ կ'նայուէր, կ'ոռոգուէր և թռչուններու դէմ կ'պահպանուէր, պզտիկ ածուներու բաժնուած էր, որոց մէջ հազարներ, սեւախնձորներ (vitelotte), թրթնջուկ, շողգամ, բողկ և ուրիշ խաչաբերներ կ'բուսնէին: Այս սարահարթին հողը չափէ դուրս արգասաւոր էր և շատ յոյս կար որ առատ պիտի լինէր և բերքը :

Նոյնպէս անպակաս էին ըմպելիներ, և ամենէ դժուարահաճ մարդը գանգատելու տեղի չունէր այս մասին, այս պայմանաւ միայն որ գինի չպահանջէր: Օսվէկօի թէյէն և վիշապենիի տուն-

կերէն հանուած խմորեալ ըմպելիէն զատ՝ Կիւրոս Սմիթ ճշմարիտ գարեջուր մը հնարեր էր ։ Սեւ-եղեւնի (abies nigra) ըսուած բողբոջներէ շինեց․ այս բողբոջները խաշուելէն և եռալէն ետև՝ անորժահամ և մանաւանդ ողջապահիկ ըմպելի մը տուին, զոր Անկլօ-Ամերիկացիք «սփրինկ-պէր» (spring-berr) կ'անուանեն, այսինքն եղևնի գարեջուր ։

Ամառուան վերջերը՝ հանոցին մէջ զոյգ մը գեղեցիկ արօսներ (outarde) կային, որ հօտպօտ ըսուած տեսակէն էին, կերպ մը նշանատիպ փետուրէ լօղիկով, տասն երկու հատ վայրի բադեր (souchet) որոց վերին կզակն երկու կողմէ մաշկեղէն յաւելուածով մ'երկնցած էր, նոյնպէս փառաւոր աքաղաղներ, սև կատարով, ելունդով և մորթով, Մոզանպիկի աքաղաղներուն նման որ լճակին եղերքը կ'խայտային ։

Այսպէս ուրեմն ամէն բան կ'յաջողէր այս արիասիրտ և խելացի մարդոց գործունէութեան շնորհիւ ։ Նախախնամութիւնը շատ կ'օգնէր անոնց անշուշտ, բայց՝ մեծ առածին հաւատարիմ մնալով նախ իրենք իրենց կ'օգնէին, և ապա երկինք իրենց օգնութեան կ'հասնէր ։

Այս ամառնային տաք օրերն անցնելէն ետև՝ երիկուան երբ աշխատանքը կ'դադրէր, այն միջոցին որ ծովու քամին կ'փչէր, գաղթականներն Մեծ-Տեսքին եզրը նստելու կ'ախորժէին, տեսակ մը հովանոցի մը տակ որ պատատուկ բոյսերով ծածկուած էր և զոր Նապ իր ձեռօքը շիներ էր ։ Այս հովանոցին ներքև կ'խօսակցէին, իրարմէ բան կ'սորվէին, յատակագիծներ կ'յօրինէին և նաւորդին զուարթ բնաւորութիւնն շարունակ զուարճութիւն կը պատճառէր այս պզտիկ խմբին, որու մէջ միշտ կատարեալ ներդաշնակութիւն կ'տիրէր ։

Չէին մոռնար խօսելու նաև հայրենի երկրին վրայ, սիրելի ու մեծ Ամերիկայի վրայ ։ Ի՞նչ վիճակի մէջ էր արդեօք հիւսիսայնոց ու հարաւայնոց պատերազմը ։ Անտարակոյս մինչև այն ատեն դադրած պիտի լինէր ։ Ի հարկէ Ռիչմոնտ անձնատուր եղած էր Կրէնդ զօրավարին ․ Դաշնակիցներուն այս մայրաքաղաքն անունլով այս աղէտաբեր կռուին վերջին արարուածը լմնցած պիտի լինէր ։ Հիմակ՝ հիւսիսայինք իրենց յաղթանակը տարած էին ։ Ա՛հ, Լինքօլն կղզւոյն տարագիրներուն համար ո՛րքան հաճելի պիտի լինէր օրագիր մը ։ Արդէն տասն մէկ ամիս կար որ ամեն հաղորդակցութիւն դադրեր էր իրենց և աշխարհի մէջ, և քիչ ատենէն՝ մարտի 24 պիտի հասնէր, այսինքն այն օրուան տարեդարձն երբ օդապարիկն այս անծանօթ եզերքը նետեց զիրենք ։

Այն ատեն միայն նաւաբեկներ էին, չգիտէին իսկ թէ արդեօք պիտի կարենային այն խոպան հողին վրայ օրապահիկ մը ճարել ։ Իսկ սակայն հիմակ՝ իրենց գլխաւորին գիտութեան շնորհիւ, իրենց յատուկ իմացականութեան շնորհիւ, ճշմարիտ գաղթականներ դարձեր էին, զէնք, գործիք ունէին, որով կարող եղեր էին օգուտ քաղել կղզւոյն կենդանիներէն, տունկերէն և հանքերէն, այսինքն բնութեան երեք կարգէն ։

Այո՛, շատ անգամ՝ այս բաներուս վրայ կ'խօսակցէին և ապագային համար նոր նոր խորհուրդներ կ'երկնէին ։

Իսկ Կիւրոս Սմիթ՝ ստէպ լուռ կենալով՝ իր ընկերներուն խօսքերն աւելի մտիկ կ'ընէր քան կ'խօսէր ։ Երբեմն Հարպէրթի մէկ խորհրդածութիւնը, Բէնքրօֆի մէկ մեծաբանութիւնն իր ժպիտը կ'գրգռէր, բայց՝ միշտ և ամեն տեղ կ'մտածէր այն անմեկնելի իրողութեանց վրայ, այն տարօրինակ հանելուկին վրայ որու գաղտնիքը չէր կարող թափանցել ։

ԳԼՈՒԽ Թ.

Վատ օդ — Ջրաբաշխական վերհան — Պատուհանի ապակի և բաժակներ շինելը — Հացի ծառ — Գոմը ստէպ կ'այցելեն — Տաւարին շատնալը — Թղթակցին մէկ հարցումը — Լինքօլն կղզւոյն ճշգրիտ դիրքը — Բէնքրօֆի առաջարկութիւնը.

Մարտ ամսուն առաջին շաբաթուն օդը փոխուեցաւ։ Ամսուն սկիզբը լուսնի լրում կար և տաքերը միշտ չափազանց էին։ Անոնք կ'զգային որ մթնոլորտը ելեկտրականութեամբ լցուած էր և վախ կար որ քիչ շատ երկար ժամանակ փոթորկալից օդ մը պիտի ունենան։

Արդարեւ ամսուն 2ին՝ սաստիկ ուժգնութեամբ երկին գոռաց։ Հովը արեւելքէն կ'փչէր, և կարկուտն ուղղակի Գարնեյ-Պալատին ճակատը զարկաւ՝ հրազէնի գնդակներու պէս սալս անդին թափելով ու ճարճատելով։ Պէտք եղաւ դուռն ու պատուհաններուն փեղկերն ամրապէս գոցել, թէ ոչ սենեակները բոլորովին ջրով պիտի ողողուէին։

Երբոր Բէնքրօֆ տեսաւ այս կարկուտներն՝ որոց մէկ քանին աղաւնիի հաւկթի չափ խոշոր էին, խելքն մեծ հոգ մ'ունեցաւ. կ'մտածէր որ իր ցորենի արտը շատ մեծ վտանգի մէջ կ'գտնուէր։ Նա շուտ մը վազեց իր արտը՝ ուր մէջ հասկերն արդէն իրենց պզտիկ կանաչ գլուխները վեր վերցնելու սկսեր էին, և խոշոր կտաւի մը միջոցաւ՝ իր բերքը պաշտպանելու յաջողեցաւ։ Իրաւ որ գլուխը քարի պէս կարկուտ կ'իջնէր՝ բայց բնաւ հոգ չըրաւ։

Այս վատ օդն ութ օր տեւեց, և նոյն միջոցին երկնից խորերէն գոռումն ու գոչումը կ'շարունակէին։ Երկու մրրկի մէջ դարձեալ կ'լսուէր որոտումն որ հորիզոնին սահմաններէն դուրս էր

դուար, և ապա աւելի նոր կատաղութեամբ կ'սկսէր։ Փայլակներէն երկին գոյնզգոյն կ'գծուէր, և կայծակը կղզւոյն մի շատ ծառերու վրայ քանի մ'անգամ ընկաւ, որոց մէջն էր աճագին շոճի մը լճակին մօտ, անտառին եզրը։ Աւազաին ալ մէկ երկու անգամ հասաւ ելեկտրական հոսանուտը (fluide), որ աւազը հալեցուց և ապակեացուց (vitrifier)։ Այս շանթաքարը (fulgurite) գտնելով՝ ճարտարագէտը մտածեց որ կարելի պիտի լինի իրեն թանձր ու հաստատուն ապակիներով ծածկել պատուհանները, որպէս զի կարենան հովի, անձրեւի ու կարկուտի դիմանալ։

Գաղթականներն ստիպողական գործեր չունէին դուրսը, ուստի այս դէշ օդէն օգուտ քաղելով Գարնեյ-Պալատին ներքին կողմն աշխատելու ելան։ Այս պալատին կահ կարասիքն օր ըստ օրէ կ'աւելնար և կ'կատարելագործուէր։ Ճարտարագէտը հաստատեց ճախարակ մ'որով կարող եղաւ հագուստի և խոհանոցի մի քանի գործիներ շինել և մանաւորապէս կոճակներ, որոց պէտքը շատ զգալի եղեր էր։ Զէնքի համար ալ ժանեւոր կազմած մը պատրաստեց. զէնքերն յետին ծայր խնամօք կ'պահպանէին և թէ դարակները (étagère) թէ դարանները լաւ վիճակի մէջ էին։ Շարունակ կ'բանէին, սղոց, քերիչ, խարտոց ու ճախարակ կ'գործածէին գաղթականներն և բոլոր այս դէշ օդին ժամանակը՝ միայն գործիներու կրճիւնն կամ ճախարակի հնչիւնը կ'լսուէին, որ որոտման թնդիւնին կ'պատասխանէին։

Վարպետ Ծիւբ ալ անխնամ չէր մնացած. զատ սենեակ մը կ'բնակէր՝ մեծ մթերանոցին մօտ. տեսակ մը խուց էր շրջանակով ուր մէջ միշտ լեցուն յարդ կար և որ շատ յարմար էր Ծիւբին։

«Այս ընտիր Ծիւբին հետ բնաւ խօսքի չենք գար, կ'կրկնէր ստէպ Բէնքրօֆ, երբէք անպատեհ պատասխան մը չենք ընդունիր։ Ի՜նչ սպասաւոր է, Նապ, ի՜նչ լաւ սպասաւոր։

— Իմ աշակերտս է, կ'պատասխանէր Նապ, և քիչ ատենէն իմ հաւասարս պիտի լինի։

— Քու մեծաւորդ է, կ'պատասխանէր նաւորդը ծիծաղելով։

վասն զի դու, Նապ, դու միշտ կ՚խօսիս, իսկ նա, բնաւ չխօսիր։»

Աւելորդ է ըսել որ հիմա Ծխուք բոլորովին վարժ էր սպասաւորութեան։ Զգեստները կ՚մաքրէր, շամփուրը կ՚դարձնէր, սեղանները կ՚աւլէր, սեղանին վրայ կ՚սպասաւորէր, փայտերը կը շարէր, և — Բէնքրոֆն զմայլեցնող պարագայ մը — երբէք չէր երթար քնանալու մինչև որ աղնուասիրտ նաւորդին անկողնին շրջանակները չգնէր։

Իսկ գաղթականներուն առողջութեան գալով՝ թէ երկոտանի ու երկձեռնեայ, թէ չորքոտանի ու քառաձեռնեայ՝ ամէնքը լաւ վիճակի մէջ էին։ Բնաւ չէին կրնար երևակայել որ հիւանդ կը լինին՝ քանի որ բաց օդին, առողջարար հողի մը վրայ, այս բարեխառն գօտիին ներքև, գլխով ու ձեռօք աշխատելով կ՚շնչէին ու կ՚ապրէին։

Եւ իրօք՝ ամէնքը կատարեալ առողջութեան մէջ էին։ Մէկ տարիէ 'ի վեր Հարպէրդ երկու բթամատ բարձրացեր էր։ Իր դէմքը աղւոր ձև և առնական երևոյթ մը կ՚առնուր, և կ՚երևէր թէ մարմնովին և թէ բարոյապէս կատարեալ մարդ մը պիտի դառնար։ Ստուգիւ Հարպէրդ միշտ միտքը մշակելու կ՚ջանար՝ երբոր ձեռական աշխատանքը դադրէր։ Սնտուկին մէջ գտնուած մի քանի գրեանքը կ՚կարդար, և իր կացութեան պահանջած գործնական դասերէն ետև՝ իր դաստիարակութիւնն աւարտելու համար վարժապետներ կ՚գտնէր, ինչպէս չափագէտը՝ գիտութեանց համար, լեզուներու համար՝ թղթակիցը։

Չափագիտին միակ հոգն ու մտմտուքն էր իր բոլոր գիտցածը պատանիին աւանդել, ինչպէս խօսքով նոյնպէս օրինակով ուսուցանել, և Հարպէրդ իր վարժապետին դասերէն շատ մեծ օգուտներ կ՚քաղէր։

«Եթէ մեռնիմ, կ՚մտմտար Կիւրոս Սմիթ, այն իմ տեղս պիտի բռնէ։»

Մարտի վերջերը փոթորիկը դադրեցաւ, բայց ամառուան այս վերջին ամսուն մէջ երկինք ամպամած մնաց։ Ելեկտրական

ցնցումներէն վրդովուած մթնոլորտն իր նախորդ յստակութիւնը չգտաւ, և շարունակ անձրև ու մշուշ պակաս չէին, 'ի բաց առեալ երեք չորս աղւոր օրեր, որոյմէ աւելի ալին ամեն տեսակ արշաւանքներ ընելու։

Նոյն ատենները մատակ յիւը կորիւն մը ծնաւ որ իր մօրը սեռէն էր և որ շատ լաւ մեծցաւ։ Գոմին մէջ՝ նոյն պարագաներով՝ արտիկներու խումբը շատցաւ, և մի շատ գառնուկներ արդէն հիւղերուն ներքև կ՚մայէին 'ի մեծ ուրախութիւն Նապի և Հարպէրդի, որոյ իւրաքանչիւրն իր սիրական կենդանին ունէր նորածին կորիւններուն մէջ։

Նոյնպէս փորձ մ՚ըրին որ կինճեր (pécari) ընտելացընեն, և այս փորձը լիովին յաջողեցաւ։ Հաւնոցին մօտ ախոռ մը շինեցին և անոր մէջ մի շատ ձագեր գտան որ ընտելանալու, այսինքն Նապի խնամօք գիրնալու վրայ էին։ Ծխուքն յանձնուած էր անոնց օրական ուտելիք, ջուր և խոհանոցի կտուրք և այլն տանիլ և այն ալ խղճի մտօք իր պաշտօնը կ՚կատարէր։ Երբեմն կ՚զուարճանար Ծխուք իր պզտիկ սաներուն պոչը քաշելով, բայց չէ թէ չարամտութենէ այլ խորամանկութենէ, վասն զի այդ կենդանիներուն ոլորուն պոչերն՝ խաղալիկի պէս՝ իրեն մեծ զուարճութիւն կ՚պատճառէին և աղայի մը բնազդն ունէր։

Այս մարտ ամսուն մէջ օր մը՝ Բէնքրոֆ չափագիտին հետ կը խօսակցէր. անոր յիշեցուց խոստում մը զոր դեռ ժամանակ չէր ունեցած կատարելու։

«Պարո՛ն Կիւրոս, ըսաւ անոր, մի անգամ ըսիր ինծ թէ կարելի է գործիք մը շինել որով Ֆարեայ–Պալատին ելնարաններէն վեր ելնելու հարկ չմնար։ Արդեօք այդ գործիքն օրին մէկը պիտի չշինե՞ս։

— Տեսակ մը վերհանի մը (ascenseur) վրայ է խօսքդ կարծեմ, պատասխանեց Կիւրոս Սմիթ։

— Եթէ կամիս, վերհան անուանենք զայն, պատասխանեց նաւորդը։ Անունէն բան մը չելներ, բաւական է որ այդ գործիք մինչև մեր բնակարանը հանէ մեզ։

— Ասկէ աւելի դիւրին բան չկայ, Բենքրոֆ. բայց միթէ օգտակար է։

— Անշուշտ, Պարոն Կիւրոս։ Կարևորը ցամաքէն ետև՝ քիչ մ'ալ դիւրատարին նայինք։ Մեզի համար կարելի է ըսես որ պերճանք մ'է, բայց անհրաժեշտ է այլ և այլ բաներ կրելու համար։ Արդէն բաւական տաժանելի է ծանր բեռներով երկար ճանապարհ մը մեր ելնելը։

— Լաւ ուրեմն, Բենքրոֆ, պիտի փորձ մ'ընենք խնդիրդ կատարելու, պատասխանեց Կիւրոս Զմիթ։

— Բայց ձեռքիդ տակ մեքենայ մը չունիս։

— Այդ մեքենան պիտի շինենք։

— Շոգեշարժ մեքենայ մը։

— Ո՛չ, ջրաշարժ մեքենայ մը։»

Եւ արդարև՝ իր գործին շարժելու համար չափագէտը բնական ուժ մ'ունէր պատրաստ, և կրնար զայն 'ի գործ դնել առանց մեծ դժուարութեան։

Այս նպատակին համար՝ բաւական էր միայն լճակէն դէպ 'ի Քարեայ—Պալատը հոսող ջրին բերանն աւելի բանալ։ Ուստի ջրմուղին վերին դին՝ քարերուն և խոտերուն մէջ ցանուած խողովակը բացին, ուր քարափին մէջ ուժգին քարավազ մը գոյացաւ, այնպէս որ աւելցուկ ջուրը ներքին ջրհորը կ'հոսէր։ Այս քարավազին ներքև՝ չափագէտը գարակաւոր գլան մը տեղաւորեց որ դրսի հետ հաստ պարանով փաթթած անուով մը կը միանար և այդ պարանին ծայրը կողով մը կար։ Այսպէս՝ երկար չուանի մը միջոցաւ որ մինչև հողին վրայ կ'կախուէր, և որով կարելի էր ջրային գործին վեր վար շարժել, ամեն որ կարող էր մինչև Քարեայ—Պալատն ելնել կողովին մէջ նստելով։

Մարտի 17ին էր որ առաջին անգամ վերհանն սկսաւ գործել և ընդհանուր գոհունակութիւն պատճառեց։ Այնուհետև՝ ամեն բեռ, փայտ, ածուխ, պաշար և նոյն իսկ գաղթականներն այս պարզ մեքենային շնորհիւ վեր ելան, մեքենայ՝ որ հին ելնարանին տեղն անցաւ և զայն բոլորովին մոռցուց։ Մանաւորապէս Թօփ շատ գոհ եղաւ այս նոր դրութենէ, վասն զի աստիճաններէն վեր ելնելու համար սատանայ Ծիւբին ճարպիկութիւնը չունէր և չէր կրնար ունենալ. մանաւանդ շատ անգամ Նապին և նոյն իսկ Օրանին կռնակը հեծնելով՝ ստիպուեր էր Քարեայ—Պալատն ելնելու։

Այս առեններս էր որ Կիւրոս Զմիթ ապակի շինելու ձեռնարկեց. այս նոր գործին համար նախ հին խեցեղէնի հնոցը յարմարցնել ուզեց, թէև այս գործողութիւնը մեծ դժուարութիւններ կ'ներկայացընէր. բայց մի շատ ապարդիւն փորձեր ընելէն ետև՝ չափագէտն ապակիի գործարան մը պատրաստելու յաջողեցաւ. Գետէոն Սփիլէթ և Հարպերթ, չափագիտին բնական օգնականները, քանի մ'օր այդ գործարանէն դուրս չելան։

Ապակի շինելու համար գլխաւոր նիւթերն են միայն աւազ, կաւիճ և սոդա (soude)։ Արդ՝ ծովափը աւազ կ'տար, կիրը՝ կաւիճ, ջրային տունկերը՝ սոտա, հրաքարները՝ ծծմբոյ թթու, և հողը՝ հանքածուխ հնոցը պէտք եղած աստիճանին չափ տաքցընելու համար։ Հետևապէս Կիւրոս Զմիթ կարևոր պայմաններն ունէր գործի սկսելու համար։

Շինելու համար ամենէ աւելի դժուարին գործին ապակագործին «ցուպն» եղաւ, այս է՝ երկաթէ խողովակ մը, հինգ վեց ոտք երկար, որ իր մէկ ծայրով հալման վիճակի մէջ պահուած նիւթը հաւաքելու կ'ծառայէ։ Սակայն Բենքրոֆ երկար ու բարակ երկաթէ տախտակ մ'առաւ, հրացանի փողի պէս կլորցուց և այդ ցուպը շինելու յաջողեցաւ, այնպէս որ քիչ ատենէն գործելու սկսաւ։

Մարտի 28ին՝ հնոցը սաստիկ տաքցուցին։ Դժուարահալ հողէ բովերու մէջ դրին հարիւր մաս աւազ, երեսուն հինգ մաս կաւիճ, քառասուն մաս սոտայի ծծմբատ, և երկու կամ երեք մաս ածխի փոշիով խառնեցին։ Երբոր հնոցին հրատապ ջերմութիւնն այս նիւթն հեղուկ կամ լաւ ևս զանգուածի վիճակին հասուց, Կիւրոս Զմիթ՝ ցուպով հաւաքեց անկէց մաս մը, առաջուց պատրաստուած կաւածի մը վրայ այդ զանգուածին մասն աղլին ան-

դին դարձուց, այնպէս որ փչելու համար յարմար ձեւը տայ անոր, ապա Հարպէրդին անցուց ցուպն ապսպրելով որ միւս ծայրէն զայն փչէ։

«Որպէս թէ ապակէ գնդակներ շինէինք, այնպէս չէ՞, հարցուց պատանին։

— Ճիշդ այդպէս» պատասխանեց չափագէտը։

Եւ Հարպէրդ՝ այտերն ուռեցնելով՝ այնքան ուժգին ու լաւ փչեց ցուպին մէջ՝ անդադար դարձնելու փոյթ տանելով որ իր շունչն ապակեայ կոյտը տարածեց։ Նոյն հալած նիւթէն ուրիշ մասեր ալ առաջին մասին աւելցուցին այնպէս որ քիչ ատենէն մէկ ոտք տրամագիծ ունեցող գունտ մը յառաջ եկաւ։

Այն ատեն Կիւրոս Սմիթ Հարպէրդի ձեռքէն առաւ ցուպը, և անոր ճօճանակի շարժում մը տալով՝ տարածուն գունտն երկնցուց, այնպէս որ անոր կոնական գլանի մը ձեւը տուաւ։

Այսպէս այս փչելու գործողութենէ ապակեայ գլան մ'առաջ եկեր էր՝ երկու կիսագնդային գնդակով վերջացած, որ դիւրաւ քակուեցաւ պաղ ջրով թրջուած հատու երկաթի մը միջոցաւ, ապա՝ նոյն կերպով այս գլանը հալեցուցին՝ և երկրորդ անգամ հնոյէն անցընելով տարածուն ընելէն ետեւ՝ կռածի մը վրայ թափեցին զայն և փայտէ գլուղանով մը տափակցուցին։

Ուստի առաջին ապակին շինուեցաւ և յիսուն ապակի ունենալու համար պէտք էր յիսուն անգամ կրկնել նոյն գործողութիւնը։ Հետեւապէս Քարեայ—Պալատին պատուհանները քիչ ատենէն թափանցիկ թիթեղներով ծածկուեցան, որ թերեւս շատ սպիտակ չէին, բայց բաւական երեւելի էին։

Իսկ բաժակներ ու շիշեր շինելու խնդիրը խաղ մ'եղաւ։ Ցուպին ծայրէն ինչպէս որ ելնէին այնպէս կ'ընդունէին։ Բէնքրօֆ ըստ կարգի փչելու շնորհը խնդրեր էր, և իրեն համար զուարճութիւն մ'էր այս. բայց այնքան ուժով կ'փչէր որ իր շինած բաներն խիստ զուարճալի ձեւեր կ'առնէին և զինք կ'զմայլեցընէին։

Այն ժամանակին՝ գաղթականներն իրենց ըրած մէկ արշաւանին մէջ՝ նոր ծառ մը գտան, որու բերքը գաղթականութեան ուտելիքի պաշարն աւելցուց։

Օր մը՝ Կիւրոս Սմիթ և Հարպէրդ որսալու ատեն՝ Խոր—Արեւմուտքի անտառը՝ Մէրսիի ձախ կողմն, շատ առաջ գացեր էին, և՝ ինչպէս միշտ՝ պատանին հազար տեսակ հարցումներ կ'ընէր չափագէտին, որ յօժարակամ կ'պատասխանէր։ Բայց ինչպէս ամէն աշխատանք նոյնպէս է և որսորդութիւնն, և երբ մարդ եռանդով չորսար՝ չյաջողելու պատճառներ կ'գտնէ։

Արդ՝ որովհետեւ Կիւրոս Սմիթ որսորդ չէր և թէ միւս կողմէ՝ Հարպէրդ բնալուծութիւն և բնագիտութիւն կ'խօսէր այն օր, մի շատ ագեվազներ, ճագարներ կամ կաքաւներ բաւական մօտէն անցան բայց պատանիին հրացանէն խոյս տուին։ Ուստի օրը տարաժամելով՝ երկու որսորդներն անօգուտ արշաւան մ'ըրած պիտի ըլլային, երբ Հարպէրդ՝ կանգ առնելով ուրախութեան աղաղակ մը ձգեց ու ըսաւ.

«Ա՛խ, Պարոն Կիւրոս, աս ծառը կ'տեսնե՞ս։»

Եւ ծառատունկ մը ցոյց կ'տար քան թէ ծառ մը, վասն զի միայն պարզ բուն մ'ունէր՝ թեփաւոր կեղեւով մը, և զուգահեռական մանր երակներով գծուած տերեւներ։

«Եւ ի՞նչ տեսակ ծառ է այս որ արմաւենիի մը կը նմանի, հարցուց Կիւրոս Սմիթ։

— Սէքաս րէվօլուդա (cycas revoluta) մ'է, որու պատկերն ունիմ մեր բնական պատմութեան բառգրքին մէջ։

— Բայց այս ծառին վրայ պտուղ չեմ տեսներ։

— Չէ, պտուղ չկայ, Պարոն Կիւրոս, բայց իր կոճղն ալիւր մը կ'պարունակէ զոր բնութիւնը մեզի աղած կ'ընծայէ։

— Ուրեմն այս հացի ծառ է։

— Այո, հացի ծառ։

— Լաւ ուրեմն, որդեակ, պատասխանեց չափագէտը, ասուսիկ թանկագին գիւտ մը, որով ալիւրի բերք մը պիտի ունենանք։ Գործի սկսինք, և տար երկինք որ սխալած չըլլէիր։»

Հարպէրդ սխալած չէր. հացի ծառի մը բունը կտրեց, որ գեղձային (glandulaire) անկուածոյէ մը կ'բաղկանար և բաւական ալիւրաւոր ծուծ (moelle) կ'պարունակէր, որու մէջ չէ կ'անցնէր

փայտային խուրձեր և ասոնք ալ իրարմէ կ'զատուէին կնդրունպէս զրուած նոյն տեսակ նիւթէ օղակներով։ Այս սպիտակ փուշին խառնուած էր տհամ հուղուոր (mucilagineux) աւիշ մը, բայց այդ աւիշը ճնշումով դիւրին պիտի լինէր դուրս տալ։ Այս խորշային (cellulaire) հիւթը խիստ ընտիր տեսակի ճշմարիտ ալիւր մը կ'յօրինէր, յետին ծայր սննդարար, որուն արտահանութիւնն երբեմն ճափոնական օրինօք արգիլուած էր։

Կիւրոս Սմիթ և Հարպէրդ լաւ մը քննեցին Խոր-Արձանագրի այս մասն ուր այդ հացենները կ'բուսնէին, տեղ տեղ նշաններ դրին և Քարեայ-Պալատը վերադառնալով իրենց ըրած գիւտն իմացուցին իրենց ընկերներուն։

Հետևեալ օրը՝ գաղթականներն այն բերքը քաղելու գացին, և Բէնքրոֆ որ օր ըստ օրէ իր կղզւոյն համար կ'խանդավառէր, չափազանց կ'ըսէր.

«Պարոն Կիւրոս, միթէ կարծես թէ նաւաբեկներու համար կղզիներ գտնուին։

— Ի՞նչ ըսել կ'ուզես, Բէնքրոֆ։

— Կ'ըսեմ, ըսել կ'ուզեմ կղզիներ որ յատկապէս ստեղծուած են որ մարդիկ անոնց վրայ նաւաբեկին, և այդ աղքատներն անոնց մէջ ապրելու ճար ու ճարակ գտնեն։

— Այդ կարելի է, պատասխանեց չափազանցը ժպտելով։

— Այդ ստոյգ է, պարոն, պատասխանեց Բէնքրոֆ, և նոյնչափ ստոյգ է որ Լինքոլն կղզին այդ կղզիներէն մին է։»

Գաղթականները Քարեայ-Պալատը դարձան մի շատ հացի ծառերու բուներ հնձելով։ Ջախաղէտը մամուլ մը շինեց որպէս զի ալիւրէն հանէ հուղուոր աւիշը, և մեծ քանակութեամբ ալիւր ստացաւ։ Այս ալիւրը Նապին ճարտարութեամբ կարկանդակ և բռշինք եղաւ։ Իրաւ է որ ցորենի ճշմարիտ հաց չէր այս, բայց գրեթէ անոր մօտ բան մը։

Նոյն ժամանակը՝ ցլիր, այծերն ու մաքիներն ամեն օր պէտք եղած կաթը կ'մատակարարէին գաղթականութեան։ Ուստի՝ սայլակը՝ կամ լաւ ևս տեսակ մը թեթև կառքիկ որ անոր տեղը

լծուեր էր, ստէպ գոմը կ'երթար ու կ'դառնար, և երբ Բէնքրոֆի կարգը կ'գար այս ճամբորդութիւնն ընելու, Ծիւբը հետը կ'առնէր և կառավարել կ'տար։ Ծիւբ ալ՝ իր մտրակը շառաչելտալով՝ սովորական ուշմտութեամբ այս գործողութիւնը կ'կատարէր։

Այսպէս ամեն բան յաջող էր թէ գոմ և թէ Քարեայ-Պալատը, և իրաւ՝ գաղթականները բնաւ դանդատելու պատճառ մը չունէին, եթէ ոչ իրենց հայրենիքէն հեռու կ'գտնուէին։

Եւ սակայն հայրենեաց սէրն այնքան բնածին է մարդու սրտին մէջ որ եթէ յանկարծ նաւ մ'երևէր կղզւոյն առջև, գաղթականներն անոր նշան պիտի ընէին, պիտի կանչէին և մեկնէին... Բայց առ այժմ երջանիկ կեանք մը կ'վարէին և աւելի երկիւղ քան փափաք կ'զգային որ այդ վիճակը վրդովող դէպք մը չպատահի։

Բայց ով կրնայ յուսալ թէ բաղդը միշտ նպաստաւոր պիտի լինի իրեն և անոր փորձանքէն ազատ պիտի մնայ միշտ։

Ինչ և է, այս Լինքոլն կղզին, ուր գաղթականներն արդէն տարիէ մ'աւելի էր կ'բնակէին՝ ստէպ իրենց խօսակցութեան նիւթն էր, և օր մը՝ գիտողութիւն մ'ըրին որ վերջէն ծանր հետևութիւններ պիտի ունենար։

Ապրիլի առաջին օրն Զատկի կիրակին էր. Կիւրոս Սմիթ և իր ընկերները նոյն օրը սուրբ պահեր էին հանգիստ ընելով և աղօթելով։ Գեղեցիկ օր մ'էր, ինչպէս որ կրնայ լինել հոկտեմբերի օր մը, հիւսիսային կիսագնտին մէջ։

Ամենքն ալ՝ իրիկուան դէմ՝ ճաշէն ետք՝ հովանոցին ներքև զումարուեր էին՝ Մեծ-Տեսքին սարահարթին ծայրը, և արևուն մարը մտնելը կ'դիտէին։ Սուրճի տեղ՝ Նապ շամբուկի հունդերէ ըմպելի մ'եփեր և իր ընկերներուն մեծարեր էր։ Կղզւոյն և Խաղաղականին մէջ անոր մենաւոր դրից վրայ կ'խօսակցէին, երբ Գէդէոն Սփիլէթ դարձաւ ու ըսաւ.

«Սիրելիդ իմ Կիւրոս, արդեօք մեր կղզւոյն դիրքը նորէն զննեցիր քանի որ սնտուկին մէջէն ելած նոր վիճակը ձեռք ձգեցիր։

— Ո՛չ, պատասխանեց չափագէտը։

— Բայց կարելի է որ անպատճառ չէ չափել այդ գործիքով, որ աւելի ընտիր է քան գործածածդ։

— Ի՞նչ պէտք կայ, ըսաւ Բէնքրոֆ։ Կղզին ուր որ է աղէկ է։

— Անտարակոյս, վրայ բերաւ Գեդէոն Սբիլէթ, բայց կրնայ ըլլալ որ գործիքին անկատարութենէ զննութիւնները ճշդիւ չեղան, և քանի որ ճշդութիւնը ստուգել դիւրին է . . .։

— Իրաւունք ունիս, սիրելիդ իմ Սբիլէթ, պատասխանեց չափագէտը, և այդ բանն աւելի առաջ ստուգել պէտք էր, թէև եթէ սխալ մը կայ իմ նախորդ հաշուիս մէջ, այդ սխալմունքը լայնութեան կամ երկայնութեան մասին չկրնար հինգ աստիճանէն աւելի ըլլալ։

— Է՛յ, ո՞վ գիտէ, վրայ բերաւ Թղթակիցը, ո՞վ գիտէ, կարելի է մեր կարծածէն շատ աւելի մօտ կը գտնուինք մարդաբնակ հողի մը։

— Վաղը կ'իմանանք, պատասխանեց Կիւրոս Սմիթ, և եթէ զբաղմունքս ինծի պարապոյ ժամ մը տար մինչև հիմակ հասկըցած կ'ըլլէինք։

— Լաւ, ըսաւ Բէնքրոֆ, Պ. Կիւրոս այնքան լաւ զննող է որ չկրնար սխալած ըլլալ. և եթէ կղզին իր տեղէն չշարժեցաւ՝ անտարակոյս նոյն դրած տեղն է։

— Պիտի տեսնենք։»

Ուստի հետևեալ օրը՝ չափագէտը վեցեակին միջոցաւ պէտք եղած դիտողութիւնները ըրաւ արդէն գտած կղզւոյն դիրքը ստուգելու համար, և ահաւասիկ իր գործողութեան արդիւնքը.

Իր առաջին դիտողութեամբ՝ կղզւոյն դրից նկատմամբ՝ այս հաշիւը գտեր էր.

Արևմտեան երկայնութիւն. 150°էն 155°.
Հարաւային լայնութիւն. 30°էն 35°.

Երկրորդ դիտողութեամբ գտաւ.

Արևմտեան երկայնութիւն. 150° 30'.
Հարաւային լայնութիւն. 34° 57'.

Այսպէս ուրեմն իր գործիներուն թերութեամբ հանդերձ՝ Կիւրոս Սմիթ այնքան ճարտարութեամբ կատարեր էր գործողութիւնն՝ որ միայն հինգ աստիճան սխալեր էր։

«Հիմակ, ըսաւ Գեդէոն Սբիլէթ, որովհետև վեցեակի հետ աշխարհացոյց տախտակ մ'ալ ունինք, նայինք, սիրելիդ իմ Կիւրոս, թէ Լինքօլն կղզին ճշդապէս ինչ դիրք ունի Խաղաղականին մէջ։»

Հարպէրդ աշխարհացոյց տախտակը գնաց բերելու, որ՝ ինչպէս ընթերցողը գիտէ, Ֆրանսա շինուեր էր, և հետևապէս անունները ֆրանսերէն գրուած էին։

Խաղաղականին աշխարհացոյցը բացին, և չափագէտը՝ կարկինը ձեռքը բռնած՝ անոր դիրքն որոշելու պատրաստուեցաւ։

Յանկարծ կարկինը կեցուց և ըսաւ.

«Բայց Խաղաղականին այս կողմը կղզի մը կը գտնուի։

— Կղզի՞ մը, պոռաց Բէնքրոֆ։

— Անտարակոյս մեր կղզին է, պատասխանեց Գեդէոն Սբիլէթ։

— Ո՛չ, վրայ բերաւ Կիւրոս Սմիթ։ Այդ կղզին 153° երկայնութեան և 37° 11' լայնութեան վրայ է. այսինքն Լինքօլն կղզիէն երկու ու կէս աստիճան հեռու արևմտեան կողմ, և երկու աստիճան՝ հարաւային կողմ։

— Եւ ո՞ր կղզին է այդ, հարցուց Հարպէրդ։

— Թափոր կղզին։

— Նշանաւո՞ր է։

— Ո՛չ, Խաղաղականին մէջ կորսուած կղզեակ մ'է, և կարելի է բնաւ մարդ մը տեսած չէ զայն։

— Լաւ ուրեմն, մենք կ'երթանք տեսնելու, ըսաւ Բէնքրոֆ։

— Մե՞նք։

— Այո՛, Պարոն Կիւրոս։ Կամրջաւոր նաւակ մը կը շինենք և զայն ուղղելու գործը ես իմ վրայ կ'առնում. — Այս Թափոր կղզիէն ո՞րչափ հեռու ենք։

— Գրեթէ հարիւր քսան մղոն հիւսիս-արևելեան կողմ, պատասխանեց Կիւրոս Սմիթ։

— Հարիւր յիսուն մղոն։ Ոչ ինչ բան է, պատասխանեց նաւորդը։ Քառասուն ութ ժամէն լաւ հովով մը կրնանք հասնիլ։

— Բայց ինչ օգուտ ունի, հարցուց Թղթակիցը։

— Չգիտենք, պէտք է տեսնել։»

Եւ այս պատասխանին վրայ՝ որոշուեցաւ նաւ մը շինել այնպէս որ կարող լինին յաջորդ հոկտեմբեր ամսուան մէջ նաւարկել՝ երբ որ գարունը դառնայ։

ԳԼՈՒԽ Ժ.

Նաւակին շինութիւնը — Ցորենի երկրորդ բերք — Քուալաներու որսը — Նոր բոյսին աւելի ախորժելի քան օգտակար — Կէտ մը կ'երեւնայ — Վինեարդի եռաժանի — Կէտին ջարդը — Ձկնակոսայի գործածութիւնը — Մայիս ամսուան վերջը — Բէնքրօֆ ալ փափաքելու բան չունի.

Երբոր Բէնքրօֆ միտքը բան մը դնէր ոչ թոյլ ու դադար կ'առնուր մինչև որ զայն չգործադրէր։ Արդ՝ միտքը դրեր էր Թափոր կղզին երթալ, և որովհետև այս ճամբորդութեան համար բաւական մեծութեամբ նաւակ մը պէտք էր, հարկ էր այդ նաւակը շինել։

Չափագիտին հետ նաւորդը նաւուն յատակագիծն այսպէս որոշեցին.

Նաւուն ողնափայտն երսուն հինգ ոտք երկար պիտի լինէր և ինն ոտք լայն — և այսպէս արագընթաց նաւ մը պիտի դառնար եթէ իր յատակն ու ջրի մէջ գտնուած մասը լաւ շինէին — նաւը վեց ոտք ջրին մէջ պիտի լինէր այնպէս որ առանց ծռելու կարող լինի ծովուն երեսը մնալ։ Բոլոր երկայնքը կամուրջ մը պիտի ունենար, որու վրայ շտեմարանի երկու դուռ (écoutille)

պիտի գտնուէր, որ միջնորմով մը զատուած երկու սենեակներու մտնելու պիտի ծառայէր. միակայմ նաւու ձև ու կտրուած, առջևէն ու ետևէն առագաստներ պիտի ունենար դիւրաշարժ, այնպէս որ սաստիկ հովի ատեն կարենար դառնալ և նպաստաւոր օդերու ժամանակ հով ընդունէր։ Վերջապէս իր փոճոլն ազատ-եզրներով (franc-bord) պիտի շինուէր, այսինքն կողին տախտակները կցուած քան թէ իրարու վրայ յենած պիտի լինէին. իսկ փայտէ շրջանակին գալով՝ տախտակամածը դնելէն ետև՝ պիտի սեղմէին . . . ։

Այս նաւուն շինութեան համար ինչ փայտ պիտի գործածէին։ Կնձնի թէ եղևին, որմէ շատ կար կղզին։ Եղևինն աւելի յարմար գտան, որ թէև քիչ մը «ձեղքող» էր՝ ատաղձագործներուն ըսածին համեմատ, բայց շատ դիւրին է աշխատութեան և կնձնիին պէս ջրին վրայ լաւ կ'կենար։

Այս մանրամասն գործողութիւններն որոշելէն ետև՝ արժան գտնուեցաւ, քանի որ վեց ամսէն հազիւ գարունը պիտի հասնէր, որ Կիւրոս Սմիթ և Բէնքրօֆ մինակ աշխատին նաւակին շինութեան համար։ Իսկ Գեդէոն Սփիլէթ և Հարպէրթ որսորդութիւնը պիտի շարունակէին, և ոչ Նապ ոչ իր օգնականը Ժիւփ իրենց ընկած առտնին գործերը զանց պիտի չընէին։

Երբոր մի անգամ ծառերն ընարեցին, զանոնք տապալեցին, կտրեցին, տախտակներու ձևով սղոցով բաժնեցին, որպէս թէ հին վարպետ սղոցագործներ լինէին։ Ութ օր ետք՝ Կարկառներուն և պատին մէջ գտնուած խորշին մէջ՝ նաւարան մը պատրաստեցին, և երսուն ոտք լայն ողնափայտ մը, որու ետևի ծայրը ղեկի հեծան, առջևի կողմը՝ ողնայարի եղջիւր մը՝ աւազին վրայ կ'երկննար։

Այս նոր գործին մէջ Կիւրոս Սմիթ կուրօրէն չէր գործեր։ Ինչպէս ամեն բանի նոյնպէս նաւեր շինելու մէջ շատ ճարպիկ էր և նախ թղթի վրայ գծագրեր էր իր նաւուն կաղապարը։ Ուստի ծանր հաշիւներ և հասուն խորհրդածութիւններ ընելէ ետև՝ մոյթերն ողնափայտին վրայ դրուեցան։

Բէնքրօֆ, ինչպէս որ ընթերցողը դիւրաւ կրնայ հաւտալ, այն ձեռնարկութիւնը գլուխ հանելու համար կ'եփէր ու կ'մաշէր. Տեւապէս բնաւ չէր ուզեր պահ մը գործէն հեռանալ։ Միայն գործ մը պատահելով ստիպուեցաւ նաւաշինութիւնը թողուլ, ընդ մէկ օրուան համար։ Այս է ցորենին երկրորդ բերքն որ ապրիլ 15ին տեղի ունեցաւ։ Առաջուաննին պէս յաջողեր էր, և կանխաւ հաշւի եղած ցորենը տուաւ։

«Հինգ կապիճ, Պարոն Կիւրոս, ըսաւ Բէնքրօֆ, իր հարստութիւնները խղճահարութեամբ չափելէն ետև։

— Հինգ կապիճ, պատասխանեց չափագէտը, և մէն մի կապիճ հարիւր երսուն հազար ցորեն կ'պարունակէ, որով վեց հարիւր յիսուն հազար ցորեն ստացած կ'ըլլանք։

— Լաւ ուրեմն, այս անգամ բոլորն ալ կ'ցանենք, ըսաւ նաւորդը, միայն քիչ մը պահելով։

— Այո, Բէնքրօֆ, և՛ եթէ յաջորդ բերքն ալ համեմատաբար այս արդիւնքն ունենայ, չորս հազար կապիճ ցորեն պիտի ստանանք։

— Եւ այն ատեն հաց պիտի ուտե՞նք։

— Անշուշտ հաց պիտի ուտենք։

— Բայց պէտք է աղօրի մը շինել։

— Աղօրի մ'ալ կ'շինենք։»

Հետեւապէս ցորենի երրորդ արտն անհամեմատաբար առջի երկու արտերէն աւելի ընդարձակ եղաւ, և հողն, զոր յետին ծայր խնամքով պատրաստած էին, թանկագին սերմն ընդունեց։ Այս լմցընելէն ետև՝ Բէնքրօֆ իր գործին նորէն դարձաւ։

Նոյն միջոցին՝ Գեդէոն Սբիլէդ ու Հարպէրդ շրջականներն որսի ելեր էին, և Խոր-Արեւմուտին մինչև այն ատեն անծանօթ մնացած կողմերն յառաջացան յանդգնութեամբ, գնտակով լեցուցեր էին իրենց հրացանը, որպէս զի ամեն պատահարի պատրաստ գտնուին։ Փառաւոր ու անլոյծ թաւուտ մ'էր, որու ծառերն իրարու վրայ ընկած էին որպէս թէ տեղ պակաս ըլլէր։ Այս անտառուտ կոյտերը գննել շատ դժուարին էր, և թղթակիցն

առանց գրպանին կողմնացոյցն առնլու՝ այդ վտանգաւոր տեղերը չէր երթար. վասն զի արևը հազիւ կ'թափանցէր խիտ ոստերէն և դժուարին պիտի ըլլէր ճամբան գտնել։ Բնապէս աւելի հազուագիւտ էր որսն այն կողմերն, ուր կենդանիներն բաւական տեղ չունէին ազատօրէն շարժելու։ Սակայն երեք խոշոր խոտակերներ սպաննուեցան ապրիլի այս վերջին տասն հինգ օրուան մէջ։ Քուլաներ (koulas) էին, որոց տեսակն արդէն տեսեր էին գաղթականներն լճակին հիւսիսակողմը, և տխմարութեամբ խոյս չտալով սպաննուեցան ծառերու խոշոր ճիւղերուն մէջ, որոց վրայ ապաւէն փնտռեր էին։ Իրենց մորթերը Քարեայ-Պալատը բերին և ծծմբաթթուին օգնութեամբ այդ մորթերը մաքրեցին այնպէս որ կարելի եղաւ գործածել։

Ուրիշ նկատմամբ՝ խիստ կարևոր գիւտ մ'ըրաւ Գեդէոն Սբիլէդ՝ իր մէկ արշաւանին ժամանակ։

Ապրիլի 30ին էր։ Երկու որսորդներն Խոր-Արեւմուտին հարաւ-արևմտեան կողմը յառաջ քշեր էին երբ թղթակիցը Հարպէրդին առջևէն գնալով յիսուն քայլի չափ հեռաւորութեամբ տեսակ մը բացատ տեսաւ, ուր ծառերն իրարմէ աւելի հեռու բուսած ըլլալով՝ արևուն քանի մը նշոյլները կ'թափանցէին։

Գեդէոն Սբիլէդ նախ զարմացաւ տեսակ մը շիտակ բունով գլանաձև և բազմոստ բոյսերուն հանած հոտին վրայ, որոնք ողկուզաձև և մանր հատիկներով ծաղիկներ կ'արտադրէին։ Թղթակիցն այս բոյներէն մէկ քանի հատ խլեց և պատանիին կողմը դառնալով՝ անոր ըսաւ.

«Նայէ անգամ մը ինչ բոյս է այս, Հարպէրդ։

— Եւ ո՞ւր գտար այդ բոյսը, Պարոն Սբիլէդ։

— Վարը, բացատի մը մէջ, ուր շատ առատ է։

— Լաւ, Պարոն Սբիլէդ, ըսաւ Հարպէրդ, այդ գիւտ մ'է որով Բէնքրօֆի կատարեալ երախտագիտութեան իրաւունքը պիտի ստանաս։

— Ուրեմն ծխախոտ է այդ։

— Այո, և եթէ առաջին կարգի ծխախոտ չէ, դարձեալ ծխախո-

— Ա՛հ, այն բարեկամս Բէնքրոֆն որչափ պիտի ուրախանայ արդեօք: Բայց բոլորն ալ չպիտի ծխէ, թշուառականը, և մեր բաժինն ալ պիտի հանէ անշուշտ:

— Ա՛խ, միտքս բան մը կ'գայ, Պարոն Սբիլէդ, պատասխանեց Հարպէրդ: Բէնքրոֆի բան մը չըսենք. այդ տերևները պատրաստենք, և օր մը՝ լեցուն ծխափողը մ'անոր ձեռքը տանք:

— Կ'հաւանիմ, Հարպէրդ, և այն օրն մեր արժանի ընկերին բոլոր փափաքները կատարուած պիտի ըլլան:»

Գեդէոն Սբիլէդ և պատանին այդ անգին բոյսէն շատ մը հաւաքեցին, Քարեայ-Պալատը վերադարձան և զայն «Նենգօրէն» ներս մտուցին, և այնքան զգուշութեամբ որպէս թէ Բէնքրոֆ մաքսատուներու մէջ ամենէ դաժանը ըլլէր:

Գործը միայն Կիւրոս Սմիթին ու Նապին բացին, և նաւորդին մօտէն բան մը չանցաւ բաւական երկար ժամանակ՝ մինչև որ նուրբ տերևները չորցուցին, կտրեցին և տաք քարերու վրայ դնելով կերպ մը խորովման ենթարկեցին: Այս գործողութեան համար երկու ամիս անցաւ. բայց բոլոր այս աշխատութիւնք Բէնքրոֆ չիմացաւ, վասն զի նաւակին շինութեամբ զբաղած ըլլալով՝ միայն հանգստանալու համար Քարեայ-Պալատը կ'ելնէր:

Դարձեալ ուրիշ անգամ մ'ալ, թէև շատ զբաղած էր, մայիսի առաջին օրն իր աշխատանքն ընդմիջեց, ձկնորսութեան մը երկածով, որուն մասնակից եղան բոլոր գաղթականները:

Քանի մ'օրէ 'ի վեր գիտեր էին ծովու վրայ՝ երկու երեք մղոն հեռուն՝ ահագին կենդանի մ'որ Լինքօլն կղզւոյն ջուրերուն մէջ կը լողար: Զարհուրելի խոշոր կէտ մ'էր, որ՝ հաւանօրէն՝ հարաւային տեսակէն, ֆիզըդ կէտ ըսուածին կ'վերաբերէր:

«Ո՛րչափ բաղդաւոր պիտի ըլլէինք եթէ այդ կէտը բռնէինք, գոչեց նաւորդը: Ա՛խ, թէ որ յարմար նաւակ մը, երկժանի մ'ունենայի. պիտի բսէի յօժարակամ. «Վազենք այս կենդանիին վրայ, վասն զի կ'արժէ որ զայն բռնենք:»

— Ե՛հ, Բէնքրոֆ, որչափ կ'փափաքէի տեսնել երկժանին գործածելդ, ըսաւ Գեդէոն Սբիլէդ: Շատ հետաքրքրական բան պիտի ըլլէր:

— Շատ հետաքրքրական և անվտանգ բան, ըսաւ չափաւէտը, բայց քանի որ այդ կենդանիին վրայ յարձակելու միջոցները չունինք, անօգուտ է անոր վրայ մտածելը:

— Կ'զարմանամ տեսնելով կէտ մ'այս երկայնութեան տակ, որ համեմատաբար բարձր է, ըսաւ թղթակիցը:

— Ուրեմն ինչու համար, Պարոն Սբիլէդ, հարցուց Հարպէրդ: Ճիշտ Խաղաղական ովկիանոսին այն մասին վրայ կ'գըտնուինք զոր անգլիացի ու ամերիկացի ձկնորսներ Ուէյլ-ֆիլտ (Whale-Field) կ'անուանեն, և այս տեղ, Նոր-Զելանտայի և հիւսիսային Ամերիկայի մէջ է որ հարաւային կիսագնտին կէտերը մեծ մասամբ կ'գտնուին:

— Շատ ճշմարիտ է, պատասխանեց Բէնքրոֆ, և ես աւելի անոր համար կ'զարմանամ որ շատ կէտեր չտեսանք: Բայց քանի որ չենք կարող անոնց մօտենալ, ինչ փոյթ է:»

Եւ Բէնքրոֆ իր գործին դարձաւ, վշտագին հառաչ մը հանելով, վասն զի ամէն նաւաստի՝ միանգամայն ձկնորս է, և եթէ ձկնորս մ'այնքան աւելի հաճոյք կ'զգայ որքան որ իր որսը խոշոր ըլլայ, դիւրին է գուշել թէ կէտորս մ'ինչ կ'զգայ կէտի մ'առջև:

Բայց եթէ միայն հաճոյք պատճառէր հոգ չէր: Անտարակոյս այսպիսի որս մը գաղթականութեան շատ շահաւէտ պիտի ըլլէր, վասն զի եղը, ճարպը, ակռաները (fanon) շատ բաներու կրնային գործածուիլ:

Արդ՝ նոյն միջոցին այնպէս պատահեցաւ որ տեսնուած կէտը կարծես թէ չէր ուզեր կղզւոյն ջուրերէն հեռանալ: Ուստի՝ թէ Քարեայ-Պալատին պատուհաններէն, թէ Մեծ-Տեսքին սարահարթէն, Հարպէրդ ու Գեդէոն Սբիլէդ երբոր որսի կ'երթային, և Նապ՝ իր խոհանոցին հոգը տանելու ատեն, դիտակը ձեռքէ չէին ձգեր և կենդանւոյն ամէն շարժումները կ'դիտէին:

Վիշապաձուկն՝ Միութեան ընդարձակ ծովածոցին մէջ բռնուելով կ'ձեղքէր զայն Մանդիպուլէ գլխէն մինչև Չիրանի հրուանդանը, իր լողակներուն զօրութեամբ որ չափէ դուրս հզօր էին

կ որոց վրայ կ'կոխէր և կ'շարժէր օստոստելով այնպէս արագ որ երբեմն մէկ ժամու մէջ տասն երկու մղոն կ'առնէր։ Երբեմն ալ կղզեակին այնչափ շատ կ'մօտենար որ դիւրին կ'ըլլար զայն բոլորովին նշմարել։ Իրօք հարաւային կէտն էր, լիովին սև և որու գլուխն հիւսիսային կէտին գլխէն աւելի տափակ է։

Նոյնպէս շէշտաձևէն (event) ամպի կամ ջրի շոգի մը շատ բարձր կ'նետէր — թէև այս կէտը այլանդակ կ'երևի — բնագէտներն ու կէտորսներն այս մասին համաձայն չեն։ Ջո՞ւր է թէ օդ է դուրս ցայտածը։ Սովորաբար կ'ըսեն թէ շոգի է, որ արտաքին պաղ օդէն խտանալով անձրևի պէս վար կ'թափի։

Սակայն այս կաթնբերին ներկայութիւնը գաղթականները կ'զբաղեցընէր։ Մանաւանդ Բէնքրօֆին միտքը կ'գրաւէր և աշխատելու ատեն անոր ուշք կ'առնէր, տղու մը պէս՝ որու բան մը արգիլելով կ'գրգռի, նոյնպէս նաւորդն այս կէտը ձեռք ձգելու կ'փափաքէր։ Գիշերը բարձր ձայնով անոր վրայ կ'երազէր, և եթէ անոր վրայ յարձակելու միջոցներ ունենար, եթէ նաւակը նաւարկելու վիճակին մէջ գտնուէր, չպիտի վարանէր անոր ետևէն իյնալու։

Բայց գաղթականներուն ընելու չկրցածը՝ դիպուածով կատարուեցաւ. և մայիսի 3ին, խոհանոցին պատուհանէն նայող Նաբին աղաղակներն, իմացուցին որ կէտը կղզւոյն եզերքն եկեր խրեր էր։

Հարպէրդ և Գետէոն Սբիլէդ՝ որ որսի պիտի ելնէին, իրենց հրացանը թողուցին. Բէնքրօֆ իր տապարը նետեց, Սիւրուս Սմիթ ու Նապ իրենց ընկերներուն միացան, և ամէնքը միասին կէտին ինկած տեղը դիմեցին։ Այս խրիլն՝ Քարեայ-Պալատէն երեք մղոն հեռու՝ բաց ծովու վրայ Բեկորքի սարաւանդը պատահեր էր։ Ուրեմն հաւանական էր որ կէտը դիւրաւ չպիտի ազատէր այն տեղէն։ Բայց գործել՝ պէտք էր արտորալ, որպէս զի անոր փախուստն արգիլեն։ Ուստի քարհատներով և սուիններով վառեցին, Մէրսիի կամրջէն անցան, գետին աջ եզրէն վար իջան, աւազափին կողմը զարկին, և՝ քսան վայրկեան չանցած՝ գաղթա-

կաններն աճապէն կենդանիին քովն էին, որու վերևն արդէն անհամար թռչուններ կ'վխտային։

«Ի՛նչ հրէշ» գոչեց Նապ։

Եւ այս բացատրութիւնն իրաւացի էր, վասն զի հարաւային բալենի կէտ մ'էր այն, ութսուն ոտք երկայն, իր տեսակին մէջ հսկայ մը, որու ծանրութիւնն անտարակոյս հարիւր յիսուն հազար լիբրէէն պակաս չպիտի ըլլար։

Սակայն այսպէս խրած հրէշը չէր շարժէր և տարուբերելով չէր աշխատեր ջրէն երեան ելնել, մինչդեռ ծովը դեռ բարձր էր։

Գաղթականները քիչ ատենէն հասկցան այս անշարժութեան պատճառը, երբ՝ տեղատուութեան միջոցին՝ կենդանւոյն բոլորտիքը շրջեցան։

Մեռած էր, և ձախ կողէն երեքժանի մը դուրս կ'ցցուէր։

«Ուրեմն կէտորսներ կան այս կողմերը», ըսաւ խոկոյն Գետէոն Սբիլէդ։

— Ինչո՞ւ այդպէս կ'ըսես, հարցուց նաւորդը։

— Վասն զի սա երեքժանին դեռ կէտին վրան է . . . ։

— Է՛հ, Պարոն Սբիլէդ, այդ ապացոյց մը չէ, պատասխանեց Բէնքրօֆ։ Գտնուած են կէտեր որ հազարաւոր մղոններ բրած են կողի վրայ երեքժանի մ'ունենալով, և այս ալ թերևս Ատլանտեան ովկիանոսի հիւսիսակողմը զարնուած և եկած է Խաղաղականին հարաւակողմը մեռնելու, ուստի զարմանալու բան մը չկայ։

— Սակայն . . . ըսաւ Գետէոն Սբիլէդ, որ չէր համոզուեր Բէնքրօֆի բացատրութենէ։

— Այդ բոլորովին կարելի է, պատասխանեց Սիւրուս Սմիթ. բայց սա երեքժանին քննենք։ Կարելի է, բաւական ընդհանուր եղած սովորութեան մը համեմատ՝ կէտորսներն անոր վրայ փորագրած ըլլան իրենց նաւուն անունը։»

Արդարև՝ Բէնքրօֆ՝ կենդանւոյն կողէն երեքժանին խլելով՝ այս արձանագիրը կարդաց.

Մարիա-Ստելլա

Վինեարդ

«Վինյարտի նաւ մը, իմ բնիկ երկրիս մէկ նաւը, գոչեց նաւ. Մօրբէս-Սթէլլան։ Ստուգիւ՝ աղուոր կէտորս մ՚է զոր լաւ կը ճանչեմ։ Ա՛խ, Վինյարտի նաւ մը, Վինյարտի* կէտորս մը։»

Եւ նաւորդը՝ երեքժամնին շարժելով՝ այլայլութեամբ կ՚արտասանէր այս անունն որ իր սրտին սիրելի էր, իր հայրենեաց այս անունը։

Բայց որովհետև յուսալի չէր որ Մօրբէս-Սթէլլան գար և իր երեքժամնիով զարկած կէտը պահանջէր, որոշեցին չհոտած զայն յօշել։ Գիշակեր թռչուններ՝ որ երեք օրէ 'ի վեր այս հարուստ որսը կ՚դիտէին, առանց յապաղման՝ զայն գրաւել կ՚ուզէին, և պէտք եղաւ հրացանի հարուածներով զանոնք վանել։

Այս կէտը մատակ էր, որու ստինքն շատ մը կաթ տուին, որ Տիֆէնպախ բնագիտին կարծեաց նայելով կովու կաթի տեղ կրնար անցնիլ, և իրօք՝ անկէ տարբերութիւն չունի ոչ գոյնին, ոչ համին և ոչ թանձրութեան կողմէ։

Առեն մը՝ Բէնքրօֆ կէտորս նաւու մը վրայ ծառայեր էր և կարող եղաւ մեթոտով ուղղել յօշելու գործողութիւնը — բաւական անախորժ գործողութիւն մ՚որ երեք օր տևեց, բայց և ոչ մէկ գաղթական վհատեցաւ, ոչ Գէդէոն Սբիլէդ անգամ, որ նաւորդին խօսքին նայելով վերջապէս «լաւ նաւաբեկեալ մը դառնալու պիտի յաջողէր։»

Ճարպը՝ երկու ու կէս ոտք թանձրութեամբ զուգահեռական շերտեր կտրուելով՝ վերջը՝ ամեն մէկն հազար լիտրէ ծանր կշռող կտորներու բաժնուելով հողէ մեծ ամաններու մէջ հալեցուցին, և այդ ամանները նոյն տեղը բերեր էին — վասն զի Մեծ-Տեսքին կողմերը չէին ուզեր ապականել — և այս հալումէն իր ծանրութեան գրեթէ մէկ քառորդը կորսոյս։ Սակայն դարձեալ առատ էր արդիւնքը. միայն լեզուն վեց հազար լիտրէ իւղ տուաւ, և ստորին շրթը՝ չորս հազար։ Ասկէ զատ՝ սոյն ճարպով որ երկար ատեն ստէարինի պաշար ճարելու պիտի ծառայէր, կար նաև

*Նիւ—Եորքի մէկ նաւահանգիստը։

ակռայի շարքն՝ որ անշուշտ բանի մը պիտի գործածուէր, թէև Քարեայ-Պալատին մէջ որ հովանոց կ՚կրէին և ոչ կօրսէ։

Վիշապաձկան բերնին վերին մասին երկու կողմն ալ հաբիւր փողաձև սայրեր կային, շատ առձգական նեարդային հիւսուածով և երկու մեծ սանտրի պէս սուր ծայրեր ունենալով, որու վեց ոտք երկայն ակռաներն՝ անհամար մանր կենդանիներ, պզտիկ ձկներ ու թուլատարրներ պահելու կ՚ծառայեն, որով կը սնանի կէտը։

Երբ այս գործողութիւնն՝ յուրախութիւն գործողներուն լմընցաւ, կենդանիին մնացորդը թռչուններուն թողուցին, որ մինչև յետին փշուրը պիտի լափէին անշուշտ. և օրական աշխատանքը նորէն սկսան գաղթականները Քարեայ-Պալատին մօտ։

Սակայն շինատունը մտնելէն առաջ Կիւրոս Սմիթ մտածեց տեսակ մը գործիներ շինել որ իր ընկերներուն հետաքրքրութիւնը սաստիկ գրգռեցին։ Տասն երկաթի չափ ձկնակռաներ առաւ, վեց հաւասար մաս բաժնեց և անոնց ծայրերը սրեց։

«Հապա այդ գործիները, Պարոն Կիւրոս, հարցուց Հարպէրդ, երբ գործողութիւնը լմնցաւ, ինչ բանի պիտի ծառայեն։

— Գայլերը, աղուէսներն և մինչև անգամ ցիւերը սպաննելու համար, պատասխանեց ճարտարագէտը։

— Հիմակ։

— Ո՛չ, այս ձմեռ, երբոր սառոյց ձեռք ձգենք։

— Չեմ հասկընար... պատասխանեց Հարպէրդ։

— Հիմակ պիտի հասկընաս, տղաս, պատասխանեց ճարտարագէտը։ Այս գործին իմ հնարքս չէ, և Ռուսի Ամերիկայի մէջ շատ անգամ զայն կ՚գործածեն ալէուդեան որսորդները։ Այս ձեր տեսած ձկնակռաները, բարեկամներ, պիտի ծռեմ երբոր չորս կողմ մը սառի, և ջրով պիտի թրջեմ մինչև որ իրենց վրայ սառոյցէ խաւ մը բռնէ որով իրենց ծռած դիրքը պիտի պահուի, և զանոնք ճարպի խաւով մը ծածկելէն ետև՝ ձիւնին վրայ պիտի տարածեմ։ Արդ՝ ինչ պիտի պատահի երբ սովալլուկ կենդանի մ՚այս խայծերէն մին կլլէ։ Իր ստամոքսին ջերմութենէն ճարպը պիտի

հալի և ապա՝ ձմեռուան ձիւներուն՝ իր սուր ծայրերով պիտի ծակէ զայն։

— Ո՛րչափ ճարտար հնարք է այդ, ըսաւ Բէնքրոֆ։

— Եւ այդ պիտի խնայէ վառօդն ու գնդակները, պատասխանեց Կիւրոս Սմիթ։

— Այս աւելի ընտիր է քան թէ ծուղակները, յարեց Նապ։

— Ուրեմն սպասենք որ ձմեռը գայ։

— Այո՛, սպասենք։»

Սակայն նաւակին շէնքը կ'յառաջանար, և՝ ամսուն վերջերը կիսովին շրջանակուած էր։ Արդէն դիւրին էր նկատել որ պատուական ձև մը պիտի ունենար և ծովու պիտի դիմանար։

Բէնքրոֆ աննման եռանդով կ'աշխատէր, և իրեն պէս կորովի կազմուածքով մարդ մը կարող էր միայն այսչափ յոգնութեանց տոկալ. բայց իր ընկերներն իր այս նեղութեանց փոխարէն գաղտնապէս վարձք մը կ'պատրաստէին, և մայիսի 31ին չափէ դուրս ուրախութեան օր մը պիտի լինէր իրեն համար։

Այն օրն ճաշէն ետք՝ սեղանէն ելնելու միջոցին՝ Բէնքրոֆ իր ուսին վրայ կռթնող ձեռք մը զգաց։

Այս էր Գեդէոն Սբիլէդի ձեռքը. Թղթակիցն անոր ըսաւ.

«Քիչ մը սպասէ, վարպետ Բէնքրոֆ, ինչո՞ւ այդպէս կ'շտապես. կ'մոռնաս որ դեռ աղանդեր ունինք։

— Շնորհակալ եմ, Պարոն Սբիլէդ, պատասխանեց նաւաստին, աշխատանքիս կ'դառնամ։

— Լա՛ւ, թաս մը սուրճ չես խմեր. բարեկամդ իմ։

— Չեմ ուզեր։

— Ուրեմն ծխափայտ մը քաշէ։»

Բէնքրոֆ յանկարծ ոտք ելեր էր և իր պարզ խոշոր դէմքը դեղնեցաւ, երբոր տեսաւ որ Թղթակիցն իրեն լեցուն ծխափայտ մը կ'ներկայէր, և Հարպէրդ՝ հրավառ խարոյկ մը։

Նաւաստը բերանը բացաւ որ խօսք մ'ընէ և չկրցաւ. բայց ծխափայտը բռնելով շրթներուն տարաւ. յետոյ խարոյկը վրան և ետեւէ ետեւ քանի մ'անգամ ծխափայտը քաշեց։

Կապուտակ ու հոտաւէտ մուխ մը սկսաւ վեր ելնել, և այս ամպին խորերէն՝ գանգաչող ձայն մը կ'կրկնէր.

«Ծխախոտ, բո՛ւն ծխախոտ է։

— Այո՛, Բէնքրոֆ, պատասխանեց Կիւրոս Սմիթ, և մանաւանդ պատուական ծխախոտ մ'է։

— Ո՛հ, երկնային Նախախնամութիւն, ամէն արարածներու նուիրական հեղինակ, գոչեց նաւաստին։ Ուրեմն ա՛լ բան մը չպակսիր մեր կղզւոյն մէջ։»

Եւ Բէնքրոֆ կ'ծխէր, կ'ծխէր ու կ'ծխէր։

«Եւ ո՞վ ըրաւ այս գիւտը, հարցուց նա վերջապէս։ Անշուշտ դու ըրած ես, Հարպէրդ։

— Ո՛չ, Բէնքրոֆ, Պ. Սբիլէդ գտաւ։

— Պարոն Սբիլէ՛դ, պոռաց նաւորդը՝ իր կուրծքին վրայ սեղմելով Թղթակիցն, որ երբէք այսպէս սեղմուած չունէր։

— Ո՛ւֆ, Բէնքրոֆ, պատասխանեց Գեդէոն Սբիլէդ, իր շունչն առնլով, որ պահ մը կտրեր էր։ Երախտագիտութեանդ մէկ մասն ալ Հարպէրդին տուր, որ այս տունկը ճանչեց, Կիւրոսին՝ որ զայն պատրաստեց, և Նապին՝ որ շատ նեղութիւն քաշեց գործը գաղտնի պահելու համար։

— Լաւ ուրեմն, բարեկամներս, օրին մէկն ասոր փոխարէնը ձեզի պիտի հատուցանեմ, պատասխանեց նաւաստին։ Ա՛լ ձեզի եմ բոլոր կենացս մէջ, մինչև 'ի մահ։»

ԳԼՈՒԽ ԺԱ.

Ձմեռ — Բուրդ ճմլել — Աղօրին — Բէնքրօֆի մէկ հաստատ գաղափարը — Ձկնակռները — Ի՞նչ բանի կրնայ ծառայել ալպատրոս մը — Ապագային այրելին — Թօփ ու Ժիւբ — Փոթորիկներ — Հաւնոցին մէջ աւերածներ — Ճահիճին կողմը արշաւանք մը — Կիւրոս Սմիթ մինակ — Ջրհորին քննութիւնը.

Սակայն այս յունիս ամսուն հետ ձմեռը կ'հասնէր, որ հիւսիսային գօտիներուն դեկտեմբեր ամիսն է, և գաղթականներուն մեծ զբաղմունքն եղաւ տաք և հաստ զգեստներ պատրաստել։

Գոմին ոչխարները արդէն խուզուեր էին, և այս հիւսելի (textile) թանկագին նիւթը կտաւ ընել պէտք էր միայն։

Յայտնի է թէ Կիւրոս Սմիթ ոչ գզիչ, ոչ սանտրիչ, ոչ յղկիչ, ոչ ձգտիչ, ոչ դերձ ունենալով որպէս զի բուրդը մանէ, և ոչ գործի՛ որ զայն հիւսէ՝ աւելի պարզ միջոց մը գործածելու ստիպուեցաւ, որպէս զի մանելու ու հիւսելու գործը կատարէ։

Եւ իրօք, գիտնալով որ բուրդի թելերն իրարու հետ կ'պատատին և խառնուելով թաղի ըսուած կտաւը կ'արտադրեն, բուրդին այս յատկութենէ օգուտ քաղել ուզեց։ Հետևապէս այս թաղին՝ պարզապէս ասուին թափելով կրնար յառաջ գալ, գործողութիւն մ'որ՝ եթէ կտաւին կակղութիւն չտար, գէթ շատ կ'աւելցնէ անոր տաքցնելու յատկութիւնը։ Արդ՝ ոչխարներուն տուած բուրդը շատ կարճ թելերէ կ'բաղկանար, և թաղի շինելու համար այս կարևոր պայման մ'էր։

Ջափաղէան՝ իր ընկերներուն օգնութեամբ, որոց մէջ Բէնքրօֆ ալ կար — վասն զի դարձեալ իր նաւակը թողլու ստիպուեր էր — նախնական պատրաստութիւններն սկսաւ, որով բուրդին եղած աղտը պիտի լուար։ Այս լուացումն ընելու համար կարասներու

մէջ ջուր դրին և տաքցնելով եօթանասուն աստիճանի հասուցին. յետոյ անոնց մէջ թափեցին բուրդն, և քսան չորս ժամ այսպէս մնաց։ Ապա սոտայի տաք ջրով մաքրելով բուրդը ձնշեցին որ չորնայ և այնուհետև թափելու, այսինքն կոխելու վիճակի մէջ դրին, որպէս զի հաստատուն կտաւ մ'արտադրեն. այս կտաւը թէև կոշտ պիտի ըլլէր և անշուշտ Եւրոպայի կամ Ամերիկայի մէջ արժէք մը չպիտի ունենար այն, սակայն Լինքօլն կղզւոյն մէջ շատ մեծ բանի տեղ պիտի անցնէր։

Այս տեսակ կտաւն՝ շատ հին ժամանակ կ'գործածէին, և արդարև՝ բուրդէ առաջին կտաւները շինուեցան այն եղանակաւ զոր պիտի գործածէր Կիւրոս Սմիթ։

Ջափաղէան իր ճարտարութենէ շատ օգուտ քաղեց մանաւանդ երբ բուրդը թափելու պէտք եղաւ, վասն զի մինչև այն ատեն գրեթէ ապարդիւն մնացած մեքենական զօրութենէ օգուտ քաղելու հնարը գտաւ, այսինքն առագափին վրայ հոսող քարավազէն, որպէս զի թափիչ աղօրի մը յօրինէ։

Շատ պարզ և կոշտ եղաւ այս մեքենան։ Ծառ մը՝ ատամնաձև խեցիներով (came) որ հետզհետէ վեր վար կ'շարժէին ուղղաձիգ թակեր, բուրդն ընդունելու յատկացած խողովակներ (auge) որոց ներսի դին կ'իջնէին այդ թակերը, տախտակէ ամուր կազմած մը որ բոլոր այս մեքենան կ'պարունակէր ու այլ և այլ մասերը կ'կցէր իրարու, ահա այս եղաւ մեր ակնարկած մեքենան, և շատ դարերայս եղած պիտի ըլլէր այն, մինչև որ մարդիկ թակերուն տեղ ձնշիչ գլաններ գտան և բուրդը՝ չէ թէ ծեծելով այլ իրօք կոխելով գործեցին։

Այս գործողութիւնը, Կիւրոս Սմիթին ճարտար ուղղութեամբն՝ ուզածին պէս յաջողեցաւ։ Բուրդն՝ որ կանխաւ սապոնի ջրով թրջեր էին, որպէս զի մէկ կողմէ դիւրաւ սահի, կպչի, ձնշուի ու թուլնայ, միւս կողմէ թափուելով չփոխուի, աղօրիէն խիտ թաղի նփոցի պէս ելաւ։ Բուրդին թելերուն ունեցած անհարթութիւններն այնպէս իրարու հետ կցուեր ու խառնուեր էին որ թէ զգեստ և թէ ծածկոց շինելու յարմար կտաւ մը դարձեր էր։

Հարկաւ ոչ Փէյէնօ էր, ոչ բնհեղ, ոչ Սկովտիոյ քաշմէր, ոչ գլպակ, ոչ մետաքսէ կերպաս, ոչ Չինի մնգուս էր, ոչ ալճակ, ոչ չուխայ էր և ոչ ասուի։ Միայն մուֆլոնեան բուրդ էր և այսպէս Լինքոլն կղզւոյն մէջ ուրիշ նոր ճարտարութիւն մը մտեր էր։

Ուստի գաղթականներն լաւ զգեստներ ու հաստ ծածկոցներ ունեցան և առանց վախի 1866-67 ձմերուան գալը տեսան։

Երբ մեծ ցուրտերը սկսան յունիսի 20էն մօտ կգալը լինել, և Պէնքրոֆ յաւօք սրտի ստիպուեցաւ իր նաւակին շինութիւնը դադրեցընել, որ սակայն յաջորդ գարնան անտարակոյս պիտի վերջանար։

Պէնքրոֆ հաստատ միտքը դրեր էր ուղևորիլ և Թափոր կղզին աչքէ անցընել, թէև Կիւրոս Սմիթ այս ուղևորութեան դէմ էր, պարզապէս հետաքրքրութեան արդիւնք սեպելուն, վասն զի այն անապատ և կէս խոպան կղզոյն մէջ անշուշտ յոյս չկար օգնութիւն մը գտնելու։ Բնական երկիւղ կ'զգար մտածելով որ համեմատաբար պզտիկ նաւակի մը մէջ անծանօթ ծովերու մէջ որչափ վտանգաւոր կրնար լինել հարիւր յիսուն մղոնի ուղևորութիւն մը։ Եթէ մի անգամ նաւակը բաց ծովը մտնելէ ետև՝ Թափոր կղզւոյն հասնելու անհնարութիւն գտնէր և Լինքոլն կղզին ալ չկարենար դառնալ՝ ինչ պիտի լինէր Խաղաղականին մէջ՝ ուր միշտ անպակաս են չարագուշակ դէպքեր։

Կիւրոս Սմիթ ստէպ Պէնքրոֆի հետ կ'խօսակցէր այս խնդրոյն վրայ, և կ'դիտէր որ նաւաստին յամառեալ կ'մնար այս ուղևորութեան այլանդակ խորհուրդը կատարելու, յամառութիւն մը որու հետևանքը թերևս չէր գուշակեր նա։

«Բայց վերջապէս, ըսաւ անոր օրին մէկը չափագէտը, մտածէ, բարեկամդ իմ, որ Լինքոլն կղզին դու ամենէ շատ գովեցիր, դու ըսիր որ եթէ անկից ելնելու ստիպուիս շատ պիտի վշտանաս, և հիմակ ամենէն առաջ հեռանալ ուզողը դու ես։

— Միայն մի քանի օրուան համար կ'ուզեմ հեռանալ, պատասխանեց Պէնքրոֆ, միայն մի քանի օրուան համար, Պարոն Կիւրոս։ Միայն երթալ գալու չափ ժամանակ կ'ուզեմ որ տեսնեմ թէ ինչ է այն կղզեակը։

— Բայց Լինքոլն կղզւոյն մօտ արժէք մը չունի։

— Արդէն ստոյգ եմ այդ մասին։

— Ուրեմն ինչու համար կ'ուզես այդ վտանգալի ճամբորդութիւնն ընել։

— Հասկընալու համար թէ ինչ կայ չկայ Թափոր կղզին։

— Բայց բան մը չկայ. բան մը չկրնար անցնիլ։

— Ո՞վ գիտէ։

— Հապա թէ որ փոթորիկի մը բռնուիս։

— Գարնան մէջ փոթորիկի վախ չկայ, պատասխանեց Պէնքրոֆ։ Բայց, Պարոն Կիւրոս, որովհետև ամեն բան նախատեսել պէտք է, հրաման պիտի խնդրեմ քեզմէ որ միայն Հարպէրդն առնեմ ինձի հետ այս ճամբորդութեան առեն։

— Պէնքրոֆ, պատասխանեց չափագէտը ձեռքը նաւաստիին ուսին վրայ դնելով, եթէ քեզ և այն պատանւոյն, որ դիպուածով մեր որդին եղաւ, դժբաղդութիւն մը պատահի, միթէ կարծես թէ պիտի կարենանք մխիթարուիլ։

— Պարոն Կիւրոս, պատասխանեց Պէնքրոֆ անդրդուելի վստահութեամբ մը, այդ ցաւը քեզի չպիտի պատճառենք։ Դարձեալ պիտի խօսինք այս ուղևորութեան վրայ երբոր ժամանակը գայ։ Անկէ զատ՝ կ'երևակայեմ որ՝ երբոր մեր նաւակը լաւ մը պատրաստուած տեսնես, երբոր տեսնես թէ ինչպէս կ'շարժի ծովու վրայ, երբոր մեր կղզւոյն շրջանն ընենք — վասն զի այդ շրջանը միասին պիտի ընենք — կ'երևակայեմ ըսի, որ մեկնելու համար չպիտի վարանիս հրաման տալ ինձ։ Կ'հաւատամ որ այս նաւակդ հրաշակերտ մը պիտի լինի։

— Գէթ մեր նաւակն ըսէ, Պէնքրոֆ» պատասխանեց չափագէտը, պահ մը արամտութիւնը ցրուելով։ Այսպէս լմնցաւ խօսակցութիւնը վերջէն նորէն սկսելու համար, առանց համոզելու ոչ նաւաստին և ոչ չափագէտը։

Յունիս ամսուն վերջերն առաջին անգամ սկսաւ ձիւն վազել։ Առաջուց զոմին մէջ առատ պարէն դրուած լինելով՝ գաղթականները պէտք չտեսան ամեն օր անդ կնալու, այլ որոշուեցաւ որ միայն շաբաթն անգամ մ'երթան։

Նորէն լարեցին ծուղակներն և Կիւրոս Սմիթին շինած կոր-ծիքը փորձեցին։ Զկնատամները սառոյցէ ամանի մէջ փակուած և ճարպէ խիտ խաւով մը ծածկուած՝ անտառին ծայրը դրին, այն տեղը ուսկից կենդանիները սովորաբար կ'անցնէին լճակը գնալու համար։

Չափազանց շատ գոհ եղաւ որ այս գիւտը բոլորովին յաջող գնաց։ Տասն երկու հատ աղուէս, քանի մը վարազ և մինչև անգամ յովազ մը բռնուեցան և այս կենդանիները մեռած գտան որոց ստամոքսը լարուած ձկնափշներէն ծակուած էին։

Այս տեղ պէտք է յիշել այն առաջին փորձն որ ըրին գաղ-թականներն իրենց նմաններուն հետ հաղորդակցելու համար։

Արդէն Գետէոն Սբիլէդ շատ անգամ խորհեր էր թուղթ մը գրելով շիշի մը մէջ դնել և ծովը նետել, յուսալով որ յոր-ձանքը մարդաբնակ տեղ մը կրնար քշել զայն, կամ այն թուղթն աղաւնիներու յանձնել։ Բայց ինչպէս կարելի էր հաստատապէս յուսալ որ աղաւնի կամ շիշ այնպիսի հեռաւորութենէ մ'անց-նին որով կղզին ամէն ցամաքէ կը զատուէր և հազար երկու հա-րիւր մղոն էր։ Յիմարութիւն էր այսպիսի բանի մը յուսալ։

Բայց յունիսի 30ին՝ բաւական դժուարութեամբ Հարպէրդ սպի-տակահաւ (albatros) մը բռներ էր, հրացանով անոր թաթը թե-թև մը վիրաւորելով։ Փառաւոր թռչուն մ'էր սրաթռիչ, որու հովանի թևերուն տասն ոտք կը չափուին և որ Խաղաղականին պէս լայնարձակ ծովերէ կրնայ անցնիլ։

Հարպէրդ կ'փափաքէր պահել այս շքեղ թռչունը, որու վէր-քը շուտ մը բժշկուեցաւ և զոր ընտելացընելու միտք ունէր, բայց Գետէոն Սբիլէդ հասկըցուց անոր որ այս առիթը պէտք չէր ձեռքէ հանել որպէս զի այս թռչունով հաղորդակցին Խաղա-ղականի երկիրներու հետ, և Հարպէրդ ստիպուեցաւ հաւանիլ, վասն զի եթէ սպիտակահաւը մարդաբնակ տեղէ մ'եկած է, ան-շուշտ պիտի վերադառնար երբոր ազատութիւնը գտնէր։

Իրօք՝ Գետէոն Սբիլէդ, որու վրայ երբեմն տարեգրի նշանները կ'երևէին, խնդալէն այս առթէն օգուտ քաղել կ'ուզէր որպէս

զի՝ ըստ գիտուածոյ՝ հրապուրելի յօդուած մ'արձակէ Լինքօլն կղզւոյն գաղթականներուն արկածները պատմելով։ Ինչ յաջո-ղութիւն պիտի ստանար Նիւ-Եօրք Հէրալտի նախամեծար թղթա-կցութիւն պիտի ստանար...

Հետևապէս Գետէոն Սբիլէդ համառօտ յօդուած մը խմբա-գրեց և խէժապատ հաստ կտաւէ պարկի մը մէջ դրաւ, յատկա-պէս խնդրելով՝ որ զայն գտնողը, Նիւ-Եօրք Հէրալտի գրատունը հասցընէ։ Այս պզտի պարկը սպիտակահաւին վզէն կապից և չէ թէ թաթէն, վասն զի այս թռչունները սովոր են ծովուն երեսը հե-նալու, ապա՝ այս սրարշաւ օդային թղթատարն արձակեցին, և գաղթականները բաւական այլայլութիւն զգացին՝ երբ անոր ան-հետ լինիլը տեսան արևմտեան ամպերուն մէջ։

«Այսպէս ո՞ւր կ'երթայ, հարցուց Բէնքրօֆ։

— Դէպ 'ի Նոր-Զելանտա, պատասխանեց Հարպէրդ։

— Բարի ճամբորդութիւն», գոչեց նաւորդը, որ այս տեսակ թղթակցութենէ մեծ արդիւնք մը չէր սպասեր։

Ձմեռ գալով՝ նորէն սկսան Քարեայ-Պալատին մէջ աշխա-տիլ. հագուստները նորոգեցին, այլ և այլ նոր բաներ շինեցին, և յատկապէս նաւակին համար առագաստներ, զոր օդապարիկին անսպառելի ծածկոյթին մէջէն առնլով ձևեցին...։

Յուլիս ամսուն շատ ծանր եղան ցուրտերը, բայց ոչ փայտ խնայուեցաւ և ոչ ածուխ։ Կիւրոս Սմիթ մեծ սրահին մէջ երկրորդ վառարան մ'ալ դետեղեր էր և ահա այն տեղ կ'անցընէին եր-կար գիշերները։ Աշխատելու ատեն կ'խօսակցէին, երբոր ձեռքե-րը գործ չըլլէր կ'կարդային և այսպէս օգտաւէտ կերպով կ'անցնէր ժամանակն ամենուն համար։

Գաղթականներուն համար ճշմարիտ վայելք մ'էր երբ այս սրահէն որ մոմերով լուսաւորուած, հանքածուխով տաքցած էր, երբ կաղդուրիչ ճաշ մ'ընելէն և շամբուկի սուրճը խմելէն ետև մինչև ծխափողներէն հոտաւէտ մուխը կ'տարածուէր, կը

լսէին փոթորիկն որ դուրսը կ'մռնչէր։ Ինքզինքնին բոլորովին երջանիկ պիտի համարէին, եթէ կարելի է երջանիկ լինիլ երբ մարդ իր նմաններէն հեռու է ու անհաղորդ։ Միշտ իրենց հայրենեաց վրայ կ'խօսակցէին, կ'խօսէին իրենց ձգած բարեկամներուն և ամերիկեան հասարակապետութեան մեծութեան վրայ որու ազդեցութիւնը շարունակ պիտի աւելնար անշուշտ, և Կիւրոս Զմիթ որ Միութեան գործերուն մէջ շատ մտած էր, իր ունկնդիրները կ'հրապուրէր այլ և այլ պատմութիւններ, իր տեսութիւններն ու գուշակութիւնները պատմելով։

Օր մը խօսակցութեան կարգն այնպէս բերաւ որ Գեդէոն Սբիլէդ անոր ըսաւ.

«Բայց վերջապէս, սիրելիդ իմ Կիւրոս, բոլոր այս ճարտարական և առևտրական շարժումն՝ որու համար կ'ըսես թէ անդուլ պիտի յառաջանայ, միթէ վաղ կամ անագան բոլորովին կայ առնելու վտանգին չի՞ դիմեր։

— Կա՞յ առնու, և որու՞ ձեռօք։

— Ճիշտ այն ածուխին պակսելովը, զոր ճշդիւ ամենէն թանկագին հանքը կրնայ կոչուիլ։

— Այո, ամենէ թանկագինը, ճիշտ է, պատասխանեց ճարտագէտը, և կարծես թէ բնութիւնն ալ ուզած լինի հաստատել որ այդպէս է, ադամանդը շինելով, որ պարզապէս պալած զուտ ածուխ է։

— Անտարակոյս չես ուզեր ըսել, Պարոն Կիւրոս, պատասխանեց Բէնքրօֆ, որ հանքածուխի տեղ ադամանդ պիտի վառեն կաթսաներու վառարաններու մէջ։

— Ո՛չ, բարեկամ, պատասխանեց Կիւրոս Զմիթ։

— Սակայն կ'պնդեմ, վրայ բերաւ Գեդէոն Սբիլէդ, թէ չես ուրանար որ ածուխն օրին մէկը բոլորովին պիտի սպառի։

— Ո՛հ, դեռ անբաւ խաւեր կան ածուխի, և հարիւր հազար գործաւորներ, որ ամեն տարի հարիւր միլիոն կենդինար հանքածուխ կ'հանեն գետնէն, դեռ հատցընելու համար շատ ժամանակի պէտք ունին։

— Բայց քանի որ հանքածուխն երթալով աւելի շատ կ'սպառի, պատասխանեց Գեդէոն Սբիլէդ, դիւրին է գուշակել որ այն հարիւր հազար գործաւորներն երկու հարիւր հազար պիտի լինին և կրկնապատիկ ածուխ պիտի հանեն։

— Անտարակոյս. բայց Եւրոպայի հանքածուխներէ ետք՝ որոց աւելի խորերը մտնելու համար նոր մեքենաներ պիտի հնարուին անշուշտ, Ամերիկայի և Աւստրալիայի բովերը կան որ դեռ ևս յօգուտ ճարտարութեան շատ քարածուխ պիտի հայթայթեն երկար ժամանակի համար։

— Որչա՞փ ժամանակի համար, հարցուց թղթակիցը։

— Գէթ երկու հարիւր յիսուն կամ երեք հարիւր տարի։

— Մեզի համար վախ չկայ, պատասխանեց Բէնքրօֆ, այլ մեր թոռանց թոռներուն համար։

— Այն ատեն ուրիշ բան պիտի գտնեն, ըսաւ Հարպէրդ։

— Պէտք է յուսալ, պատասխանեց Գեդէոն Սբիլէդ, վասնզի առանց ածուխի՝ մեքենաներն ալ կ'դադրին, և առանց մեքենայի, երկաթուղիները, շոգենաւերը, գործքը, և ամեն ինչ որ արդի յառաջադիմութիւնը կ'պահանջէ։

— Բայց ի՞նչ պիտի գտնեն, հարցուց Բէնքրօֆ։ Կրնա՞ս երևակայել, Պարոն Կիւրոս։

— Վեր 'ի վերոյ, բարեկամդ իմ։

— Ու ի՞նչ պիտի վառեն մարդիկ քարածուխին տեղ։

— Ջո՛ւր, պատասխանեց Կիւրոս Զմիթ։

— Ջո՛ւր, պոռաց Բէնքրօֆ, ջո՛ւր շոգեկառներն ու վայրաշարժները տաքցընելու համար, ջուր տաքցընելու համար ջո՛ւր։

— Այո՛, բայց ջուրն՝ իր կազմիչ տարրերէն լուծուելով, պատասխանեց Կիւրոս Զմիթ, և այս լուծումն ալ ելեկտրականութեամբ պիտի լինի, որ հզօր ու գործածելի զօրութիւն մը պիտի դառնայ այն ատեն, վասնզի ամեն մեծ գիւտերը, անքացատրելի օրինօք, կարծես թէ նոյն միջոցին կ'համաձայնին և իրարու կ'ամբողջանան։ Այո՛, բարեկամներս, կարծեմ թէ օր մը իբրև այրելի նիւթ պիտի գործածուի ջուրը, թէ ջրածինն ա-

թթուածինն որ զայն կ՚բաղադրեն, առանձին կամ միասին գործածուելով անսպառելի ջերմութեան և լուսոյ աղբիւր մը պիտի ճարեն և այնքան զօրաւոր որ քարածուխը չկրնար ունենալ։ Օր մը՝ շոգենաւերու մթերանոցներն (soute) և վայրաշարժներու ամբարները (tender) քարածուխի տեղ՝ այս երկու ճնշեալ կազերով պիտի լեցուին, որ հնոցներուն մէջ ջերմական ահագին զօրութեամբ մը պիտի վառին։ Այսպէս բնաւ վախնալու բան մը չկայ։ Որչափ ատեն որ այս երկիրս մարդ գտնուի, իր բնակիչներուն պիտոյքը պիտի լեցընէ, և երբէք ոչ ջերմութենէ և ոչ լոյսէ պիտի զրկուին, ինչպէս որ պիտի չզրկուին բուսային, հանքային կամ կենդանական արտադրութիւններէ։ Ուստի ես կարծեմ թէ երբ քարածուխի բովերը հատնին, ջուր պիտի վառեն և ջրով պիտի տաքնան մարդիկ։ Ապագային քարածուխը ջուրն է։

— Կ՚փափաքէի տեսնել այդ բանը, ըսաւ նաւորդը։

— Շատ կանուխ արթնցար, Բէնքրոֆ» պատասխանեց Նապ, որ այս խօսքն ըսելով միայն խօսակցութեան մասնակից եղաւ։

Սակայն Նապին խօսքերը չեղան խօսակցութեան վերջ տուողը, այլ Թօփին հաչումները, որ նորէն սկսան լսելի լինիլ այն տարօրինակ հնչումով, որ չափագիտին ուշադրութիւնն արդէն գրաւեր էր։ Նոյն միջոցին Թօփ՝ ջրհորին բերնին բոլորտիքը դառնալու կ՚սկսէր, ջրհորն որ ներքին քարափոսին ծայրն էր։

«Ի՞նչ ունի դարձեալ Թօփ որ այսպէս նորէն սկսաւ հաչելու, հարցուց Բէնքրոֆ։

— Եւ Ժիւբն ալ այսպէս խանչելու կ՚սկսի» յարեց Հարպէրդ։

Եւ արդարև՝ Օրանն՝ շան միանալով՝ վրդովման բացայայտ նշաններ կ՚տար, և՝ զարմանալին այս էր, որ երկու կենդանիներն աւելի անհանգիստ կ՚երևէին քան զայրացած։

«Բացայայտ է, ըսաւ Գէդէոն Սբիլէդ, որ այս ջրհորը ծովուն հետ հաղորդակցութիւն ունի և ծովային կենդանի մ՚ատեն ատեն անոր յատակը կ՚գայ շունչ առնելու համար։

— Անշուշտ, պատասխանեց նաւորդը, և չենք կարող տալ այս բանիս ուրիշ բացատրութիւն մը.... Հապա, լռութի՜ւն,

Թօփ, յարեց Բէնքրոֆ դէպ 'ի շունը դառնալով. դուն ալ, Ժիւբ, ձեննակդ քաշուէ՛ ։»

Կապիկն ու շունը լռեցին։ Ժիւբ պառկելու գնաց, բայց Թօփ սրահը կեցաւ, և բոլոր իրկունն խուլ խանչիններ արձակեց։

Այնուհետև այս դիպուածին վրայ խօսք չըրին, թէև այս բանս չափագիտին ճակատին վրայ տխրութեան նշան մը ձգեց։

Յուլիս ամսուան վերջերը՝ երբեմն անձրև և երբեմն ցուրտ ունեցան։ Օդին աստիճանն նախորդ տարուան չափ չիջաւ և իր ամենագոյն կէտն՝ Ֆարէնհայդի օդաչափին վրայ՝ ութ աստիճանէն վեր չելաւ (13°, 33 հարիւրամաս. զրօյէն վար)։ Բայց եթէ մէկ կողմէ այս ձմեռ նուազ ցրտագին եղաւ, միւս կողմէ հողմայոյզ փոթորիկներն աւելի յաճախ տեսնուեցան։ Դարձեալ ծովային բուռն մրրիկներ պատահելով քանի մ՚անգամ Կարկառները փլելու սպառնացան։ Կարծես թէ ներքնածովային սասանումներ ծովը վեր հանելով այնպիսի ահաւոր կոհակներ յառաջ կ՚բերէին որ կատաղօրէն Քարեայ-Պալատին պատուարին դէմ կ՚զարնէին։

Գաղթականներն՝ իրենց պատուհաններէ ծռած՝ ջրերու այս ահագին կոյտերը դիտելով կ՚զմայլէին Ովկիանու այս անզօր կատաղութեան փառաւոր տեսարանին վրայ։ Սպիտակափայլ ալիքներ փրփրադէզ կ՚ոստոստէին, անհետ կ՚լինէր աւազափն այս զայրալից ողողման ներքև, և Քարեայ-Պալատին պատուարը կարծես թէ ծովուն մէջէն կ՚բարձրանար, որու կոհակն (embrun) հարիւր ոտք բարձր կ՚ելնէր։

Այս փոթորիկներուն միջոցին՝ դժուարին էր կղզւոյն ճամբաներն ելնել քալել, մինչև անգամ վտանգաւոր, վասն զի հովահար ծառեր ստէպ գետինը կ՚տապալէին։ Սակայն շաբաթ մը չէր անցներ որ գաղթականները գոմին այցի չելնէին։ Բարեբաղդօրէն այս շրջապատն՝ որ Ֆրանքլէն լերին հարաւ-արևելեան քարամըթէն կ՚պատսպարուէր՝ ուրականին բուռն յարձակումներէն մեծ վնաս չկրեց, և անոր ծառերն, կայաններն ու պատնէշն անւեր մնացին։

Սակայն Մեծ-Տեսքին սարահարթին վրայ գտնուած և հետևա-

պէս արեւելեան հովին հարուածներուն ենթակայ եղող հաւնոցը բաւական մեծ աւերումներ կրեց։ Աղաւնոցին առաստաղն երկու անգամ բացուեցաւ, նոյնպէս մեծ դուռն ընկաւ։ Այս ամեն բաները պէտք էր նորէն շինել աւելի հաստատուն կերպով, վասն զի յայտնի կ'երեւէր որ Լինքօլն կղզին Խաղաղականին ամենէն վտանգաւոր կողմերը կ'գտնուէր։ Արդարեւ այնպէս կ'թուէր որ ընդարձակ ջրապտոյտ փոթորիկներու (cyclone) կեդրոնն էր, որ զայն կ'մտրակէին ինչպէս որ շոնչանը կ'մտրակին։ Միայն այս պարագայիս մէջ շոնչանն անշարժ էր եւ մտրակն էր որ կ'դառնար։

Օգոստոս ամսուն առաջին շաբաթուն մէջ՝ քիչ քիչ դադրեցան մրրկայոյզ հովերն եւ մթնոլորտը նորէն գտաւ այն հանդարտութիւնն զոր կարծես թէ ընդ միշտ կորուսեր էր։ Այս հանդարտութեան հետ օդին աստիճանն ալ իջաւ, ցուրտն աւելի կծու եղաւ եւ ջերմաչափական սիւնակն՝ ըստ Ֆարէնհայթի ութ աստիճան զրօէն վար ընկաւ (22° հարիւրամաս. սառուցէն վար)։

Օգոստոսի 3ին՝ կղզւոյն հարաւ-արեւելեան դին, Տադօրնի ճահիճին կողմն արշաւանք մ'ըրին, ինչպէս որ քանի մ'օրէ 'ի վեր որոշեր էին գաղթականները։ Որսորդները կ'յուսային որ ջրային երէներ պիտի գտնեն, որ իրենց ձմրային բնակարանն այն կողմը կ'հաստատէին։ Վայրի բադեր, պիլէ (pilet), մրտիմն, ջրակտցար, [illegible] (grèbe) առատ էին այն կողմերն եւ որոշուեցաւ օր մ'ամբողջ այս որսորդութեամբ անցընել։

Ոչ միայն Գեդէոն Սբիլէթ եւ Հարպէրթ, այլ նաեւ Բէնքրօֆ եւ Նապ այս արշաւանքին մասնակից եղան։ Միայն Կիւրոս Սմիթ առարկեց թէ գործ ունի, անոնց հետ չգնաց եւ Քարեայ-Պալատը մնաց։

Ուստի որսորդներն Օդապարիկի նաւահանգստին ճամբան բռնելով ելան ճահիճը գնալու, եւ խօսք առին իրիկուան դէմ դառնալ։ Թօփ ու Ժիւբ անոնց կ'ընկերանային։ Երբոր Մէրսիի կամուրջէն անցան՝ չափագէտը զայն վերցուց եւ վերադարձաւ, միտքը դրեր էր 'ի գործ դնել խորհուրդ մը եւ ասոր համար կ'ուզէր մինակ լինիլ։

Արդ՝ իր խորհուրդն էր մանր քննել այն ներքին ջրհորն, որուն բերանը Քարեայ-Պալատին քարափոսին մէջ կ'բացուէր, եւ որ ծովու հետ կ'հաղորդակցէր, քանի որ առեն մը լճակին ջրերն անկից կ'անցնէին։

Ինչու համար Թօփ այդ ջրհորին բերանը ստէպ կ'դառնար։ Ինչու համար այնպիսի այլանդակ կերպով կ'հաչէր՝ երբ տեսակ մ'անհանգստութեամբ այդ ջրհորին կ'մօտենար։ Ինչու համար Ժիւբ անոր անձկութեան մասնակից լինելով՝ կ'միանար անոր։ Արդեօք այս ջրհորն ծովու հետ ուղղածիգ հաղորդակցութենէ զատ՝ ուրիշ ճիւղեր ունէ՞ր։ Ահա այս կ'ուզէր հասկնալ Կիւրոս Սմիթ, եւ կ'փափաքէր որ նախ ինքն իմանայ։ Ուստի իր ընկերները բացակայ գտնուած միջոցին՝ այս քննութիւնն ընել մտադրեր էր եւ այժմ փնտռած առիթը կ'ներկայէր։

Դիւրին էր իջնել մինչեւ ջրհորին յատակը, չուանէ ելնարանը գործածելով՝ որ վերհանին հաստատուելէն 'ի վեր չէր գործածուեր եւ որուն երկարութիւնը բաւական էր։ Այս միջոցը գործածեց չափագէտը. ելնարանը քաշեց մինչեւ ջրհորին ծակը, որ գրեթէ վեց ոտք տրամագիծ ունէր, եւ վերին ծայրը լաւ մը կապելէն ետեւ՝ միւս ծայրը վար ձգեց։ Յետոյ լապտեր մը վառեց, ըրջնոց (revolver) մ'առաւ, մէջքը խօթեց վաղր մը, եւ սկսաւ առաջին աստիճաններէն վար իջնել։

Ամեն կողմէ որմը շիտակ էր. բայց տեղ տեղ ժայռի ցցուածներ կային եւ այս ցցուածներու միջոցաւ ստուգիւ կարելի էր թեթեւաշարժ մարդու մը մինչեւ ջրհորին բերանն ելնել։

Այս դիտողութիւնն ըրաւ չափագէտը. բայց իր լապտերն այս ցցուածներուն վրայ շրջելով բնաւ նշան մը, կոտրած քար մը չտեսաւ որմէ կարենար հետեւցընել թէ հին կամ նոր ժամանակներս անկից վեր ելնող եղեր է։

Կիւրոս Սմիթ աւելի խորն իջաւ՝ որմին բոլոր կողմերը լուսաւորելով։

Բնաւ կասկած տալու բան մը չտեսաւ։

Երբոր չափագէտը վերջին աստիճաններն իջաւ՝ ջրին երեսն

զգաց, որ բոլորովին հանդարտ էր։ Ոչ անոր երեսն ոչ ջրհորին ուրիշ մէկ մասին վրայ՝ կողմնակի քարափոս մը չէր բացուեր այնպէս որ քարակոյտին ներսերը ճիւղաւորէր։ Պատը՝ զոր Կիւրոս Սմիթ իր վաղըին կոթովը զարկաւ զուտ ձայն կ'հանէր։ Խիտ կրանիդէ քար մ'էր, որու մէջէն կենդանի արարած մը չէր կրնար ճամբայ մը բանալ։ Ջրհորին յատակը հասնելու և ասկէ անոր բերանն ելնելու համար՝ առ հարկի այս անցքէն անցնիլ պէտք էր, որ միշտ ջրային էր, որ զայն հաղորդակցութեան մէջ կը դնէր ծովուն հետ ատաղափին ժայռուտ ներքնայարկին միջոցաւ, և այս ալ միայն ծովային կենդանիներու կարելի էր։ Բայց թէ մինչև ուր կ'հասնէր այս անցքն, ծովեզրին որ կողմը կ'յանգէր և ալիքներէն որչափ խորունկ էր, այնպիսի խնդիր մ'էր որու լուծումը գտնել դժուարին կ'երևէր։

Ուստի Կիւրոս Սմիթ՝ այս քննութիւնն աւարտելէն ետև՝ վեր ելաւ, ելնարանը քաշեց, ջրհորին բերանը գոցեց և վերադարձաւ, մտախոհ, Գարեայ-Պալատին մեծ սրահը, և ըսաւ իւրովի.

«Բան մը չտեսայ, և սակայն բան մը կայ։»

ԳԼՈՒԽ ԺԳ.

Նաւուն կազմածները — Աղուեսներու յարձակում մը — Ջիւբ կ'վիրաւորուի — Ջիւբ կ'խնամուի — Ջիւբ կ'բժշկուի — Նաւակին շինութիւնը կ'լմննայ — Բէնքրոֆի յաղթանակը — Պոնաւենդուրէ — Առաջին փորձ կղզւոյն հարաւակողմը — Անակնկալելի յեփոկար մը.

Նոյն իրկունն իսկ որսորդները դարձան՝ առատ որս ընելով. բեռնաւորուած էին երէով և ամեն մէկը չորս մարդու կրելիք բեռ շալկած էր։ Թոփ վայրի բադերու մանեակ մ'ունէր վզին բո-

լորտիքը, և ծխուք ջրակոցարի գօտիներ իր մարմնոյն բոլորտիքը։

«Աւասիկ, տէր իմ, ըսաւ Նապ, աւասիկ մեր ժամանակն անցընելու համար լաւ զբաղմունք մը։ Պահծու ախորժելի պաշար մը պիտի ունենանք, բանդակ, կարկանդակ։ Բայց պէտք է որ ձեռք մէկն ինձ օգնէ։ Յոյսս քու վրադ է, Բէնքրոֆ։

— Ոչ, Նապ, պատասխանեց նաւորդը։ Ստիպուած եմ նաւս կազմակերպել, և պէտք է որ իմ ծառայութեանս վրայ չյուսաս։

— Հապա դու, Պարոն Հարպէրդ։

— Ես ալ, Նապ, պէտք է որ վաղը գոմն երթամ, պատասխանեց պատանին։

— Ուրեմն դու պիտի աջակցիս ինձ, Պարոն Սբիլէդ։

— Քեզ հաճելի լինելու համար կ'հաւանիմ, Նապ, պատասխանեց թղթակիցը. բայց կանխաւ իմաց կ'տամ քեզ որ եթէ ամբարանոցդ ինձ ցոյց տաս ամենուն պիտի յայտնեմ։

— Ինչպէս որ կամիս, Պարոն Սբիլէդ, պատասխանեց Նապ, ինչպէս որ կամիս։»

Իսկ ահա այսպէս հետևեալ օրը Գետէոն Սբիլէդ, Նապին օգնականը լինելով՝ իր խոհանոցը գնաց նստաւ։ Բայց նախ՝ չափագէտն առջի իրկուն ըրած քննութեան արդիւնքն անոր հաղորդեր էր, և այս մասին՝ թղթակիցը Կիւրոս Սմիթին համամիտ երևեցաւ, այսինքն թէ՝ որչափ որ բան մը չէր գտած, դարձեալ երևան հանելու միշտ գաղտնիք մը կար։

Շաբաթ մ'ևս ցրտերը շարունակեցին, և գաղթականները Գարեայ-Պալատէն դուրս չելան, եթէ ոչ հաւնոցին պէտք եղած խնամքը տանելու համար։ Գարեայ բնակարանն անուշ հոտեր կը հանէր Նապի և թղթակցին եփած աղուոր ուտելիքներէն, բայց որսորդութեան բոլոր արդիւնքը բանդակ չըրին, և որովհետև երէի միսն՝ այն ծանր ցուրտին ժամանակ, շատ աղէկ կրնար պահուիլ, վայրի բադեր և ուրիշ հաւեր թարմ եփելով կերան և ամենքն ըսին թէ գերազանց են ուրիշ բոլոր ջրային կենդանիներէն։

Նոյն շաբաթը՝ Բէնքրոֆ՝ Հարպէրդի օգնութեամբ, որ առագաստի ասեղը ճարտարութեամբ կ'գործածէր, այնքան եռանդով աշխատեցաւ, որ նաւակին առագաստները լմնցան։ Կանեփի չուան պակաս չէր, օդապարիկին ծածկոյթէն հանուած կազմակերպութեան (grécment) շնորհիւ։ Պարանները ու չուանները պատուական նուրբ լարերէ շինուեցան, որմէ մեծ օգուտ քաղեց նաւորդը։ Ամուր եզրալարեր (laringue) գործածեցին առագաստներուն շուրջը կարելու, և դեռ պէտք էր բարձրալարերն* (drisse), կողմնալարերն (hauban), ոտնաձիգները (écoute) շինել։ Իսկ ճախարակի կազմին (pouliage) գալով Կիւրոս Սմիթ՝ Բէնքրոֆի խորհրդին հետևելով պէտք եղած լիսեռնիկները շինեց արդէն հաստատած ճախարակին միջոցաւ։

Այսպէս նաւակը չաւարտած՝ անոր կազմակերպութը պատրաստուեր էր։ Բէնքրոֆ կապոյտ, կարմիր ու ճերմակ դրօշակ մ'ալ շինեց և այս գոյներն տեսակ մը գունատու տունկերէ առեր էր, որ շատ առատ էին կղզւոյն մէջ։ Միայն՝ Միացեալ-Նահանգաց երսուն եօթ յայտարար աստղերուն, որ ամերիկեան նաւերուն վերայ կ'շողան, նաւորդն երսուն ութերորդ մ'ալ աւելցուցեր էր, այսինքն՝ Լինքոլն-Նահանգին աստղը, վասն զի մեծ հասարակապետութեան միացած կ'համարէր արդէն իր կղզին։

«Սրտովին միացած է, կ'ըսէր նա, եթէ տակաւին իրապէս չէ։»

Բայց առ այժմ այդ դրօշակը Քարեայ-Պալատին կեդրոնական պատուհանին վրայ պարզեցին, և գաղթականներն երեք անգամ ցնծութեան աղաղակներ արձակելով զայն բարևեցին։

Սակայն ձմեռը վերջանալու մօտ էր, և կ'երևէր թէ այս երկրորդ ձմեռն առանց ծանր պատահարի պիտի անցնէր, երբ օգոստոսի 11ի լրկուն, Մեծ-Տեսքին սարահարթն կատարեալ աւերման վտանգին մէջ ընկաւ։

Ամբողջ օրն աշխատելէն ետև՝ գաղթականները խորունկ կը

*Թարգմանութեանս ընթացքին մէջ՝ այն բառերն որ ֆրանսերէնի առջև դրուած են նոր գրով՝ թարգմանչին բաղադրած կամ հնարածներն են։

քնանային, երբոր՝ առաւօտեան ժամը չորսին՝ Թօփին հաջումներէն յանկարծ արթնցան։

Այս անգամ ջրհորին բերնին մօտ չէր հաջեր շունը, այլ դրան շեմին քով, և անոր վրայ կ'նետուէր որպէս թէ զայն խորտակել կ'ուզէր։ Իր կողմէ՝ Ժիւբ ալ սուր ճիչեր կ'հանէր։

«Ի՞նչ կայ, Թօփ» պոռաց Նապ, որ ամենէն առաջ արթնցաւ։

Բայց շունն աւելի կատաղութեամբ հաջել սկսաւ։

«Ի՞նչ է այն» հարցուց Կիւրոս Սմիթ։

Եւ ամէնքը՝ արտորնօք հագուելով սենեկին պատուհանները վազեցին ու բացին։

Իրենց աչքին առջև ձիւնի խաւ մը կ'պարզուէր որ՝ այն շատ մութ գիշերն՝ հազիւ ճերմակ կ'երևէր։ Գաղթականները չտեսան բան մը, բայց այլանդակ հաջումներ լսեցին դուրսը մութին։ Յայտնի էր որ ծովեզրն արշաւեր էին մի շատ կենդանիներ, զոր գաղթականները չէին կարող նշմարել։

«Ի՞նչ են ասոնք, պոռաց Բէնքրոֆ։

— Գայլեր, յովազներ կամ կապիկներ, պատասխանեց Նապ։

— Թշուառականնե՛ր, բայց եթէ սարահարթէն վեր ելնե՛ն, ըսաւ թղթակիցը։

— Հապա մեր հաւնո՞ցը, պոռաց Հարպէրդ, մեր մշակութիւնները...։

— Բայց ուսկից անցան, հարցուց Բէնքրոֆ։

— Կ'երևի թէ առապարին փոքր կամրջէն անցած են, պատասխանեց չափագէտը. անդէ մէկը զայն գոցելու մոռցած պիտի ըլլի։

— Իրաւ է, վրայ բերաւ Սբիլէդ, կ'յիշեմ որ բաց թողուցի զայն...։

— Ի՛նչ աղուոր բան ըրեր ես, Պարոն Սբիլէդ, գոչեց Նաւորդը։

— Եղածն եղած է, պատասխանեց Կիւրոս Սմիթ. հիմակ նայինք թէ ինչ պէտք է ընել։»

Կիւրոս Սմիթի և իր ընկերներու մէջ այս հարց ու պատասխաններն եղան։ Բացայայտ էր որ փոքր կամրջէն անցեր էին կենդանիներ, աւազափն արշաւեր էին և կարող էին Մէրսիի ձախ եզրէն վեր ելնելով Մեծ-Տեսքին սարահարթը հասնիլ։ Ուստի պէտք էր անոնցմէ առաջ շուտով հասնիլ և ՚ի հարկին կռուիլ։

«Բայց ինչ տեսակ կենդանիներ են ասոնք» երկրորդ անգամ հարցում ըրին, այն միջոցին որ աւելի ուժգին կ'հաջէին այդ կենդանիները։

Այս հաջումները դող տուին Հարպէրդի, և յիշեց որ Կարմիր-Վտակին աղբիւրները պտըտելու ատենն առաջին անգամ այդ հաջումները լսեր էր։

«Աղուէսներ են ասոնք, ըսաւ նա։

— Օ՛ն առաջ» պոռաց նաւաստին։

Եւ ամէնքը՝ տապարներ, ատրճանակներ ու չըլմահարներ առնելով զինուեցան, վերհանին կողովին մէջ մտան և աւազափին վրայ իջան։

Այս աղուէսներն (culpeux) վտանգաւոր կենդանիներ են երբ բազմաթիւ և անօթութենէ կատղած են։ Սակայն այս խմբին մէջ նետուելու գաղթականները չվարանեցան, և իրենց շրջահարի առաջին հարուածներն՝ մութին արագ փայլակներ արձակելով առաջին յարձակողներն ետ մղեցին։։

Ամենէ էական կէտն էր արգիլել որ այս աւարառուներն մինչև Մեծ-Տեսքին սարահարթը չհասնին, վասն զի բոլոր մշակուած հողերը, հաւնոցն ոտնակոխ պիտի լինէին և թերևս անդարմանելի աւերումներ, մանաւանդ ցորենի արտին մէջ, անտարակոյս պիտի պատահէին։ Բայց որովհետև Մէրսիի ձախ եզրէն միայն կարելի էր սարահարթն արշաւել, բաւական էր անանցանելի պատնէշ մը կանգնել ծովափին այն մասին վրայ որ գետին ու կրանիդէ պատուարին մէջ կ'գտնուէր։

Ամէնքը հասկըցան վտանգն, և Կիւրոս Սմիթին մէկ հրամանին վրայ որոշեալ տեղը հասան, մինչդեռ աղուէսներուն խումբը մութին կ'յառաջէր։

Այսպէս Կիւրոս Սմիթ, Գեդէոն Սբիլէթ, Հարպէրդ, Բէնքրոֆ և Նապ այնպիսի դիրք մը բռնեցին որ անանցանելի գիծ մը յօրինեցին։ Թօփ՝ իր ահագին կզակները բացած՝ գաղթականներէն առաջ կ'քալէր, և իր ետևէն կ'երթար Ծիւբ, վարակոտ գաւազանով մը, զոր լախտի պէս կ'շարժէր։

Սաստիկ մութ գիշեր մ'էր։ Միայն հրացաններուն լուսովն՝ որոյ ամեն մէկը մահատու գնդակներ կ'սեղար անշուշտ, կարող էին յարձակողները տեսնել, որ գոնէ հարիւրի չափ պիտի լինէին, և որոց աչքերը խարոյկի պէս կ'շողային։

«Պէտք չէ որ անցնին, գոչեց Բէնքրոֆ։

— Պիտի չանցնին» պատասխանեց չափազէտը։

Բայց եթէ չանցան, ըսել չէ թէ անցնելու փորձ մը չըրին։ Վերջին աղուէսներու կարգն առաջիններն յառաջ կ'քշէին, և շրջահարներով ու տապարներով անդուլ կռիւ մը սկսաւ։ Անշուշտ մի շատ կենդանիներու դիակներ հողին վրայ ընկած պիտի լինէին, բայց խումբը կարծես թէ չէր հատներ այլ շարունակ կ'աւելնար աւազափին պզտիկ կամրջէն անցնելով։

Քիչ ատենէն՝ գաղթականներն ստիպուեցան դէմ առ դէմ կռուիլ, և քանի մը վէրք առին, թէև բարեբաղդօրէն թեթև էին։ Հարպէրդ շրջահարի մը հարուածով Նապն ազատեր էր աղուէսէ մ'որ անոր կռնակէն փաթթուեր էր ինձի մը պէս։ Թօփ ճշմարիտ կատաղութեամբ կ'մաքառէր՝ աղուէսներուն վիզը ցատկելով և շուտ մը խեղդելով։ Ծիւբ՝ իր գաւազանը ձեռքը, շարունակ կ'ափէր, և պարապ տեղը կ'ջանային զանի ետևի կողմը ղրկել։

Ընտարակոյս Ծիւբ մութին տեսնելու կարողութիւն ունենալուն՝ միշտ կռուին ամենէ վտանգաւոր տեղը կ'գտնուէր և ատեն ատեն սուր շչիւն մը կ'արձակէր, որ իր կողմէ յետին խնդութեան նշան մ'էր։ Պահ մ'այնքան հեռու գնաց, որ շրջահարի մը հարուածին նշոյլով տեսան գաղթականներն որ վեց հատ խոշոր աղուէսներէ շրջապատուած Ծիւբ զարմանալի պաղութեամբ ամենուն դէմ ճակատ կ'բռնէր։

Սակայն վերջապէս այս կղզւոյն գաղթականները յաղթական պիտի ելնէին, երկու երկար ժամեր դիմադրելէն ետև։ Անշուշտ արշալուսոյ առաջին նշոյլներն ստիպեցին յարձակողներն որ ետ քաշուին, և իրօք՝ դէպ 'ի հիւսիս դառնալով՝ կարող եղան պզտիկ կամրջէն անդին անցնիլ, և Նապ անմիջապէս վազեց կամուրջը վերցուց։

Երբոր արևն ելնելով պատերազմի դաշտը լուսաւորեց՝ գաղթականներն աւազափին վրայ ցրուած յիսունի չափ դիակներ համրեցին։

«Հապա Ժիւբ, գոչեց Բէնքրօֆ։ Ո՞ւր է Ժիւբ։»

Ժիւբ աներևոյթ եղեր էր։ Իր Նապ բարեկամը զինք կանչեց և առաջին անգամն էր որ Ժիւբ իր բարեկամին կոչման չպատասխանեց։

Ամենքն սկսան Ժիւբը փնտռել, վախնալով որ դիակներուն մէջ չգտնեն։ Դիակներն այն տեղէն հեռացուցին, որ իրենց արիւնով ձիւնը կ'ներկէին, և Ժիւբ աղուէսներու կոյտի մը մէջ գտնուեցաւ, որոց խորտակուած ծնօտները, կտրուած քամակները ցոյց կ'տային որ աներկիւղ կենդանիին սոսկալի լախտին տակ ընկեր են։ Խեղճ Ժիւբ դեռ բռներ էր իր խորտակած գաւազանին մէկ կտորն, բայց իր զէնքէն զրկուելով՝ մի շատ աղուէսներու դէմ դնելու անկարող եղեր էր և խորունկ վէրքերով ծածկուած էր իր կուրծքը։

«Դեռ ողջ է, գոչեց Նապ, որ անոր վրայ ծռեցաւ։

— Եւ զայն պիտի ազատենք, պատասխանեց նաւորդը, և իբրև մեզմէ մէկը պիտի խնամենք։»

Կարծես թէ Ժիւբ կ'հասկընար, վասն զի Բէնքրօֆի ուսին վըրայ ծռեց գլուխը, որպէս թէ շնորհակալ կ'ուզէր ըլլալ։ Նաւորդն ալ վիրաւորուեր էր, բայց իր՝ ինչպէս նաև իր ընկերներուն վէրքը՝ աննշան էին. վասն զի՝ իր հրացաններուն շնորհիւ՝ գրեթէ միշտ յարձակողները չէին թողեր որ մօտենան։ Ուստի միայն Օրանին վիճակը շատ ծանր էր։

Նապ ու Բէնքրօֆ վերցնելով Ժիւբը մինչև վերհանը տա-

րին, և հազիւ թէ տկար հեծում մ'իր բերնէն հանեց։ Կամաց կամաց Քարեայ-Պալատը հանեցին զայն և անկողնի մը վրայ դրին. յետոյ մեծ խնամօք վէրքը լուացին։ Կ'երևէր թէ էական գործարանի մը վնաս հասած չէր, բայց Ժիւբ՝ արիւն շատ կորուսնելուն՝ տկարացեր էր, և ջերմն բաւական ծանր նշաններով երևան եկաւ։

Վէրքը դարմանելէն ետև՝ Ժիւբը պառկեցուցին, խիստ «Նքոդենի (diète) ենթարկեցին, «Ճիշտ բնական մարդու տրուածին պէս» ըսաւ Նապ, և քանի մը թաս զովարար բուսաջուր խմցուցին, որու նիւթն Քարեայ-Պալատին բուսային դեղարանը հայթայթեց։

Ի սկզբան Ժիւբ անհանդարտ քուն մ'ունեցաւ, բայց իր շնչառութիւնը քիչ քիչ կարգի մտաւ և թող տուին որ կատարեալ հանդարտութեամբ հանգչի։ Ատեն ատեն՝ Թօփ, կրնանք ըսել՝ «մատներուն վրայ քալելով» իր բարեկամին այցի կ'գար և կարծես թէ կ'հաւանէր այն խնամոց որ անոր կ'տրուէր։ Ժիւբին մէկ ձեռքն անկողնէն դուրս կ'կախուէր և Թօփ տրտում դէմքով մը զայն կ'լզէր։

Այն առտու իսկ, դիակները վերցնելու համար եղան, մինչև Խոր-Արևմտակի անտառը քաշեցին և խորունկ փորելով թաղեցին։

Այս յարձակումն, որ այնքան ծանր հետևանք կրնար ունենալ, գաղթականներուն համար դաս մ'եղաւ, և այնուհետև պառկելու չէին երթար մինչև որ իրենցմէ մէկը չելնէր չտեսնէր որ բոլոր կամուրջները վերցուցած են և դրսէն արշաւելու վախ չկար։

Սակայն Ժիւբ՝ քանի մ'օր բաւական երկիւղ պատճառելէն ետև՝ աղէկի դարձաւ։ Իր կազմութիւնը յաղթեց, քիչ քիչ տենդը նուազեցաւ, և Գետէոն Սփիլէթ որ քիչ շատ բժշկութենէ կը հասկընար, ըսաւ որ ալ վտանգ չկար։ Օգոստոսի 16ին Ժիւբ սկսաւ կերակուր ուտել։ Նապ շաքարեայ աղուոր ուտելիք կ'պատրաստէր և հիւանդն մեծ ցանկութեամբ կ'ճաշակէր, վասն զի եթէ սիրուն պակասութիւն մ'ունէր, այն էր՝ թեթև որկրամոլութիւն մը, և Նապ այս պակասութիւնն ուղղելու համար բնաւ հոգ չէր տարած։

«Ի՞նչ ընեմ, կ'ըսէր նա Գեդէոն Սբիլէթին, որ երբեմն Նապը կ'սաստէր որ կապիկը կ'աւրէ, կերակուրէ զատ զուարճութիւն մը չունի այս խեղճ Ժիւբը, և ուրախ եմ որ այս կերպով իր ծառայութիւնները կ'վարձատրեմ։»

Օգոստոսի 21ին, Ժիւբ՝ անկողին մտնելէն տաս օր ետք՝ ոտք ելաւ։ Իր վէրքը գոցուեր էր, և տեսան որ քիչ ատենէն իր սովորական արագաշարժութիւնն ու կորովը պիտի ստանար։ Ամէն նորաբոյժներու (convalescent) պէս իր ախորժակը սարսափելի կերպով բացուեցաւ, և Թղթակիցը թողուց որ ուզածին չափ ուտէ, վասն զի այն բնազդումին կ'վստահէր, որմէ սակաւ բանաւոր էակներ զուրկ են. և որ Օրանն պիտի պահէր որկրամէտութենէ։ Նապ յետին ծայր ուրախ էր տեսնելով որ իր աշակերտին ախորժակը տեղն եկեր էր։

«Կե՛ր, իմ Ժիւբ, կ'ըսէր անոր, և բնաւ մի՛ քաշուիր, ամէն բանէ կե՛ր։ Դու արիւնդ թափեցիր մեզի համար և պէտք է օգնել քեզ որ արիւնդ ստանաս։»

Վերջապէս՝ օգոստոսի 25ին, Նապ իր ընկերներն սկսաւ կանչել։

«Պարո՛ն Կիւրոս, Պարո՛ն Գեդէոն, Պարո՛ն Հարպերդ, Բէնքրո՛ֆ, եկէ՛ք, եկէ՛ք։»

Գաղթականներն՝ որ մեծ սրահին մէջ գումարուեր էին, ոտք ելան Նապին ձայնը լսելով, որ այն միջոցին Ժիւբին յատկացած սենեակն էր։

«Ի՞նչ կայ, հարցուց Թղթակիցը։

— Տեսէ՛ք» պատասխանեց Նապ քահ քահ խնդալով։

Եւ ի՛նչ տեսան։ Վարպետ Ժիւբն, որ հանդարտ ու ծանրագլուխ կ'ծխէր Քարեայ–Պալատին դրան վրայ կզկած թուրքի մը պէս։

«Իմ ծխափողս, գոչեց Բէնքրոֆ, ծխափողս առաւ. ա՛հ, իմ քաջ Ժիւբ, ընծայ կ'ընեմ քեզի. քաշէ՛, բարեկամ, քաշէ՛։»

Եւ Ժիւբ ծանրութեամբ բերնէն թանձր ամպեր կ'հանէր, և կարծես թէ աննման ուրախութիւն ու վայելք կ'զգար։

Կիւրոս Սմիթ այս դիպուածին վրայ զարմանք չյայտնեց, և ընտելացած կապիկներու օրինակը բերաւ, որ սովոր էին ծխախոտ քաշել։

Բայց այն օրէն սկսեալ՝ վարպետ Ժիւբ իր յատուկ ծխափողն ունեցաւ, այս է, նաւորդին հին ծխափողը, զոր սենեկէն կախեցին՝ իր ծխախոտի ամանին մօտ։ Ինք կ'լեցընէր զայն, ինք կրակը կ'դնէր ու կ'վառէր, և ամէնէ երջանիկ քառաձեռնեայ կենդանին կ'երևէր։ Դիւրին է հասկընալ որ ճաշակի այս համաձայնութիւնն աւելի ևս սեղմեց Ժիւբի և Բէնքրոֆի բարեկամութեան կապերն որ արդէն ազնիւ կապիկը պարկեշտ նաւորդին հետ կ'միացընէին։

«Կարելի է մարդ մ'է, կ'ըսէր երբեմն Բէնքրոֆ Նապին։ Արդեօք զարմանալու բան մը պիտի լինի՞ եթէ օր մը սկսի մեզի հետ խօսելու։

— Ճշմարիտը, ես պիտի չզարմանայի. կ'պատասխանէր Նապ։ Աւելի անոր համար կ'զարմանամ որ չխօսիր, վասն զի մինակ խօսքը պակաս է։

— Սակայն ես շատ պիտի զուարճանայի, վրայ կ'բերէր նաւորդն, եթէ օրին մէկն ինձ ըսէր. «Եկուր մեր ծխափողները փոխենք, Բէնքրոֆ։»

— Այո՛, կ'պատասխանէր Նապ։ Ի՛նչ դժբաղդութիւն որ 'ի ծնէ համր է։»

Սեպտեմբեր ամսուն հետ՝ ձմեռը բոլորովին վերջացաւ, և մեծ եռանդով սկսան նորէն գործել։

Նաւակին շինութիւնը շուտ յառաջ գնաց։ Արդէն դրսի շրջանակը դրուած էր և ներսէն տախտակները զամեցին, այնպէս որ փոճակին բոլոր մասերը միանան՝ ջրի շոգիով կակուղցած ատաղձներով որ նաւուն կաղապարին պէտք եղածին չափ յարմարեցան։

Որովհետև փայտը պակաս չէր՝ Բէնքրոֆ չափագիտին առաջարկեց որ փոճակին ներսի դին ջրի դիմացող ատաղձով (vaigrage étanche) կրկնապատէ և այսպէս նաւուն ամրութիւնը կատարելապէս ապահովէ։

Կիւրոս Սմիթ չգիտնալով թէ ապագային մէջ ինչեր կրնային պատահիլ, նաւորդին խորհուրդն ընդունեց և ըսաւ որ կարելի եղածին չափ նաւը հաստատուն ընէ ։

Սեպտեմբերի 15ին մօտ նաւակին ներքին պատրաստն և կամուրջը բոլորովին լմնցան ։ Կարանները կապելու համար՝ խծուծ շինեցին չոր ծովատունկերով (zostère) փաճոկին և կամրջին շրջանակներուն մէջ թակի հարուածով մխեցին . ապա՝ այս կարանները եռացող կուպրով ծածկեցին, զոր անտառին սարոյներն առատօրէն հայթայթեցին ։

Նաւուն ներքին կազմակերպը շատ պարզ եղաւ ։ Նախ կրանիտէ ծանր կտորներով զայն խճեցին (lester) որ կրաբովի մը մէջ կերտուած էր, և որով գրեթէ տասն երկու հազար լիտրէ բեռնաւորեցին ։ Այս խճոյին (lest) վերև տախտակի մը (tillac) դրին, և ներքին կողմն երկու սենեկով բաժնեցին, որու երկայնքն երկու նստարան կ'երկննար, որ սնտուկներու տեղ կ'ծառայէին ։ Կայմին ոտքն երկու սենեակներն իրարմէ զատող միջնորմին վրայ պիտի հեծնէր (épontiller), և այս սենեակներն իջնելու համար երկու բերան կար կամրջին վրայ և ծածկոյթով (capot) գոցուած ։

Բէնքրօֆ դիւրաւ գտաւ յարմար ծառ մը կայմին համար ։ Նորաբոյս եղևին մ'ընտրեց, շիտակ, առանց վարակի, որու վարի կողմը քառակուսի տաշեց և վերի կողմը բոլորաձև ։ Կայմին, ղեկին և փաճոկին երկաթները թէև կոշտ այլ շատ ամուր շինուեցան Կարկառներու դարբնոցին մէջ ։ Վերջապէս առագաստակալ, ձեղ կայմ, թիակ և այլն հոկտեմբերի առաջին շաբաթը լմնցած էին, և որոշեցին որ կղզւոյն եզերքը նաւարկութեան փորձ մը ընեն, որպէս զի հասկընան թէ ինչպէս կ'շարժի ծովու վրայ և ինչ աստիճան վստահութեան արժանի է ։

Այս միջոցին՝ զանց չէին ըրած կարևոր գործերը ։ Գոմին պէտք եղածը հոգացեր էին, վասն զի արտիկներն և այծերը խել մը ձագեր ունէին զոր պէտք էր բնակեցընել ու կերակրել ։ Գաղթականները սաէպ գացեր էին տեսնելու ոստրէնոցը, ճագարնոցը, ածխահանքն և երկաթահանքը, նոյնպէս զններ էին Խոր-Արևմուտի մի քանի մասերն որ որսաշատ էր ։

Քանի մ'ուրիշ բնիկ տունկեր գտան, որ՝ եթէ անմիջական օգուտ մը չունէին, գոնէ Գարեայ-Պալատին բուսային պահեստը փոփոխելու ծառայեցին ։ Ասոնք ֆիգոյդեային (ficoïde) տեսակներէն էին, ոմանք Բարեյուսոյ-Գլուխը գտնուածներուն նման, ուտելի մսոտ տերևներով, ոմանք ալ տեսակ մ'ալիւր պարունակող կուտեր ունէին ։

Հոկտեմբերի 10ին՝ նաւակը ծովը նետեցին ։ Բէնքրօֆ ուրախութենէ կ'թռէր ։ Գործողութիւնը կատարելապէս յաջող գնաց ։ Կազմ նաւակը գլաններու վրայ ծովափը սահելով՝ մակընթացութեամբ ծովուն երեսն ելաւ և ծփաց, մինչդեռ գաղթականները ծափ կ'զարնէին, մանաւանդ Բէնքրօֆ, որ այս պարագայիս մէջ բնաւ համեստութիւն չցուցց ։ Անկէ զատ՝ իր սնափառութիւնն ասով չպիտի դադրէր, վասն զի զայն կառուցանելէն ետև՝ անոր հրամանատարը լինելու պիտի կոչուէր ։ Ամենուն հաւանութեամբ Բէնքրօֆ նաւապետ կարգեցաւ ։

Բէնքրօֆ նաւապետը գոհ ընելու համար, պէտք էր նախ նաւակին անուն մը տալ . և շատ մ'առաջարկութիւններ երկարօրէն վիճաբանութեան ներքև մտնելէն ետև՝ ամէնքը միաբան Պոնավէնթիւր անուանեցին նաւակն որ պարկեշտ նաւորդին աւազանի անունն էր ։

Երբոր մակընթացութիւնը նաւակն առաւ վերցուց, ամէնքը դիտեցին որ ջրին վրայ հաստատ կ'կենար և հետևապէս ամեն կերպով յարմար էր նաւարկութեան ։

Իրաւ է որ առոր փորձը պիտի ընէին նոյն օրն իսկ՝ ծովեզերէն հեռու բաց ծովու վրայ ։ Աղուոր էր օդը, սիւքը զով, ծովը հանդարտ, մանաւանդ հարաւային ծովեզրը, վասն զի հովը հիւսիսարևմուտքէն կ'փչէր արդէն մէկ ժամէ 'ի վեր ։

«Մտէ՛ք, նաւը մտէ՛ք» կ'պոռար Բէնքրօֆ նաւապետը ։

Բայց մեկնելէն առաջ պէտք էր ճաշել, և մինչև անգամ արժան գտուեցաւ նաւակը պաշար դնել, որպէս զի եթէ նաւարկութիւնը մինչև գիշեր տևէր՝ ուտելիք ունենան ։

Նոյնպէս Կիւրոս Սմիթ անհամբեր էր փորձել այս նաւակը

որուն յատակագիծն ինք յօրիներ էր, թէեւ նաւորդին խորհրդին համեմատ՝ ստէպ անոր մի քանի մասերը փոխեց. բայց նաւակին վրայ Բէնքրոֆին յայտնած վստահութիւնը չունէր, եւ որովհետեւ այս վերջինը Թափոր կղզին երթալու խօսքը չէր ըներ, Կիւրոս Սմիթ կ՚յուսար իսկ որ նաւորդն իր միտքը փոխեր էր։ Իրօք՝ իրեն շատ ծանր պիտի երեւէր տեսնել իր ընկերներէն երկու երեք հոգի այս նաւակով հեռուներ արշաւելը, նաւակ որ վերջապէս պզտիկ էր, եւ միայն տասն հինգ տակառէն աւելի պարունակ չունէր։

Ժամը տասն ու կէսին, ամէնքը նաւակին էին, նոյն իսկ Ժիւբ, մինչեւ անգամ Թոփ։ Նապ ու Հարպէրթ երկաթը վերցուցին, որ աւազին մխուեր էր Մէրսիի բերնին մօտ, նախառագաստը բացին, կայմին գլուխը լինքօլնեան դրօշակը ծածանեցաւ, եւ Պօնավէնթիւր՝ Բէնքրոֆի ուղղութեամբ՝ բաց ծովը դիմեց։

Միութեան ծովածոցէն ելնելու համար՝ պէտք եղաւ նախ յետնակողմը զարնել, եւ գաղթականները կարող եղան ստուգել որ այս շարժուածքին մէջ՝ նաւակին արագութիւնը գոհացուցիչ էր։

Բեկորքի—Սարուանդն եւ Ճիրանի—Գլուխը պտոյտ ընելէն ետեւ՝ Բէնքրոֆ ստիպուեցաւ կարելի եղածին չափ ծովափին մօտէն քալել, որպէս զի կղզւոյն հարաւային եզերքը քերէ, եւ բաւական ժամբայ առնելէն ետեւ՝ գիտեց որ Պօնավէնթիւր կրնար հովին գրեթէ հինգ քառորդով քալել եւ շեղելու հակամէտ չէր երեւեր։ Հովը դիմացէն լինելով կրնար դառնալ, հաւասարած ունենալով, ինչպէս որ նաւաստիները կ՚ըսեն, եւ դառնալու ատենն անգամ ժամբայ առնուլ։

Պօնավէնթիւրի նաւորդները շատ գոհ էին։ Լաւ նաւ մ՚էր իրենց ունեցածը, որ եթէ հարկը պահանջէր, իրենց մեծ ծառայութիւններ կրնար մատուցանել, եւ այն աղուոր օդով, այն յաջող սիւքով՝ զմայլելի եղաւ սոյն պտոյտը։

Բէնքրոֆ բաց ծովը դիմեց՝ եզերքէն երեք չորս մղոն հեռու, Օդապարիկի նաւահանգստին դէմ։ Այն ատեն կղզին ամբողջապէս երեւցաւ եւ նոր տեսքով մը։ Այլազան շրջապատկեր մը (panorama) կ՚ընծայէր իր եզերքը՝ Ճիրանի գլխէն մինչեւ Սողունի հրուանդանը, իր նախադիր անտառներն՝ որոց մէջ խաչաքերներն ուրիշ նորածիլ ծառերու դեղնագոյն տերեւներուն վրայ կ՚հատանէին, եւ այս Ֆրանքլէնի լեռն՝ որ բոլորին վրայ կ՚տիրէր եւ որու գագաթը թեթեւ ձիւնով մը ճերմկցեր էր։

«Ի՜նչ գեղեցիկ է, գոչեց Հարպէրթ։

— Այո՛, մեր կղզին աղուոր ու ընտիր է, պատասխանեց Բէնքրոֆ։ Կ՚սիրեմ զայն ինչպէս կ՚սիրէի իմ խեղճ մայրս։ Ընդունեց մեզ նա աղքատ եւ ամեն բանէ զուրկ, եւ ինչ կ՚պակսի այս հինգ զաւակներուն որ երկնքէն ընկան։

— Բան մը չպակսիր, պատասխանեց Նապ, ոչ ինչ, նաւապետ։»

Եւ երկու բարեսիրտ ընկերն իրենց կղզւոյն 'ի պատիւ երեք անգամ ահագին աղաղակ մ՚արձակեցին։

Նոյն պահուն՝ Գեդէոն Սբիլէթ, կայմին ստորոտը կռթնած՝ շրջապատկերը կ՚գծագրէր որ աչքին առջեւ կ՚պարզուէր։

Կիւրոս Սմիթ լռութեամբ մտիկ կ՚ընէր։

«Լաւ ուրեմն, Պարոն Կիւրոս, հարցուց Բէնքրոֆ, ինչ է կարծիքդ մեր նաւակին վրայ։

— Կ՚երեւի թէ շատ լաւ կ՚շարժի, պատասխանեց չափագէտը։

— Լաւ, հիմակ կ՚հաւատա՞ս որ քիչ մ՚երկարատեւ ուղեւորութիւն մը կրնայ ընել։

— Ի՞նչ ուղեւորութիւն, Բէնքրոֆ։

— Օրինակի համար Թափոր կղզւոյն ուղեւորութիւնը։

— Բարեկամդ իմ, պատասխանեց Կիւրոս Սմիթ, կարծեմ թէ ստիպողական պարագայի մը մէջ՝ Պօնավէնթիւրին վստահելու վարանիլ պէտք չէ, մինչեւ անգամ աւելի երկար ուղեւորութեան մը համար։ Բայց, գիտես, ցաւ պիտի զգամ եթէ Թափոր կղզին երթալու ելնես, քանի որ այդ ընելու համար ստիպողական բան մը չունիս։

— Մարդ կ՚ախորժի իր դրացիները ճանչել, պատասխանեց Բէնքրոֆ, որ իր դիտաւորութեան վրայ կ՚յամառէր։ Թափոր

կղզին, մեր դրացին է, և միակ դրացին։ Քաղաքավարութիւնը կ'պահանջէ որ գոնէ անոր այցելութիւն մ'ընելու երթանք։

— Թշուառական, ըսաւ Գետէոն Սբիլէտ, մեր Բէնքրօֆ բարեկամը պատշաճութեանց ջերմ կուսակից կ'երևի։

— Ես պատշաճութիւն չգիտեմ, պատասխանեց նաւորդը, որ ճարտարագէտին դիմադրութենէ քիչ մը նեղացեր էր, բայց չէր ուզեր անոր ցաւ մը պատճառել։

— Մտածէ, Բէնքրօֆ, պատասխանեց Կիւրոս Սմիթ, որ չես կարող մինակ Թափոր կղզին երթալ։

— Ընկեր մ'ինձ բաւական պիտի ըլլայ։

— Լաւ, պատասխանեց ճարտարագէտը։ Ուրեմն Լինքոլնի կղզւոյն գաղթականութիւնն իր երկու ընկերներէն զրկելու վտանգին մէջ կ'ուզես դնել։

— Վեց գաղթական կայ, պատասխանեց Բէնքրօֆ։ Յուպը կը մոռնաս։

— Եօթը գաղթական, յարեց Նապ։ Թօփ ալ ուրիշի չափ արժէք ունի։

— Վտանգ չկայ, Պարոն Կիւրոս, վրայ բերաւ Բէնքրօֆ։

— Կարելի է, Բէնքրօֆ. բայց՝ ահա կ'կրկնեմ, առանց հարկի վտանգի ենթարկել է։»

Կամակոր նաւորդը չպատասխանեց և խօսակցութիւնը չշարունակեց, ուրիշ անգամ նորէն սկսելու մտադրելով։ Բայց բնաւ միտքէն չէր անցներ որ իրեն օգնութեան պիտի գար պատահար մը և մարդասիրութեան գործի մը վերածել ինչ որ քմահաճ խորհուրդ մ'էր, և իրօք վիճելի։

Արդարև՝ հեռուն ծովը նաւարկելէ ետև՝ Պոնավանթիւր ծովափին մօտեցեր էր Օդապարիկին նաւահանգիստն ուղևորելով։ Կարևոր էր ստուգել աւազակոյտերուն և խութերուն մէջ գտնուած անցքերը, 'ի հարկին՝ նշաններ դնելու համար (baliser), քանի որ այս փոքրիկ ծոցը նաւակը կապելու նաւահանգիստը պիտի ըլլար։

Արդէն ծովափէն կէս մը հեռու էին, և հովին դէմ քալելու

համար պէտք եղեր էր պտոյտներ ընել։ Այն միջոցին՝ Պոնավանթիւր ծանր կ'յառաջանար, վասն զի քամին՝ ցամաքէն ըստ մասին կտրուելով՝ հազիւ թէ իր առագաստները կ'ուռէր, և ծովը սառոյցի պէս հարթ՝ միայն ատեն ատեն անկանոն փչած բարակ հովէն կ'խորշոմէր։

Հարպէրդ նաւակին յառաջակողմը կեցեր էր, որպէս զի անցքերուն մէջէն հետևելիք ճամբան ցոյց տայ, երբ յանկարծ պոռաց.

«Դարձո՛ւր, Բէնքրօֆ, հովին կողմը դարձուր։

— Բայց ի՞նչ կայ, հարցուց նաւորդն ոտք ելնելով։ Ժայռ մը։

— Ո՛չ... սպասէ, ըսաւ Հարպէրդ... լաւ չեմ տեսներ. ... նորէն դարձուր... լա՛ւ... ահա քիչ մը կ'մօտենայ...։»

Եւ այս ըսելով Հարպէրդ նաւակին եզրը ծռած՝ շուտ մը ջրին մէջ մխեց թևն և ապա հանեց ըսելով.

«Շի՛շ մը։»

Ձեռքը բռներ էր գոց շիշ մը, զոր ծովափէն մի քանի պարանաչափ հեռու բռներ էր։

Կիւրոս Սմիթ շիշն առաւ, առանց բառ մ'ըսելու անոր խիցն հանեց, և խոնաւ թուղթ մը քաշեց որու մէջ այս խօսքը կար.

«Նաւաբեկ... Թափոր կղզի։ 153° արևմտեան երկայն. — 37° 11'. հարաւային լայն.»

ԳԼՈՒԽ ԺԳ.

Զուն կ'որոշուի — Ենթադրութիւններ — Պատրաստութիւններ — Երեք նաւորդներ — Առաջին գիշեր — Երկրորդ գիշեր — Թափօր կղզին — Առափնին վրայ խուզարկութիւններ — Անտառներուն մէջ խուզարկութիւններ — Մարդ չկայ — Կենդանիներ — Տունկեր — Բնակարան մը — Ամայի.

«Նաւարկ'մը, պոռաց Բէնքրոֆ, նաւարկ մ'որ այն Թափօր կղզին ձգուեր է մեզմէ քանի մը հարիւր մղոն հեռու։ Ա՛խ, Պարոն Կիւրոս, հիմակ ալ դէմ պիտի չկենաս իմ ճամբորդելու գիտաւորութեանս։

— Ո՛չ, Բէնքրոֆ, պատասխանեց Կիւրոս Սմիթ, և կարելի եղածին չափ շուտով պէտք է որ մեկնիս։

— Վա՞ղը, անմիջապէս։

— Այո՛, վաղը։»

Զափագէտը շիշէն հանած թուղթը ձեռքը բռներ էր։ Քիչ մ'ատեն անոր վրայ մտածեց, ապա սկսաւ նորէն խօսիլ.

«Բարեկամներս, այս յետկարէն, նոյն իսկ գրուած ոճէն պէտք է հետեւցընել նախ թէ՝ Թափօր կղզւոյն նաւաբեկը ծովային խնդիրներու մէջ բաւական հմուտ մարդ կ'երեւի, քանի որ կղզւոյն երկայնութեան ու լայնութեան աստիճանը կ'տայ մեզի, որոնք մեր գտածին նման են, մէկ վայրկենի տարբերութեամբ, երկրորդ՝ թէ Անկլիացի է կամ Ամերիկացի, քանի որ այս յետկարն անկլիարէն գրուած է։

— Այդ բոլորովին ճիշտ է, պատասխանեց Գեդէոն Սբիլէդ, և այն նաւաբեկին ներկայութենէ կրնանք բացատրել թէ ինչ պատճառաւ այն գնդակը մեր կղզին եկաւ։ Նաւաբեկութիւն պատահած է, քանի որ նաւաբեկ մը կայ։ Նաւաբեկին գալով՝ ով

որ է, բարեբաղդութիւն մ'է իրեն համար որ Բէնքրոֆ նաւակ մը շինելու և զայն այսօր փորձելու խորհուրդն ունեցաւ, վասն զի եթէ օր մը միայն ուշանար, կարելի էր որ այս շիշը ժայռերուն դէմ խորտակուէր։

— Արդարև, ըսաւ Հարպէրդ, բարեբաղդութիւն մ'է որ Պօնավանդիւր ասկից անցաւ, ճիշտ այն միջոցին որ այս շիշը դեռ կ'ծփար։

— Իսկ միթէ այս բանը քեզի այլանդակ չե՞րևիր, հարցուց Կիւրոս Սմիթ Բէնքրոֆին։

— Այս բարեբաղդութիւն մը կ'երևի ինձ, միայն, պատասխանեց նաւորդը, Պարոն Կիւրոս, միթէ այս բանիս մէջ կարգէ դուրս բան մը կ'տեսնե՞ս։ Այս շիշը հարկաւ տեղ մը պիտի երթար, և ինչպէս ուրիշ ինչո՞ւ համար այս տեղ չպիտի գար։

— Կարելի է իրաւունք ունիս, Բէնքրոֆ, պատասխանեց շափագէտը, և սակայն . . .

— Բայց, ըսաւ Հարպէրդ, ապացոյց մը չկայ որ այս շիշն երկար ատեն ծովու վրայ կ'ծփայ։

— Չկայ, պատասխանեց Գեդէոն Սբիլէդ, մանաւանդ կարծես թէ այդ թուղթը նոր գրուած է։ Ի՞նչ կ'մտածես այս մասին, Կիւրոս։

— Այդ ստուգել դժուարին է, և սակայն, քիչ ատենէն ամէն ի մանանք» պատասխանեց Կիւրոս Սմիթ։

Այս խօսակցութեան միջոցին, Բէնքրոֆ անգործ չէր նստած։ Ծովափին կողմը դարձուցեր էր նաւակը, որ՝ բոլոր առագաստները բանալով՝ դէպ 'ի Ճիրանի-Գլուխը կ'վազէր։ Ամէն մարդ Թափօր կղզւոյն նաւաբեկին վրայ կ'խորհէր։ Արդեօք ազատելու համար ժամանակին պիտի հասնէի՞ն։ Գաղթականներու կենաց մէջ մեծ դէպք մ'էր այս։ Իրենք ալ նաւաբեկեալներ էին, սակայն կ'վախնային որ ուրիշ մ'իրենց չափ բաղդաւոր չլինէր, և իրենց պարտքն էր թշուառութիւնը դարմանելու երթալ։

Ճիրանի-Գլխէն դարձան և Պօնավանդիւր ժամը չորսին մօտ Մէրսիի բերանը հասաւ ու երկաթ նետեց։

Նոյն իրիկունն իսկ նոր արշաւին համար պէտք եղած պատրաստութիւններն ըրին։ Ցարմար երեւցաւ իրենց որ Բէնքրօֆ ու Հարպէրդ այս ճամբորդութիւնը մինակ ընեն, քանի որ նաւ կառավարելու մասին վարժ էին։

Հետեւեալ օրը՝ Հոկտեմբեր 11ին ճամբայ ելնելով կարող էին ցորեկը՝ ամսուն 13ին հասնիլ, վասն զի այն միջոցին փչած հովով՝ քառասուն ութ ժամ բաւական էր այս հարիւր յիսուն մղոնի ուղեւորութիւնն ընելու համար։ Կղզին օր մը միայն մնալով եւ վերադառնալու համար երեք չորս օր անցընելով՝ կարելի էր ուրեմն յուսալ որ ամսուն 17ին Լինքօլն կղզին դառնային։

Գեղեցիկ էր օդը, ջերմաչափն առանց ցնցումի կ'բարձրանար, հովը միօրինակ կ'փչէր, հետեւապէս պարագաները յաջող էին այս քաջ նաւաստիներուն համար, որ մարդասիրութեան պարտք մը կատարելու համար իրենց կղզիէն պիտի հեռանային։

Այսպէս ուրեմն՝ որոշուեր էր որ Կիւրոս Սմիթ, Նապ ու Գետէօն Սբիլէդ Քարեայ-Պալատը մնան. բայց Գետէօն Սբիլէդ՝ որ Նոր-Եօրք Հէրալտի թղթակից լինելը բնաւ չէր մոռնար, բողոքեց, եւ ըսաւ որ լողալով պիտի երթայ այն կղզին քան թէ այսպիսի արշաւանք մը զրկուիլ. ուստի հաւանեցան որ այս ուղեւորութեան մասնակից դառնայ։

Նոյն գիշերը Պոնավէնդիւր տարին քանի մ'անկողնի վերաբերեալ առարկաներ, գործիքներ, զէնքեր. պաշար, կողմնացոյց մը, ութ օրուան համար ուտելիք, եւ այսպէս շուտով նաւակը բեռնաւորելէն ետեւ՝ գաղթականները Քարեայ-Պալատն ելան։

Հետեւեալ օրը՝ ժամը հինգին առաւօտուն՝ իրարու հրաժարական բարեւ տուին, երկու կողմէ այլայլութիւն զգալով, եւ Բէնքրօֆ առագաստներուն հով տալով Ճիրանի-Գլուխը գնաց, որմէ պիտի դառնար որպէս զի ինք հարաւ-արեւմտեան ճամբան ուղղակի բռնէ։

Պոնավէնդիւր ծովեզրէն քառորդ մղոնի չափ հեռացեր էր, երբ ուղեւորները Քարեայ-Պալատին բարձունքը տեսան երկու մարդիկ որ իրենց հրաժարական նշան կ'տային։ Ասոնք էին Կիւրոս Սմիթ եւ Նապ։

«Բարեկամներս, գոչեց Գետէօն Սբիլէդ, ահասիկ մեր առաջին բաժանումը տասն հինգ ամսէ 'ի վեր. . . ։»

Բէնքրօֆ, թղթակիցն ու Հարպէրդ վերջին անգամ նշանով բարեւ տուին իրենց ընկերներուն, եւ Քարեայ-Պալատը քիչ ատենէն աներեւոյթ եղաւ Ճիրանի-Գլխուն բարձր ժայռերուն ետին։

Նոյն օրուան առաջին ժամերուն մէջ՝ Պոնավէնդիւր Լինքօլն կղզւոյն հարաւային ծովեզրին առջեւը նաւարկեց շարունակ, Լինքօլն կղզին, որ քիչ ատենէն կանաչ զամբիւղի ձեւով երեւցաւ, որուն մէջէն Ֆրանքլէն լեռը կ'բարձրանար։ Անոր բարձունքը հեռաւորութենէ փոքրնալով նաւերն իր կողմը քաշելու յարմար երեւոյթ մը չէր ընծայեր։

Ժամը մէկին մօտ՝ Սողունի-Հրուանդանէն անցան՝ բայց տասն մղոն հեռու բաց ծովուն մէջ։ Այս հեռաւորութենէ կարելի չէր Ֆրանքլէն լեռին մինչեւ սարը (croupe) տարածուող արեւմտեան ծովափին վրայ բան մը զանազանել, եւ երեք ժամ ետք՝ ամբողջ Լինքօլն կղզին հորիզոնին ներքեւ աներեւոյթ եղեր էր։

Պոնավէնդիւր շատ լաւ կ'նաւարկէր, կոհակին վրայ դիւրաւ կը սահէր եւ շուտ կ'քալէր։ Բէնքրօֆ աղեղի առագաստն ալ բացեր էր եւ նաւակը՝ նաւուղիղին նայելով՝ ուղղագիծ շաւիղ մը կ'ընթանար։

Ատեն ատեն Հարպէրդ Բէնքրօֆին տեղը կ'անցնէր ղեկը վարելու, եւ պատանին այնքան ճարպիկութեամբ կ'վարէր որ նաւաստին շատ գոհ էր եւ բնաւ պատճառ մը չունէր ըսելու թէ խոտոր ընթացք մը (embardée) կ'բռնէ։

Գետէօն Սբիլէդ ասոր անոր հետ կ'խօսակցէր, եւ 'ի հարկին ինքն ալ կ'աջակցէր։ Բէնքրօֆ նաւապետը բոլորովին գոհ էր իր նաւակէն, եւ խօսք կ'տար զանի վարձատրել բաժակ մը գինի տալով ամեն անգամուն որ նաւը շրջապտոյտ մ'ընէր (bordée)։

Իրիկունը՝ մահիկը՝ որ ամսուն 16ին միայն առաջին քառորդը պիտի լրացնէր, արեւային վերջալոյսին երեւան ելաւ, եւ քիչ ատենէն անհետ եղաւ։ Մութ այլ աստեղազարդ էր գիշերը եւ կ'երեւէր թէ հետեւեալ օրը դարձեալ օդն աղուոր պիտի լինէր։

Պէնքրօֆ խոհեմութիւն սեպեց աղեղի առագաստը գոցել, վախնալով որ յանկարծական սաստիկ քամի մը չփչէ և վտանգ չպատահի՝ կայմին գլուխն առագաստը բաց մնալով։ Կարելի է այնպիսի հանդարտ գիշերուան համար չափէ աւելի զգուշութիւն բանեցընել պէտք չէր, բայց Պէնքրօֆ խոհեմ նաւաստի մ'էր և այս մասին մեղադրելի չէր։

Թղթակիցը գիշերուան մէկ մասը քնանալով անցուց։ Պէնքրօֆ և Հարպէրդ երկու ժամ անգամ մ'իրարու տեղ կ'բռնէին ղեկը վարելու համար։ Նաւորդն՝ ինչպէս ինքզինքին՝ Հարպէրդին կը վստահէր և իր վստահութիւնը պատանւոյն ցոյց տուած պաղարիւնութեամբը կ'արդարանար։ Պէնքրօֆ՝ ինչպէս նաւապետ մը ղեկավարին՝ նոյնպէս ինք ցոյց կ'տար շաւիղն և Հարպէրդ չէր թողուր որ Պոնավէնդիւրը գծի չափ անգամ շեղի։

Գիշերն աղէկ անցաւ և հոկտեմբեր 12ի օրն օդի տարբերութիւն մը չերևցաւ։ Դէպ 'ի հարաւ-արևմտեան ուղղութիւնը բռնեցին բոլոր օրը, և եթէ Պոնավէնդիւր անյայտ յորձանքի ենթակայ չէր գտնուեր, շիտակ Թափոր կղզին պիտի հասնէր։

Իսկ նոյն միջոցին նաւակին շրջած ծովը բոլորովին անապատ էր։ Երբեմն՝ մեծ թռչուն մը, սպիտակահաւ կամ ֆրէկաթ (frégate) հրացանի հեռաւորութեամբ կ'անցնէր և Գեդէոն Սբիլէդ կ'ըսէր խորհիլ թէ արդեօք այս հզօր թռչուններէն մէկուն միջոցաւ չէ՞ր որ Նոր-Եօրք Հէրալտին ուղղած էր իր վերջին յօդուածը։ Կ'երևէր թէ այս թռչունները միայն կ'յաճախէին Թափոր կղզւոյն և Լինքօլնի մէջ գտնուած Ովկիանոսի մասը։

«Եւ սակայն, դիտել տուաւ Հարպէրդ, այն ժամանակն ենք երբ կէտորսները սովորաբար Խաղաղականին հարաւային կողմերը կ'դիմեն։ Ճշմարիտը, կարծեմ թէ ասկից աւելի լքեալ ծով մը չպիտի լինի։

— Ձեր կարծածին չափ ամայի չէ այս ծովը, պատասխանեց Պէնքրօֆ։

— Ի՞նչ կերպով ամայի չէ, հարցուց Թղթակիցը։

— Անոր համար որ մենք անոր մէջն ենք։ Միթէ կարծէք թէ

մեր նաւակը բեկոր և մեր անձերը ծովախոզներ են (marsouine)։»

Եւ Պէնքրօֆ սկսաւ իր ըրած կատակին վրայ խնդալ։

Երեկոյին՝ հաշիւ ընելով կ'կարծէին թէ Պոնավէնդիւր հարիւր քսան մղոն տեղ կտրեր էր Լինքօլն կղզիէն մեկնելէն 'ի վեր, այսինքն երսուն ու վեց ժամու մէջ, որմէ կ'հետևէր թէ ժամն երեք մղոն ու քառորդ կ'քալէր։ Քամին տկար էր և երթալով կ'հանդարտէր։ Սակայն կարելի էր յուսալ որ հետևեալ օրը՝ այգուն՝ եթէ իրենց հաշիւը ճիշտ և ուղղութիւնն անխոտորնակ էր՝ Թափոր կղզին տեսնէին։

Ուստի՝ ոչ Գեդէոն Սբիլէդ, ոչ Հարպէրդ և ոչ Պէնքրօֆ չքնացան այն գիշերն որ հոկտեմբերի 12էն 13ին պիտի լուսնար։ Հետևեալ օրուան սպասելով՝ ակամայ սաստիկ այլայլութիւն մը կ'զգային։ Եւ իրօք՝ իրենց փորձած ձեռնարկութեան մէջ որչափ անստուգութիւններ կային։ Արդեօք Թափոր կղզւոյն մօտ էին։ Արդեօք այն կղզին կ'բնակէր նաւաբեկեալն որու օգնելու կ'երթային։ Ո՞վ էր այն մարդը։ Արդեօք իր ներկայութիւնը շփոթութիւն չը՞պիտի պատճառէր փոքրիկ գաղթականութեան մէջ, որ մինչև այն օրը միաբան կ'ապրէր։ Ասկէ զատ՝ այդ նաւաբեկեալը պիտի հաւանէ՞ր իր բանտն ուրիշ բանտի մը համար փոխել։ Բոլոր այս հարցումներն, որ անտարակոյս հետևեալ օրը պիտի լուծուէին, զիրենք արթուն կ'պահէին, և երբ առաւօտեան առաջին նշոյլներն երևցան, իրենց աչքը յաջորդաբար տարին արևմտեան հորիզոնին այլ և այլ կէտերուն վրայ։

«Երկի՛ր» պոռաց Պէնքրօֆ, առաւօտեան ժամը վեցին մօտ։

Եւ որովհետև անհաւատալի էր որ Պէնքրօֆ սխալած լինի, բացայայտ էր որ ցամաքն անդ էր։

Ընթերցողը կրնայ երևակայել թէ որչափ մեծ եղաւ Պոնավէնդիւրի նաւազին ուրախութիւնը։ Քանի մը ժամէ կղզւոյն եզերքը պիտի հասնէին։

Թափոր կղզին՝ տեսակ մը ստորին եզերք, որ հազիւ ալիքներէն վեր կ'ելնէր, տասն հինգ մղոնէն աւելի հեռու չէր։ Պոնավէնդիւրի գլուխն՝ որ քիչ մը կղզւոյն հարաւային կողմը կ'նա-

յէր, շիտակ անոր վրայ ուղղուեցաւ, և քանի արևն արևելքէն վեր կ'ելնէր, ասդին անդին քանի մը գագաթներ երևան ելան ։

«Լինքօլն կղզին նուազ կարևոր կղզեակ մ'է, ըսաւ Հարպէրդ, և հաւանօրէն ներքնածովային շարժման արդիւնք մ'է ։»

Առաւօտեան ժամը տասն մէկին՝ Պօնատվէնթիւր կղզիէն երկու մղոն հեռու էր, և Բէնքրոֆ՝ ցամաքը մօտենալու համար անցք մը փնտռելով, յետին ծայր խոհեմութեամբ կ'քալէր այս անծանօթ ջրերու մէջ ։

Այն միջոցին բոլոր կղզեակն աչքի կ'զարնէր . անոր վրայ գալարագեղ խժենիներու փունջեր կ'երևէին և ուրիշ քանի մը մեծ ծառեր՝ Լինքօլն կղզին գտնուած տեսակէն ։ Բայց զարմանալի բանն այս էր որ մուխ մ'անգամ չէր ելներ կղզւոյն մարդաբնակ լինելը ցոյց տալու, նշան մ'անգամ չկար ծովափին և ոչ մէկ կողմը ։

Եւ սակայն շիշին մէջ գտնուած թուղթը բացայայտ էր . նաւաբեկեալ մը կար, և այս նաւաբեկեալն անշուշտ ակնդէտ պիտի սպասէր ։

Սակայն Պօնատվէնթիւր վիմուտներու մէջ գտնուած բաւական անկանոն անցքերէ կ'անցնէր, և Բէնքրոֆ յետին ծայր ուշադրութեամբ կ'դիտէր անոնց ամենէ թեթև շեղումները ։ Հարպէրդը ղեկին գլուխն անցուցեր էր, և ինք՝ ընդ առաջ նստած՝ ջրերը կ'քննէր, առագաստը գցելու պատրաստ գտնուելով, որոյ լարերն իր ձեռքը բռնած էր ։ Գեդէօն Սբիլէդ հեռադիտակն աչքը դրած՝ բոլոր ծովափը կ'զննէր առանց բան մը նշմարելու ։

Վերջապէս՝ կէսօրին մօտ՝ Պօնատվէնթիւր իր եղջիւրով աւազի կոյտի մը զարկաւ ։ Խարիսխը նետեցին, առագաստները վար առին, և նաւակին նաւազը ցամաքն ելաւ ։

Տարակոյս չկար որ Թափոր կղզին էր այն, քանի որ՝ ամենէ նոր աշխարհացոյց տախտակներու վրայ՝ Խաղաղականին այս մասին մէջ ուրիշ կղզի մը չկար, Նոր-Զելանտայի և ամերիկեան եզերքին մէջ ։

Նաւակն ամուր կապեցին, որպէս զի մակընթացութիւնը զայն չառնէ չտանի . սպա Բէնքրոֆ և իր երկու ընկերները, լաւ մը

զինուելէն ետև՝ ծովեզրէն վեր ելան, որպէս զի տեսակ մը կոնաձև լեռնակ մ'ելնեն, երկու հարիւր յիսունէն մինչև երեք հարիւր ոտք բարձր, որ կէս մղոն հեռու կ'երևէր ։

«Այս բլրին գագաթէն, ըսաւ Գեդէօն Սբիլէդ, անտարակոյս վեր 'ի վերոյ գաղափար մը կրնանք ստանալ այս կղզեկին վրայ, և ասով մեր խուզարկութիւնները պիտի դիւրանան ։

— Այս տեղ պիտի ընենք, պատասխանեց Հարպէրդ, ինչ որ Պ. Կիւրուս Սմիթ Լինքօլն կղզին բրաւ ամենէ առաջ՝ Ֆրանքլէն լեռն 'ի վեր ելնելով ։

— Ճիշդ այդպէս, պատասխանեց թղթակիցը, և գործ տեսնելու ամենէ լաւ միջոցն է այս ։»

Երկրագէտները՝ խօսակցելու ատեն, մարգագետնի մը ստորոտը բռնելով կ'յառաջանային, որ կոնաձև լեռնակին ոտքը կ'յանգէր ։ Ժայռի աղաւնիներու և ծովու ծիծառներու երամներ՝ Լինքօլն կղզւոյն մէջ գտնուածներուն նման, իրենց առջևէն կ'թռէին ։ Մարգագետնին ձախ կողմն երկնցող անտառին տակ մացառներու խշշիւնը լսեցին, խոտերուն շարժումը տեսան, որ փախստական կենդանիներու ներկայութիւնը կ'յայտնէին . բայց մինչև այն ատեն յայտարար նշան մը չկար թէ կղզեակը մարդաբնակ էր ։

Երբոր կոնաձև լեռնակին ստորոտը հասան՝ Բէնքրոֆ, Հարպէրդ և Գեդէօն Սբիլէդ մի քանի վայրկեանի մէջ վեր ելան, և իրենց աչքը հորիզոնին այլ և այլ կէտերուն վրայ տարին ։

Արդարև՝ կղզեկի մը վրայ էին, որ տասը մղոն շրջապատէ աւելի չէր, և որու բոլորակն այնքան շատ գլուխ կամ հրուանդան, նոյնպէս շատ խորշ ու ծովածոց չունենալով՝ երկարաձիգ ձուի ձև մը կ'ներկայէր ։ Զորս դին ծովը բոլորովին ամայի մինչև երկնից սահմանը կ'տարածուէր ։ Երկիր մը, առագաստ մը չէր երևեր ընաւ ։

Այս կղզեակը՝ որու բոլոր մակերևոյթն անտառուտ էր, Լինքօլն կղզւոյն այլազան կերպարանը չունէր, որու մէկ մասը վայրենի ու խոպան էր, միւս մասն արգաւանդ և ճոխ ։ Այս վայրը գալարուէտ միօրինակ կոյտ մ'էր, որու վրայ քանի մը ցած

բլուրներ կ'նայէին։ Կղզեկին ձուաձև գծին վրայ՝ շեղակի կ'հոսէր առուակ մը լայն մարգագետնէ մ'և կ'երթար ծովը կ'թափէր արևմտեան ծովափին վրայ նեղ բերնէ մը։

«Այս ցամաքը շատ անձուկ է, ըսաւ Հարպէրդ։

— Այո, պատասխանեց Բէնքրօֆ, մեզի համար պզտիկ պիտի գայ։

— Աւելի զատ՝ պատասխանեց Թղթակիցը, անբնակ կ'երևի։

— Արդարև, պատասխանեց Հարպէրդ, բան մը չկայ որ մարդու բնակութիւն մը յայտնէ։

— Վար իջնենք, ըսաւ Բէնքրօֆ, և փնտռենք։»

Նաւաստին և իր երկու ընկերները ծովափը դարձան, այն տեղն ուր Պոնաֆանդէնը թողեր էին։ Կղզւոյն շրջանն ոտքով ընելու որոշեր էին, ներքին կողմերը չզգայած, այնպէս որ կէտ մը չվրիպի իրենց խուզարկութենէ։

Աւազափէն դիւրին էր անցնիլ, և՝ միայն քանի մը տեղուանք՝ խոշոր ժայռեր զայն կ'կտրէին, թէև անոնց շուրջը դառնալ դժուարին չէր։ Երկրադէտները դէպ 'ի հարաւ իջան, մի շատ ջրային թռչուններ և փոկերու խումբեր փախցնել տալով՝ որոնք ծովը կ'նետուէին երբոր հեռուէն զիրենք կ'նշմարէին։

«Այս կենդանիները, գիտել տուաւ Թղթակիցը, առաջին անգամը չէ որ մարդ կ'տեսնեն։ Կ'վախնան անոնցմէ, ուրեմն զանոնք կ'ճանչեն։»

Իրենց չուէն ժամ մ'ետք՝ երերքնին ալ կղզեկին հարաւային ծայրը հասեր էին, որ սուր գլխով մը կ'վերջանար, և հիւսիսային կողմն եղան արևմտեան ծովափը բռնելով, որ նոյնպէս աւազով ու ժայռերով շինուած էր, որոց ետևի կողմը թանձր անտառներ կային։

Եւ ոչ տեղ մը բնակութեան հետք կար, տեղ մը չէր երևեր ոտքի նշան մը՝ կղզեկին բոլոր այս շրջապատին վրայ, որու շրջանն բրին չորս ժամ պտըտելով։

Ստուգիւ կարգէ դուրս բան մ'էր այս, և սկսեր էին հաւատալ որ Թափոր կղզին մարդաբնակ չէր, կամ գէթ նոյն միջացին մարդ չէր բնակեր այն տեղ։ Կարելի է յետկարը քանի մը ամիսուան կամ քանի մը տարուան թուական ունէր արդէն, և այս պարագային մէջ կրնար ըլլալ որ կամ նաւաբեկեալն իր բնիկ երկիրը վերադարձած էր կամ թշուառութենէ մեռած էր։

Բէնքրօֆ, Գեդէոն Սբիլէթ և Հարպէրդ, քիչ շատ բանաւոր ենթադրութիւններ ընելով՝ Պոնաֆանդէնին վրայ շուտով ճաշ ըրին, որպէս զի նորէն իրենց արշաւն սկսին ու մինչև գիշեր շարունակեն։

Այս արշաւն սկսան երեկոյեան ժամը հինգին, երբ անտառի մը կողմը զարկին։

Մի շատ կենդանիներ անոնց մօտենալը տեսնելով խոյս տուին, և մանաւորապէս՝ այծերն ու խոզերն, որոնք, ինչպէս որ դիւրին է տեսնել, եւրոպական տեսակին կ'վերաբերէին։ Անտարակոյս կէտորս մը հանած էր զանոնք կղզին, ուր շուտով բազմացեր էին։ Հարպէրդ միտքը դրաւ մի քանի զոյգ ողջ բռնել, որպէս զի Լինքօլն կղզին տանի։

Ուրեմն տարակոյս չկար՝ որ ուրիշ որ և է ժամանակ, մարդիկ այս կղզեակն եկեր էին։ Եւ այս աւելի բացայայտ երևցաւ, երբ որ անտառին մէջէն՝ գծուած շաւիղներ տեսնուեցան, նոյնպէս վար տապալած ծառերու կոճղեր, և ամէն տեղ մարդկային աշխատութեան նշանը. բայց այս ծառերն որ փտելու վրայ էին՝ արդէն շատ տարիներ առաջ տապալեր էին, տապարի ճեղքուածները մամուռով ծածկուեր էին, և խոտերն երկայն ու կարծր, կ'աճէին այս շաւիղներուն մէջ, զոր դժուարին էր որոշել։

«Բայց, գիտել տուաւ Գեդէոն Սբիլէթ, այս բաները կ'հաստատեն որ ոչ միայն այս կղզեկին վրայ մարդիկ եկած են, այլ և ատեն մ'անոր վրայ բնակած են։ Հիմակ, որո՞նք էին այս մարդիկ, ո՞րչափ են, ո՞րչափ մնացած են։

— Յետկարը լոկ մէկ նաւաբեկի վրայ կ'խօսի, ըսաւ Հարպէրդ։

— Լաւ ուրեմն, եթէ դեռ այդ մարդը կղզին է, պատասխանեց Բէնքրօֆ, անկարելի բան է որ զանի չգտնենք։»

Ուստի խուզարկութիւնը շարունակեցին։ Նաւորդն ու իր-

կերները բնապէս կղզին անկինագծօրէն կտրող Ճամբան բռնեցին, և այսպէս դէպ 'ի ծովը գիմող առուակին եզերքէն քալեցին։

Եթէ եւրոպական ծագում ունեցող կենդանիներ, եթէ մարդկային ձեռաց արդիւնք եղող գործեր անժխտելի կերպով կ'ապացուցանէին որ մարդ արդէն այս կղզին եկած է, բուսական կարգէն մի շատ տեսակներ նուազ ապացոյց մը չէին։ Քանի մը տեղեր՝ բացատներու միջեր, կ'տեսնուէր որ երկիրը հաւանօրէն բաւական ժամանակ առաջ բանջարեղէն տնկած էին։

Ուստի ո՛րքան մեծ եղաւ Հարպէրդի ուրախութիւնն երբոր գետնախնձոր, եղերդ, թրթնջուկ, սեխպղին, կաղամբ, շողգամ տեսաւ, որոց հունտը բաւական էր հաւաքել Լինքօլն կղզւոյն հողը ճոխացընելու համար։

«Լաւ, շա՛տ լաւ, պատասխանեց Բէնքրօֆ։ Ասոնք Նապին և իմ գործիս շատ աղէկ պիտի գան։ Ուստի եթէ նաւաբեկեալը չգտնենք, գոնէ անօգուտ չպիտի լինի մեր ուղևորութիւնը, և Աստուած մեզ վարձատրած պիտի լինի։

— Անտարակո՛յս, պատասխանեց Գեդէոն Սբիլէդ. բայց այս տունկերուն վիճակը տեսնելով, կ'վախնամ որ այս կղզեակը շատոնց անբնակ մնացած չլինի։

— Իրաւ, պատասխանեց Հարպէրդ, բնակիչ մը, ինչ որ լինի, այսպիսի կարևոր տունկեր անմշակ չպիտի թողուր։

— Այո՛, ըսաւ Բէնքրօֆ, այս նաւաբեկը մեկնած է....։ Շատ հաւանական է որ...։

— Պէտք է հաւատալ՝ որ այն թղթին թուականը շատ հին պիտի լինի։

— Անշու՛շտ։

— Եւ թէ այս շիշն ծովուն վրայ երկար ատեն ծփալէն ետև՝ Լինքօլն կղզին հասած պիտի լինի։

— Ինչո՞ւ չէ, պատասխանեց Բէնքրօֆ։ — Բայց ահա գիշերը կ'հասնի, յարեց նա, և կարծեմ թէ աւելի աղէկ է մեր խուզարկութիւնները դադրեցընել։

— Դառնանք նաւը, և վաղը նորէն կ'սկսինք» ըսաւ Թղթակիցը։

Այս խմաստուն խորհուրդ մ'էր, որու պիտի հետևէին, երբոր Հարպէրդ, խառն ու շփոթ կոյտ մը ցոյց տալով ծառերու մէջ, գոչեց.

«Բնակարան մը։»

Անմիջապէս ամէնքը ցոյց տրուած բնակարանը գիմեցին։ Վերջնալոյսին նշոյլներուն՝ կարելի եղաւ տեսնել որ տախտակներէ շինուած էր այն, որոյ վրայ կպրեալ խիտ կտաւ մը ծածկուած էր։

Դուռը կէս մը գոց էր. Բէնքրօֆ հրելով նորա մօտ արագ քայլով մը...։

Այս բնակարանը պարապ էր։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Կառուցիչներ — Գիշեր — Մի քանի նամակներ — Խոսակցութիւնները կ'ըքաղաքավարեն — Տունկեր ու կենդանիներ — Հարպերտ մեծ վտանգէ մը կը հանդիպի — Նաւակին մէջ — Ձուն — Գիշեր մը — Բնակչի նշան մը — Ծովու վրայ նորոգուած — Պարէնք ժամուն վառուած կրակ մը.

Բէնքրօֆ, Հարպէրդ և Գեդէոն Սբիլէդ մութին լռու կեցեր էին։

Բէնքրօֆ ուժգին ձայնով մը կանչեց։

Բնաւ պատասխան մը չառաւ։

Այն ատեն նաւորդը հրահանը զարկաւ ու ոստիկ մը (brindille) վառեց։ Այս լոյսը պահ մը լուսաւորեց փոքրիկ սրահ մը, որ բոլորովին երեսէ ձգուած երեւցաւ։ Ներսի դին կոշտ վառարան մը կար, քիչ մը պաղ մոխիրով, և վրան գրկաչափ մը չոր փայտ։ Բէնքրօֆ անոր մէջ բոցավառ ոստ մը նետեց, փայտը բորբոքեցաւ և վառվռուն լոյս մը հանեց։

Այն ատեն նաւորդն ու ընկերները տանտւ վրայ եղած անկողին մը տեսան, որոյ ծածկոցները, խոնաւ ու դեղնած՝ ցոյց կըտային որ երկար ժամանակէ 'ի վեր չէին գործածուեր։ Վառարանին մէկ անկիւնը կային երկու ժանգահար ջեռնոց և տապալած աման մը, պահարան մը, նաւաստիի քանի մը բորբոս հագուստներ, սեղանին վրայ կ'երեւէին անագէ պնակ մ'և Աստուածաշունչ մը, խոնաւութենէ մաշած, անկիւնի մը մէջ՝ քանի մը գործիներ, բահ, բրիչ, քարուրագ, երկու որսի հրացաններ՝ որոց մին խորտակած էր, գարանի յօրինուած տախտակի մը վրայ՝ դեռ չբացուած վառօդի տակառիկ մը, կապարի տակառիկ մ'և մի շատ խայծի տուփեր. բոլոր այս առարկաներուն վրայ խիտ փոշիի խաւ մը նստած էր, որ թերևս երկար տարիներէ 'ի վեր գիզուած էր։

«Մարդ մը չկայ, ըսաւ Թղթակիցը։

— Ո՛չ ոք, պատասխանեց Բէնքրոֆ։

— Երկար ատենէ 'ի վեր այս սենեակը բնակուած չէ, դիտել տուաւ Հարպէրդ։

— Այո՛, երկար ատենէ 'ի վեր, պատասխանեց Թղթակիցը։

— Պարոն Սբիլէթ, ըսաւ այն ատեն Բէնքրոֆ, փոխանակ նաւակը վերադառնալու, կարծեմ թէ աւելի աղէկ կ'լլայ եթէ գիշերն այս բնակարանին մէջ անցընենք։

— Իրաւունք ունիս, Բէնքրոֆ, պատասխանեց Գետէօն Սբիլէթ, և՝ եթէ այս բնակարանին տէրը վերադառնայ, լաւ, կարծեմ թէ չպիտի գանգատի որ իր տեղը բռնուած տեսնէ։

— Չպիտի վերադառնայ, ըսաւ նաւորդն իր գլուխը ցնցելով։

— Միթէ կարծես թէ կղզիէն հեռացած, հարցուց Թղթակիցը։

— Եթէ կղզիէն գացած լինէր, իր հետ զէնք ու գործիքը տարած պիտի լինէր, պատասխանեց Բէնքրոֆ։ Գիտէք թէ նաւաբեկեալներուն համար որչափ մեծ արժէք ունին այս առարկաները, որ նաւաբեկութեան վերջին բեկորներն էին։ Ո՛չ, ո՛չ, կրկնեց նաւորդը վստահ ձայնով մը, ո՛չ, կղզիէն ելած չէ։ Եթէ իր շինած մէկ նաւակով փախած լինէր, այս ամենակարևոր առարկաները բնաւ պիտի չթողուր։ Ո՛չ, կղզին է այդ նաւաբեկը։

— Կենդանի՞... հարցուց Հարպէրդ։

— Կենդանի կամ մեռեալ։ Բայց եթէ մեռած է, կարծեմ թէ ինքզինք թաղած չէ, պատասխանեց Բէնքրոֆ, և գէթ իր մնացորդները պիտի գտնենք։»

Ուստի որոշուեցաւ որ գիշերն այս լքեալ բնակարանն անցընեն, զոր կարելի էր բաւական տաքցընել անկիւնը գտնուած փայտերով։ Երբ դուռը գոցեցին, Բէնքրոֆ, Հարպէրդ և Գետէօն Սբիլէթ, նստարանի մը վրայ բազմած, անդ մնացին, քիչ խօսելով, բայց շատ մտածելով։ Այնպիսի մտքի տրամադրութիւն մը ունէին, որ ամեն բան ենթադրելու, ինչպէս նաև ամեն բանի սպասելու պատրաստ էին, և դրսի շշուկները մտադիր մտիկ կ'ընէին։

Եթէ դուռը բացուէր յանկարծ, եթէ մարդ մ'իրենց ներկայանար, զարմանալ պիտի զարմանային, թէև այդ բնակարանը ձգուած ու անկարգ էր, և պատրաստ էին այս մարդուն, այս նաւաբեկին, այս անծանօթ բարեկամին ձեռքը սեղմելու, իրեն սպասող բարեկամներ։

Բայց շշուկ մը լսելի չեղաւ, դուռը չբացուեցաւ, և ժամերն այսպէս անցան։

Ո՛րքան երկար երեւցաւ այս գիշերը նաւորդին և իր երկու ընկերներուն։ Հարպէրդ միայն երկու ժամ քնացեր էր, վասն զի իր հասակին մէջ՝ պիտոյք մ'է քունը։ Երեքնին ալ անհամբեր էին միւս օրը շարունակել նորէն իրենց խուզարկութիւնները, և այս կղզեկին ամենէն ծածուկ անկիւնները քննել։

Բէնքրոֆի հանած հետեւութիւնները կատարելապէս իրաւացի էին, և գրեթէ ստոյգ էր թէ, ըստ որում տունը ձգուած էր և թէ զէնք, գործիք այն տեղ թողեր էին, տանուորը մեռած էր։ Ուրեմն արժան էր անոր մարմինը գտնել և գոնէ քրիստոնէական թաղում մը տալ։

Արեւն երեւցաւ։ Բէնքրոֆ և իր ընկերներն անմիջապէս բնակարանը քննելու սկսան։

Իրաւ է՝ բնակարանն աղւոր դիրքի մը վրայ՝ բլրակի մը կողն

վրայ շինուած էր, և զայն հինգ վեց խժէնիներ կ'պատսպարէին։ Տան ճակատին առջեն ու ծառերուն մէջէն՝ կապարով լայն լուսամուտ մը շինուած էր, որով մարդ իր աչքը կարող էր տարածել ծովու վրայ։ Փոքրիկ դալարի մը, խրխլած պատնէշով մը զատուած, ծովափը կ'տանէր, որու ձախ դին գետակի մը բերանը կ'բացուէր։

Այս բնակարանը տախտակէ շինուած էր, և դիւրին էր տեսնել որ այս տախտակները նաւու մը փճճոյէն կամ կամրջէն եկած էին։ Ուրեմն հաւանական էր որ կայմազուրկ նաւ մը կղզւոյն եզերքը նետուած լինէր, և գոնէ նաւաստի մ'ազատած լինէր, և նաւուն բեկորներու շնորհիւ, այս մարդը, իր ձեռքին տակ գործիներ ունենալով՝ այս բնակարանը շինած էր։

Եւ այս բանս աւելի բացայայտ եղաւ, երբոր Գեդէոն Սփիլէթ, բնակարանին բոլորտիքը դառնալէն ետև՝ տախտակ մը տեսաւ — հաւանօրէն այն տախտակներէն մին որ բեկեալ նաւուն շրջանակը կ'կազմէին — որու վրայ այս կէս մ'աւրուած տառերը կային.

ԲՐ․ ՏԱՆ․ Ա

«Բրիթաննիա», գոչեց Բէնքրոֆ, որու ձայնակից եղեր էր Թղթակիցը. այս անունը շատ նաւեր ունին, և չեմ կրնար ըսել թէ այս նաւն անգլիական թէ ոչ ամերիկեան է։

— Այդ կարևոր կէտ մը չէ, Բէնքրոֆ։

— Արդարև՝ կարևոր չէ, պատասխանեց նաւորդը, և իր նաւաղին մահուանէ ետև ողջ մնացող մարդը, եթէ տակաւին կենդանի է, պիտի ազատենք ո՛ր երկրէն որ լինի։ Բայց մեր խուզարկութիւնն սկսելէն առաջ՝ Պոնավենթիւրին դառնանք։»

Բէնքրոֆին միտքը տեսակ մ'անհանգստութիւն պաշարեր էր իր նաւուն նկատմամբ։ Եթէ սակայն կղզեակը մարդաբնակ էր, և եթէ բնակիչ մը զայն գրաւած լինէր... բայց այս անհաւանական ենթադրութեան վրայ իր ուսերը բարձրացուց։

Ինչ որ է, նաւորդը կ'փափաքէր երթալ իր նաւակին մէջ ճաշ

ընել։ Ճամբան՝ որ արդէն շիտակ էր, երկար չէր — հազիւ թէ մէկ մղոն։ Ուստի ուղի ընկան, աչքով անտառ ու պուրակ քննելով, որոց մէջէն այծեր ու խոզեր խումբ խումբ կ'փախչէին։

Բնակարանը ձգելէն քսան վայրկեան ետք՝ Բէնքրոֆ ու իր ընկերները կղզւոյն արևելեան եզրը կ'տեսնէին, նոյնպէս Պոնավենթիւրն իր երկաթին վրայ կեցած, որ աւազը խոր կ'փորէր։

Բէնքրոֆ ուրախութեան հառաչ մը հանեց ակամայ։ Իրօք՝ այս նաւակն իր զաւակն էր, և հայրերու իրաւունքը պէտք եղածէն աւելի անհանգիստ լինիլն է։

Նաւակն ելան, նախաճաշ ըրին այնպէս որ շատ ուշ ճաշ ընելու պէտք ունենան. ապա՝ երբոր կերակուրը լմնցուցին, խուզարկութիւնը նորէն սկսան և աւելի մանրակրկիտ հետաքրքրութեամբ կատարեցին։

Վերջապէս՝ շատ հաւանական էր որ կղզեկին միակ բնակիչը մեռեր էր։ Ուստի Բէնքրոֆ ու իր ընկերներն աւելի մեռել մը փնտռելու ելեր էին քան թէ կենդանի մարդ մը։ Բայց անօգուտ եղան իրենց հետազօտութիւնները, և օրուան կէսն ընդունայն անցուցին կղզեակը ծածկող հոծ ծառերուն մէջ։ Այն ատեն ստիպուեցան դիտելու որ եթէ նաւաբեկ մարդը մեռած էր, իր դիակին հետքն անգամ չկար և թերևս վայրի կենդանի մ'անոր յեսին ոսկորներն ալ լափեր էր։

«Վաղն այգուն պիտի մեկնինք, ըսաւ Բէնքրոֆ իր ընկերներուն, որ՝ կէսօրէն երկու ժամ ետք՝ շոճիներու շուքին տակ պառկեցան, որպէս զի քանի մը վայրկեան հանգստանան։

— Կարծեմ թէ կարող ենք առանց խղճահարութեան, յաւելեց Հարպէրդ, նաւաբեկին գործիքն առնուլ տանիլ։

— Ես ալ այդ կարծիքն ունիմ, պատասխանեց Գեդէոն Սփիլէթ, և այս զէնքն, այս գործիները Քարեայ-Պալատին կարասիքը պիտի ամբողջացընեն։

— Եթէ չեմ սխալիր, վառօդի ու կապարի պաշարը շատ կարեւոր է։

— Այո՛, պատասխանեց Բէնքրոֆ. բայց չմոռնանք այս խոս

վերէն քանի մը զոյգ բռնել, քանի որ Լինքոլն կղզին չկայ...

— Պէտք չէ նաեւ մոռնալ հունտերը հաւաքել, յարեց Հարպէրթ, որ հին ու նոր աշխարհի ամեն տեսակ ընդեղէնները կրնայ տալ մեզի։

— Այն ատեն կարելի է աւելի պիտի յարմարի, ըսաւ Թղթակիցը, որ մ'ես մնալ Թափոր կղզին, որպէս զի մեզի ամեն պէտք եղածը հաւաքենք։

— Ո՛չ, Պարոն Սփիլէթ, պատասխանեց Բէնքրոֆ, և ես պիտի խնդրեմ որ վաղն այգուն ճամբայ ելնենք։ Կարծեմ թէ հովը դէպ 'ի արեւմուտ դառնալու երես կ'ցուցնէ, եւ գալու համար յաջող հով մ'ունենալէ ետեւ՝ լաւ հով մ'ալ պիտի ունենանք մեկնելու համար։

— Օ՛ն, ժամանակ չանցընենք, ըսաւ Հարպէրթ ոտք ելնելով։

— Ժամավաճառ չըլլանք, պատասխանեց Բէնքրոֆ։ Դու, Հարպէրթ, հունտերը ժողվելու ջանա, քանի որ աւելի լաւ կը ճանչնաս այդ արհեստն։ Նոյն միջոցին՝ Պ. Սփիլէթ և ես խոզ որսալու պիտի երթանք, և թէեւ Թոփ ներկայ չէ, յուսամ որ մէկ քանի հատ բռնելու պիտի յաջողինք։»

Ուստի Հարպէրթ այն ուղին բռնեց որ զինք կղզեկին մշակուած կողմը պիտի տանէր, մինչդեռ Նաւաստին ու Թղթակիցը շիտակ անտառը մտան։

Մի շատ խոզեր իրենց առջեւէն փախան, և այս կենդանիներն, որ յոյժ ծայր թեթեւաշարժ էին, բնաւ իրենց մօտեցընելու տրամադրութիւն չէին ցուցըներ։ Սակայն՝ կէս ժամ խուզարկութիւն ընելէ ետեւ՝ որսորդները յաջողեր էին զոյգ մը խոզ բռնել որ թանձր անտառի մը մէջ թաքչեր էին, երբոր կղզեկին հիւսիսային կողմէն քանի մը հարիւր քայլ հեռուէն, աղաղակներ լսուեցան։ Այս աղաղակներուն վայրագ ձայներ կ'միանային որ բնաւ մարդկային բան մը չունէին։

Բէնքրոֆ ու Գեդէոն Սփիլէթ կանգնեցան, ականջ դրին և խոզերն այս շարժումէն օգուտ քաղելով փախան, ճիշտ այն միջոցին որ Նաւաստին չուաններ կ'պատրաստէր զանոնք կապելու համար։

«Հարպէրթի ձայնն է, ըսաւ Թղթակիցը։

— Վազենք» գոչեց Բէնքրոֆ։

Եւ անմիջապէս Նաւաստին ու Գեդէոն Սփիլէթ իրենց բոլոր ուժով վազեցին այն կողմն ուսկից աղաղակները կ'գային։

Աղէկ ըրին որ արտորացին, վասն զի՝ ճամբուն անկիւնը դառնալով՝ տեսան բացատի մը մօտ՝ պատանին՝ որ թաւալգլոր ընկեր էր վայրենի արարածի մը, անշուշտ հսկայաձեւ կապիկի մը ձեռօք, որ անոր մեծ վնաս պիտի հասցընէր։

Բէնքրոֆ ու Գեդէոն Սփիլէթ իսկոյն այս հրէշին վրայ ընկան, զանի վար տապալեցին, Հարպէրթը փրցուցին, և վայրենի կենդանին պինդ մը բռնեցին։ Նաւաստին հերակլեան ույժ մ'ունէր, Թղթակիցն ալ կորովի էր, և հրէշին դիմադրութեան չնայելով՝ զանի ամուր կապեցին, այնպէս որ չէր կարող շարժում մ'ընել։

«Վնաս մը կրեցի՞ր, Հարպէրթ, հարցուց Գեդէոն Սփիլէթ։

— Ոչ, ոչ։

— Ա՜հ, եթէ այդ կապիկը քեզ վիրաւորած ըլլար... գոչեց Բէնքրոֆ։

— Բայց կապիկ չէ այս» պատասխանեց Հարպէրթ։

Բէնքրոֆ ու Գեդէոն Սփիլէթ՝ այս խօսքին՝ նայեցան գետնին պառկած զարմանալի արարածին։

Արդարեւ՝ կապիկ մը չէր այս, այլ մարդկային էակ մը, մարդ մ'էր։ Բայց ինչ մարդ։ Վայրենի մը, բառին բոլոր ահաւելի նշանակութեամբը, և այնքան աւելի ահարկու էր որչափ որ անասնութեան յետին աստիճանն ինկեր էր։

Իր մազերը ցցուած էին։ Մօրուքը՝ որ մինչև կուրծքը կ'իջնէր, խռուան, մարմինը գրեթէ մերկ, և միայն մէջքը կտոր մը լաթ փաթթեր էր, վայրագ աչքեր, ահագին ձեռներ, չափէն աւելի երկար եղունգ, կաղնիի պէս (acajou) մութ գոյն, կարծրացած ոտքեր, որպէս թէ եղջիւրէ շինուած ըլլէին. այս էր ահա այն թշուառ արարածը, զոր պէտք էր սակայն մարդ անուանել։ Բայց կարելի էր իրաւամբ հարցընել թէ այս մարմնոյն մէջ դեռ հոգի մը կա՞ր, թէ ոչ անասնային կոշտ բնազդումը միայն մնացեր էր անոր վրայ։

«Մի՞թէ ստոյգ ես որ այս մարդ մ'է, կամ երբեմն մարդ եղած լինի, հարցուց Բէնքրոֆ Թղթակցին։

— Աւա՜ղ, տարակոյս չկայ, պատասխանեց նա։

— Ուրեմն այս է արդեօք նաւաբեկեալ մարդը, ըսաւ Հարպէրդ։

— Այո՛, պատասխանեց Գեդէոն Սփիլէթ. բայց այս անբաղդ էակն իր վրայ մարդկային նշան մը չունի։»

Թղթակիցը ճշմարիտ կ'ըսէր։ Բացայայտ էր որ եթէ նաւաբեկեալը քաղաքակիրթ մարդ մ'եղած էր, մենաւորութիւնը զանի վայրենի դարձուցեր էր, և աւելի յոռի բան մը, անտառի ճշմարիտ մարդ մը։ Իր կոկորդէն խուպոտ հնչումներ կ'ելնէին, ակռաներուն մէջէն, որ մսակերներու ակռաներուն սրութիւնն ունէին, որ միայն հում միս ջարդելու համար շինուած են։ Շատ ատենէ 'ի վեր յիշողութիւնը կորուսած պիտի լինէր անշուշտ, նոյնպէս երկար ատենէ 'ի վեր իր գործիքը, իր զէնքը գործածելու սովորութիւնը մոռցեր էր, և ալ կրակ վառել չէր գիտէր։ Կ'երևէր որ թեթևաշարժ էր և ճկուն, բայց իր բոլոր ֆիզիքական յատկութիւնները զարգացեր էին բարոյական յատկութեանց վնասով։

Գեդէոն Սփիլէթ անոր խօսեցաւ։ Վայրենին կ'երևէր թէ ոչ կ'հասկընար և ոչ կ'լսէր . . . ։ Եւ սակայն անոր աչաց մէջ լաւ մը նայելով Թղթակիցը կարծեց գիտել որ բանականութիւնը բոլորովին մարած չէր։

Սակայն կալանաւորը չէր շարժեր և իր կապանքը խորտակելու փորձ մը չէր ըներ։ Արդեօք այս մարդոյ ներկայութենէ չքացեր էր, որոց կ'նմանէր երբեմն։ Արդեօք իր ուղեղին մէկ անկիւնը փախստական յիշատակ մը կ'գտնէ՞ր, որ զինք մարդկութեան սահմանը կ'բերէր։ Եթէ ազատ ձգուէր, փախելու փորձ մը պիտի ընէ՞ր թէ ոչ պիտի մնար։ Յայտնի չէ. բայց չփորձեցին, և այս թշուառն յետին ծայր ուշադրութեամբ քննելէն ետև՝ Գեդէոն Սփիլէթ ըսաւ.

«Ո՛վ որ է, ինչ որ եղեր է և պիտի լինի այս վայրենին, մեր պարտաւորութիւնն է զինք Լինքօլն կղզին տանիլ։

— Այո՛, այո՛, պատասխանեց Հարպէրդ, և կարելի է որ խնամք տանելով անոր իմացականութեան թեթև նշոյլ մը գըրգռելու կարող կ'լինինք։

— Հոգին չմեռնիր, ըսաւ Թղթակիցը, և մեծապէս գոհ պիտի լինինք եթէ այս արարածն անբանութենէ ազատենք։»

Բէնքրոֆ կասկածանօք գլուխը կ'ցնցէր։

«Ի՛նչ որ է, պէտք է փորձել, պատասխանեց Թղթակիցը, և մարդասիրութիւնն այս կ'պահանջէ տիրաբար։»

Իրօք՝ իրենց պարտաւորութիւնն էր բարեկիրթ ու քրիստոնեայ մարդու պէս վարուիլ։ Երեքն ալ իմացան այս բանս, և քաջ գիտէին որ Կիւրոս Սմիթ իրենց այս վարմունքը պիտի գովէր։

«Մի՞թէ կապած պիտի ձգենք, հարցուց նաւորդը։

— Կարելի է որ քալէ եթէ ոտքերը քակենք, ըսաւ Հարպէրդ։

— Փորձենք» ըսաւ Բէնքրոֆ։

Չուաններն՝ որով կալանաւորին ոտքը կապեր էին, քակեցին, բայց իր թևերը կաշկանդուած մնացին։ Ինքնին ոտք ելաւ վայրենին և խոյս տալու փափաք մը չցուցց։ Իր չոր աչքերն սուր ակնարկ մը կ'արձակէին իր քովէն քալող երեք մարդոց վրայ, և բնաւ չէր յայտնուեր որ նա կ'յիշէ թէ իր նմաններուն հետ կը գտնուի կամ թէ երբեմն անոնց նման էր։ Անընդհատ շչիւն մը շրթներէն կ'հանէր և իր կերպարանը վայրագ էր, բայց դէմ դնելու փորձ մը չփորձեց։

Թղթակցին խորհրդին վրայ՝ այս անբաղդ մարդն իր բնակարանը տարին։ Թերևս իր ունեցած առարկաներուն տեսքն իր վըրայ տպաւորութիւն մ'ընէր. կարելի է բաւական պիտի լինէր կայծ մ'իր մարած հոգին վառելու համար։

Բնակարանը հեռու չէր։ Քանի մը վայրկենէն ամէնքն անդ հասան. բայց կալանաւորը բան մը չճանչեց, և կ'երևէր թէ բնաւ բանի մը գիտակցութիւնը չունէր։

Ի՞նչ բան կարելի էր հետևցընել այս անբանութենէ որու մէջ ընկած էր այս թշուառը, եթէ ոչ այս թէ՝ կղզեկին մէջ երկար

ատենէ 'ի վեր բանտարկուած էր, և թէ իբրև բանաւոր էակ անդ գալէն ետև՝ մենաւորութիւնը զինք այս վիճակին հասուցեր էր։

Այն ատեն Թղթակիցը մտածեց որ թերևս կրակին տեսքն անոր վրայ պիտի ներգործէր, և մէկ վայրկենի մէջ՝ բոցավառ կրակ մ'որ նոյն իսկ կենդանիները կ'հրապուրէ, վառարանը լուսաւորեց։

Բոցին տեսքն 'ի սկզբան դժբաղդ վայրենիին ուշադրութիւնը գրաւեց, բայց քիչ ատենէն ետ քաշուեցաւ, և իր անզգայ ակնարկը մարեցաւ։

Անշուշտ՝ գէթ այն միջոցին ուրիշ ճար չկար եթէ ոչ զանի նաւակը տանիլ, և իրօք տարին. վայրենին անդ մնաց Բէնքրօֆի պահպանութեան ներքև։

Հարպէրդ և Գետէոն Սբիլէթ կղզեակը դարձան իրենց գործերն աւարտելու համար, և քանի մը վայրկեան ետք՝ ծովեզրը կ'դառնային՝ գործի, զէնք, ընդեղէնի հունդեր, քանի մը կտոր երէ և զոյգ մը խոզ մէկ տեղ առնելով։ Այս ամեն բաները նաւակը դրին, և Պօնավէնթիւր երկաթը վերցնելու պատրաստ եղաւ, երբոր հետևեալ օրը մակընթացութիւնն սկսաւ։

Կալանաւորն առաջքին խուցին մէջ դրուեցաւ, ուր հանդարտ, լուիկ և միանգամայն խուլ ու անխօս կեցաւ։

Բէնքրօֆ անոր կերակուր տուաւ, բայց եփած միսը մերժեց, զոր իրեն մեծարեցին և որ անտարակոյս իր ճաշակին յարմար չէր։ Եւ իրօք՝ նաւորդն Հարպէրդի սպաննած բադերէն հատ մը ներկայացընելուն՝ վայրենին անոր վրայ ընկաւ անբանական անկշտութեամբ և զայն լափեց։

«Կ'կարծե՞ս թէ այս վայրենի վիճակէն դառնայ», ըսաւ Բէնքրօֆ գլուխը ցնցելով։

— Կարելի է, պատասխանեց Թղթակիցը։ Անկարելի չէ որ մեր խնամքն անոր վրայ լաւ ազդեցութիւն մը չընէ, վասն զի մենաւորութիւնը զինք այս վիճակին մէջ ձգած է, և այսուհետև միայնակ չպիտի մնայ։

— Անշուշտ երկար ատենէ 'ի վեր՝ խեղճ մարդն այս վիճակին մէջ կ'գտնուի, ըսաւ Հարպէրդ։

— Կարելի է, պատասխանեց Գետէոն Սբիլէթ։

— Քանի՞ տարեկան կրնայ լինիլ արդեօք, հարցուց պատանին։

— Այդ դժուարին է ըսել, պատասխանեց Թղթակիցը, վասն զի անկարելի է տեսնել իր դէմքն այս խիտ մօրուքին ներքև. սակայն երիտասարդ չէ, և կարծեմ թէ գէթ յիսուն տարեկան պիտի լինի։

— Պարոն Սբիլէթ, դիտեցի՞ր արդեօք թէ ո՞րչափ խորունկցած են աչքերն իրենց կամարին ներքև, հարցուց պատանին։

— Այո՛, Հարպէրդ, բայց կ'յաւելում որ մարդկային նշան մը ունին, թէև իր անձը տեսնողը չկարծէր։

— Վերջապէս՝ պիտի տեսնենք, պատասխանեց Բէնքրօֆ, և հետաքրքիր եմ իմանալ թէ Կիւրոս Սմիթին կարծիքն ինչ պիտի լինի այս վայրենիին վրայ։ Այս կղզեակն եկանք մարդկային էակ մը փնտռելու, և ահա հրէշ մը գտնելով կ'դառնանք։ Վերջապէս ուրիշ ինչ կրնայինք ընել։»

Գիշերն անցաւ, և չհասկցան թէ կալանաւորը քնացա՞ւ թէ ոչ. բայց իրաւ է որ բնաւ չշարժեցաւ, թէև քակուած էր։ Այն վայրի կենդանիներուն կ'նմանէր որ երբոր բռնուին կ'ընկճին և վերջէն կ'կատղին։

Հետևեալ օրն՝ երբոր արեւն ելաւ — 15 հոկտեմբեր — Բէնքրօֆի գուշակածին պէս օդը փոխուեցաւ։ Հովն հիւսիս-արեւմուտքէն կ'փչէր և Պօնավէնթիւրի վերադարձին յաջող էր. բայց՝ նոյն միջոցին կ'սաստկանար և նաւարկութիւնը դժուարին պիտի ընէր։

Առաւօտեան ժամը հինգին՝ երկաթը վերցուցին։ Բէնքրօֆ իր մեծ առագաստին հով տուաւ և նաւուն գլուխն արևելեան-հիւսիս-արևելք դարձուց, այնպէս որ շիտակ Լինքօլն կղզին նաւարկէ։

Այս ուղևորութեան առաջին օրն առանց դիպուածի անցաւ։ Կալանաւորն իր խուցին մէջ հանդարտ կեցեր էր, և որովհետև ատեն մը նաւաստի եղեր էր, կ'երևէր թէ ծովուն շարժումներն

օգտակար ներգործութիւն մը կ'ընէին իր վրայ։ Արդեօք կ'յիշէ՞ր նոյն միջոցին իր առաջին արուեստը։ Այս կերպով է որ անվրդով կ'նստէր և աւելի զարմացած կ'երևէր քան թէ տխուր։

Հետևեալ օրը — 16 Հոկտեմբեր — հովը աւելի սաստկացաւ, աւելի հիւսիս դառնալով, և հետևապէս այնքան նպաստաւոր չէր Պօնավէնթիւրին ընթացքին, որ կոհակներուն վրայ կ'ոստոստէր։ Բէնքրօֆ ստիպուեցաւ հովին ուժը կտրելու ջանալ, և առանց բան մ'ըսելու, սկսաւ ծովուն վիճակին վրայ հոգ ընել, որ ուժգին կ'ծաւալէր իր նաւակին առաջքը։ Իրաւ՝ եթէ հովը չմեղմէր, աւելի շատ ժամանակ պիտի անցընէր Լինքօլն կղզին հասնելու քան ինչ որ անցուցեր էր Թափոր կղզին գտնելու համար։

Արդարև՝ ամսոյն 17ին առաւօտուն՝ քառսուն ութ ժամ կար որ Պօնավէնթիւր ճամբայ ելեր էր և բնաւ նշան մը չկար որ կղզւոյն մօտեցած լինէր։ Սակայն անկարելի էր նաւուն կտրած ճամբան հաշուել, վասն զի անոր ուղղութիւնն ու արագութիւնը շատ անկանոն եղեր էին։

Քսան ու չորս ժամ ետք՝ հեռուն ցամաք մը չերևցաւ։ Այն ատեն հովը շատ զօրաւոր էր և ծովը գարշելի։ Պէտք էր նաւուն առագաստներն արագօրէն դարձընել, որու վրայ հովն ուժգին կ'զարնէր, օղալամները քաշել, և սանձ առագաստը սեղմել՝ մանր շրջաններ ընելով։ Այնպէս պատահեցաւ Հոկտեմբերի 18ին՝ որ Պօնավէնթիւր բոլորովին ալիքով ծածկուեցաւ, և եթէ նաւորդները կանխաւ ինքզինքնին կապելու զգուշութիւն բրած չլինէին՝ ծովը պիտի մղուէին։

Այս պարագային մէջ՝ մինչդեռ Բէնքրօֆ և իր ընկերները ջուրը դուրս տալու զբաղած էին, կալանաւորէն անյուսալի օգնութիւն մը ստացան, որ սնտուկին բերնէն դուրս ցատկեց, որպէս թէ իր նաւաստիի բնազդումն երևան ելած լինէր, պերանով մը նաւուն շրջանակը խորտակեց որպէս զի կամուրջը լեցուած ջուրն աւելի շուտով ծովը թափէ. այսպէս նաև ազատելէն ետև՝ կալանաւորն իր սնտուկն իջաւ, առանց խօսք մ'արտասանելու։

Բէնքրօֆ, Գեդէոն Սփիլէթ և Հարպէրդ բոլորովին ապշած

մնալով թոյլ տուեր էին որ վայրենին ուզածն ընէ։ Սակայն իրենց վիճակը վատ էր, և նաւորդն իրաւունք ունէր կարծելու թէ այս անհուն ծովուն վրայ մոլորած է, իր ճամբան գտնելու անհնար լինելով։

Հոկտեմբերի 18էն մինչև 19 գիշերը շատ մութ ու ցուրտ եղաւ։ Սակայն ժամը տասն մէկին մօտ՝ հովն իջաւ, ծփանքը դադրեցաւ, և Պօնավէնթիւր աւելի քիչ ցնցուելով՝ սկսաւ խիստ արագ քալել։ Իրաւ է որ շատ լաւ դիմացեր էր ծովուն։

Բէնքրօֆ, Գեդէոն Սփիլէթ և Հարպէրդ ժամ մ'անգամ չկրցան քնանալ։ Ուշադիր հսկեցին, վասն զի կամ Լինքօլն կղզին հեռու չպիտի լինէր, և այգուն պիտի ստուգէին այս բանս, կամ Պօնավէնթիւրը՝ հոսանքներէն մղուելով՝ հովին սաստկութենէն շեղեր էր, և այն միջոցին գրեթէ անկարելի էր ուղղել անոր ընթացքը։

Բէնքրօֆ յետին ծայր մտատանջութեան մէջ ընկած էր իրաւ, բայց չէր յուսահատեր, վասն զի զօրաւոր հոգի մ'ունէր, և ղեկին մօտ կեցած՝ յամառութեամբ կ'ջանար զինք շրջապատող թանձր խաւարը թափանցել։

Առաւօտեան ժամն երկուքին մօտ՝ յանկարծ ոտք ելաւ և գոչեց.

«Կրակ մը, կրակ մը։»

Եւ արդարև՝ հիւսիս-արևելեան կողմն՝ քսան մղոն հեռուն վառվռուն նշոյլ մը կ'երևէր։ Անդ էր Լինքօլն կղզին, և այս լոյսն, որ անտարակոյս Կիւրուս Սմիթի խնամօք վառուած էր, հետևելիք ճամբան կ'ցուցընէր։

Բէնքրօֆ որ նաւը դէպ 'ի հիւսիս կ'մղէր, իր ուղղութիւնը փոխեց, և հորիզոնին վերևը մեծկակ աստղի մը պէս փայլող կրակին կողմը դարձուց նաւուն գլուխը։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Վերադարձ — Վիճաբանութիւն — Կիւրոս Սմիթ և անծանօթը — Օդապարիկի-Նաւահանգիստը — Երկրորդ փորձը — Հոգեշարժ աղերս մը — Առաջին ակնարկն ու առաջին հացը — Չափագիտին անձնուիրութիւնը — Սրտաշարժ փորձ մը — Քանի մ'արտասուք որ կ'իյնան.

Հետևեալ օրն՝ — 20 Հոկտեմբեր — առաւօտեան ժամը եօթին, չորս օրուան ուղևորութենէ ետք՝ Պոնավընդիւր՝ Մէրսիի բերանը՝ աւազափին վրայ եկաւ կամացուկ մը խրեցաւ։

Կիւրոս Սմիթ ու Նապ՝ այս գէշ օդին և իրենց ընկերներուն բացակայութիւնն երկարելուն վրայ սաստիկ մտատանջութիւն զգալով՝ այգուն Մեծ-Տեսքին սարահարթին վրայ ելեր էին, և վերջապէս տեսեր էին նաւն որ այնքան ուշացեր էր վերադառնալու։

«Օրհնեա՜լ է Աստուած։ Ահա՛ հասան» կ'գոչէր Կիւրոս Սմիթ։

Իսկ Նապ սկսեր էր պարել ուրախութենէ և շրջաններ ընել ծափ զարնելով և պոռալով.

«Ո՛հ, տէր իմ» և այս ամենէ գեղեցիկ ճառէն աւելի սրտաշարժ մնջկատակութիւն մ'էր։

Չափագիտին առաջին մտածմունքն՝ Պոնավընդիւրի վրայ տեսած անձերը համրելով, այս եղեր էր թէ Բէնքրօֆ թափոր կղզւոյն նաւաբեկը չէր գտած և կամ շատ շատ այդ դժբաղդ մարդն իր կղզիէն ելնելու և իր բանտն ուրիշ բանտի մը հետ փոխելու մերժած պիտի լինէր։ Եւ արդարև՝ Պոնավընդիւրի կամուրջին վրայ միայն Բէնքրօֆ, Գեդէոն Սբիլէդ և Հարպէրդ կ'երևէին։

Այն միջոցին որ նաւը մօտեցաւ՝ չափագէտն ու Նապ ծովեզրին վրայ կ'սպասէին, և նաւորդներն աւազին վրայ չցատկած՝ Կիւրոս Սմիթ անոնց կ'ըսէր.

«Շատ անհանգիստ եղանք ձեր յապաղման վրայ, բարեկամներս։ Արդեօք դժբաղդութիւն մը հասաւ ձեզ։

— Ո՛չ, պատասխանեց Գեդէոն Սբիլէդ, և ամեն բան՝ ընդհակառակն՝ շատ յաջող գնաց։ Հիմակ անցած դարձածը պիտի պատմենք ձեզի։

— Սակայն, վրայ բերաւ չափագէտը, ձեր խուզարկութիւնն անարդիւն մնաց, քանի որ ինչպէս գացիք այնպէս երեք հոգի կը դառնաք։

— Ներողութիւն կ'խնդրեմ, Պարոն Կիւրոս, պատասխանեց նաւորդը, չո՛րս հոգի ենք։

— Միթէ նաւաբեկեալ մարդը գտա՞ք։

— Այո՛։

— Միթէ մէկտե՞ղ բերիք։

— Այո՛։

— Ո՞ղջ առողջ։

— Այո՛։

— Ո՞ւր է նա. ո՞վ է։

— Մարդ մ'է, կամ աւելի լաւ ըսեմ՝ մարդ մ'էր, պատասխանեց թղթակիցը։ Ահաւասիկ այսչափ միայն կարող ենք ըսել, Պարոն Կիւրոս։»

Այն ատեն չափագիտին պատմեցին այս ուղևորութեան բոլոր պարագաները։ Ըսին անոր թէ խուզարկութիւնն ինչպէս ըրին, ինչպէս կղզեկին միակ բնակարանը վաղուց երեսի վրայ ձգուած էր, ինչպէս, վերջապէս նաւաբեկեալ մը բռներ էին, որ կարծես թէ մարդկային ցեղի չէր պատկաներ։

«Ես այնքան չնմանիր մարդու, յարեց Բէնքրօֆ, որ չեմ գիտեր թէ արդեօք աղէկ ըրի՞նք զանի այս տեղ բերելով։

— Անտարակոյս աղէկ ըրիք, Բէնքրօֆ, պատասխանեց չափագէտն աշխուժիւ։

— Բայց այս ողորմելին բանականութիւն չունի։

— Կարելի է հիմակ, պատասխանեց Կիւրոս Սմիթ. բայց հազիւ քանի մ'ամիս կայ, այս դժբաղդ էակն ձեզի և ինձի պէս

մարդ էր։ Եւ ո՛վ գիտէ միթէ ամէնէն շատ ապրողն ինչ պիտի լինէր եթէ այս կղզւոյն մէջ երկար ատեն մինակ մնար։ Բարեկամներս, վա՜յ անոր որ մենաւոր է, և պէտք է հաւատալ որ մենաւորութիւնը շուտով անոր բանականութիւնը ջնջած պիտի լինի, քանի որ այս եղկելի էակն այդպիսի վիճակի մէջ գտաք։

— Բայց, Պարոն Սիրուս, հարցուց Հարպէրդ, ինչ պատճառ ունիս կարծելու որ այս ողորմելի էակին անբանութիւնը միայն քանի մ'ամիսուան գործ է։

— Վասն զի մեր գտած յետկարն նոր գրուած էր, պատասխանեց չափագէտը, և նաւաբեկեալ մարդը միայն այդ յետկարը գրած պիտի լինի։

— Միայն թէ, դիտել տուաւ Գեդէոն Սբիլէդ, այս մարդուն մէկ ընկերը գրած և ապա մեռած չլինի։

— Կարելի է, սիրելիդ իմ Սբիլէդ։

— Ինչո՞ւ համար ուրեմն, հարցուց Թղթակիցը։

— Վասն զի այն թուղթը պիտի յիշէր որ երկու նաւաբեկեալ են, պատասխանեց Սիրուս Սմիթ, մինչդեռ միայն մէկու վրայ կ'խօսի։»

Հարպէրդ մի քանի խօսքով պատմեց նաւարկութեան դիպուածներն և այս հետաքրքրական իրողութեան վրայ պնդեց թէ ինչպէս կալանաւորին մտքին մէջ տեսակ մը վաղանցուկ զարթում մը տեղի ունեցաւ՝ երբ՝ պահ մը նաւաստի դարձաւ փոթորկին ամենէ սաստկացած ժամանակը։

«Լաւ, Հարպէրդ, պատասխանեց չափագէտը, իրաւունք ունիս այս իրողութեան մեծ կարևորութիւն մը տալ։ Այս ողորմելին անբուժելի չպիտի լինի, և այս վիճակին պատճառը յուսահատութիւնն է։ Բայց այս տեղ իր նմանները պիտի գտնէ, և որովհետև դեռ հոգի մ'ունի, այդ հոգին պիտի ազատենք։»

Այն ատեն Թափոր կղզւոյն վայրենին, որ չափագիտին գութն ու Նայլին՝ զարմանքը կ'շարժէր՝ նաւուն բանտէն դուրս հանեցին և երբ անգամ մը ցամաքը կոխեց՝ նախ խոյս տալու փափաք մը ցցուց։

Բայց Սիրուս Սմիթ անոր մօտենալով ձեռքն ուսին վրայ դրաւ իշխանական շարժումով մը և անչափ քաղցրութեամբ անոր երեսը նայեցաւ։ Անմիջապէս ողորմելին՝ տեսակ մը յանկարծական տիրապետութիւն մը կրելով՝ քիչ քիչ հանդարտեցաւ, աչքերն իջեցուց, ճակատը խոնարհեցուց, և այնուհետև բնաւ դիմադրութիւն մը չըրաւ։

«Խե՜ղճ ընկեցիկ» մրմնջեց չափագէտը։

Սիրուս Սմիթ ուշի ուշով զանի դիտեր էր։ Արտաքին երևոյթին նայելով՝ այս թշուառը մարդու կարգէն ելեր էր, և սակայն Սիրուս Սմիթ, ինչպէս որ արդէն Գեդէոն Սբիլէդ նշմարեր էր, անոր ակնարկին մէջ իմացականութեան անըմբռնելի նշոյլ մը տեսաւ։

Այնպէս որոշեցին գաղթականներն որ ընկեցիկ մարդը, կամ լաւ ևս անծանօթը — վասն զի այնուհետև այս անունը տուին անոր՝ իր նոր ընկերները — Քարեայ-Պալատին մէկ սենեակը բնակի, ուսկից չէր կարող խոյս տալ։ Առանց դիմադրութեան մինչև սենեակը գնաց, և պէտք եղած խնամոց շնորհիւ, թերևս յուսալի էր որ օրին մէկը գաղթականները նոր ընկերակից մը պիտի վաստըկէին Լինքօլն կղզւոյն մէջ։

Սիրուս Սմիթ նախաճաշկի ատեն՝ զոր Նապ փութացուցեր էր — վասն զի Թղթակիցը, Հարպէրդ և Բէնքրօֆ անօթութենէ կը մեռնէին — աւելի մանրամասն պատմել տուաւ Թափոր կղզեկին մէջ եղած խուզարկութեան դիպուածները։ Իր ընկերներուն հետ համամիտ գտնուեցաւ այս մասին որ անծանօթն Անկլիացի կամ Ամերիկացի մը պիտի լինէր, վասն զի Բրիտանիա անունն այնպէս կարծել կ'տար, և դարձեալ, այս խոպան մօրուքին մէջէն, այն մազերին ներքև որ իբրև գիսակ կ'ծառայէր, չափագէտն անկլօ-սաքսոնի յատուկ դիմաց գծագրութիւնը նշմարել կարծեր էր։

«Բայց նայինք, ըսաւ Գեդէոն Սբիլէդ Հարպէրդին դառնալով, դու մեզի չըսիր թէ ինչպէս հանդիպեցար այս վայրենիին, և ուրիշ բան չգիտենք այս մասին՝ եթէ ոչ քեզ պիտի խեղդէր եթէ քեզի օգնելու համար ժամանակին չհասնէինք։»

— Ճշմարիտը, պատասխանեց Հարպէրդ, եղածը պատմելու համար ես ալ աղէկ չգիտեմ։ Կարծեմ թէ բոյսեր հաւաքելու զբաղած էի, երբոր բարձր ծառէ մ'ընկնող ձեան հիւսի մ'աղմուկին նման բան մը լսեցի։ Հազիւ ժամանակ ունեցայ գլուխս դարձընելու . . . ։ Այս ողորմելին՝ որ անտարակոյս ծառի մը վըրայ պըլած էր, իմ վրայ սլացեր էր այս պատմածէս աւելի կարճ միջոցի մէջ, և եթէ Պ. Սբիլէդ ու Բէնքրօֆ . . . ։

— Որդեակ, ըսաւ Կիւրոս Սմիթ, մեծ վտանգի մը հանդիպեր ես, բայց կարելի է, առանց այս պարագային՝ ընկեցիկ մարդը չպիտի գտնէինք և նոր ընկեր մը չպիտի ունենայինք։

— Ուրեմն կ'յուսամ, Պարոն Կիւրոս, որ զանի մարդ ընես։

— Այո՛» պատասխանեց Կիւրոս Սմիթ։

Երբոր նախաճաշը լմնցաւ, Կիւրոս Սմիթ ու իր ընկերները Քարեայ-Պալատէն ելան և աւազափն իջան։ Այն ատեն Պոնավէնթիւրին բեռները հանեցին, և չափագէտը զէնքերն ու գործիքը քննելով չգտաւ բան մ'որով կարենար անծանօթին ով ըլլալն իմանալ։

Բռնուած խոզերը կղզւոյն մէջ շատ օգտակար սեպուեցան, և այս կենդանիները գոմը տարին, ուր գիւրաւ պիտի վարժէին։

Վառօդի և կապարի երկու տակառները մեծ բանի տեղ անցան, ինչպէս նաև խայծերը։ Մինչև անգամ որոշեցին վառօդանոց մը հաստատել վերին քարայրին մէջ, ուր բնաւ պայթման վախ չկար։ Սակայն միշտ հրախայտը գործածելու շարունակեցին, վասն զի՝ այս նիւթն ընտիր արդիւնք տալուն՝ պատճառ մը չկար անոր տեղ վառօդ գործածել։

Երբոր նաւուն բոլոր բեռը հանեցին, Բէնքրօֆ ըսաւ.

«Պարոն Կիւրոս, կարծեմ թէ խոհեմութիւնը կ'պահանջէ որ մեր Պոնավէնթիւրին ապահով տեղ մը գտնենք։

— Մի՞թէ Մէրսիի բերանը յարմար վայր մը չէ՞, հարցուց Կիւրոս Սմիթ։

— Ո՛չ, Պարոն Կիւրոս, պատասխանեց Բէնքրօֆ։ Շատ ժամանակ աւազի վրայ խրած կ'մնայ և առոլ կըլլայ ճեղքելու։ Վասն

զի լաւ նաւ մ'է, գիտես, և շատ լաւ դիմացաւ երէկ՚ի դարձին զուռն փոթորկի մը հանդիպեցանք։

— Մի՞թէ կարելի չէ՞ նոյն իսկ գետին վրայ պահել։

— Անտարակոյս, Պարոն Կիւրոս, կարելի է. բայց գետաբերանը բնաւ պատսպարան մը չունի, և արևելեան հովեր փչելուն՝ կարծեմ թէ Պոնավէնթիւր ալիքներէ շատ պիտի նեղուի։

— Լաւ, ու՞ր կ'ուզես որ դնենք, Բէնքրօֆ։

— Օդապարիկի-Նաւահանգիստը, պատասխանեց նաւորդը։ Այն փոքրիկ ծովածոցը՝ որ ժայռերէ շրջապատուած է, անոր աւմենէ յարմար նաւահանգիստը կընայ ըլլալ։

— Մի՞թէ քիչ մը հեռու չէ՞։

— Բա՛, Քարեայ-Պալատէն երեք մղոն հեռու կ'գտնուի միայն, և անդ գնալու համար շիտակ ու աղւոր ճամբայ մ'ունինք։

— Գիտցածիդ պէս ըրէ, Բէնքրօֆ, և Պոնավէնթիւրը տա՛ր, պատասխանեց չափագէտը, և սակայն աւելի լաւ կ'համարէի որ մեր անմիջական հսկողութեան ներքև գտնուէր։ Երբ ժամանակ ունենանք՝ պէտք պիտի ըլլի փոքրիկ նաւահանգիստ մը շինել։

— Սքանչելի՛, գոչեց Բէնքրօֆ։ Նաւահանգիստ մ'որ փարոս, ամբարտակ և աւազան մ'ունենայ։ Ա՛խ, իրաւ, Պարոն Կիւրոս, քեզմով ամեն բան կ'դիւրանայ։

— Այո՛, քաջդ իմ Բէնքրօֆ, պատասխանեց չափագէտը, բայց այս պայմանաւ որ ինձ օգնես, վասն զի մեր գործերուն երեք քառորդը քեզմով գլուխ կ'հանենք։»

Ուստի Հարպէրդ և նաւորդը Պոնավէնթիւր մտան, որու խարիսխը վերցուցին, առագաստը բացին և Ճիրանի-Գլուխը հասան շուտ մը բաց ծովուն հովով։ Երկու ժամ ետք՝ նաւը Օդապարիկի-Նաւահանգստին հանդարտ ջրերուն վրայ կ'կանգնէր։

Առաջին օրերն որ անծանօթը Քարեայ-Պալատն անցուց միթէ իր վայրենի բնաւորութեան փոխուելուն նշանը տուա՞ւ։ Միթէ աւելի որոշ լոյս մը կ'փայլէ՞ր անոր մութ իմացականութեան մէջ։ Վերջապէս հոգին կ'դառնա՞ր մարմնոյն։ Այո՛, անտարակոյս, և այն աստիճան որ Կիւրոս Սմիթ ու Թղթակիցն սկսան իրարու հար-

ցընել, եթէ երբեք դժբաղդ մարդուն բանականութիւնը բոլորովին մարած էր։

Նախ՝ անծանօթը բաց օդին և Թափոր կղզւոյն մէջ վայելած անսահման ազատութեան վարժ՝ ներքին կատաղութիւն մը յայտնէր էր, և վախցան որ Քարեայ—Պալատին մէկ պատուհանէն աւազափին վրայ չցատկէ։ Բայց քիչ քիչ հանդարտեցաւ, և թոյլ տուին որ ուզածին պէս շարժի։

Ուրեմն իրաւունք ունէին յուսալու, և շատ։ Արդէն իր մսակերի բնազդը մոռնալով՝ անծանօթը նուազ գազանային սնունդ մը կ՚ընդունէր քան Թափոր կղզին կերածը, և եփած միսն այնքան հակառակ չէր երևեր որքան երևցեր էր Պօնավանդիւրին մէջ։

Կիւրոս Սմիթ՝ վայրենիին քնացած ժամանակը պատեհ առիթ սեպելով՝ կտրեց անոր մազերն ու խառնակ մօրուքն որ տեսակ մը բաշ կ՚յօրինէին և անոր վայրագ կերպարան մը կ՚տային։ Նոյնպէս աւելի յարմար զգեստներ տուեր էր անոր, զանի ծածկող լաթի կտորը հանելով։ Այս հոգատարութեան շնորհիւ՝ անծանօթը մարդկային դէմք մ՚առաւ, և այնպէս երևցաւ իսկ որ իր աչքերն աւելի անուշ երևոյթ մ՚առին։ Անշուշտ՝ այս մարդուն դէմքը տեսակ մը գեղեցկութիւն պիտի ունենար երբ երբեմն իմացականութիւնը զայն կ՚լուսաւորէր։

Կիւրոս Սմիթ ամեն օր իրեն պարտք դրած էր քանի մը ժամ անոր ընկերութեամբ անցընել։ Իրօք՝ կայծ մը բաւական էր այս հոգին վառելու, յիշատակ մ՚որ անոր գլխէն անցնելով բանականութիւնն արթնցընէր։ Պօնավանդիւրին մէջ՝ փոթորիկին ատեն՝ այս բանս արդէն յայտնի եղաւ։

Ճարտարագէտը զանց չէր ըներ նաև բարձր ձայնով խօսելու անոր, որպէս զի թէ աչքի և թէ ականջի գործարանաց միջոցաւ անոր թմրած իմացականութեան խորը թափանցէ։ Երբեմն իր ընկերներէն մին երբեմն միւսը, երբեմն ամէնքը միասին՝ անոր կը միանային։ Ստէպ նաւարկութեան վերաբերեալ բաներու վրայ կը խօսէին, որ նաւաստիի մը համար աւելի հետաքրքրական էին։

Ատեն ատեն՝ անորոշ մտադրութիւն մը կ՚ընծայէր անծանօթը

խօսակցութեան, և գաղթականները քիչ ատենէն համոզուեցան որ ըստ մասին իրենց ըսածը կ՚հասկընար։ Երբեմն ալ իր դէմքին բացատրութիւնը խորին ցաւ մը կ՚յայտնէր, և այս ալ ապացոյց մ՚էր որ ներքուստ կ՚տառապէր, վասն զի դէմքը չէր կրնար այս աստիճան պատրել. բայց չէր խօսեր նա, թէև մերթ ընդ մերթ այնպէս կ՚թուէր որ իր շրթներէն խօսք մը պիտի ելնէր։

Ի՛նչ որ է, խեղճ էակը հանդարտ էր և տխուր։ Իր հանդարտութիւնն երևոյթակա՞ն էր արդեօք։ Արդեօք իր տրտմութիւնը կալանաւորութեան հետևութի՞ւնն էր։ Դեռ կարելի չէր այս մասին որոշակի բան մ՚ըսել։ Որովհետև վայրենին միայն քանի մը առարկաներ՝ սահմանաւոր շրջանի մէջ կ՚տեսնէր, շարունակ գաղթականներուն հետ կ՚գտնուէր, որոց վերջապէս պիտի վարժէր, և բնաւ զոհ ընելու փափաք մը չունէր, և ասկից զատ՝ քանի որ աւելի լաւ կ՚ուտէր և կ՚հագուէր, 'ի հարկէ իր ֆիզիքական բնաւորութիւնը քիչ քիչ պիտի այլայլէր։

Բայց միթէ մի նոր կենաց զգացումն ունէ՞ր, կամ թէ — ճշգրիւ անոր յատկանալի բառ մը գործածելու համար — արդեօք կենդանիի մը պէս միայն իր տիրոջ մօտ ընտելացե՞ր էր։ Այս կարևոր խնդիր մ՚էր, զոր Կիւրոս Սմիթ փութով լուծել կ՚ուզէր, և սակայն չէր ուզեր իր հիւանդը գրգռել։ Իրեն համար՝ հիւանդ մ՚էր անծանօթը։ Միթէ նորաբոյժ մը պիտի լինէ՞ր երբէք։

Ստուգիւ՝ ինչպէս ճարտարագէտն ամեն վայրկեան զանի կ՚դիտէր. ինչպէս կ՚լրտեսէր իր հոգին, եթէ կարելի է այսպէս ըսել. ինչպէս պատրաստ էր զայն բռնելու։

Գաղթականներն անկեղծ այլայլութեամբ կ՚նկատէին Կիւրոս Սմիթին սկսած բուժման բոլոր աստիճանները։ Այս մարդասիրութեան գործին մէջ անոր կ՚օգնէին, և ամէնքը՝ թերևս բայց 'ի թերահաւատ Բէնքրօֆէն, քիչ քիչ սկսան յուսալ ու հաւատալ Կիւրոս Սմիթին պէս որ վայրենին պիտի բժշկուի։

Ինչպէս ըսինք՝ անծանօթին հանդարտութիւնը կատարեալ էր, և ճարտարագէտին համար, որու ներգործութիւնը յայտնապէս կը կրէր, տեսակ մը համակրութիւն կ՚ցուցնէր։

Ուստի՝ Կիւրոս Սմիթ միտքը դրաւ զանի փորձել, ուրիշ միջավայր մը փոխադրելով զանի, այն Ովկիանու առջև՝ զոր երբեմն իր աչօք սովոր էր նկատել, այն անտառներուն սահմանն որ իրեն պիտի յիշեցընէին այն պուրակներն ուր իր կենաց շատ մը տարիներն անցուցած էր։

«Բայց, ըսաւ Գեդէոն Սփիլէթ, յուսալի՞ է որ ազատութիւն գտնելէն ետև խոյս տալու փորձ մը չընէ։

— Պէտք է փորձել, պատասխանեց չափագէտը։

— Լաւ, ըսաւ Բէնքրոֆ։ Երբոր այդ թշուառականն իր առջևը բաց արձակ տեսնէ և ազատ օդը ծծէ՝ բոլոր ուժով պիտի փախչի։

— Ես չեմ կարծեր, պատասխանեց Կիւրոս Սմիթ։

— Փորձենք» պատասխանեց չափագէտը։

Այն օրն Հոկտեմբերի 30ն էր, և հետևապէս ինն օր կար որ Թափոր կղզւոյն վայրենին Գրանիթ–Պալատին մէջ բանտարկուած էր։ Տաք էր օդը, և աղուոր արև մ'իր ճառագայթները կղզւոյն վրայ կ'արձակէր։

Կիւրոս Սմիթ և Բէնքրոֆ անծանօթին բնակած սենեակը գացին, որ նոյն միջոցին պատուհանին մօտ պառկած երկինքը կը նայէր։

«Եկուր, բարեկամդ իմ» ըսաւ անոր չափագէտը։

Անծանօթը շուտ մը ոտք ելաւ։ Իր աչքը Կիւրոս Սմիթին վրայ կեցաւ, և ինք անոր հետևեցաւ, մինչդեռ Նաւորդն անոր ետևէն կ'քալէր, այս փորձին արդեանց վրայ վստահ չլինելով։

Երբոր դուռը հասան, Կիւրոս Սմիթ և Բէնքրոֆ վերհանին մէջ զանի նստեցուցին, մինչդեռ Նապ, Հարպէրդ և Գեդէոն Սփիլէթ Գրանիթ–Պալատին ոտքը կ'սպասէին։ Կողովը վար իջաւ, և քանի մը վայրկեանէն ամենքն աւազափին վրայ գումարուեցան։

Գաղթականները քիչ մը հեռացան անծանօթէն, անոր քիչ մ'ազատութիւն տալու մտօք։

Նա մի քանի քայլ առաւ դէպ 'ի ծովը, և իր աչքն յետին ծայր կենդանութեամբ փայլեցան, բայց բնաւ խոյս տալու միտք

մը չցուց. մանր կոհակներուն կ'նայէր, որ կղզւոյն ծայրը փշրուելով աւազին վրայ կ'հանդարտէին։

«Այս դեռ ծով է, դիտել տուաւ Գեդէոն Սփիլէթ, և կարելի է որ այս ծովը իրեն խոյս տալու փափաք մը չազդեր։

— Այո՛, պատասխանեց Կիւրոս Սմիթ, պէտք է զանի սարահարթը տանիլ՝ անտառին սահմանը։ Այն տեղ մեր փորձառութիւնն աւելի վճռական պիտի լինի։

— Սակայն, պիտի չկարենայ փախչիլ, ըսաւ Նապ, քանի որ կամուրջները վերցուած են։

— Ո՛հ, ըսաւ Բէնքրոֆ, Կլիսէրին–Վտակի պէս գետակներու առջև կեցող մարդ չէ այս։ Շուտ մը պիտի անցնի, լոկ ոստում մ'ընելով։

— Նայինք» ըսաւ միայն Կիւրոս Սմիթ, որ իր աչքերն իր հիւանդին վրայէն չէր հեռացըներ։

Այն ատեն վայրենին Մէրսիի բերանը տարին, և ամենքը՝ գետակին ձախ կողմէն վեր ելնելով Մեծ–Տեսքին սարահարթը հասան։

Երբոր հասան այն տեղն՝ ուր անտառին առաջին աղուոր ծառերը կ'ամէին, և քամին անոնց տերևները թեթև մը կ'շարժէր, կարծես թէ վայրենին զմայլելով կ'ծծէր այն թափանցիկ հոտն որով մթնոլորտը լի էր, և երկար հառաչ մ'արձակեց իր սրտէն։

Գաղթականներն ետև կեցեր էին, զանի բռնելու պատրաստ գտնուելով եթէ խոյս տալու համար շարժում մ'ընէր։

Եւ իրօք՝ խեղճ էակը զինք անտառէն զատող գետին մէջ նետուելու վրայ էր, և իր սրունքը զսպանակի պէս պահ մը ձկտեցան... բայց գրեթէ անմիջապէս ինքզինքին եկաւ, վհատ ու կորակոր մնաց և խոշոր արտասուք մ'աչքերէն ընկաւ։

«Ա՛խ, գոչեց Կիւրոս Սմիթ, ահա ուրեմն մարդ դարձար, քանի որ կ'արտասուես։»

ԳԼՈՒԽ ԺԶ.

Պարզուելու նշան փաղանէ մը — Անծանօթին առաջին խօսքերը — Կղզէ-կին մէջ դառն երկու օրեր — Ակամայ խոստովանութիւններ — Անխուսա-փելին — Կիւրոս Սմիթի փութկոտութիւնը — Աղբիւր մը չնմութիւնը — Ա-ռաջին հոգը — Անձնուիրութեան գործ մը — Պարէկէշ յետեւեր.

Այո՛, գծբաղը լայներ էր։ Անշուշտ՝ կիշատակ մ'իր մտքէն անցեր էր, և Կիւրոս Սմիթին բացատրութեան համեմատ՝ արտաօտքովը մարդ դարձեր էր։

Գաղթականները քիչ մ'ատեն սարահարթին վրայ թողուցին զանի, և փոքր ինչ հեռացան, այնպէս որ կարծէ թէ ազատ է. բայց անծանօթն այս ազատութենէ օգուտ քաղել չուզեց բնաւ, և Կիւրոս Սմիթ Քարեայ-Պալատը դարձուց զանի։

Այս տեսարանէն երկու օր ետք՝ անծանօթը կարծես թէ քիչ քիչ իր ընկերներուն կենցաղավարութեան մասնակից լինիլ կ'ուզէր։ Ակներև էր որ կ'լսէր, կ'հասկընար, բայց ոչ նուազ բազէր։ Ակներև էր որ տարօրինակ յամառութեամբ մը գաղթականներուն ցայայտ էր որ տարօրինակ յամառութեամբ մը գաղթականներուն հետ չէր ուզեր խօսիլ, վասն զի իրիկուն մը՝ Բէնքրօֆ՝ իր սենեակին դուռէն ականջ դնելով՝ այս խօսքերը լսեց որ անծանօթին բերնէն կ'ելնէին.

«Ո՛չ, այս տեղ, ես, երբե՛ք։

Նաւաստին այս խօսքն իր ընկերներուն հաղորդեց։

«Այս բանին մէջ վշտալի գաղտնիք մը կայ» ըսաւ Կիւրոս Սմիթ։

Անծանօթն սկսեր էր մշակութեան գործիքներ գործածել, և բանջարանոցը կ'աշխատէր։ Երբոր իր աշխատութեան մէջ կանգ կ'առնէր, և այս սոէպ կ'պատահէր, ինքն իր մէջ ամփոփուած կ'մնար. բայց՝ չափազիտին պատուէրին վրայ՝ կ'յարգէին այս մե-

նաւորութիւնը զոր կարծես թէ պահել կ'ուզէր։ Եթէ գաղթականներէն մին անոր մօտենար, ետ կ'քաշուէր անծանօթը, ու րու կուրծքը հեծեծանօք կ'յուզուէր, որպէս թէ շատ զեղուն լինէր։

Միթէ խղճի խայթն էր որ զինք այսպէս կ'տանջէր։ Այս հաւանալի էր, և Գեդէոն Սրիլէդ օր մ'այս դիտողութիւնն ըրաւ ակամայ.

«Եթէ չխօսիր, պատճառն այս է կարծեմ որ շատ ծանր բաներ պիտի ունենայ ըսելիք։»

Պէտք էր համբերել ու սպասել։

Քանի մ'օր ետք՝ նոյեմբերի 3ին, անծանօթն՝ սարահարթին վրայ աշխատելու ատեն՝ կանգ առեր էր, իր բահը գետինը դնելէն ետև՝ և Կիւրոս Սմիթ որ քիչ մը հեռու կեցած կ'դիտէր, նորէն տեսաւ արտասուքներ որ անոր աչքերէն կ'վազէին։ Անդիմադրելի գթութենէ շարժեալ անոր մօտեցաւ, և անոր թևին թեթև մը դպաւ.

«Բարեկամդ իմ» ըսաւ։

Անծանօթը չուզեց անոր երեսը նայիլ, և Կիւրոս Սմիթ, երբոր ուզեց անոր ձեռքը բռնել, աշխուժով ետ ետ քաշուեցաւ նա։

«Բարեկամդ իմ, ըսաւ Կիւրոս Սմիթ աւելի ամուր ձայնով մը, նայէ ինձ, կ'ուզեմ որ երեսս նայիս։»

Անծանօթը չափազիտին երեսը նայեցաւ և կարծես թէ անորմէ կ'ներգործուէր, ինչպէս մագնիսացեալ մ'իր մագնիսացընողին իշխանութեան ներքև ու խոյս տալ ուզեց։ Բայց այն ատեն կարծես թէ իր կերպարանը բոլորովին այլափոխեցաւ։ Իր ակնարկը կայծեր արձակեց. բերնէն խօսքեր հանելու կ'միտէր, չէր կարող այլ ևս ինքզինք բռնել... վերջապէս իր թևերը ծալեց, և ապա խուլ ձայնով մը.

«Դու ո՞վ ես, հարցուց նա Կիւրոս Սմիթին։

— Քեզի պէս նաւաբեկներ ենք, պատասխանեց չափազէտը՝ ա-րու այլայլութիւնը շատ մեծ էր։ Քեզ այս տեղ քու նմաններուդ մէջ բերինք։

— Նմաննե՛ր . . . ես չունիմ։

— Բարեկամներու մէջ կ՚գտնուիս . . . ։

— Բարեկամնե՛ր . . . իմ բարեկամներս, գոչեց անծանօթն իր գլուխը ձեռացը մէջ պահելով . . . ո՛չ . . . երբէք . . . թո՛ղ զիս, թո՛ղ զիս ։»

Յետոյ խոյս տուաւ սարահարթին այն կողմն որ ծովու վրայ կ՚նայէր, և այն տեղ անշարժ մնաց երկայն ատեն։

Կիւրոս Սմիթ իր ընկերներուն մօտ գնալով՝ անցած դարձածը կ՚պատմէր։

«Այո՛, գաղտնիք մը կայ անշուշտ այս մարդուն կենացը մէջ, ըսաւ Գեդէոն Սբիլէդ, և կ՚երևի թէ մարդկութեան մէջ մտաւ խղճի խայթին ուժով։

— Չեմ հասկընար թէ ինչ կերպ մարդ բերինք այս տեղ, ըսաւ նաւորդը։ Գաղտնիք ունի . . .

— Պիտի յարգենք այդ գաղտնիքը, պատասխանեց Կիւրոս Սմիթ աշխուժով մը։ Եթէ յանցանք մը գործած է, անդթաբար զայն քաւեց և մեր առջև թողութիւն գտած է ։»

Անծանօթն երկու ժամ մնաց ծովեզրին վրայ. անշուշտ այնպիսի յիշատակներու ազդեցութեան ներքև էր որ իր անցեալն աչքին առջև կ՚բերէին — աղէտաւոր անցեալ մ՚անշուշտ — և գաղթականները թէև աչքէ չէին հեռացըներ զանի, բայց անոր առանձնութիւնը վրդովել չուզեցին։

Սակայն երկու ժամ ետք՝ կարծես թէ որոշում մ՚ըրաւ և Կիւրոս Սմիթին քովն եկաւ։ Իր աչքերը՝ թափած արտասուքէն՝ կարմըրցած էին, բայց այլ ևս չէր արտասուեր։ Իր բոլոր կերպարանին վրայ՝ խորին հլութիւն մը կ՚տեսնուէր։ Վեհերոտ, ամօթապարտ կ՚երևէր, խոնարհիլ կ՚ուզէր, և իր աչքը շարունակ գետին յառած էր։

«Պարո՛ն, ըսաւ նա Կիւրոս Սմիթին, միթէ Անկլիացի՞ էք դուք և ձեր ընկերները։

— Ո՛չ, պատասխանեց չափագէտը, Ամերիկացի ենք։

— Ա՛հ» ըրաւ անծանօթը, և այս խօսքը մրմնջեց.

«Այդ աւելի աղէկ է ինծի համար։

— Հապա դո՛ւ, բարեկամդ իմ, հարցուց չափագէտը։

— Անկլիացի եմ» պատասխանեց նա արտորնօք։

Եւ, որպէս թէ այս մէկ քանի խօսքն ըսելու համար մեծ կսկիծ զգացած լինէր, աւազափէն հեռացաւ, և ջրվէժէն մինչև Մէրսիի բերանը քալեց յետին ծայր վրդովման մէջ։

Յետոյ՝ պահ մը Հարպէրդի քովէն անցնելուն՝ կայ առաւ, և խեղդուկ ձայնով մը՝ հարցուց.

«Ո՞ր ամիս ենք։

— Դեկտեմբեր, պատասխանեց Հարպէրդ։

— Ո՞ր տարին։

— 1866։

— Տասն երկո՛ւ, տասն երկու տարի» գոչեց նա։

Յետոյ յանկարծ հեռացաւ գնաց։

Հարպէրդ իր ընկերներուն հաղորդեց իրեն եղած հարցումներն ու տուած պատասխանները։

«Ուրեմն այս տարաբաղդ մարդը, դիտել տուաւ Գեդէոն Սբիլէդ, ոչ ամիսն և ոչ տարին գիտէր։

— Այո՛, պատասխանեց Հարպէրդ, և արդէն տասն երկու տարիէ 'ի վեր կղզեկին վրայ էր երբոր զինք գտանք։

— Տա՛սն երկու տարի, պատասխանեց Կիւրոս Սմիթ։ Ա՛հ, տասն երկու տարուան մենաւորութիւն, թերևս անիծեալ կեանք մը վարելէն ետև, կարող են մարդու մը բանականութիւնը խանգարել։

— Ինծ այնպէս կ՚երևի, ըսաւ այն ատեն Բէնքրոֆ, որ այս մարդը նաւաբեկութեամբ հասած պիտի չլինի Թափոր կղզեակը, այլ այն տեղ ձգուած պիտի լինի յանցանք մը գործելուն համար։

— Իրաւունք պիտի ունենաս, Բէնքրոֆ, պատասխանեց թղթակիցը, և եթէ ըսածդ ստոյգ է, անկարելի բան չէ որ զինք կղզեկին վրայ ձգողներն օր մը չգան զանի փնտռելու։

— Եւ պիտի չգտնեն, ըսաւ Հարպէրդ։

— Ուրեմն, վրայ բերաւ Բէնքրոֆ, պէտք պիտի լինի վերադառնալ, և . . .

— Բարեկամներս, ըսաւ Կիւրոս Սմիթ, պէտք չէ այս խնդրոյն վրայ խօսիլ առանց անոր էութիւնը գիտնալու։ Կարծեմ թէ այս տարաբաղդ մարդը շատ տառապանք կրած է, չարաչար քաւած է իր յանցանքը, ինչ որ է, և սիրտը բանալու պէտքը զինք կը խղդէ։ Պէտք չէ գրգռել որ մեզի իր պատմութիւնն ընէ։ Անշուշտ պիտի յայտնէ մեզի զայն, և երբոր իմանանք, այն ատեն կ՚որոշենք թէ ինչ միջոց գործածելու է։ Ասկէ զատ՝ ինք միայն կրնայ ըսել մեզի թէ օր մ՚իր հայրենիքը վերադառնալու յոյս, ստուգութիւն ունի, թէև ես կ՚տարակուսիմ։

— Եւ ինչո՞ւ համար, հարցուց Թղթակիցը։

— Վասն զի՝ եթէ ինք ստոյգ լինէր որ պայմանեալ ժամանակի մը մէջ պիտի ազատէր, իր ազատութեան ժամուն պիտի սպասէր և այն թուղթը ծովը չպիտի նետէր։ Ո՛չ, աւելի հաւանական է որ մեռնելու համար այն կղզեակը նետուած էր և այլ ևս չպիտի տեսնէր իր նմանները։

— Բայց, ըսաւ Նաւորդը, բան մը կայ զոր չեմ կարող բացատրել։

— Ի՞նչ բան։

— Եթէ տասն երկու տարի է որ այս մարդը Թափոր կղզին ձգուած է, կարելի է ենթադրել որ շատ տարիներէ 'ի վեր այս վայրենի վիճակի մէջն էր, ուր զինք գտանք։

— Այդ հաւանական է, պատասխանեց Կիւրոս Սմիթ։

— Ուրեմն այդ թուղթը շատ տարիներէ 'ի վեր գրուած պիտի լինի։

— Անտարակոյս . . . և սակայն կարծես թէ թուղթը նոր գրուած է . . . ։

— Դարձեալ, ինչպէս կարելի է հաւտալ որ թուղթը պարունակող շիշն շատ տարիներ անցնելով Թափոր կղզիէն Լինքօլն կղզին հասած լինի։

— Այդ բոլորովին անկարելի չէ, պատասխանեց Թղթակիցը։ Միթէ երկար ատենէ 'ի վեր ծովափին վրայ նետուած չէ՞ր կրնար լինիլ։

— Ո՛չ, պատասխանեց Բէնքրօֆ, վասն զի դեռ ևս ծովուն վրայ կ՚տատանէր։ Կարելի չէ նաև ենթադրել որ քիչ շատ ատեն ծովեզրին վրայ մնալէն ետև՝ նորէն ջրերը ծովը քշած լինին, վասն զի բոլորովին ժայռուտ է հարաւային եզերքը, և շիշն անշուշտ պիտի խորտակուէր։

— Ստոյգ է, պատասխանեց Կիւրոս Սմիթ, որ սկսաւ խորհիլ։

— Ասկէ զատ՝ յարեց Նաւորդը, եթէ թուղթը հին թուական մ՚ունենար, եթէ շատ տարիներէ 'ի վեր այս շիշին մէջ փակուած լինէր, խոնաւութենէ պիտի աւրուէր։ Արդ՝ տեսանք որ այնպէս չէր, և կատարելապէս անվնաս մնացած էր։»

Նաւաստիին դիտողութիւնն արդարացի էր, և ասոր մէջ անիմանալի իրողութիւն մը կար, վասն զի թուղթը նոր գրուած կ՚երևէր, երբոր գաղթականները զայն շիշին մէջ գտան։ Ասկէ զատ՝ Թափոր կղզւոյն լայնութեան ու երկայնութեան աստիճանը կ՚ցուցնէր, որմէ կ՚իմացուէր թէ գրողն ջրագրութեան մասին կատարեալ տեղեկութիւն ունէր, զոր պարզ նաւաստի մը չէր կրնար ունենալ։

«Նորէն կ՚ըսեմ, այս խնդրոյն մէջ անմեկնելի բան մը կայ, ըսաւ ճարտարագէտը․ բայց մեր նոր ընկերը խօսելու չգրգռենք։ Բարեկամներս, երբոր նա կամի այն ատեն պատմածը մտիկ ընելու պատրաստ կ՚գտնուինք։»

Հետևեալ օրերն անծանօթը բառ մ՚անգամ չարտասանեց և սարահարթին շրջապատէն բնաւ չհեռացաւ։ Առանց վայրկեան մ՚անցընելու և հանգիստ առնլու հողը կ՚մշակէր, բայց միշտ հեռու մնալով։ Կերակուրի ժամերուն ամենևին Քարեայ-Պալատը չէր ելներ, թէև շատ անգամ զինքն հրաւիրած էին, և բաւական կ՚սեպէր հում ընդեղէն ուտելու։ Երբոր գիշերը հասնէր իրեն սահմանուած սենեակը չէր երթար, այլ այն տեղ, ծառերու փունջին ներքև կ՚մնար, կամ երբոր օդը գէշ էր ժայռի մը խոռոչին մէջ կ՚կզկէր։

Այսպէս անծանօթը կ՚ապրէր այն ժամանակուան պէս երբ Թափոր կղզւոյն անտառներէն ուրիշ պատսպարան չունէր և իր կեն-

յանցաւորութեան կերպը փոխել տալու համար ամէն ջանք պարապ ելնելով՝ պաղթականները համբերութեամբ սպասեցին։ Բայց վերջապէս կ՚հասնէր այն ժամը երբ իր խղճէն տիրաբար և որպէս թէ ակամայ մղուելով անծանօթը սոսկալի խոստովանութիւններ ընելու պիտի ստիպուէր։

Նոյեմբեր ամսուն 10ին, երեկոյեան ժամը ութին, այն միջոցին որ մութը կ՚կոխէր, անծանօթը յանկարծ գաղթականներուն առջեւ ներկայացաւ, որոնք հովանոցին ներքեւ միասին նստեր էին։ Իր աչքերը տարօրինակ կերպով կ՚փայլէին, և իր բոլոր անձն՝ առաջուան գժբաղդ օրերուն պէս՝ վայրենիի երեւոյթ մը կ՚ընծայէր։

Կիւրոս Սմիթ և իր ընկերները կերպով մը զարհուրեցան տեսնելով որ անծանօթը սոսկալի այլայլութեան մը ներգործութենէ իր ակռաները կ՚կափկափէր որպէս թէ տենդէ բռնուած լինէր։ Ի՞նչ ունէր ուրեմն այս մարդը։ Արդեօք անտանելի՞ կ՚երեւէր իր աչքին իր նմաններուն տեսքը. արդեօք այս պարկեշտ ընկերութենէ տաղտկացե՞ր էր. արդեօք անբանութեան կարօտը զինք նորէն կ՚պաշարէ՞ր։ Այս բանիս հաւատացին երբոր այսպէս կիսկատուր խօսքեր կ՚արտաբերէր.

«Ինչո՞ւ համար այս տեղն եմ... ի՞նչ իրաւամբ զիս իմ կղզիէս հանեցիք... միթէ ձեր ու իմ մէջ կապ մը կրնա՞յ գտնուիլ... միթէ գիտէ՞ք թէ ես ո՛վ եմ... թէ ես ի՞նչ ըրի... ինչո՞ւ համար այն տեղն էի... առանձին։ Եւ ուսկի՞ց գիտէք որ զիս այն տեղ չթողուցին... թէ անդ մեռնելու դատապարտուած չէի ... գիտէ՞ք իմ անցեալս... կարելի է որ ես գող, մարդասպան եմ... ոճրագործ մ՚եմ... անիծեալ մը... մի միայն իբրեւ վայրենի կենդանի ապրելու արժանի... ամէն մարդէ հեռի ... միթէ կարելի չէ՞... ըսէք նայիմ։»

Գաղթականները մտիկ կ՚ընէին այս թշուառին ըսածներն առանց ընդհատելու, և այս կիսկատուր խոստովանութիւնները բերնէն կ՚ելնէին ակամայ։ Այն ատեն Կիւրոս Սմիթ ուզեց զանի հանդարտեցընել անոր մօտենալով, բայց անծանօթն աշխուժեաւ քաշուեցաւ.

«Ո՛չ, ո՛չ, գոչեց նա։ Խօսք մը միայն ունիմ ըսելու... միթէ ազա՞տ եմ։

— Ազատ ես, պատասխանեց չափագէտը։

— Ուրեմն մնաք բարեաւ» պոռաց նա, և խենթի պէս փախաւ։

Նապ, Բէնքրօֆ, Հարպէրդ շուտ մ՚անտառին ծայրը վազեցին գացին... բայց առանձին դարձան։

«Թող տուէք որ ուզածն ընէ, ըսաւ Կիւրոս Սմիթ։

— Երբէք չպիտի դառնայ... գոչեց Բէնքրօֆ։

— Պիտի վերադառնայ» պատասխանեց չափագէտը։

Եւ այնուհետեւ շատ օրեր անցան. բայց Կիւրոս Սմիթ — արդեօք տեսակ մը նախազգացում ունէր — պնդեց հաստատապէս որ այն դժբաղդ մարդը վաղ կամ անագան պիտի ետ դառնայ։

«Այս կոշտ բնաւորութեան վերջին ապստամբութիւնն է, կ՚ըսէր նա, որ խղճի խայթով կ՚առաջի և եթէ այսուհետեւ միայնակ մնայ պիտի զարհուրի։»

Սակայն գաղթականներն ամէն տեսակ գործեր շարունակեցին թէ Մեծ-Տեսքին սարահարթին վրայ թէ գոմին մէջ, որու մօտ ագարակ մը պատրաստելու միտք ունէր Կիւրոս Սմիթ։ Աւելորդ է ըսել որ Թափոր կղզիէն Հարպէրդի բերած հունտերը խնամօք ցանեցին։ Սարահարթն ընդարձակ բանջարանոցի մը տեսքն ունէր այն ատեն, խիստ կանոնաւոր, խիստ լաւ պահուած, որ գաղթականներուն թեւերն անգործ չէր ձգեր։ Միշտ աշխատելու համար գործ կար անդ։ Քանի որ բանջարները կ՚աւելնային գաղթականները կ՚ստիպուէին ածուները մեծցընել, որ երթալով ընդարձակ դաշտեր պիտի դառնային և մարգերուն տեղը պիտի բռնէին։ Աւելի աղէկ էր բանջարանոց ընել բոլորովին Մեծ-Տեսքին սարահարթը, որ խոր վտակներու գօտիով մը շուրջանակի պաշտպանուած էր, և մարգագետինները հեռու տեղ տանիլ, որոնք քառաձեռնեայ և քառոտնեայ կենդանիներու աւերումներէն պահպանուելու պէտք չունէին։

Նոյեմբերի 15ին երրորդ հունձքն ըրին։ Աւասիկ դաշտ մ՚որու մակերեւոյթն ընդարձակեր էր, տասն ութ ամսէ ՚ի վեր որ ցը

րենի առաջին հատիկը ցանուեր էր։ Վեց հարիւր հազար ցորենի առաջին հունձքն այս անգամ չորս հազար կապիճ ցորեն արտադրեց, ըսենք հինգ հարիւր միլիոնէն աւելի ցորեն։ Գաղթականները ցորենի կողմէ հարուստ էին, վասն զի բաւական էր տասնի չափ կապիճ ցանել ամեն տարուան ցորենի պաշարն ապահովելու համար, այնպէս որ մարդ ու կենդանի կարենան կերակրիլ։

Ուստի հունձքը քաղեցին գաղթականներն և նոյեմբերի վերջին տասն հինգ օրը հաց շինելու գործածեցին։

Իրաւի, ցորեն կար բայց ալիւր պէտք էր և աղօրի մը շինելու հարկն զգալի եղաւ։ Կիւրոս Սմիթ կարող էր երկրորդ քարավազը գործածել՝ որ Մէրսիի մէջ կ՚թափէր, իր շարժիչ զօրծին հաստատելու համար, քանի որ առաջինը բուրդը թափելու կ՚գործածուէր, բայց խնդիրը վիճաբանութեան ներքև ձգելէն ետև՝ որոշուեցաւ հովաշարժ աղօրի մը շինել Մեծ–Տեսքին բարձանց վրայ։ Ինչպէս միայն նոյնպէս միւսին շինութիւնը դժուարութիւն մը չունէր, և միւս կողմէն ստոյգ էին որ հովը պակաս չպիտի լինի սարահարթին վրայ, քանի որ ծովուն քամիներուն ենթակայ էր։

«Պէտք է նաև նկատել, ըսաւ Բէնքրօֆ, որ այս հովաշարժ աղօրին աւելի զուարթ պիտի լինի և դաշտանկարին վրայ աղուոր երևոյթ մը պիտի ունենայ։»

Ուստի գործի սկսան ատաղձ ընտրելով վանդակին և աղօրին կազմուածքին համար։ Մէկ քանի մեծ խճաքարեր՝ որ լճակին հիւսիսակողմը կ՚գտնուէին՝ դիւրին էր երկաններ ընել, իսկ օդապարիկին անսպառելի ծածկոյթը կարող էր իրենց կտաւ մատակարարել թևերը շինելու համար։

Կիւրոս Սմիթ յատակագիծը շինեց և աղօրին տեղն ընտրեց հաւնոցին աջ կողմը, լճակին ժայռափին մօտ։ Բոլոր վանդակը խոշոր ատաղձներու մէջ առնուած առանցքի մը վրայ պիտի կենար, այնպէս որ կարող լինի բոլոր գործիներովը հովին փչած կողմը դառնալ։

Այս աշխատանքը շուտով լմնցաւ։ Նապ ու Բէնքրօֆ խիստ ճարտար ատաղձագործներ եղեր էին և բաւական էր իրենց ճարտարապետին ցոյց տուած կաղապարին համեմատ շինել։ Ուստի քիչ ատենէն որոշուած տեղը կանգնեցաւ տեսակ մը գլանաձև խուղ մը, ճշմարիտ աղաման մը սրաձև տանիքով մը ծածկուած։ Թևերը կազմող չորս շրջանակներն հաստատապէս ագուցած էին ընկողմանուած ծառին մէջ այնպէս որ անոր հետ անկիւն մը յօրինեն, և երկաթէ սեպերով ամրապնդեցին զանոնք։ Իսկ ներքին կազմածին այլ և այլ մասերը շատ դիւրաւ շինուեցան, ինչպէս երկու երկանաքարերը պարունակելու սահմանուած տուփը, մնայուն երկանաքարն և շրջուն երկանաքարը, գոգը (trémie) որ տեսակ մը քառակուսի մսուր է, վերի կողմը լայն, վարի կողմը նեղ, ուրկէ ցորենը երկանաքարին վրայ պիտի թափէր, ճօճիուն խողովակն որ ցորենին թափը կ՚կանոնաւորէ և մշտատև Ըէկ—Ըաք ձայնը կ՚հանէ, և վերջապէս մաղն (blutoir) որ թեփն ալիւրէն կ՚զատէ։ Գործիքը լաւ էին, և աշխատութիւնն այնքան դժուարին չեղաւ, վասն զի՝ բոլորը մէկտեղ առնլով՝ աղօրին գործարանները պարզ են։ Միայն ժամանակի խնդիր մ՚եղաւ։

Ամենքն աշխատեր էին աղօրին շինելու համար որ դեկտեմբերի 1ին աւարտած էր։

Ինչպէս միշտ՝ Բէնքրօֆ իր գործին վրայ կ՚զմայլէր և անկասկած էր որ գործիքը կատարեալ էր։

«Հիմակ մեզի պէտք եղածը լաւ հով մ՚է, ըսաւ, և մեր առաջին հունձքը շատ աղէկ պիտի աղանք։

— Լաւ հով մը, թող այդպէս լինի, պատասխանեց չափագէտը. բայց սաստիկ հով պէտք չէ, Բէնքրօֆ։

— Բա՛, մեր աղօրին այն ատեն աւելի շուտ պիտի դառնայ։

— Պէտք չէ որ այնքան շուտ դառնայ, պատասխանեց Կիւրոս Սմիթ։ Փորձով գիտենք որ աղօրի մ՚ամենէ շատ արդիւնք յառաջ կ՚բերէ երբոր իր թևերուն հոլոված շրջաններուն թիւն մէկ վայրկենի մէջ վեցապատիկն է, հովին առած ոտից թիւոյն մէկ վայրկենի մէջ։ Միջին քամիով մը, որ մէկ մանրերրորդի մէջ

քսան չորս ոտք կ՚տայ , տասն վեց շրջան ընել պիտի տայ թևերուն մէկ վայրկենի մէջ, և մեզի համար աւելի պէտք չէ ։

— Ճիշտ է , պոռաց Հարպէրդ , հիւսիս-արևելեան կողմէ ալոր քամի մը կ՚փչէ որ մեր գործին պիտի գայ ։»

Պատճառ մը չկար աղօրիին գործողութիւնն ուշացընել , վասն զի գաղթականներն Լինքօլն կղզւոյն առաջին հացէն ճաշակելու մեծ փոյթ ունէին ։ Ուստի այն օրն՝ տասւօտուն՝ երկու երեք կապիճ ցորեն աղացին , և հետևեալ օրն՝ նախաճաշիկի ատեն՝ փառաւոր նկան մը , որ թերևս քիչ մը պինդ էր , թէև գարեջրի խմորով շաղեր էին , Քարեայ-Պալատին սեղանին վրայ կ՚երևէր։

Դիւրին է երևակայել թէ գաղթականներն ինչ մեծ ախորժակով ու հաճոյքով կերան այդ հացէն ։

Սակայն անծանօթն երևան չէր եկած ։ Շատ անգամ Գետէօն Սբիլէդ և Հարպէրդ Քարեայ-Պալատին շուրջն անտառը պտըտեր էին առանց անոր հանդիպելու , առանց անոր հետքը գտնելու ։ Այսչափ երկար ատեն աներևոյթ լինելուն վրայ անհանգիստ էին ։ Անշուշտ Թափոր կղզւոյն հին վայրենին առանց նեղութեան պիտի կարենար ապրիլ այս Խոր-Արևմտաքի որսաշատ անտառներուն մէջ. բայց միթէ վախ չկա՞ր որ իր հին սովորութեանց չդառնայ և այս անկախութիւնն իր վայրագ բնազդումները չզրգռէ ։ Սակայն՝ Կիւրոս Սմիթ , անշուշտ տեսակ մը նախազգացումով , միշտ կ՚պնդէր թէ փախստականը պիտի վերադառնար ։

«Այո՛ , պիտի վերադառնայ , կ՚կրկնէր նա վստահութեամբ մը որու չէին կրնար մասնակից գտնուիլ իր ընկերները ։ Երբ այս տարաբաղդ մարդը Թափոր կղզին էր՝ կ՚զգար որ միայնակ էր ։ Այս տեղ գիտէ որ իր նմանները իրեն կ՚սպասեն ։ Քանի որ իր անցեալ կենաց վրայ կիսովին խօսեցաւ , այս խեղճ ապաշխարողն զայն բոլորովին պատմելու համար վերստին պիտի գայ և այն օրը բոլորովին մեզի պիտի միանայ ։»

Դէպքն այնպէս պիտի բերէր որ Կիւրոս Սմիթ իրաւունք պիտի ունենար ։

Դեկտեմբեր 3ին Հարպէրդ Մեծ-Ցեռքին սարահարթը թողլով

լճակին հարաւային եզերքը ձկնորսելու գացեր էր ։ Զէնք չունէր վրան , և մինչև այն ատեն քնաւ զգուշութիւն մ՚ընելու պէտք չէր տեսեր , վասն զի վտանգաւոր կենդանիները կղզւոյն այն կողմերը չէին երևեր ։

Նոյն միջոցին Պէնքրօֆ ու Նապ հաւնոցը կ՚աշխատէին , մինչդեռ Կիւրոս Սմիթ և Թղթակիցը Կարկառներուն մէջ զբաղած էին սոտա շինելու , վասն զի աճառը հատեր էր ։

Յանկարծ աղաղակներ լսուեցան .

«Օգնութեան հասէք , հասէ՛ք ինձ ։»

Կիւրոս Սմիթ և Թղթակիցը հեռու գտնուելով այս աղաղակները չէին լսած ։ Պէնքրօֆ ու Նապ շուտ մը հաւնոցէն ելնելով դէպ 'ի լճակը սրացեր էին ։

Բայց իրենցմէ առաջ , անծանօթն , որու ներկայութիւնն այն կողմերը և ոչ մէկուն մտքէն կ՚անցնէր , Գլիսէրին-Վտակէն կ՚անցնէր , որ սարահարթն անտառէն կ՚զատէր և դիմացի եզրը կ՚ցատկէր ։

Այն տեղ Հարպէրդ ահագին յովազի մը դիմաց էր , այն յովազին նման որ Սողունի-Հրուանդանին վրայ սպաննուեր էր արդէն ։ Յանկարծակի գալով Հարպէրդ կանգուն կ՚կենար ծառի մը յենած , մինչդեռ կենդանին ամփոփուելով պիտի նետուէր իր վրայ . . . ։ Բայց անծանօթը դանակէ զատ զէնք մը չունենալով՝ ահարկու վայրի կենդանիին վրայ ընկաւ , որ այս նոր հակառակորդին դէմ դարձաւ ։

Կռիւը կարճ եղաւ ։ Անծանօթն հիանալի ույժ ու ճարպիկութիւն ունէր ։ Կարոցի պէս զօրաւոր ձեռքով մը յովազին կոկորդէն բռներ էր , առանց հոգ ընելու որ կենդանիին ճիրանները կրնային իր միսերը բզկտել , և միւս ձեռքով անոր սիրտը կ՚մղէր դանակը ։

Յովազը վար ընկաւ ։ Անծանօթն ոտքովը հրեց զայն , և խոյս տալու վրայ էր երբ գաղթականները հասան կռուին տեղը . բայց Հարպէրդ անոր ետևէն ընկնելով պոռաց .

«Ո՛չ , ո՛չ , չպիտի երթաս ։»

Սիւրոս Սմիթ անծանօթին կողմը գնաց, ուր յօնքը պռստեցան երբ անոր մօտենալը տեսաւ։ Արիւնն իր պատռած բաճկոնակին ամէն ուսին վրայ կ՚երևէր, բայց փոյթը չէր։

«Բարեկամս իմ, ըսաւ անոր Սիւրոս Սմիթ, երախտագիտութեան նոր պարտք մ՚ունինք քեզի։ Մեր որդին ազատելու համար քու կեանքդ վտանգի դրիր։

— Ի՛մ կեանքս, մրմնջեց անծանօթը. և ինչ կ՚արժէ այն. ոչ ինչ։

— Վիրաւորուե՞ր ես։

— Հոգ չէ։

— Ձեռքդ ինծի կ՚տաս։»

Եւ որովհետև Հարպէրդ կ՚ջանար բռնել անոր ձեռքն որ իր կեանքն ազատեր էր, անծանօթը թևերը ծալլեց, կուրծքն ուռեցաւ, ակնարկը մթացաւ և կարծես թէ փախչիլ կ՚ուզէր. բայց ինքն իր վրայ բռնութիւն մ՚ընելով խրոխտ ձայնով մ՚ըսաւ.

«Ո՞վ էք դուք, և ինչ կ՚կարծէք լինիլ ինծի համար։»

Այս կերպով գաղթականներուն պատմութիւնը կ՚հարցընէր և առաջին անգամ։ Կարելի է որ եթէ այս պատմութիւնը պատմէին [illegible] ալ իրենը պիտի ըսէր։

Սիւրոս Սմիթ պատմեց մի քանի խօսքով ինչ որ պատահեր էր իրենց Ռիչմոնտէն մեկնելէն 'ի վեր, ինչպէս մեծ նեղութիւններէ ազատուեր էին և հիմակ ինչ միջոցներ ունէին իրենց ձեռքին տակ։

Անծանօթը յետին ծայր ուշադրութեամբ մտիկ կ՚ընէր։

Յետոյ ճարտարագէտն ըսաւ ինչ որ էին ամէնքը. Գեդէոն Սբիլէթ, Հարպէրդ, Բէնգրոֆ, Նապ, ինք և յարեց թէ Լինքոլն կղզին գալէն 'ի վեր՝ ամենէ մեծ ուրախութիւնն զգացեր են երբ Թապորէն դարձին սեպեր են որ նոր ընկերակից մը գտեր են։

Այս խօսքին վրայ անծանօթը կարմրեցաւ, գլուխը կուրծքին վրայ ծռեց, և բոլոր կերպարանին վրայ շփոթութեան նշաններ տեսնուեցան։

«Եւ հիմակ որ մեզ կ՚ճանչես, յարեց Սիւրոս Սմիթ, կ՚ուզես ձեռքդ մեզի տալ սեղմելու։

— Ո՛չ, պատասխանեց անծանօթը խուլ ձայնով մը, ո՛չ։ Դուք պատուաւոր մարդիկ էք, դո՛ւք. իսկ ե՛ս . . . ։»

ԳԼՈՒԽ ԺԶ.

Միշտ հեռուն կ՚կենայ — Անծանօթին մէկ հարցումը — Գոմին մէջ շինուած նաւարակը — Տասն երկու տարի կոյ — ԲՐԻՏԱՆԻԱյի վեր նաւաստերը — Թափոր կղզին լռումը — Սիւրոս Սմիթին յետոյը — Խորհրդաւոր յետոյները.

Այս վերջին խօսքերը գաղթականներուն նախազգացումները կ՚արդարացընէին։ Այս տարաբաղդ մարդուն կենաց մէջ դժնդակ անցեալ մը կար, որ թերևս մարդկան աչքէն քաւութիւն գտած էր, բայց իր խիղճը տակաւին իրեն ներողութիւն տուած չէր։ Այս իրաւ է որ յանցաւորը խղճի խայթէ կ՚տանջուէր, և կը զղջար, և իր ձեռքն զոր կ՚ուզէին բռնել իր նոր բարեկամներն, անշուշտ սրտագին պիտի թօթուէին, բայց ինքզինք արժանի չէր գտներ այն պարկեշտ մարդոց տալու։ Սակայն՝ յովազին դէպքէն ետք՝ անտառը չդարձաւ անծանօթը, և այն օրէն 'ի վեր՝ Քարեայ-Պալատին շրջափակէն չհեռացաւ։

Ի՞նչ էր այս մարդուն գաղտնիքը։ Արդեօք անծանօթը պիտի յայտնէ՞ր օր մ՚ինքզինք։ Այդ բանն ապագան պիտի բացատրէր։ Ինչ և է, բոլոր գաղթականները համաձայնեցան որ անոր չհարցընեն բնաւ գաղտնիքը և անոր հետ այնպէս ապրին որպէս թէ բան մ՚անցած չլինէր։

Քանի մ՚ատեն առաջուան պէս սկսան շարունակել իրենց կենցաղը։ Սիւրոս Սմիթ ու Գեդէոն Սբիլէթ միասին կ՚աշխատէին, երբեմն քիմիագէտի, երբեմն բնագէտի պէս։ Թղթակիցը ճարտարագէտէն կ՚հեռանար միայն երբոր Հարպէրդի հետ որսի երթէր,

վասն զի խոհեմութիւն չպիտի ըլլար պատանին մինակ թողուլ որ անտառները գեղերի և պէտք էր զգուշ ըլլալ։ Իսկ Նապին ու Պէնքրոֆի գալով՝ օր մ՚ախոռը կամ հաւնոցը կ՚երթային, ուրիշ օր մը գոմը, առանց հաշուելու Քարեայ–Պալատին գործերն և միշտ աշխատանք մը կ՚գտնէին։

Անծանօթը մեկուսի կ՚աշխատէր և իր սովորական կեանքը վարելու սկսեր էր. սեղանը չէր նստեր, սարահարթին ծառերուն ներքև կ՚պառկէր և բնաւ իր ընկերներուն հետ չէր տեսնուեր։ Այնպէս կ՚երևէր որ զինք ազատողներուն ընկերութիւնն իրեն անտանելի էր։

«Ուրեմն, դիտել կ՚տար Պէնքրոֆ, ինչու համար իր նմաններուն օգնութիւնը խնդրեց։ Ինչու համար այն յեռակարը ծովը նետեց։

— Ինք պիտի բացատրէ մեզ այդ բանը, կ՚պատասխանէր հաստատապէս Կիւրոս Սմիթ։

— Ե՞րբ։

— Կարելի է կարծածէդ աւելի շուտ, Պէնքրոֆ։»

Եւ իրաւ՝ խոստովանութեան օրը կ՚մօտենար։

Դեկտեմբերի 10ին, Քարեայ–Պալատը դառնալէն շաբաթ մը ետք, Կիւրոս Սմիթ տեսաւ որ անծանօթն իրեն կ՚մօտենար։ Հանդարտ ձայնով և խոնարհ դէմքով մ՚անոր ըսաւ.

«Պա՛րոն, քեզի հարցում մ՚ունիմ ընելու։

— Խօսէ՛, պատասխանեց չափագէտը։ Բայց նախ թո՛ղ որ քեզի հարցում մ՚ընեմ։»

Այս խօսքին վրայ՝ անծանօթը կարմրեցաւ և քիչ մնաց որ պիտի քաշուէր երթար։ Կիւրոս Սմիթ հասկցաւ թէ յանցաւորին սրտին մէջ ինչ կ՚անցնէր, որ կ՚վախնար անշուշտ թէ չափագէտն անցեալոյն վրայ հարցում մը չընէ։

Կիւրոս Սմիթ անոր ձեռքէն բռնելով կեցուց.

«Ընկե՛ր, ըսաւ անոր, ոչ միայն ընկերակից ենք իրարու հետ այլ բարեկամներ ենք։ Կ՚փափաքէի այս բանս քեզի ըսել, և հիմակ պատրաստ եմ մտիկ ընելու։»

Անծանօթը ձեռքն աչացը վրայ դրաւ։ Տենդ մը դողէ բռնուեր էր և քանի մը վայրկեան անշարժ կեցաւ առանց խօսք մ՚արտասանել կարենալու։

«Պա՛րոն, ըսաւ վերջապէս, եկայ ձեզ աղաչելու որ ինծի շնորհ մ՚ընէք։

— Ի՞նչ շնորհ։

— Ասկէց չորս հինգ մղոն հեռու, լեռին ստորոտը՝ ձեր ընտանի կենդանիներուն համար գոմ մ՚ունիք։ Այդ կենդանիները խնամուելու պէտք ունին։ Կ՚ուզէ՞ք ներել ինծի որ այն տեղ անոնց հետ ապրիմ։»

Կիւրոս Սմիթ քիչ մ՚ատեն տարաբաղդ մարդուն երեսը նայեցաւ խորին արգահատութեան զգացումով մը։

«Բարեկա՛մդ իմ, ըսաւ, գոմին մէջ ախոռներ կան, որ հազիւ թէ կենդանիներու յարմար են...։

— Ինծի համար բաւական աղէկ են, պարոն։

— Բա՛րեկամ, վրայ բերաւ Կիւրոս Սմիթ, երբէք կամացդ դէմ բան մը չպիտի ընենք։ Կ՚փափաքիս գոմին մէջ բնակիլ. շատ աղէկ։ Բայց դարձեալ մեր գլխուն վրայ տեղ ունինք քեզի համար Քարեայ–Պալատին մէջ։ Բայց քանի որ գոմը բնակիլ կ՚ուզես, պէտք եղած պատրաստութիւնները պիտի տեսնենք որպէս զի հանգիստ ըլլաս այն տեղ.

— Ինչ որ է, միշտ հանգիստ պիտի ըլլամ այն տեղ։

— Բա՛րեկամ, պատասխանեց Կիւրոս Սմիթ, որ այս մտերմական անունը դիտմամբ կ՚կրկնէր, մեզի պէտք է թողուս որ այս մասին պէտք եղածն ընենք։

— Շնորհակալ եմ, պարոն» պատասխանեց անծանօթը քաշուելով։

Չափագէտն անմիջապէս այս առաջարկութիւնն իր ընկերներուն հաղորդեց, և որոշուեցաւ որ գոմին մօտ փայտէ տուն մը շինեն և կարելի եղածին չափ հանգիստ ընեն։

Նոյն օրն իսկ՝ գաղթականները գոմը գացին պէտք եղած գործիքներով, և շաբաթ մը չանցած՝ տունը շինուեր և տանուորն ըն-

գտնելու պատրաստ էր ։ Ախոռներէն քանի մը չափ հեռու կառուցուեր էր, և դիւրին պիտի լինէր անկից արտիկներու երամակներուն վրայ հսկել, որոնք այն ատեն ութսուն գլուխ կային ։ Քանի մը կարասիք, խշտեակ, սեղան, նստարան, պահարան, սնտուկ շինուեցան և զամը փոխադրուեցան, նոյնպէս զէնքեր, մթերք և գործիք ։

Սակայն անծանօթն իր նոր բնակարանը տեսնելու չէր գացած, և գաղթականներն այն տեղ թողեր էր որ առանց իրեն աշխատին, մինչդեռ ինք սարահարթին վրայ կ'զբաղէր, անշուշտ իր գործը վերջացընելու համար ։ Եւ իրաւի՝ իր շնորհիւն բոլոր հողերը մշակուած և վար ու ցան լինելու պատրաստ էին՝ երբոր յարմար ժամանակը գար ։

Դեկտեմբերի 2ն էր որ գոմին մօտ ամեն կարգադրութիւն եղած էր ։ Զափաղէտն իմաց տուաւ անծանօթին որ իր բնակարանը պատրաստ էր, և այս ալ պատասխանեց թէ նոյն իրկուն իսկ այն տեղ պիտի երթայ պառկելու ։

Այն գիշեր՝ գաղթականները Քարեայ-Պալատին մեծ սրահին մէջ գումարուեր էին ։ Այն ատեն ժամն ութ էր — այն միջոցին որ ընկերներն իրմէն հեռանալու էին, չուզելով անոր նեղութիւն տալ հրաժարական բարեւներ ուղղելով գաղթականները զինք առանձին թողեր և Քարեայ-Պալատն ելեր էին ։

Արդ՝ մեծ սրահին մէջ կ'խօսակցէին քիչ մ'առենէ 'ի վեր՝ երբ դուռը թեթեւ մը զարնուեցաւ ։

Գրեթէ նոյն միջոցին անծանօթը ներս մտաւ և առանց ուրիշ նախաբանի ըսաւ ․

«Պարոններ, ձեզմէ հեռանալէ առաջ պէտք է որ իմ պատմութիւնս իմանաք ։ Ահաւասիկ ։»

Այս պարզ խօսքն բաւական խորին տպաւորութիւն մ'ըրին Կիւրոս Սմիթի և իր ընկերներուն վրայ ։

Զափաղէտն ոտք ելեր էր ։

«Մենք բան մը չենք հարցըներ քեզի, բարեկամ, ըսաւ Զափաղէտը ։ Լռելու իրաւունք ունիս . . . ։

— Իմ պարտաւորութիւնս է խօսիլ ։

— Ուրեմն խօսիր ։

— Կանգուն պիտի մնամ ։

— Պատրաստ ենք քեզ մտիկ ընելու» պատասխանեց Կիւրոս Սմիթ ։

Անծանօթը սրահին մէկ անկիւնը կեցեր էր կիսաստուերին մէջ ։ Գլուխը բաց էր, կուրծքին վրայ ծալլած էր թեւերը, և այս դիրքին մէջ հետեւեալ պատմութիւնը պատմեց խուլ ձայնով մը, խօսելու համար ինքզինք բռնաբարող մարդու մը պէս խօսելով. ունկնդիրներն անոր խօսքն և ոչ անգամ մ'ընդհատեցին ։

«1854, դեկտեմբեր ամսոյն 20ին Տօնքան անուն շոգենաւն, որ սկովտացի ազնուական լորտ Կլէնարվանինն էր Պէռնոյլի գլուխն, Աւստրալիոյ արեւմտեան եզերքին մօտ երկաթ կ'նետէր, երեսուն եօթներորդ զուգահեռականին բարձրութեան ։ Այս շոգենաւին մէջ կ'գտնուէր լորտ Կլէնարվան, իր կինը, անգլիական զօրաց հազարապետ մը, Փրանսացի երկրագէտ մը, նորատի օրիորդ մը և պատանի մը ։ Այս վերջին երկու անձերը Կրէնդ նաւապետին զաւակներն էին ։ Անոր Բրիտաննիա անուն նաւը՝ տարի մ'առաջ բոլորովին կորսուեր էր իր նաւորդներով ։ Տօնքանի հրամանատարը Ճօհն Մէնկլէսն էր և նաւազը տասն հինգ հոգիէ կ'բաղկանար ։

«Այս շոգենաւն ինչ պատճառաւ այն ժամանակ Աւստրալիոյ եզերքը կ'գտնուէր ձեզի պատմեմ ։

«Վեց ամիս առաջ՝ անգլիարէն, գերմաներէն և փրանսերէն գրուած թուղթ մը պարունակող շիշ մը գտնուեր էր Իրլանտայի ծովուն մէջ և Տօնքան զայն գտեր էր ։ Այս թուղթին իմաստն այս էր թէ Բրիտաննիա նաւուն բեկումէնէ երեք հոգի ազատեր էին, թէ այս ազատուողներն էին Կրէնդ նաւապետն և իր մարդերէն երկու հոգի և թէ ապաւէն գտեր են ցամաքի մը վրայ որու լայնութիւնը թղթին վրայ նշանակուած էր, բայց երկայնութիւնն ծովուն ջրէն աւրուելով ընթեռնլի չէր ։

«Այս լայնութիւնն էր 37° 11' հարաւային ։ Արդ երկայնութիւնն անծանօթ լինելուն՝ եթէ այն երեսուն եօթներորդ զուգա-

հեռականը բռնելով երկթային ցամաքէ ու ծովէ անցնելով՝ անտարակոյս Կրէնդ նաւապետին և իր երկու նաւորդներուն բնակած երկիրը պիտի հասնէին.

«Անկլիացի կառավարութիւնն այս խուզարկութիւնն ընելու վարանելով՝ Լորտ Կլէնարվան միտքը դրաւ ամեն փորձ ընել նաւապետը գտնելու համար։ Մարի և Ռօպէրդ Կրէնդ իրեն հետ յարաբերութիւն հաստատեցին։ Տօնքան շոգենաւն հեռաւոր ուղևորութիւն մ'ընելու համար կազմուեցաւ, որու մասնակից գտնուիլ ուզեցին Լորտին ընտանիքն և նաւապետին զաւակները, և Տօնքանը Կլասքոյէն ելնելով՝ դէպ 'ի Ատլանտեան ծով դիմեց, Մակէլանի նեղուցէն անցաւ և Խաղաղականին ճամբով մինչև Բադակոնիա ելաւ, ուր, թղթին առաջին մէկ մեկնութեան համեմատ, կարելի էր ենթադրել որ Կրէնդ նաւապետը բնիկներուն ձեռքը գերի էր։

«Տօնքան իր ճամբորդները Բադակոնիոյ արևմտեան եզերքը հանելէն ետև՝ ճամբայ ելաւ նորէն որպէս զի արևելեան եզերքը բռնէ մինչև Կորիէնդէսի գլուխը։

«Լորտ Կլէնարվան Բադակոնիայէն անցաւ, երսուն եօթներորդ զուգահեռականին հետևելով, և նաւապետին հետքը չգտնելով նորէն նաւ մտաւ նոյեմբերի 13ին որպէս զի իր խուզարկութիւնները շարունակէ Ովկիանոսին մէջ։

«Ագոնհայի և Ամսթերտամի Տրիստան կղզիներն անօգուտ տեղը պտըտելէն ետև՝ Տօնքան, ինչպէս արդէն ըսի, Պէռնոյլի գլուխը հասաւ աւստրալիական եզերքին վրայ՝ 1854 դեկտեմբեր 20ին։

«Կլէնարվանի միտքը Աւստրալիոյ մէջէն անցնիլ էր, ինչպէս որ Ամերիկայէն անցեր էր, ուստի այն տեղ ելաւ։ Ծովեզրէն քանի մը մղոն հեռու ագարակ մը կար, որ Իռլանտացիի մ'էր։ Այս Իռլանտացին Լորտը հիւրընկալեց։ Կլէնարվան Իռլանտացիին հարցուց թէ ինչ պատճառներով այն կողմերն եկեր էր, և անոր հարցուց թէ արդեօք տեղեկութիւն ունի՞ Բրիթանիա անուն անկլիական եռակայմ նաւու մը վրայ, որ գրեթէ երկու տարիէ 'ի վեր կորսուած պիտի ըլլայ Աւստրալիոյ արևմտեան եզերքը։

«Իռլանտացին այս նաւաբեկութեան մասին բնաւ տեղեկութիւն

չունէր. բայց ներկայ գտնուողները շատ զարմացան երբ տեսան որ Իռլանտացւոյն սպասաւորներէն մին խօսքի խառնուելով ըսաւ.

«— Տէր իմ, զԱստուած գովէ ու անոր շնորհակալ եղիր։ Եթէ Կրէնդ նաւապետը դեռ կենդանի է, աւստրալիական հողին վրայ կենդանի է։

«— Ո՞վ ես դու, հարցուց անոր Լորտ Կլէնարվան։

«— Ձեզի պէս Սկովտացի մը, տէր իմ, պատասխանեց այս մարդը, և ես Կրէնդ նաւապետին սպասաւորներէն մին եմ, Բրիթանիոյ նաւաբեկներէն մին։»

«Այս մարդն Էյրդօն կը կոչուէր։ Ու իրօք՝ Բրիթանիա նաւուն նաւաստապետն էր, ինչպէս որ իր թղթերը կը վկայէին։ Բայց այն միջոցին որ անոր նաւը ժայռերուն դէմ կը խորտակուէր, կարծեր էր թէ մինչև այն ատեն նաւապետն իր բոլոր նաւազովը բոլորովին կորսուեր էր, և թէ ինք, Էյրդօն, Բրիթանիոյ նաւաբեկութենէ մնացողներէն մին էր։

«— Միայն, ըսաւ նա, Բրիթանիան չէ թէ Աւստրալիոյ արևմտեան այլ արևելեան եզերքը կորսուեցաւ. և եթէ Կրէնդ նաւապետը տակաւին կենդանի է, ինչպէս որ կ'յայտնէ իր թուղթը, աւստրալիացի բնիկներուն ձեռքը գերի մնացած է, և հետևապէս պէտք է միւս եզերքին վրայ փնտռել։»

«Այս մարդն այսպէս խօսելու ատեն, անկեղծ ձայն և անվրդով ակնարկ մ'ունէր։ Կարելի չէր կասկածիլ իր խօսքին վրայ։ Իռլանտացին, որ մէկ տարիէ աւելի իր ծառայութեան տակ էր զինք՝ պատասխանատու էր անոր։ Լորտ Կլէնարվան այս մարդուն անկեղծութեան հաւատաց և, անոր խորհրդոյ հետևելով, միտքը դրաւ Աւստրալիոյ մէջէն անցնիլ երսուն եօթներորդ զուգահեռականը բռնելով։ Լորտ Կլէնարվան, իր կինը, երկու տղաք, դնդապետը, Փրանսացին, Մէնկլէս նաւապետը և քանի մը նաւաստիներ ուղևոր խումբը պիտի կազմէին Էյրդօնի առաջնորդութեամբ, մինչդեռ Տօնքան, երկրորդ նաւապետ Թոմ Օստէնին հրամանին ներքև՝ Մէլպուրն պիտի երթար և այն տեղ Լորտ Կլէնարվանի հրամանին սպասէր։

«Ուստի Ճամբայ ելան 1854 դեկտեմբերի 23ին։

«Ամենն է ըսել որ այս Էյրթօն դաւաճան մ'էր։ Իրօք Բրիտանիոյ նաւաստապետն էր, բայց իր նաւապետին հետ վէճի բռնուելուն՝ փորձ մ'ըրեր էր նաւաստին ապստամբութեան գրգռելու եւ նաւին տիրելու, եւ Կրէնդ նաւապետն Աւստրալիոյ արեւմտեան եզերքին վրայ զանի ցամաքը հաներ էր 1852 ապրիլի 8ին, եւ ապա մեկներ էր զանի այն տեղ թողլով, եւ արդարութիւնն այսպէս կ'պահանջէր։

«Այսպէս՝ այս թշուառ մարդը բան մը չգիտէր Բրիտանիա նաւուն բեկումեան վրայ։ Միայն Կլէնարվան լորտին պատմածէն նոր իմացեր էր։ Իր լքումէն 'ի վեր՝ Պէն Ճօյսէ անուամբ փախստական ոճրագործներու պարագլուխն եղեր էր. եւ եթէ լրբօրէն պնդեց որ նաւաբեկութիւնն արեւելեան ծովեզերքին վրայ տեղի ունեցեր էր, եթէ լորտ Կլէնարվանը յորդորեց որ այն կողմը փնտռէ, պատճառն այս էր որ կ'յուսար զինք իր նաւէն զատել, Տընքանը գրաւել և զայն Խաղաղականին ծովահէն մէկ նաւը դարձընել։»

Այս տեղ անծանօթը պահ մ'ընդհատեց խօսքը։ Իր ձայնը կը դողար, բայց այս ձեւով շարունակեց.

«Այն պզտիկ խումբը Ճամբայ ելաւ եւ աւստրալիական երկիրներուն անցաւ։ Բնապէս գժբաղդ եղաւ այս արշաւանքն, վասն զի Էյրթօն կամ Պէն Ճօյսէ, ինչպէս որ կ'ուզէք ըսէք, զանի կ'առաջնորդէր երբեմն առջեւէն, երբեմն իր ոճրագործներն ետեւէն գալով, որ արդէն իմացեր էին իրենց ընելիք գործը։

«Սակայն Տընքան Մէլպուռն ղրկուած էր որպէս զի նորոգուի։ Ուրեմն կ'մնար որ լորտ Կլէնարվան որոշէր հրամայելու անոր որ Մէլպուռնէն ելնէ եւ Աւստրալիոյ արեւմտեան կողմը դառնայ, ուր դիւրին պիտի լինէր գրաւել։ Այս արշաւանը ծովեզրին բաւական մօտ առաջնորդելէն ետեւ՝ ընդարձակ անտառներու մէջ ուր ամեն պաշար կ'պակսէր, Էյրթօն նամակ մ'առաւ. Տընքանի երկրորդ նաւապետին զայն տանելու գործը ստանձներ էր, և այս գրով հրաման կ'տար նաւին որ անմիջապէս արեւելեան եզերքը հասնի,

Թուֆօլտի խորշը, այսինքն արշաւանքին մնացած տեղէն քանի մը մղոն հեռու։ Ահա այն տեղ ժամադիր եղեր էր Էյրթօն իր ընկերներուն հետ։

«Այն միջոցին որ նամակն անոր պիտի յանձնուէր, դաւաճանը դիմակը վար առաւ եւ բանէ մը վախ չունեցաւ։ Բայց այս նամակն որով նաւուն պիտի տիրանար՝ պէտք էր որ և է կերպով ձեռք ձգել։ Էյրթօն զանի ձեռք ձգելու յաջողեցաւ եւ երկու օր ետք Մէլպուռն կ'հասնէր։

«Այն տեղն յանցաւորն իր գլուխի խօսքերով յաջողեր էր։

«Տընքանը Թուֆօլտ ծովախորշը տանելու պիտի յաջողէր, ծովախորշ մ'որ դիւրին պիտի լինէր փախստական ոճրագործներուն զայն գրաւել եւ թէ իր նաւազը՝ Պէն Ճօյսէ ջարդելով ծովերու տէրը պիտի դառնար։

«Երբ Էյրթօն Մէլպուռն հասաւ, նամակը երկրորդ նաւապետին յանձնեց որմէ պէտք եղածն իմանալով Ճամբայ ելնելու համար առագաստներն իջեցուց։ Բայց ընթերցողը կարող է Էյրթօնի յուսահատութիւնն ու բարկութիւնը երեւակայել, երբ, հետեւեալ օրն, իմացաւ որ երկրորդ նաւապետը նաւը չէ թէ Աւստրալիոյ արեւմտեան կողմը Թուֆօլտի խորշը կ'ուղէր տանիլ՝ այլ Նոր-Զելանտայի արեւելեան կողմը։ Էյրթօն ուզեց դէմ կենալ, Օսթէն ցոյց տուաւ անոր նամակը....։

«Եւ արդարեւ՝ Փրանսայի աշխարհագրին մէկ նախախնամական սխալմամբ, Նոր-Զելանտայի արեւելեան կողմն այնպէս ցոյց տրուած էր որպէս թէ այն տեղ պիտի հասնէր։

«Էյրթօնի ամեն յատակագիծները պարապ ելեր էին։ Գլուխ քաշել ուզեց. զինք բանտարկեցին։ Ուստի Նոր-Զելանտայի խոբերը տարուեցաւ, եւ չէր գիտեր ալ թէ ինչ պիտի լինէին իր դաւակիցներն եւ ինչ եղեր էր լորտ Կլէնարվան։

«Տընքան այս ծովեզրին կողմերը կ'երթեւեկէր մինչեւ մարտի 3ը։ Նոյն օրն Էյրթօն որոտումներ լսեց։ Թնդանօթներու պայթումներ էին որ Տընքանէն կ'արձակուէին, և քիչ ատենէն, լորտ Կլէնարվան ու իրեններն նաւը հասան։

«Աւասիկ պատահածը.

«Հազար տեսակ նեղութիւն ու վտանգ կրելէն ետեւ՝ լորտ Կլէնարվան իր ուղեւորութիւնը կրցեր էր աւարտել և Աւստրալիոյ արեւելեան ծովեզրը հասնիլ, Դուֆոլտի ծովածոցին վրայ։ Անդ Տընքան շոգենաւը չկար։ Իսկոյն հեռագիր քաշեց Մէլպուրն։ Այս պատասխանը առաւ. «Տընքան մեկնած է ներկայ ամսոյս 15էն 'ի վեր անյայտ նպատակի մը համար։»

«Լորտ Կլէնարվանի մաքէն ուրիշ բան չանցաւ բայց եթէ պատուական շոգենաւը Պէն Ջօյսէի ձեռքն ընկած և ծովահէններու նաւ մը դարձած էր։

«Սակայն լորտ Կլէնարվան չուզեց իր դիտաւորութենէ ետ կենալ։ Անվեհեր ու վեհանձն մարդ մ'էր։ Վաճառականի մը նաւը հեծաւ, Նոր-Զելանտայի արեւմտեան եզերքը գնաց, երսուն եօթներորդ զուգահեռականէն անցաւ, առանց Կրէնդ նաւապետին հետքը նշմարելու։ Բայց զարմանալով և անշուշտ երկնից շնորհիւ՝ միւս եզերքին կողմը՝ Տընքանը վերստին գտաւ, նաւապետին հրամանին տակ, որ հինգ շաբաթէ 'ի վեր իրեն կ'սպասէր։

«1855 մարտի 3ն էր։ Ուստի լորտ Կլէնարվան Տընքանի մէջն էր, բայց Էյրդօն ալ անդ էր։ Լորտն իր առջեւ հանել տուաւ զանի և ջանաց Կրէնդ նաւապետին վրայ ինչ որ գիտէր աւազակն, իմանալ։ Էյրդօն չուզեց խօսիլ։

«Այն ատեն լորտ Կլէնարվան ըսաւ անոր որ առաջին անգամ նաւը ցամաք հասնելուն՝ զինք անկլիական իշխանութեան ձեռքը պիտի յանձնէ։ Էյրդօն համր մնաց։

«Տընքան երսուն եօթներորդ զուգահեռականին ճամբան բռնեց։ Սակայն՝ Տիկին Կլէնարվան աւազակին դիմադրութիւնը զսպելու ձեռնարկեց։ Վերջապէս իր ազդեցութիւնը յաղթանակը տարաւ, և Էյրդօն՝ իր ըսելիքին փոխարէն, լորտ Կլէնարվանի առաջարկեց որ Խաղաղական ովկիանոսին մէկ կղզւոյն մէջ թողու զինք՝ փոխանակ անկլիական կառավարութեան յանձնելու։

«Լորտ Կլէնարվան, Կրէնդ նաւապետին վերաբերեալ ամեն

բան իմանալու որոշած ըլլալով հաւանեցաւ։ Այն ատեն Էյրդօն պատմեց իր կեանքը և հաստատեց որ Պէն՝ Կրէնդ նաւապետին վրայ բան մը չգիտէր այն օրէն 'ի վեր որ զինք Աւստրալիոյ հողին վրայ ձգեր էր։

«Սակայն՝ լորտ Կլէնարվան տուած խօսքը բռնեց։ Տընքան իր ճամբան շարունակելով Թաբոր կղզին հասաւ։ Էյրդօն այն տեղ պիտի ձգուէր, և ճշմարիտ հրաշքով մը նոյն վայրը գտնուեցաւ Կրէնդ նաւապետն և իր երկու մարդիկը, ճիշտ այն երսուն եօթներորդ զուգահեռականին վրայ։ Ուստի յանցապարտն անոնց տեղը պիտի մնար այն անապատ կղզւոյն վրայ, և լորտ Կլէնարվան այս խօսքերն ըսաւ միջոցին որ Պէն՝ նաւէն կ'ելնէր.

«— Այս տեղ, Էյրդօն, ամեն ցամաքէ հեռու պիտի մնաս և որ և է հաղորդակցութիւն պիտի չունենաս մարդոց հետ։ Չես կարող խոյս տալ այս կղզեկէն ուր Տընքանը քեզ կ'թողու։ Միայնակ պիտի մնաս Աստուծոյ մ'աչքին ներքեւ որ սրտերու խորը կ'կարդայ, բայց ոչ կորսուած և ոչ անյայտ պիտի մնաս ինչպէս որ մնաց Կրէնդ նաւապետը։ Որչափ որ անարժան ես մարդոց յիշողութեան, դարձեալ մարդիկ քեզ պիտի յիշեն։ Գիտեմ ուր կ'գտնուիս, Էյրդօն, և գիտեմ թէ ուր գտնել պէտք է քեզ։ Երբէք զայն չպիտի մոռնամ։»

«Եւ Տընքան պատրաստուելով ճամբայ ելաւ և շուտ մ'անհետ եղաւ։

«1855 մարտ ամսուն 18ն էր։

«Էյրդօն մինակ էր բայց ոչ մթերք, ոչ զէնք, ոչ գործիք և ոչ ցորեն չէին պակսեր անոր համար։ Այս դատապարտին ձեռքին տակն էր Կրէնդ նաւապետին շինած տունը։ Միայն առանձին պիտի ապրէր և մենաւորութեան մէջ պիտի քաւէր իր գործած յանցանքը։

«Պարոններ, Պէն զղջաց, իր յանցանաց վրայ ամօթահար մնաց և շատ թշուառ եղաւ։ Ըսաւ ինքն իրեն որ եթէ մարդիկ օր մը գային զինքն այն կղզեկէն փնտռէին, պէտք էր որ անոնց ընկերութեան մէջ մտնելու արժանի ըլլար։ Որչափ տա-

ռասպանք քաշեց այս թշուառը, ինչպէս աշխատեցաւ որպէս զի աշխատութեամբ վերածնի, ինչպէս աղօթեց որպէս զի աղօթքի միջոցաւ վերանորոգուի ։

«Երկու, երեք տարուան միջոցին այսպէս անցաւ. բայց Էյրթոն մենաւորութենէ վհատած, միշտ նայելով որ արդեօք կղզիին հորիզոնին վրայ նաւ մը չերեւի՞ր երեւէր, հարցնելով իւրովի թէ արդեօք քաւութեան ժամանակը քիչ ատենէն պիտի չյադրի՞, անշուշտ սաստապանք կ'քաշէր։ Ա՜հ, որչափ ծանր է այս առանձնութիւնը հոգւոյ մը համար որ խղճի խայթը կ'կրծէ ։

«Բայց անտարակոյս երկինք զինք բաւական պատժած չէր գտներ, վասն զի քիչ քիչ զգաց որ վայրենի կ'դառնայ։ Զգաց որ քիչ քիչ անբանութիւնը զինք կ'գրաւէ. չկրնար ըսել թէ երկու երեք տարի լքուած մնալէն ետքն էր, բայց վերջապէս ձեր գտած թշուառ անձն եղաւ ։

«Պէտք չունիմ ըսելու, պարոններ, որ Էյրթոն, Պէն Ճոյս և ես մի և նոյն անձինքն ենք։»

Կիւրոս Սմիթ ու իր ընկերներն այս պատմութեան վերջերը ոտք ելեր էին։ Դժուարին է ըսել թէ ինչ աստիճան յուզուած էին այսքան թշուառութիւն, վիշտ և յուսահատութիւն իրենց առջև տեսնելով ։

«Էյրթոն, ըսաւ այն ատեն Կիւրոս Սմիթ, մեծ յանցապարտ մ'եղեր ես դու. բայց սաստիկ քաւեր ես այդ ոճիրներդ և երկին ներած պիտի լինի քեզ. ինչպէս որ ցոյց տուաւ քեզ մեր մէջ բերելով։ Էյրթոն, ներողութիւն գտած ես, և հիմակ կ'ուզե՞ս մեր ընկերը լինիլ։»

Էյրթոն ետ ետ քաշուեր էր։

«Ահասիկ ձեռքս» ըսաւ հափազէտը։

Էյրթոն այս ձեռքին վրայ ընկաւ և իր աչերէն խոշոր արտասուքներ վազեցան։

«Կ'ուզե՞ս մեզի հետ ապրիլ, հարցուց Կիւրոս Սմիթ։

— Պարոն Սմիթ, թողէք զիս քիչ մ'ատեն ևս, պատասխանեց Էյրթոն, թողէք զիս առանձին այս գոմի բնակարանիս մէջ։

— Ինչպէս որ կ'ուզես, Էյրթոն» պատասխանեց Կիւրոս Սմիթ։

Էյրթոն քաշուելու վրայ էր, երբ հափազէտը վերջին հարցում մ'ալ ուղղեց անոր.

«Խօսք մ'ալ ունիմ, բարեկամ։ Որովհետև միտքդ առանձին ապրիլ էր, ինչու համար ծովը նետեցիր այն թուղթը որ քու հետքդ գտնելու մեզի գրգիռ տուաւ։

— Թո՞ւղթ մը, պատասխանեց Էյրթոն, որ կարծես թէ չգիտէր թէ ինչ խնդրոյ վրայ իրեն կ'խօսին։

— Այո՛, այն թուղթն որ շիշի մը մէջ էր և այդ շիշը զոր գտանք մեզի Թափոր կղզւոյն դիրքը ճշդիւ կ'ներկայէր։»

Էյրթոն ձեռքը ճակտին վրայ դրաւ և խորհելէն ետև.

«Ես բնաւ թուղթ մը նետած չեմ ծովը, պատասխանեց նա։

— Երբե՛ք» գոչեց Փէնքրոֆ։

Եւ Էյրթոն ծռելով գունէն դուրս ելաւ և մեկնեցաւ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Խօսակցութիւն — Կիւրոս Սմիթ ու Գետէոն Սփիլէթ — Ջրհորներուն մէջ խորհուրդը — Ելեկտրական հեռագիրը — Թելեր — Ելեկտրական լար — Այբուբէն — Աղուոր եղանակ — Գաղութականութեան բարօրութիւնը — Լուսանկար — Ձիւնի մէջ արդիւնքը — Երկու տարի Լինքօլն կղզւոյն մէջ.

«Խե՜ղճ մարդ» ըսաւ Հարպէրթ, որ դէպ 'ի դուռը վազելով գիտեց որ Էյրթոն վերհանին չուանէն սահելով վար իջնելէն ետև՝ մութին աներևոյթ եղեր էր. և ապա դարձաւ։

«Նորէն պիտի գայ, ըսաւ Կիւրոս Սմիթ։

— Պարոն Սփիլէթ, գոչեց Փէնքրոֆ, պարմանք. ինչ կ'նշանակէ այս։ Ի՛նչ. միթէ Էյրթոն այս շիշը ծովը չէ՞ նետեր. ուրեմն ո՞վ նետեր է։»

Իրաւի, եթէ բնական հարցում մը կար ընելու, Բէնքրօֆի ըրած հարցումն էր։

«Այն նետած է, պատասխանեց Նապ․ միայն տարաբաղդ մարդն արդէն կիսովին խենթ էր։

— Այո՛, ըսաւ Հարպէրդ, ըրածը դրածը չգիտէր։

— Բարեկամներս, այդ կերպով միայն կարելի է բացատրել խնդիրը, պատասխանեց աշխուժիւ Կիւրոս Սմիթ. և հիմակ կը հասկընամ թէ ինչպէս Էյրդօն Թափօր կղզւոյն դիրքը ճշգրիւ ցոյց տուած է, քանի որ այս կղզին ձգուելէն առաջ՝ անցած դարձած դէպքերը նոյն գիրքն իրեն յայտներ են։

— Սակայն, դիտել տուաւ Բէնքրօֆ, եթէ արդէն անբան մը չէր երբ այս թուղթը կ'գրէր, և եթէ եօթ ութ տարիէ 'ի վեր ծովը նետեր է զայն, ինչպէս այս թուղթը խոնաւութենէ չէ աւրուեր։

— Ասկէ կ'իմացուի, պատասխանեց Կիւրոս Սմիթ, թէ Էյրդօն իր կարծածէն աւելի մօտ ժամանակներու մէջ իմացականութենէ զրկուած պիտի լինի։

— Այդպէս պէտք է լինի, պատասխանեց Բէնքրօֆ, ապա թէ ոչ բանը անբացատրելի պիտի մնար։

— Իրաւի, անբացատրելի պիտի մնար, պատասխանեց չափագէտը․ որ կարծես թէ չէր կամիր այս խօսակցութիւնն երկարել։

— Բայց միթէ Էյրդօն ճշմարտութիւնն ըսա՞ւ, հարցուց նաւաստին։

— Այո՛, պատասխանեց թղթակիցը։ Պատմած պատմութիւնն ամեն մասամբ ստոյգ է։ Շատ աղէկ կ'յիշեմ թէ լրագիրները ալ Կլէնարվանի ըրած փորձն ու ստացած արդիւնքը հրատարակեցին այն ատեն։

— Էյրդօն ճշմարտութիւնը խօսեցաւ, յարեց Կիւրոս Սմիթ, [illegible] մի՛ ունենար․ Բէնքրօֆ, վասն զի շատ անգութ էր այն [illegible]։ Մարդ ճշմարիտը կ'խօսի երբ այսպէս ինքզինքը կ'ամ[illegible]

[illegible] օր — դեկտեմբեր 21 — գաղթականներն առաւօտին

ճշեր էին, և սարահարթէն վեր մագլցելով Էյրդօնը չգտան անդ։ Էյրդօն գիշերով իր տնակը քաշուեր էր, և գաղթականները յարմար դատեցին չվրդովել զանի իրենց ներկայութեամբ։ Անշուշտ ինչ որ յորդորն ու քաջալերութիւնը չէին կրցած ընել, ժամանակը պիտի կատարէր։

Այն ատեն Հարպէրդ, Բէնքրօֆ և Նապ իրենց սովորական աշխատանքը նորէն սկսան։ Այն օրը՝ նոր աշխատութեանց պատճառաւ Կիւրոս Սմիթ ու թղթակիցը Կարկառներուն գործարանը գացին։

«Գիտե՞ս, սիրելիդ իմ Կիւրոս, ըսաւ Գեդէոն Սբիլէդ, որ այն շիշին նկատմամբ տուած բացատրութիւնդ զիս գո՛հ չըրաւ ամենեւին։ Ի՞նչպէս կարելի է հաւատալ որ այդ դժբաղդ մարդը գրած և ծովը նետած լինի այն թուղթը, առանց անոր յիշատակը մտքին մէջ պահած լինելու։

— Ու արդարեւ թուղթը ծովը նետողն այն չէ, սիրելիդ իմ Սբիլէդ։

— Ուրեմն, դեռ կ'հաւատաս․․․։

— Բանի մը չեմ հաւատար, բան մը չգիտեմ, պատասխանեց Կիւրոս Սմիթ, թղթակցին խօսքը կտրելով։ Բաւական կ'համարիմ մինչեւ այսօր ինձ անբացատրելի մնացած դիպաց կարգը դնել այս դիպուածն ալ։

— Իրաւի, Կիւրոս, ըսաւ Գեդէոն Սբիլէդ, այս բաներն անհաւատալի են։ Քու ազատումդ, աւազախին վրայ ձգուած սնտուկը, Թօփին արկածները, վերջապէս այս շիշը․․․․ միթէ այս հանելուկներուն գաղտնիքը չե՞պիտի գտնենք։

— Այո՛, պատասխանեց չափագէտն աշխուժիւ, այո՛, երբոր այս կղզւոյն մինչեւ գետնափոր խորերը խուզարկելու ելնենք։

— Կարելի է որ դիպուածն երեւան հանէ այս գաղտնիքը։

— Դիպուածը, Սբիլէդ։ Ես բնաւ դիպուածին չեմ հաւատար, և ոչ կ'հաւատամ գաղտնեաց այս աշխարհիս մէջ։ Պատճառ մը կայ այս տեղ անցած ամեն անմեկնելի բաներուն մէջ և այդ պատճառը պիտի գտնեմ։ Բայց առ այժմ դիտենք ու աշխատինք։»

Յունվար ամիսը հասաւ։ 1867 տարին էր որ կ'սկսէր։

Ամառուան աշխատանքն անխոնջ յառաջ տարին։ Հետեւեալ օրերը՝ Հարպէրդ ու Գեդէոն Սբիլէդ գումին կողմն երթալով կարող եղան ստուգելու որ Էյրդօն իրեն համար պատրաստուած բնակարանը մտեր հաստատուեր էր։ Իր խնամոյ յանձնուած բազմաթիւ տուարին հոգը կ'տանէր և այսպէս իր ընկերներն երկու երեք օրն անգամ մը գումին այցելութեան գալու յոգնութենէ կ'ազատէր։ Սակայն Էյրդօնն աւելի երկար ժամանակ առանձին չթողլու համար, գաղթականներն ստէպ անոր այցելութեան կը գային։

Զափայէտն ու Գեդէոն Սբիլէդ քանի մը կասկածներ ունենալով, կարեւոր էր որ կղզւոյն այս մասին վրայ հսկէին, և Էյրդօն պիտի փութար Քարեայ-Պալատին ընկերներուն հաղորդել եթէ դիպուած մը պատահէր։

Սակայն կարելի էր որ այդ դիպուածը յանկարծ հասնէր և պէտք լինէր անմիջապէս չափագիտին հաղորդել։ Լինքօլն կղզւոյն վերաբերող ամեն խորհրդաւոր խնդիր թողլով անգամ՝ կրնար ուրիշ պատահմունք տեղի ունենալ, և գաղթականներուն անմիջական գործակցութիւնը պահանջէր, ինչպէս եթէ օրինակի համար հեռուէն նաւ մ'երեւէր արեւմտեան կողմէ, նաւաբեկութիւն մը պատահէր, կարելի է ծովահէններ կղզին ելնէին և այլն։

Ուստի Կիւրոս Սմիթ միտքը դրաւ գումին ու Քարեայ-Պալատին մէջ անմիջական հաղորդակցութիւն մը հաստատել։

Յունվար ամսոյն 10ին իր խորհուրդն ընկերներուն հաղորդեց։

«Զարմանք, ի՞նչ կերպով գլուխ պիտի հանես այդ գործը. Պարոն Կիւրոս, հարցուց Բէնքրոֆ։ Արդեօք մ՞տք ունիս հեռագրական թել մը հաստատել։

— Ճիշդ այդ է միտքս, պատասխանեց չափագէտը։

— Ելեկտրակա՞ն, գոչեց Հարպէրդ։

— Ելեկտրական, պատասխանեց Կիւրոս Սմիթ։ Ելեկտրակոյտ մը (pile) շինելու համար ամեն տարրներն ունինք, և ամենէն դժուարին գործը երկաթէ թելեր քաշելն է, բայց կ'յուսամ որ կորզանի մը միջոցաւ կարող պիտի լինինք յաջողիլ։

— Լաւ ուրեմն, այսուհետեւ պիտի յուսամ նաեւ որ օր մ'երկաթուղիով պիտի ուղեւորինք։»

Ուստի աշխատելու սկսան, գործին ամենէն դժուարին մասը բռնելով, այսինքն թելերուն շինուիլը. վասն զի եթէ այս մասին չյաջողէին աւելորդ պիտի լինէր ելեկտրակոյտն և ուրիշ ելեկտրական պիտոյքը պատրաստել։

Ինչպէս որ յայտնի է՝ Լինքօլն կղզւոյն երկաթը պատուական տեսակէն էր, և հետեւապէս ձգտելու շատ ընդունակ։ Ամենէ առաջ Կիւրոս Սմիթ կորզան մը շինեց, այսինքն պողովատէ տախտակ մը, որու վրայ այլ և այլ մեծութեամբ կոնաձեւ ծակեր բացաւ, այնպէս որ պիտի կարող լինէր երկաթին հետզհետէ ուզած նրբութիւնը տալ։ Այս պողովատի կտորը մխելէն ետեւ՝ հողին մէջ ամրապէս հաստատուած անսասան կաղմուածքի մը վրայ մղուեցաւ, միայն քանի մը քայլ հեռու Մեծ-Ջրվէժէն, որու շարժիչ զօրութենէ չափագէտը նորէն օգուտ քաղել կ'ուզէր։

Ստուգիւ՝ այն տեղն էր բուրդ թափելու աղօրին. որ այն միջոցին չէր գործեր, բայց որու ծռած ծառը՝ չափազանց զօրութեամբ շարժելով, կրնար երկաթը ձգտելու ծառայել, իր բոլորտիքը բոլորուելով։

Շատ փափուկ եղաւ այս գործողութիւնն և մեծ խնամք պահանջեց։ Նախ երկաթէն երկայն ու բարակ բուներ շինեցին ուրու ծայրերը խարտոցով բարակցուցած էին, ապա կորզանին մեծ ծակէն անցուցին և աղօրիին շրջուն գերանին մէջ յա[illegible] քաշելով քսան հինգ երսուն ոտք երկայն թելեր փաթթեցին. [illegible] թելերը քակելով հետզհետէ աւելի մանր ծակերէ անցուցին։ Ի վերջէ՝ չափագէտը քառսունէն մինչեւ յիսուն ոտք երկայն թելեր շինեց զոր գլուխին էր կապել և այն հինգ մղոն հեռաւորութեամբ Ճամբուն վրայ տարածել, Ճամբայ՝ որ գումը Քարեայ-Պալատին շրջապատէն կ'զատէր։

Քանի մ'օր միայն բաւական եղաւ այս գործն 'ի կատար հանելու, և դարձեալ, երբոր մեքենան գործելու սկսաւ, Կիւրոս Սմիթ թող տուաւ որ իր ընկերները թելագործի պաշտօնը վարեն

և ինք ելեկտրակոյտը պատրաստելու զբաղեցաւ։ Պէտք էր մշտահաս ելեկտրակոյտ մ'ունենալ։

Արդէն յայտնի է որ արդի ելեկտրակոյտներուն տարերքը սովորաբար սրուակաւոր ածխէ (charbon de cornue), զինկէ և պղնձէ կ'բաղկանար։ Զափադէտը պղինձ չունէր բնաւ, թէև ամեն խուզարկութիւն ըրեր էր Լինքօլն կղզւոյն մէջ սակայն անոր հետքը չէր գտած, ուստի պէտք էր զանց ընել։ Սրուակաւոր ածուխը, այսինքն այն կարծր գրաքարը (graphite) որ կազի գործարանաց սրուակներուն մէջ կ'գտնուի քարածխին ջրածինը հանելէն ետև, կարող էր զայն արտադրել, բայց ասոր համար մասնաւոր գործիներ պատրաստել պէտք էր և այս ալ մեծ գործ մը պիտի լինէր։ Իսկ զինկին գալով, ընթերցողը կ'յիշէ որ Բեկորքի-Հրուանդանը գտնուած սնտուկին ներքին կողմն այս մետաղով պատած էր և այս մետաղն այս պարագայիս մէջ շատ օգտակար կերպով կարելի էր գործածել։

Կիւրոս Սմիթ՝ հասուն խորհրդածութենէ ետև՝ միտքը դրաւ խիստ պարզ ելեկտրակոյտ մը շինել, որ 1820ին Պէքրէլի հնարածին պիտի նմանէր և որու մէջ մի միայն զինկ գործածուած է։ Իսկ միւս նիւթերն, այս է բորակի թթու և անկալ, ունէր։

Ահաւասիկ ինչպէս շինուեցաւ այս ելեկտրակոյտն, որու արդիւնքը թթուին և անկալին իրարու վրայ ներգործելով յառաջ պիտի գար։

Բաւական ապակեայ եղջերաւոր սրուակներ շինուելով բորակի թթուով լեցուցին։ Զափադէտն անոնց բերանը գոցեց խիցով մ'որ ապակեայ խողովակէ մը կ'անցնէր, որու ստորին ծայրը գոցուած և թթուն մէջ դրուելու սահմանուած էր կաւէ խիցի մը միջոցաւ լաթով մը բռնուած։ Այն ատեն այս խողովակին վերին ծայրէն անկալի լուծոյթ մը (dissolution) թափեց զոր կանխաւ շիներ էր այլ և այլ տունկերու աճիւնացումը (incinération) և այս կերպով, թթուն ու անկալը կաւին մէջէն իրարու վրայ ներգործելու կարող եղան։

Այն ատեն Կիւրոս Սմիթ զինկէ երկու թիթեղ (lame) առաւ․

որոց մին բորակի թթուին մէջ մխեց, միւսը անկալի լուծոյթին մէջ։ Անմիջապէս հոսանք մը գոյացաւ, որ սրուակին թիթեղէն խողովակին թիթեղին գնաց և այս երկու թիթեղները մետաղեայ թելով մը կապուելով, խողովակին թիթեղը դրական բեւեռը դարձաւ և սրուակին մերժողական բեւեռը՝ բոլոր գործիքին։ Այսպէս իւրաքանչիւր սրուակ այնքան հոսանք արտադրեց, որ միանալով բաւական պիտի լինէին ելեկտրական հեռագրութեան ամեն երեւոյթները յառաջ բերել։

Այս եղաւ Կիւրոս Սմիթին շինած ճարտար ու շատ պարզ գործիքը, որով պիտի կարենար Քարեայ-Պալատին ու գոմին մէջ հեռագրական հաղորդակցութիւն մը հաստատել։

Փետրվարի 6ին էր որ գերանները տնկելու սկսան, որ ապակիէ կղզեակներ (isoloir) ունէր, և թելը վերցնելու սահմանուած էին, որ գոմին ճամբան պիտի ընթանար։ Քանի մ'օր ետք թելը դրուեցաւ, որ մէկ մանրերորդի մէջ հարիւր հազար քիլօմեդր արագութեան պատրաստ էր ելեկտրական հոսանքն արտադրել զոր երկիրը վերստին իր մեկնակէտին պիտի դարձնէր։

Երկու ելեկտրակոյտ շինուած էին, մին Քարեայ-Պալատին համար, միւսը գոմին համար, վասն զի եթէ գոմը Քարեայ-Պալատին հետ պիտի հաղորդակցէր, կրնար նաև օգտակար լինել որ Քարեայ-Պալատը գոմին հետ հաղորդակցէր։

Իսկ ընդունարանն ու յայտարարիչը շատ պարզ եղան։ Երկու կայարաններու մէջ թելը ելեկտրա-մագնիսի մը վրայ կ'փաթթուէր, այսինքն կակուղ երկաթի կտորի մը վրայ, որ թելով պատած էր։ Երբոր հաղորդակցութիւնը հաստատուէր երկու բեւեռին մէջ, հոսանքն՝ դրական բեւեռէն մեկնելով թելէն կ'անցնէր, ելեկտրա-մագնիսին կ'հասնէր, որ առ ժամանակ մը կ'մագնիսանար, և մերժողական բեւեռին կ'դառնար հողին վրայէն։ Եթէ հոսանքն արգիլուէր ելեկտրա-մագնիսն անմիջապէս իր մագնիսը կը կորսնէր։ Ուրեմն բաւական կ'լինէր երկաթէ թիթեղ մը դնել ելեկտրա-մագնիսին առջև, որ հոսանքին անցնելու ատեն քաշուելով, կ'իյնար՝ երբոր հոսանքը կ'ընդհատէր։ Երբոր այս թիթեղ

ղին շարժումն այսպէս դիւրութեամբ գտաւ, կարող եղաւ ժամա-ցոյցի տախտակի մը վրայ տեղ մը գտնել, որ շեղակի այբուբենի տառերը կ'կրէր, և այսպէս մէկ կայարանէն միւս կայարանը գրա-կցել։

Այս ամէն գործիքը փետրվարի 12ին կարգադրեցին։ Այն օրը Կիւրոս Սմիթ հոսանքը թելին վրայ թողլով, հարցուց հեռա-գրով թէ ամէն բան յաջո՞ղ էր գոմին մէջ, և քիչ մ'ետք Էյր-դոնէն բաւական գոհացուցիչ պատասխան մը ստացաւ։

Բէնքրոֆ ուրախութենէ կ'թռէր, և ամէն առտու ու իրիկուն գոմէն հեռագիր մը կ'քաշէր, որ երբէք առանց պատասխանի չէր մնար։

Այս հաղորդակցութեան կերպն երկու իրական օգուտ յառաջ բերաւ, նախ անով կարող էին Էյրդոնի ներկայութիւնը գոմին կողմերը ստուգել, երկրորդ ինք բոլորովին առանձնութեան մէջ չէր մնար։ Ասկէ զատ՝ շաբաթ չէր անցներ որ Կիւրոս Սմիթ չեր-թար չտեսնէր Էյրդոնն, և այս ալ ատեն ատեն Քարեայ–Պա-լատը կ'գար և այն տեղ միշտ լաւ ընդունելութիւն մը կ'գտնէր։

Այսպէս սովորական գործերով անցաւ գեղեցիկ եղանակը։ Գաղթականութեան ապրուստի միջոցներն օրէ օր կ'աւելնային, մանաւորապէս բանջարեղէնի և արմտեաց կողմէ, և Թափոր կղզիէն բերուած տունկերը կատարելապէս բուսեր ու արդիւնա-ւորեր էին։ Մեծ–Տեսքին սարահարթը խիստ ապահով շտեմարան մը կ'ընծայէր։

Ցորենի չորրորդ բերքը շատ առատ եղաւ, և ոչ ոք կ'մտա-ծէր համրելու թէ իրօք հունձքը չորս հարիւր երկիլիոն հատիկ ցորեն կ'պարունակէ՞ր։ Սակայն անգամ մը Բէնքրոֆ միտք ըրաւ փորձելու, բայց Կիւրոս Սմիթ անոր յայտնեց որ եթէ մէկ րո-պէի մէջ երեք հարիւր հատ ցորեն իսկ համրէր, այսինքն մէկ ժամու մէջ ինն հազար հատ, դարձեալ հազար հինգ հարիւր տարի պէտք էր իր գործողութիւնն աւարտելու. ուստի քաջ նա-ւորդն իր դիտաւորութենէ ետ կենալու բաւական զօրաւոր պատ-ճառ մ'ունէր։

Օդը շատ փառաւոր. ցերեկը տաքը սաստիկ էր, բայց իրիկու-նը ծովէն փչած քամին մթնոլորտին տաքը կ'մեղմէր և Քարեայ–Պալատին բնակիչներուն թարմ գիշերներ կ'բերէր։ Սակայն քա-նի մը փոթորիկներ պատահեցան, որ թէև երկար չտևեցին, բայց Լինքոլն կղզւոյն վրայ կարգէ դուրս ուժգնութեամբ կ'իջնէին։ Քանի մը ժամ՝ փայլակներն երկինքը կ'վառէին շարունակ և ո-րոտումն անդադար կ'գոռար։

Այն ատենները՝ պզտիկ գաղթականութիւնը շատ յաջող վի-ճակի մէջ էր. հաւնոցը կ'վխտային հաւերը, և անոր աւելորդով կ'կերակրուէին գաղթականները, վասն զի կարևոր էր հաւնոցին բնիկները չափաւոր թուով պահել։ Խոզերն արդէն խոճկորներ ունէին, և դիւրին է հասկընալ որ Նապ ու Բէնքրոֆ իրենց ժա-մանակին մէկ մեծ մասն անոնց խնամք տանելով կ'անցընէին։

Ցիւերն՝ որ երկու սիրուն անասուններ ծներ էին, շատ ան-գամ իբրև հեծանելի կ'ծառայէին Գեդէոն Սբիլէթի ու Հարպեր-թին, որ թղթակցին հսկողութեամբ պատուական ձիաւոր մը դար-ձեր էր, և երբեմն սայլերու ալ կ'լծէին այդ կենդանիները, թէ փայտ և քարածուխ Քարեայ–Պալատը փոխադրելու և թէ չա-փաւորին գործածած այլ և այլ հանածոյքը։

Նոյն ատենները՝ քանի քանի անգամ գաղթականները զննու-թիւն ընելու ելան և Խոր–Արևմուտքի անտառներուն ներսերը գա-ցին։ Խուզարկուներն առանց օդին բուռն ջերմութենէ վախնա-լու՝ կարող էին արշաւել այն կողմերը, վասն զի արևուն ճա-ռագայթները հազիւ կ'անցնէին իրենց գլխուն վերև գտնուած խիտ ոստերէն։ Այսպէս Մէրսիի ձախ եզերքը պտըտեցան, որ գոմէն մինչև Ջրվէժի գետին բերանը տանող ճամբան կ'շրջա-պատէր։

Բայց այս արշաւներուն ատեն՝ գաղթականները փոյթ տարին լաւ զինուած գնալու, վասն զի ստէպ շատ վայրենի ու կատաղի վարազներու կ'հանդիպէին, որոց դէմ պէտք էր քաջաբար կռուիլ։

Նոյն եղանակին մէջ՝ յովազներու դէմ ալ սոսկալի պատե-րազմ բացին։ Գեդէոն Սբիլէթ մասնաւոր ատելութեամբ մը վա-

ուած էր անոնց դէմ, և իր Հարպէրդ աշակերտն անոր աղէկ կ'օգնէր։ Որովհետև լաւ զինուած էին, այդ վայրի կենդանիներէն չէին վախնար երբոր հանդիպէին։

Հարպէրդի յանդգնութիւնը սքանչելի էր, իսկ Գետէոն Սբիլէդի պաղարիւնութիւնը զարմանալի։ Հետևապէս արդէն Քարեայ-Պալատին սրահը զարդարուն էր քանի չափ շքեղ մորթերէ, և եթէ այդ որսը շարունակուէր, յովազներու ցեղը կղզւոյն մէջ բոլորովին պիտի հատնէր, և որսորդներուն նպատակն ալ այս էր։

Չափագէտը քանի մ'անգամ այլ և այլ ըննութեանց մասնակից եղաւ երբոր իր ընկերները կղզւոյն անծանօթ կողմերն արշաւեցին և մանրակրկիտ ուշադրութեամբ դիտեցին։ Այս անգամ չէ թէ կենդանիներու այլ ուրիշ հետքեր կ'փնտռէին այս ընդարձակ անտառներուն մէջ, բայց բնաւ կասկածելի բան մը չերեւցաւ իրենց աչքին։ Ո՛չ Թօփ, ոչ Ժիւբ, որ իրենց կ'ընկերանային իրենց դիրքով չէին ցոյց տար որ այն կողմերը կարգէ դուրս բան մը լինի, և սակայն, քանի՛ քանի անգամ շունն հաջեց այն ջրհորին գլուխն, զոր չափագէտը քններ էր անօգուտ տեղը։

Այս ժամանակն էր որ Գետէոն Սբիլէդ Հարպէրդի օգնութեամբը կղզւոյն նկարագեղ մի շատ մասերը ծրագրեց լուսագրական գործիով որ սնտուկին մէջ գտնուեր էր և մինչև այն ժամանակ դեռ չէին գործածած։

Այս գործին, որ զօրաւոր հեռադիտակ (objectif) մ'ունէր, շատ կատարեալ էր։ Լուսագրական նկարի համար ամեն կարևոր նիւթեր կային, ինչպէս, կոլլոտիոն (collodion) ապակի թիթեղը պատրաստելու համար, բորակաթթու արծաթ (nitrate d'argent) զայն զգայնացընելու (sensibiliser) համար, ենթածծմբոյ աղիան (hyposulfate de soude), առնուած նկարը դրոշմելու համար, քլորաւոր աշակածին (chlorure d'ammonium), դրական փորձը տալու սահմանուած թուղթը թրջելու համար, քացախաթթու աղիան (acétate de soude) և քլորածոյ ոսկի այս վերջինը ներկելու համար։ Թուղթերն անգամ պատրաստ էին, բոլորովին քլորա-

ւոր, և շրջանակին մէջ դնելէն առաջ մերժողական փորձերու վրայ, բաւական էր քանի մը րոպէ զանոնք թրջել ջրով խառն բորակաթթու արծաթի մէջ։

Ուստի թղթակիցն ու իր օգնականը՝ քիչ ատենէն ճարտար լուսանկարիչներ եղան և բաւական աղէկ պաշտանկարներ շինեցին, ինչպէս կղզւոյն բոլոր մասերը, Մեծ-Տեսքին սարահարթէն առնելով, հորիզոնին վրայ Ֆրանքլէն լեռով, Մէրսիի բերանը, որ այնքան նկարագեղ շրջապատուած էր իր բարձր ժայռերով, բացատն ու գոմը, լեռներու առաջին խումբին կռթնած, Ճերանի-Գլխուն, Բեկորքի-Սարաւանդին բոլոր հետաքրքրական մասերը և այլն։

Լուսանկարիչներն կղզւոյն բոլոր բնակիչներուն պատկերներն ընելու չմոռցան, առանց մէկը դուրս ձգելու։

«Երթալով կ'շէննանք» կ'ըսէր Բէնքրոֆ։

Եւ նաւորդը կ'զմայլէր տեսնելով այնքան ճիշտ քաշուած նկարն որ Քարեայ-Պալատին պատերը կ'զարդարէր և այս պատկերին առջև յօժարակամ կ'կենար կ'նայէր ինչպէս որ կ'կենար երբեմն Պրոտվէյի ապակեայ մեծ խանութներուն առջև։

Բայց պէտք է ըսել որ ամենէն լաւ պատկերն անտարակոյս Ժիւբինն եղաւ. Ժիւբ աննկարագրելի ծանրութեամբ դիրք մը բռներ էր և խօսուն էր իր նկարը։

«Կարծես թէ հիմա՛կ երեսը պիտի ծամրկէ» կ'գոչէր Բէնքրոֆ։

Եւ եթէ վարպետ Ժիւբ գոհ չլինէր, ըսել է թէ շատ դժուարահաճ էր. բայց գոհ էր նա և զգայական դէմքով մ'իր կենդանագիրը կ'դիտէր որ թեթև ամբարտաւանութեան նշան մը կը յայտնէր։

Մարտ ամսուն հետ ամառուան ծանր տաքերը լմնցան։ Երբեմն անձրևոտ եղաւ օդը, բայց մթնոլորտը դեռ տաք էր։ Այս մարտ ամիսն, որ հիւսիսային լայնութեանց մէջ սեպտեմբեր ամսուն կ'համապատասխանէ, այնքան աղէկ չեղաւ, ինչպէս որ կը յուսային։ Թերևս կանխահաս ու խիստ ձմեռ մը կ'աւետէր։

Մինչև անգամ առաւօտ մ'այնպէս կարծեցին — 21ին — թէ

առաջին ձիներն սկսեր են երեւիլ ։ Եւ ստուգիւ՝ Հարպէրդ Քարեայ-Պալատին մէկ պատուհանն ելնելով, պոռաց .

«Տեսէ՛ք, կղզեակը ձիւնով ծածկուած է ։

— Այս միջոցիս ձի՛ւն» պատասխանեց Թղթակիցը, որ պատուհանին քովը կայներ էր ։

Խսկոյն իրենց ընկերներն ալ անոնց միացան, եւ միայն բան մը դիտելով ստուգեցին, այսինքն, ոչ միայն կղզեակն այլ բոլոր աւազափը՝ Քարեայ-Պալատին ստորոտը, սպիտակ խաւով մը ծածկուած էր՝ հողին վրայ միակերպ տարածուած ։

«Բուն իսկ ձի՛ւն է, ըսաւ Բէնքրոֆ ։

— Կամ անոր շատ կ'նմանի այս, պատասխանեց Նապ ։

— Բայց ջերմաչափը յիսունը ութ աստիճան կ'նշանակէ» դիտել տուաւ Գետէոն Սբիլէթ ։

Կիւրոս Սմիթ կ'դիտէր ձերմակ ծածկոյթին առանց վճիռ տալու, վասն զի չգիտէր թէ ինչպէս մեկնել պէտք էր այս երեւոյթը՝ տարւոյն այս եղանակին մէջ եւ այնպիսի բարեխառնութեան միջոցին ։

«Յատաման սանի ձիւնը, գոչեց Բէնքրոֆ, մեր տունկերը պիտի սառին ։»

Եւ նաւորդը վար իջնելու կ'պատրաստուէր, երբ Թեթեւաշարժ Թոփ իրմէ առաջ անցնելով մինչեւ գետինը սահեցաւ ։ Բայց Օրանն հազիւ թէ գետինը դրեր էր ոտքն՝ որ ձիւնի աՀագին խաւը վեր կ'ելնէր եւ օդին մէջ կ'ցրուէր այնքան անհամար խումբերու ձեւով որ քանի մը վայրկեան արեւուն լոյսը գոցուեցաւ ։

«Թռչուններ են» գոչեց Հարպէրդ ։

Իրօք ծովու թռչուններու երամներ էին՝ ձիւնափայլ սպիտակ փետուրներով ։ Կղզեկին ու ծովափին վրայ գագարեր էին բիւր ու բիւր հաւ եւ հեռուն աներեւոյթ եղան՝ գաղթականներն ապշածութեամբ թողլով՝ այնպէս որ կարծես թէ հանդիսատես էին հմայական գործարան տեսարանի մ'որ փոխուելով ամառը ձմրան յաջորդեր ։ Ճշմարտապէս այնքան յանկարծական եղեր էր փոփոխութիւնն, որ ոչ Թղթակիցն եւ ոչ պատանին չկրցան հատ մը վար զարնել եւ անոնց տեսակն իմանալ ։

Քանի մ'օր ետք, այս էր մարտի 26ին, երկու տարի պիտի լլնէր որ օդապար նաւաբեկները Լինքօլն կղզւոյն վրայ նետուած էին ։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Հայրենեաց յիշատակներ — Ապագայ յաջողութեանց յոյսեր — Կղզւոյն ափերուն վրայ ընդարձակութիւն մ'ընելու խորհուրդը — Ապրիլ 16ին չուռն — Օձային թերակղզին, ծովուն դէտը — Արեւմտեան եզերքին երկաթակուծները — Գէշ օդ — Գիշերը կ'հասնի — Նոր դէպուած .

Երկո՛ւ տարի, եւ երկու տարիէ 'ի վեր գաղթականներն իրենց նմաններուն հետ ընաւ յարաբերութիւն չէին ունեցած ։ Քաղաքակիրթ աշխարհէն լուր մը չունէին եւ այս կղզւոյն վրայ կորսուած էին, որպէս թէ արեւային աշխարհի աննշան աստղի մը մէջ նետուած լլնէին ։

Ի՛նչ կ'անցնէր այն միջոցին իրենց ընիկ երկրին մէջ ։ Հայրենեաց նկարը միշտ իրենց աչքին առջեւ կ'երեւէր, այն հայրենիքն որ քաղաքային պատերազմով պատառոտուած էր, այն միջոցին որ անկից հեռացեր էին, եւ ուր թերեւս՝ Հարաւայնոց ապստամբութեան պատճառաւ, դեռ արիւնը կ'վազէր ։ Իրենց համար մեծ վիշտ մ'էր այս, եւ շատ անգամ այս բաներուն վրայ կ'խօսակցէին, առանց երեւակայելու սակայն որ Հիւսիսայնոց դատը յաղթանակեր էր 'ի պատիւ ամերիկեան դաշնակցութեան ։

Այս երկու տարուան մէջ՝ կղզւոյն առջեւէն նաւ մ'անգամ չէր անցած եւ կամ առագաստ մ'անգամ չէր երեւցած ։ Յայտնի էր որ Լինքօլն կղզին ամեն բանուկ ճամբէ հեռու էր — ինչպէս որ աշխարհացոյց տախտակները կ'ցուցնէին սակայն — վասն զի նա-

ւահանգիստ չլինելուն՝ իր գիրքը (aiguade) պէտք էր որ ջուր առնելու փափաքող նաւերն իրեն կողմը յանկուցանէր։ Բայց կղզին շրջապատող ծովը միշտ անապատ էր, որչափ որ մարդուս աչքը կրնար տարածուիլ և գաղթականներն իրենց հայրենիքն երթալու համար ուրիշ կողմէ յոյս մը չունէին։

Սակայն փրկութեան յաջող պարագայ մը կար և ճիշդ այս պարագային վրայ վէճ բացին օր մ'երբ Քարեայ–Պալատին սրահին մէջ հաւաքուեր էին։ Արդարև՝ Ամերիկայի վրայ կ'դառնար խօսքը. բնիկ երկրին վրայ խօսեր էին և զայն վերստին տեսնելու յուսահատ էին։

«Իրաւ, լոկ միջոց մ'ունինք, ըսաւ Գեդէոն Սբիլէթ, միջոց մը միայն Լինքօլն կղզիէն ելնելու, այսինքն բաւական մեծկակ նաւ մը շինել այնպէս որ կարող լինի ծովուն դիմանալ քանի մը հարիւր մղոնի չափ։ Կ'երևի ինձ որ կարող ենք նաւ մը շինել, քանի որ նաւակ մը շինելու յաջողեցանք։

— Կարելի է Բոմոլու երթալ, յարեց Հարպերտ, քանի որ Թափոր կղզին գացինք։

— Չեմ ըսեր որ չենք կարող երթալ, պատասխանեց Բէնքրոֆ, որ միշտ առաջին ձայնն ունէր ծովային խնդիրներու մէջ, ո՛չ չեմ ըսեր, թէև բոլորովին նոյն բանը չէ մօտ ու հեռու տեղ երթալը։ Եթէ փոթորիկը մեր նաւակին սպառնայ Թափոր կղզին գնալու ատեն, գիտէինք որ նաւահանգիստն ոչ այս ոչ այն կողմը հեռու էր. սակայն հազար երկու հարիւր մղոն տեղ ուղևորիլը՝ բաւական երկար ճամբայ մ'է, և ամենէ մօտաւոր ցամաքը գէթ այսքան հեռաւորութիւն ունի։

— Սակայն, եթէ հարկը պահանջէ, Բէնքրոֆ, միթէ այդպիսի ուղևորութիւն մ'ընելու չը՞պիտի համարձակէիր, հարցուց թղթակիցը։

— Ինչ որ ուզէք պատրաստ եմ փորձելու, Պարոն Սբիլէթ, պատասխանեց նաւաստին, և քաջ գիտես որ վախցող մարդ չեմ։

— Դիտէ՛ նաև որ հիմակ մեր մէջ նաւաստի մ'աւելի ունինք, գիտել տուաւ Նապ։

— Ո՞վ է այն, հարցուց Բէնքրոֆ։

— Էյրթօն։

— Ճշմարիտ է, պատասխանեց Հարպերտ։

— Լաւ, ըսաւ թղթակիցը, միթէ կ'կարծե՞ս որ Էյրթօն մեկնելու պիտի մերժէր եթէ լորտ Կլէնարվանի նաւը Թափոր կղզին գար, երբոր տակաւին անոր մէջ կ'բնակէր։

— Կ'մոռնաք, բարեկամներս, ըսաւ այն ատեն Կիւրոս Սմիթ, որ Էյրթօն, իր բնակութեան վերջին տարիներն իր բանականութիւնը կորուսեր էր։ Բայց խնդիրն այդ չէ։ Նախ պէտք է գիտնալ թէ պիտի յուսանք սկովտիական նաւուն վերադարձին մեր փրկութեան համար։ Արդ՝ լորտ Կլէնարվան Էյրթօնի խօսք տուաւ որ գայ զինքը Թափոր կղզիէն առնու, երբոր անոր յանցանքը բաւական քաւուած համարի, և կարծեմ թէ պիտի վերադառնայ։

— Այո՛, ըսաւ թղթակիցը, և ես ալ կ'յարեմ որ քիչ ատենէն պիտի վերադառնայ, վասն զի ահա տասն երկու տարի կայ որ Էյրթօն Թափոր կղզին ձգուած էր։

— Է՛հ, պատասխանեց Բէնքրոֆ, ձեզի հետ ես ալ համամիտ եմ որ լորտը պիտի վերադառնայ և քիչ ատենէն իսկ։ Բայց ո՞ւր պիտի հանդիպի։ Թափոր կղզին և չէ թէ Լինքօլն կղզին։

— Այս անգամ ճշմարիտ է, պատասխանեց Հարպերտ, որ Լինքօլն կղզին աշխարհացոյց տախտակի վրայ նշանակուած չէ անգամ։

— Այսպէս, բարեկամներս, վրայ բերաւ չափագէտը, միթէ պէտք եղած զգուշութիւններն ընելու հարկ չկա՞յ որպէս զի մեր և Էյրթօնի ներկայութիւնը Թափոր կղզւոյն մէջ գիտցուի։

— Անտարակոյս, պատասխանեց թղթակիցը, և աւելի դիւրին բան չկայ բայց եթէ Կրէնդ նաւապետին և Էյրթօնի իբրև բնակութիւն ծառայող տնակին մէջ ազդարարութիւն մը թողուլ մեր կղզւոյն դիրքը նշանակող, և այդ ազդարարութիւնը լորտ Կլէնարվան կամ իր նաւազն անշուշտ պիտի գտնեն։

— Եւ իրաւ ցաւալի է, գիտել տուաւ նաւաստին, որ այս

զգուշութիւնն ընելու մոռցած լինինք երբոր առաջին անգամ Թափոր եկանք։

— Եւ ինչո՞ւ համար այդպիսի զգուշութիւն մ'ընէինք, պատասխանեց Հարպերտ։ Էյրթընի պատմութիւնը չգիտէինք. չէինք գիտեր որ օր մը պիտի գան զինքը փնտռելու, և երբ այդ պատմութեան տեղեկացանք, արդէն ձմեռն հասած էր և չէինք կարող Թափոր կղզին վերադառնալ։

— Այո՛, պատասխանեց Կիւրոս Սմիթ, շատ ուշ էր, և այդ ուղեւորութիւնը յաջորդ գարնան թողուլ պէտք է։

— Բայց եթէ սկովտիական նաւն մինչև այն ատեն վերադառնար, ըսաւ Բէնքրօֆ։

— Հաւանական չէ, պատասխանեց չափագէտը, վասն զի լորտ Կլէնարվան հեռաւոր ծովեր շրջելու համար ձմեռ ատեն Ճամբայ ելնելու չպիտի յանդգնի։ Կամ արդէն եկած է Թափոր կղզին Էյրթընի մեզի հետ գտնուելէն 'ի վեր, այսինքն հինգ ամսէ 'ի վեր, և մեկնած է, կամ շատ ուշ պիտի վերադառնայ և յարմար ժամանակ պիտի լինի, հոկտեմբերի առաջին գեղեցիկ օրերուն՝ Թափոր կղզին երթալ և այն տեղ ազդագիր մը թողուլ։

— Պէտք է խոստովանիլ, ըսաւ Նապ, որ մեծ դժբաղդութիւն մը պիտի լինի եթէ Տօնքան քանի մ'ամիս առաջ այս ծովերուն վրայ երեւցած լինի։

— Կարծեմ թէ այդպիսի բան մը չէ պատահած, պատասխանեց Կիւրոս Սմիթ, և երկինք փրկութեան ամենէ լաւ միջոցը մեզի զլացած չպիտի լինի։

— Կարծեմ թէ, դիտել տուաւ թղթակիցը, որ և է պարագայի մէջ ճար մը պիտի գտնենք երբ Թափոր կղզին դառնանք, վասն զի եթէ Սկովտիացիք վերադարձած են, 'ի հարկէ իրենց ուղեւորութեան մէկ քանի հետքը թողած պիտի լինին։

— Այդ ակներև է, պատասխանեց չափագէտը։ Այսպէս ուրեմն, բարեկամներս, քանի որ մեր հայրենիքը վերադառնալու համար մեզի միայն այդ միջոցը կ'մնայ, համբերութեամբ սպասենք, և եթէ այդ առիթը մեր ձեռքէն ելնէ, այն ատեն կ'նայինք թէ ինչ պէտք է ընել։

— Որ և է պարագայի մէջ, ըսաւ Բէնքրօֆ, յայտնի է որ եթէ Լինքօլն կղզին թողունք որ և է կերպով, պատճառը մեր անհանգստութիւնը չպիտի լինի։

— Ո՛չ, Բէնքրօֆ, պատասխանեց չափագէտը, պատճառն այս է որ հեռու ենք բոլորովին այն ամեն բաներէ զոր մարդ պարտաւոր է ամենէ աւելի սիրել, իր ընտանիքը, իր բարեկամներն, իր բնիկ երկիրը։

Խնդիրն այսպէս որոշուելէն ետև, պէտք չեղաւ բաւական մեծկակ նաւ մը շինութիւնն որպէս զի կամ արշիպեղագոսներն արշաւեն հիւսիսակողմն, կամ Նոր-Զելանտա՝ արեւմտեան դին, և գաղթականները սովորական աշխատանքն սկսան Քարեայ-Պալատին մէջ երրորդ ձմեռ մ'ալ անցընելու համար։

Սակայն որոշուեցաւ որ նաւակը գործածուի, դէշ օդերը չհասած, կղզւոյն բոլորտիքն ուղևորութիւն մ'ընելու։ Դեռ կղզւոյն բոլոր ափունքը չէին պտըտած, և գաղթականներն անկատար կերպով կ'ճանչէին արևմտեան ու հիւսիսային եզերքը, Զրվէժի գետին բերնէն մինչև Մանդիպուլի-Գլուխները, ինչպէս նաև այն նեղ նաւահանգիստն որ անոնց մէջ կ'փորուէր մինչև Շնաձկան կզակը։

Այս արշաւին խորհուրդը Բէնքրօֆ յառաջ քշեց, և Կիւրոս Սմիթ բոլորովին հաւանութիւնը տուաւ, վասն զի անձամբ տեսնել կ'ուզէր իր կալուածքին բոլոր այս մասը։

Այն ատեն օդը փոփոխական էր, բայց օդաչափը յանկարծական այլայլութիւններ չունենալուն՝ յուսալի էր որ բաւական յաջող հով մ'ելնէր։ Ճշդիւ՝ ապրիլ ամսուն առաջին շաբթուն՝ օդաչափը շատ իջնելէն ետև՝ վեր ելաւ, հովէ մ'որ սկսաւ փչել արևմտեան կողմէ և հինգ վեց օր տևեց. ապա՝ գործիքին ասեղն անշարժ մնաց երբ քսանը ինն և ինն տասներորդ ըթամատ բարձր հասաւ, և պարագաներն այս երկրաշրջութեան նպաստաւոր երևցան։

Որոշուեցաւ որ ապրիլ ամսուն 16ին ճամբայ ելնեն, և Պօնավէնդիւր՝ որ Օդապարիկի-Նաւահանգիստը խարիսխ ձգած էր

ուղեւորութեան մը համար պատրաստեցին, որ կրնար բաւական ատեն տեւել։

Կիւրոս Սմիթ այս ճամբորդութիւնն իմացուց Էյրթօնի եւ առաջարկեց որ իրենց հետ ուղեկցի. բայց Էյրթօն ցամաքը մնալու նախադաս սեպելով՝ որոշուեցաւ որ իր ընկերներուն բացակայութեան ատեն Քարեայ-Պալատը գայ նստի։ Վարպետ Ժիւբ անոր հետ պիտի մնար եւ բնաւ գանգատ մը չըրաւ։

Ապրիլի 16ին՝ առաւօտուն՝ բոլոր գաղթականներն՝ Թօփին ընկերակցութեամբ՝ նաւը մտան։ Հովը հարաւ-արեւմտեան կողմէ կ'փչէր, թեթեւ քամիի մը պէս, եւ Պօնատվէնթիւր ստիպուեցաւ շրջաններ ընել Օդապարիկի-նաւահանգստէն ելնելով, որպէս զի Սողունի-Հրուանդանին հասնի։ Կղզւոյն շրջապատն իննսուն մղոն լինելով՝ հարաւային կողմէ՝ նաւահանգստէն մինչեւ հրուանդանն քսան մղոնի չափ կար։ Հետեւապէս՝ հարկ կար այս քսան մղոնը ծովափին մօտէն կտրելու, վասն զի հովը սաստկանալու կ'սպառնար։

Հրուանդանին հասնելու համար գրեթէ բոլոր օրն անցուցին, վասն զի՝ նաւը նաւահանգստէն ելնելուն՝ միայն երկու ժամ տեղատուութիւն գտաւ եւ ընդ հակառակն՝ վեց ժամու չափ բարձր ծով զոր կտրել դժուարին եղաւ։ Ուստի երբոր հրուանդանին շրջանն ըրին գիշերն արդէն հասեր էր։

Այն ատեն Բէնքրոֆ առաջարկեց չափաւորին որ առագաստը սեղմելով՝ արագութիւնը նուազեցնեն եւ ճամբան շարունակեն։ Բայց Կիւրոս Սմիթ աւելի յարմար գտեց ցամաքէն քանի մը պարանաչափ հեռու երկաթ նետել, որպէս զի լոյս աչքով տեսնեն կղզւոյն այս մասը։ Նոյնպէս՝ քանի որ մանրամասն պիտի քննէին կղզւոյն բոլոր ծովեզրեայ մասերը, որոշեցին որ գիշերը չնաւարկեն եւ թէ՝ երբոր իրիկուն լինի՝ ցամաքի մօտ երկաթ նետեն՝ ամեն անգամ որ օդը ներէր։

Այսպէս հրուանդանին մօտ գիշերն երկաթի վրայ անցուց նաւը եւ մշուշին հետ հովը նուազելուն՝ լռութիւնն անվրդով մնաց։ Կարելի է որ ճամբորդները՝ բաց 'ի նաւաստիէն՝ այնքան հանգիստ չքնացան Պօնատվէնթիւրի մէջ, որչափ կրնային քնանալ իրենց Քարեայ-Պալատի սենեակներուն մէջ, բայց վերջապէս քնացան։

Հետեւեալ օրը՝ ապրիլի 17ին՝ Բէնքրոֆ առագաստ պարզեց առաւօտ կանուխ, եւ կարող եղաւ արեւմտեան ծովեզրը շատ մօտէն նաւարկել։

Գաղթականներն այս անտառուտ ու այնքան փառաւոր ծովափը գիտէին, քանի որ արդէն հետիոտն պտըտեր էին անոր սահմանը, եւ սակայն նորէն իրենց սքանչացում պատճառեց։ Կարելի եղածին չափ եզերքը կ'քերէին, նաւուն արագութիւնը չափաւորելով, որպէս զի կարող լինին ամեն բան դիտել, եւ ասդիս անդին ծփացող ծառերու կոճղերուն զարնելէն զգուշանալով։ Շատ անգամ ալ երկաթ նետեցին եւ Գեդէոն Սբիլէթ այս շքեղ ծովափին լուսանկար պատկերները քաշեց։

Կէսօրին մօտ՝ Պօնատվէնթիւր Քարավազի գետին բերանը հասեր էր։ Անդին՝ աջ ծովափին վրայ՝ ծառերը նորէն երեւան կ'ելնէին, բայց աւելի ցանցառ, եւ երեք մղոնի չափ հեռու՝ լեռին արեւմտեան առապարներուն մէջ՝ զատ զատ փունջեր կ'կազմէին, եւ նոյն լեռին ողը մինչեւ ծովեզրը կ'իջնէր։

Ի՛նչ զարմանալի հակապատկեր այս ծովեզրին հարաւային եւ հիւսիսային մասին մէջ։ Որչափ որ այն անտառուտ ու դալարաւէտ էր, նոյնչափ միւսը խոպան ու վայրենի էր։ Կարծես՝ ինչպէս որ քանի մ'երկիրներու մէջ կ'անուանին, «երկաթեայ ծովեզերք» էին, եւ իր անկանոն կերպն այնպէս ցոյց կ'տար որ երկրաբանական ժամանակներու դեռ եւս եռացող երկաթակուճին մէջ յանկարծական պաղում մ'առաջ եկած էր։ Սոսկալի տեսքով դէզ դէզ ժայռեր, որոնք պիտի զարհուրէին անշուշտ գաղթականներն՝ եթէ դիպուածը զիրենք կղզւոյն այս կողմը նետէր։

Երբոր Ֆրանքլէն լեռին դագաթն ելեր էին, այս ծովափին յետին ծայր շարագուշակ տեսքը չէին նկատած, վասն զի շատ բարձրէն կ'նայէին. բայց ծովուն կողմէն տեսնելով՝ այս ծովեզրեայ առապարներն այնպիսի այլանդակ տեսիլ մ'ունէին որ թեր-

Եւ նմանն աշխարհիս ուրիշ մէկ անկիւնը չգտնուիր ։ Պօնավէնդիւր այս ծովեզրին առջեւէն անցաւ կէս մղոնի չափ հեռուէն ։ Դիւրին եղաւ տեսնել որ ամեն չափու քարակոյտներէ բաղկացած էր այն, քսան ոտքէն մինչեւ երեք հարիւր ոտք բարձր ապառաժներով, որոց մէջ ամեն ձեւ կար, աշտարակի պէս գլանաձեւ, զանգակատան պէս հատուածակողմանի, կոթողներու պէս բրգային, եւ գործարանի ծխաններու պէս կոնաձեւ ։ Սառուցեալ ծովերու սառնալեռ մը (banquise) չէր կրնար ասկից աւելի վսեմ ու ահարկու տեսք մ'ունենալ իր խառն ու շփոթ դրից մէջ ։ Աստ կային կամուրջներ ժայռէ ժայռ ձգուած, անդ եկեղեցւոյ աղեղներու պէս դրուած կամարներ, որոց խորութիւնն աչք չէր կարող թափանցել. տեղ մը՝ լայն փորուածքներ, որոց գմբէթներն յիշատակային տեսիլ մը կ'ընծայէին, ուրիշ տեղ սայրասուր սլաքներու խումբեր կ'երեւէին, որոց նմանը կոթական մայր եկեղեցի մը բնաւ ներկայած չունի ։ Բնութեան ամեն քմահաճ անկանոնութիւններն, աւելի այլազան քան երեւակայութեան՝ այս գեղապանծ ծովեզրը կ'ծրագրէին եւ ութ ինն մղոն երկայնութեան վրայ կ'սարածուէին ։

Կիւրոս Սմիթ եւ իր ընկերներն ապշութեան չափ զարմանքով կ'նայէին ։ Սակայն՝ եթէ լուռ ու մունջ կ'մնային, Թօփ փոյթ չէր ըներ եւ այնպէս կ'հաչէր որ երկաթակուռ ամբարտակին հազարաւոր գանկիններ կ'կրկնէին իր հաչումները ։ Չափագէտը դիտեց իսկ որ այս հաչումներն այլանդակ բան մ'ունէին, նման այն հաչումներուն զոր շունը կ'արձակէր Քարեայ-Պալատին ջրհորին բերանը ։

«Մօտենանք ցամաքին» ըսաւ նա ։

Եւ Պօնավէնդիւրը կարելի եղածին չափ ծովափնեայ ժայռերուն մօտ քշեց ։ Թերեւս զննութեան արժանի քարայր մը կ'գտնուէր անդ ։ Բայց Կիւրոս Սմիթ չտեսաւ բան մը. ոչ քարանձաւ, ոչ փապար, որ էակի մ'իբրեւ պատսպարան ծառայէ, վասն զի ժայռերուն ստորոտն ջրերուն ծփանքէն կ'թրջուէր ։ Քիչ ատենէն Թօփի հաչումները դադրեցան, եւ նաւը գնաց ծովեզրէն քանի մը պա-

րանաչափ հեռու գիծք մը բռնեց ։ Կղզւոյն հիւսիս-արեւմտեան գլին, ծովափը տափակ ու աւազուտ երեւոյթ մը ներկայացուց ։ Քանի մը ցանցառ ծառեր ցած ու մօրուտ հողի մը վրայ կ'նկարուէին զոր գաղթականներն արդէն ընդնշմարեր էին, եւ միւս ամայի ծովափին հետ բուռն դիմապատկեր մ'ընծայելով՝ ջրային բիւրաւոր թռչուններ նոյն վայրին կենդանութիւն կ'տային ։

Իրկուան՝ Պօնավէնդիւրն երկաթ նետեց նեղ խորշի մը մէջ, որ կղզւոյն հիւսիսակողմը կ'գտնուէր, ցամաքի մօտ, այնքան խորունկ էին այն տեղ ջրերը ։ Գիշերը հանդարտ անցաւ, վասն զի քամին դադրեցաւ արեւուն յետին նշոյլներովն եւ նորէն սկսաւ փչել արշալոյսի առաջին նշոյլներուն հետ ։

Որովհետեւ դիւրին էր ցամաքն ելնել՝ նոյն առաւօտ՝ գաղթականութեան սովորական որսորդները, այսինքն Հարպէրդ ու Գեդէոն Սբիլէթ երկու ժամու չափ պտըտելու ելան եւ մի շատ բադեր եւ ջրակտցարներ բռնելով եկան ։ Թօփ հրաշքներ գործեր էր, եւ ոչ երէ մը կորսնցուց իր եռանդուն ճարպիկութեան շնորհիւ ։

Առաւօտեան ժամն ութին՝ Պօնավէնդիւր պատրաստուելով սըրնթաց կ'սահէր ծովուն վրայ հիւսիսային Մանդիպուլի-Գլուխն դիմելով, վասն զի հովն ետեւէն կ'փչէր եւ քամին սաստկանալու կը միտէր ։

«Սակայն, ըսաւ Պէնքրօֆ, չպիտի զարմանամ եթէ արեւմտեան կողմէ փոթորիկ մը բռնէ ։ Երէկ՝ խիստ կարմիր հորիզոնի մը վրայ արեւը մարը մտաւ եւ ահա այս առտու, «բարակ շերտեր» (des gueues de chat) կ'երեւին որ աղէկ օդ մը չեն գուշակեր ։»

Այս բարակ շերտերը սրածայր ամպեր էին՝ որ ցիր ու ցան կ'երեւէին զէնիթին վրայ եւ որու բարձրութիւնը ծովուն երեսէն երբեք հինգ հազար ոտքէն պակաս չէ ։ Կարծես թէ անոնք բամբակի նուրբ ու թեթեւ կտորներ էին, որոց ներկայութիւնը սովորաբար մօտալուտ վրդովումի մը կ'յայտնեն տարրներու մէջ ։

«Լաւ ուրեմն, ըսաւ Կիւրոս Սմիթ, մեր բոլոր առագաստները բանանք եւ Շանաձկան-Խորշն երթանք ապաւէն մը փնտռելու, կարծեմ թէ Պօնավէնդիւրն անդ ապահովութեան մէջ պիտի ըլլայ ։

— Կատարելապէս, պատասխանեց Բէնքրօֆ. և ասկէ զատ՝ հիւսիսային եզրն այնպիսի աւազակոյտներ ունի որ ուշադրութեան արժանի չեն։

— Շատ պիտի ախորժիմ, յարեց չափագէտը, ոչ միայն գիշերն այլ վաղուան օրն ալ անցընել այն ծովածոցին մէջ, որ ուշադրութեամբ քննուելու արժանի է։

— Կարծեմ թէ ուզենք չուզենք պիտի ստիպուինք այն տեղ ապաւինելու, պատասխանեց Բէնքրօֆ, վասն զի հորիզոնն երթալով սպառնալից կ'դառնայ արևմտեան կողմէ. նայեցէք ինչպէս կ'վատթարի։

— Բայց և այնպէս Մանդիպուլի-Գլուխը հասնելու համար յաջող հով ունինք, դիտել տուաւ թղթակիցը։

— Շատ յաջող, պատասխանեց նաւորդը. բայց ծովածոցը մտնելու համար՝ պէտք է շրջշրջիլ և կ'փափաքէի որ լոյս աչքով մտնեմ այն խորշը զոր չեմ ճանչեր։

— Խորշ ու ծովեզր որու մէջ անշուշտ խութեր կան, յարեց Հարպէրդ, եթէ Շանաձկան-Խորշին հարաւային եզրին վրայ մեր տեսածին համեմատ դատենք։

— Բէնքրօֆ, ըսաւ այն ատեն Կիւրոս Սմիթ, ինչ որ գիտես ըրէ, բոլորովին քեզի կ'վստահինք։

— Անհոգ եղիր, Պարոն Կիւրոս, պատասխանեց նաւորդը, առանց հարկի վտանգի չեմ դներ ինքզինքս։ Աւելի լաւ ունիմ որ դանակ մը զարնեն ինձ քան թէ ժայռի հարուած մ'իմ նաւուս։ Ժամը քանի՞ է։

— Տասը, պատասխանեց Գետէոն Սբիլէդ։

— Եւ որչափ ճամբայ ունինք ընելու մինչև հրուանդանը, Պարոն Կիւրոս։

— Գրեթէ տասն հինգ մղոն, պատասխանեց չափագէտը։

— Ուրեմն երկու ու կէս ժամու գործ է, ըսաւ նաւաստին, և հրուանդանին պիտի մօտենանք ժամը մէկին միջոցները։ Դժբաղդաբար նոյն պահուն ջրերը պիտի դառնան և ծովածոցին մէջ տեղատւութիւնը պիտի սկսի։ Ուստի կ'վախնամ որ ներս մտնելը դժուարանայ, մեզի դէմ ունենալով ծովն ու հովը։

— Նա մանաւանդ որ այսօր լուսնին լրումն ունինք, դիտել տուաւ Հարպէրդ, և ապրիլի այդ մակընթացութիւնները շատ զօրաւոր են։

— Լաւ ուրեմն, Բէնքրօֆ, հարցուց Կիւրոս Սմիթ, միթէ հրուանդանին ծայրը չե՞ս կարող երկաթ ձգել։

— Ցամաքի մօտ երկաթ ձգե՜լ, երբոր փոթորկի ալ վախ կայ, գոչեց նաւաստին. միթէ կարելի բա՞ն է։ Այդ ուրիշ բան չէ այլ կամովին ցամաքը նետուիլ։

— Ուրեմն ինչ պիտի ընես։

— Պիտի ջանամ ծովը մնալ մինչև երեկոյեան ժամը եօթը և եթէ մութը բոլորովին կոխէ, պիտի ստիպուիմ ծովախորշը մտնել, եթէ ոչ բոլոր գիշեր պիտի թափառինք ծովափէ ծովափն և վաղն արևն ելնելուն ներս պիտի մտնենք։

— Արդէն ըսի քեզի, Բէնքրօֆ, քեզի կ'վստահինք, գիտցածդ ըրէ, պատասխանեց Կիւրոս Սմիթ։

— Ա՜խ, ըրաւ Բէնքրօֆ, եթէ միայն փարոս մը գտնուէր այս ծովեզրին վրայ, նաւարկուներուն համար աւելի դիւրութիւն պիտի լինէր։

— Այո, պատասխանեց Հարպէրդ, և այս անգամ կամակատար չափագէտ մը չպիտի ունենանք որ մեզի համար կրակ մը վառէ նաւահանգիստը մտնելու համար։

— Լաւ, բուն խնդիրն ինչ է, գիտե՞ս, սիրելի Կիւրոս, ըսաւ Գետէոն Սբիլէդ, քեզ բնաւ շնորհակալ չեղանք. բայց, իրաւ, առանց այն կրակին, չպիտի կարենայինք հասնիլ....

— Կրակ մը... հարցուց Կիւրոս Սմիթ, թղթակցին այս խօսքէն զարմանալով։

— Ըսել կ'ուզենք, Պարոն Կիւրոս, պատասխանեց Բէնքրօֆ, որ Պոնաւէնդիւրի մէջ շփոթած էինք մեր վերադարձէն քանի մը ժամ առաջ և կղզիէն պիտի անցնէինք առանց հանդիպելու, եթէ հոկտեմբեր 19էն 20ի գիշերն կրակ չվառէիր՝ Քարեայ-Պալատին սարահարթին վրայ։

— Այո, այո... իրաւ է որ բարեպատեհ գաղափար մ'էր այդ, պատասխանեց չափագէտը։

— Եւ այս անգամ, յարեց նաւաստին, եթէ Էյրթօն այդ պաշտօնը չունենայ, ոչ ոք պիտի ընէ մեզի այդ ծառայութիւնը։
— Այո՛, ոչ ոք, պատասխանեց Կիւրոս Սմիթ։
Եւ քանի մը վայրկեան ետք՝ չափագէտը թղթակցին հետ նաւուն առաջն առանձին գտնուելով ծռեր և անոր ականջին կ'ըսէր.
«Եթէ աշխարհիս մէջ ստոյգ բան մը կայ, Սպիլէտ, այս է որ հոկտեմբերի 19էն 20ի գիշերն բնաւ կրակ չվառեցի ես, ոչ Քարեայ-Պալատին սարահարթին վրայ և ոչ կղզւոյն որ և է կողմը։»

ԳԼՈՒԽ Ի.

Գիշերը ծովու վրայ — Շնաձկան-Ծովածոցը — Մտերմական խօսակցութիւն — Ձմերուան համար պատրաստութիւններ — Գէշ եղանակի վաղահասութիւն — Սաստիկ ցուրտեր — Ներքին աշխատանք — Վեց ամիս ետք — Լուսանկարչական պատկեր — Անսպասելի դէպուած.

Բէնքրոֆի գուշակածին պէս պատահեցան գործերը, վասն զի իր նախազգացումներն 'ի դերև չէին ելներ։ Հովն սկսաւ աւելնալ, և մինչդեռ յաջող քամի մ'էր՝ փոթորկի դարձաւ, այսինքն մէկ ժամու մէջ քառասունէն քառասունը հինգ մղոնի* արագութիւն ստացաւ, և բաց ծովու մէջ նաւ մ'իր առագաստներն ու վերին կայմերը կ'իջեցընէր։ Արդ՝ որովհետև ժամը վեց էր երբ Պոնավէնդիւր ծովածոցէն քովընտի կ'ընթանար, և թէ այն միջոցին տեղատուութիւնն սկսեր էր, անկարելի եղաւ ներս մտնել։ Ուստի հարկ եղաւ բաց ծովը բռնել. վասն զի եթէ Բէնքրոֆ կամք ընէր անգամ՝ Մէրսիի բերանն իսկ հասնելու չպիտի յաջողէր։

*Շուրջ 106 քիլոմետր մէկ ժամու մէջ։

Ուստի մեծ կայմին վրայ կողմնակի առագաստը բանալէն ետև սպասեց՝ նաւուն գլուխը ցամաքին կողմը դարձընելով։
Բարեբաղդաբար՝ ծովը չափազանց չալեկոծեցաւ. ծովեզրէն ծածկուած լինելով թէև հովը սաստիկ էր։ Ուստի կոհակներուն հարուածներէն վախ չկար, որոնք պզտիկ նաւերու համար մեծ վտանգ մ'են։ Պոնավէնդիւր չպիտի շրջէր վասն զի յատակը խճով ծանրացած էր, սակայն նաւուն մէջ յորդ ջրեր վազելով կրնային զայն վտանգել, եթէ շրջանակի տախտակները չդիմանային։ Բէնքրոֆ՝ իբրև ճարտար նաւաստի՝ ամեն գիպուածի առաջն առաւ։ Ստուգիւ՝ յետին ծայր վստահութիւն ունէր իր նաւուն վրայ, բայց դարձեալ բաւական անձկութեամբ լուսնալուն կ'սպասէր։
Այն գիշեր առիթ չունեցան միասին խօսակցելու Կիւրոս Սմիթ ու Գեդէոն Սպիլէտ, և սակայն չափագիտին խօսքն զոր թղթակցին ականջին փսփսայ՝ կ'աժէր որ նորէն վիճաբանէին Լինքօլն կղզւոյն մէջ տիրած խորհրդաւոր ազդեցութեան վրայ։ Կրակն իրօք տեսեր էր։ Իր ընկերները, Հարպէրդ ու Բէնքրոֆ՝ իրեն պէս տեսեր էին զայն։ Այն մութ գիշերն նոյն կրակով կարող եղեր էին կղզւոյն դիրքն որոշել, և հաւաստի էին որ չափագիտին ձեռքը զայն վառած էր, և ասսիկ Կիւրոս Սմիթ բացէ 'ի բաց կը յայտնէր որ բնաւ կրակ վառած չէր։
Գեդէոն Սպիլէտ միտքը դրաւ այս գիպուածին վրայ նորէն խօսիլ, երբոր Պոնավէնդիւր վերադառնար և ստիպել Կիւրոս Սմիթն որ իր ընկերներուն ալ հաղորդէ այս այլանդակ իրողութիւնները։ Կարելի էր որ այն ժամանակ Լինքօլն կղզւոյն ամեն կողմերը կատարեալ խուզարկութիւն մ'ընելու ելնէին։
Ինչ որ է, նոյն իրկուն այն դեռ ևս անծանօթ ծովափներու վրայ որ խորշին անցքը կ'յօրինէին, կրակ մը չվառեցաւ, և նաւակը բոլոր գիշերը բաց ծովուն վրայ կենալու ստիպուեցաւ։
Երբ արևելեան հորիզոնին վրայ արշալուսոյ առաջին նշոյլներն արձակեցան, հովն որ թեթև մը նուազեր էր, բաւական իջաւ, և թոյլ տուաւ Բէնքրոֆի ծոցին նեղ մուտքէն աւելի դիւրութեամբ անցնելու։

Առաւօտեան ժամը եօթին՝ Պօնավէնդիւր Հիւսիսային Մանգիպուլի–Հրուանդանն երևելէն ետև, խոհեմութեամբ այն անցքէն կ՚մտնէր և անոր ջրերուն վրայ կ՚կենար, լավաներու այլանդակ շրջանակի մը մէջ ամփոփուած։

«Ահաւասիկ, ըսաւ Բէնքրօֆ, ծովու մը ծայրն որ կրնայ սքանչելի նաւահանգիստ մը դառնալ, ուր նաւատորմիղներ կարող են շրջիլ ամենայն դիւրութեամբ։

— Հետաքրքրականն այս է մանաւանդ, դիտել տուաւ Կիւրոս Սմիթ, որ խորշը լավաներու երկու հոսանքէ յօրինուած է՝ հրաբուխէն ելնելով, և հետզհետէ եռալով իրարու վրայ դիզուեր են։ Անկից կ՚երևի որ այս խորշն ամեն կողմէ պահպանուած է, և հաւատալի է որ, մինչև անգամ սաստիկ հովերու ատեն՝ ծովը լճակի մը պէս հանդարտ է։

— Անտարակոյս, ըսաւ նաւորդը, քանի որ ծովը ներս մտնելու համար այս նեղ անցքը միայն ունի երկու հրուանդաններուն մէջ փորուած, և դարձեալ հիւսիսային հրուանդանը հարաւայինը կ՚ծածկէ, այնպէս որ շատ դժուարին կ՚դարձնէ մրրկին մուտքը։ Իրաւի՝ մեր Պօնավէնդիւրը կրնայ բոլոր տարին անցընել այն տեղ առանց իսկ շարժելու իր երկաթներուն վրայ։

— Քիչ մը մեծ է իրեն համար, դիտել տուաւ թղթակիցը։

— Է՛հ, Պարոն Սբիլէդ, պատասխանեց նաւորդը, կ՚խոստովանիմ որ շատ մեծ է Պօնավէնդիւրին համար, բայց եթէ Միութեան նաւատորմիղները Խաղաղականին մէջ ապահով պատսպարանի մը պէտք ունին, կարծեմ թէ այս ծովածոցէն լաւագոյնը չպիտի գտնեն։

— Շնաձկան կոկորդին մէջն ենք, դիտել տուաւ այն ատեն Նապ, ծովածոցին ձևին ակնարկելով։

— Բոլորովին կոկորդին մէջ, իմ բարեսիրտ Նապ, պատասխանեց Հարպէրդ. բայց չես վախնար անշուշտ որ այդ կոկորդը բացուելով մեզ կլլէ, այնպէս չէ՞։

— Ո՛չ, Պարոն Հարպէրդ, պատասխանեց Նապ, և սակայն այս ծոցը շատ հաճելի չէ ինծի։ Չարագոյժ կերպարան մ՚ունի։

— Լաւ, գոչեց Բէնքրօֆ, ահաւասիկ Նապ որ իմ ծովածոցս վար կ՚զարնէ, այն միջոցին որ զայն Ամերիկայի նուիրելու կ՚մտածեմ։

— Բայց գոնէ ջրերը խորունկ են. հարցուց չափագէտը, վասն զի ինչ որ Պօնավէնդիւրին ողնափայտին բաւական է, մեր զրահաւոր նաւերուն ողնափայտին պիտի չբաւէ։

— Այդ դիւրին բան է ստուգել» պատասխանեց Բէնքրօֆ։

Եւ նաւաստին ծովաչափի տեղ ծառայող երկար չուան մը ծովին յատակն իջեցուց, որու ծայրն երկաթէ գունդ մը կապուած էր։ Այս չուանը գրեթէ քսուն գրկաչափ երկարութիւն ունէր և առանց գետինը գտնելու մինչև խորն իջաւ։

«Օ՛ն, ըրաւ Բէնքրօֆ, մեր զրահաւոր նաւերը կրնան այս տեղ գալ։ Չպիտի խրին։

— Արդարև՝ ըսաւ Կիւրոս Սմիթ, այս ծովածոցը ճշմարիտ անդունդ մ՚է, բայց կղզւոյն պլուտոնական ծագումն 'ի համար առնլով, զարմանալի չէ որ ծովուն յատակն այսպիսի խորութիւններ ունենայ։

— Կարծես թէ, ըսաւ Հարպէրդ, այս պատերը սեպաձև կտրուած են, և կ՚երևի ինձ որ անոնց ստորոտը յատակ չպիտի գտնէր Բէնքրօֆ՝ եթէ հինգ վեց անգամ աւելի երկար ծովաչափ մ՚ալ ունենար։

— Այդ ամենը ճիշդ է, ըսաւ այն ատեն թղթակիցը. բայց դիտել պիտի տամ Բէնքրօֆին որ իր նաւահանգստէն կարևոր բան մը կ՚պակսի։

— Ո՞ր բանը, Պարոն Սբիլէդ։

— Անցք մը, որ և է խրամ մ՚որով կարելի լինէր կղզւոյն ներքին կողմը մտնել։ Չեմ տեսներ տեղ մ՚որու վրայ կարելի լինի ոտք դնել։»

Եւ իրաւի՝ բարձր լավաներն՝ որ խիստ անկայուն էին, բոլոր ծովախորշին շրջապատին վրայ նաւամատոյցի յարմար տեղ մը չէին ընծայեր։ Անանցանելի պատուար մ՚էր այն, որ իր աւելի խոպան տեսքով Նորվէկիոյ սեպերը (fiord) կ՚յիշեցընէր։ Պօ-

Պօնավանթիւրն՝ դպչելու չափ այս բարձր ամբարտակները քերելով և ոչ իսկ բնական նաւամատոյց մը գտաւ որ նաւորդներուն դիւրութիւն տար նաւէն դուրս ելնելու։

Բէնքրոֆ մխիթարուեցաւ ըսելով թէ՝ ականի օգնութեամբ այդ ամբարտակը խորտակելու միջոց մը կրնան գտնել, երբոր պէտք ըլլէր, և որովհետև՝ իրօք բան մը չկար ընելու այս ծովախորշին մէջ, իր նաւը դէպ 'ի Նեղուցին ուղղեց և գրեթէ երեկոյեան ժամն երկուքին մօտ դուրս ելաւ։

«Ո՛ւֆ» ըրաւ Նապ, գոհունակութեան հառաչ մը հանելով։

Իրաւի այնպէս կ'երևէր որ բարեմիտ խափշիկն այն ահագին կզակին մէջ անհանգիստ էր։

Մանդիպուլի հրուանդանէն մինչև Մէրսիի բերանն հազիւ ութ մղոն հեռաւորութիւն կար։ Ուստի նաւուն քիթը դէպ 'ի Քաւբեայ-Պալառն ուղղեցին՝ և Պօնավանթիւր [illegible] մէկ մղոնի չափ ծովափին քովէն նաւարկեց։ Քիչ ատենէն լաւական ահագին ժայռերուն անկանոն աւազակոյտներ յաջորդեցին, որոց մէջ չափազանց այնքան զարմանալի կերպով գտնուեր էր և ծովային հարիւրաւոր թռչուններ այն կողմ կ'յաճախէին։

Ժամը չորսին մօտ՝ Բէնքրոֆ կղզւոյն ծայրը ձախ կողմը թողլով, ծովափէն զինք զատող ջրանցքը կ'մտնէր, և ժամը հինգին Պօնավանթիւրի ողնափայտը Մէրսիի բերանը կ'կենար ու երկաթ կ'նետէր։

Երեք օր կար որ գաղթականներն իրենց բնակարանէն հեռացեր էին։ Էյրդօն անոնց կ'սպասէր աւազափին վրայ, և վարպետ Ժիւբ զանոնք դիմաւորեց խնդագին՝ գոհութեան աղուոր խանչիւններ արձակելով։

Այսպէս կղզւոյն կատարեալ զննութիւնը լմնցեր էր և խուզարկուները կասկածելի հետք մը չգտան բնաւ։ Եթէ խորհրդաւոր էակ մ'այն տեղ կ'բնակէր, այդ էակն ուրիշ տեղ չէր կրնար ըլլալ բայց եթէ. Օձապատոյտ-Թերակղզւոյն անթափանցելի անտառներուն ծածկոցին տակ, այն վայրն ուր դեռ գաղթականներն իրենց զննութիւնները չէին ըրած։

Գեդէոն Սբիլէդ այս բաներուն վրայ խօսեցաւ չափազէտին հետ, և որոշեցին որ իրենց ընկերներուն ուշադրութիւնը հրաւիրեն քանի մ'այլանդակ դիպուածներու բնութեան վրայ, որոնք կղզւոյն մէջ պատահած էին, և որոց վերջինն ամենէ անլուծանելի խնդիրներէն մին էր։

Այսպէս Կիւրոս Սմիթ՝ գալով այն իրողութեան թէ ծովափին վրայ անծանօթ ձեռք մը կրակ վառեր էր, քսան անգամի չափ հարցուց թղթակցին.

«Բայց միթէ ստո՞յգ էք թէ լաւ տեսաք։ Միթէ հրաբուխին մասնաւոր մէկ ժայթքումէ յառաջ եկած օդերևոյթ մը չէ՞ր։

— Ո՛չ, Կիւրոս Սմիթ, պատասխանեց թղթակիցը. անտարակոյս մարդու ձեռօք վառուած կրակ մ'էր։ Դարձեալ Բէնքրոֆի ու Հարպէրդի հարցումներ ըրէ։ Անոնք ալ տեսան ինչպէս ես ալ տեսայ և իմ խօսքերս պիտի հաստատեն։»

Հետևապէս, քանի մ'օր ետք՝ ապրիլի 25ին իրկուան, այն միջոցին որ բոլոր գաղթականներն Մեծ-Ցեսքին սարահարթին վրայ գումարուեր էին, Կիւրոս Սմիթ խօսք առնելով ըսաւ.

«Բարեկամներս, պարտ կ'համարիմ ձեր ուշադրութիւնը հրաւիրել մի քանի իրողութեանց վրայ որ կղզւոյն մէջ անցան, և որոց նկատմամբ շատ գոհ պիտի լինիմ ձեր կարծիքը առնելու։ Այս իրողութիւնները կերպով մը գերբնային են...։

— Գերբնային, գոչեց նաւաստին բերնէն ծխախոտի ամպ մը հանելով։ Միթէ կարելի՞ է որ մեր կղզին գերբնային լինի։

— Ո՛չ, Բէնքրոֆ, բայց խորհրդաւոր է անտարակոյս, պատասխանեց չափազէտը, միայն թէ դու կարող լինիս մեզ բացատրել ինչ որ Սբիլէդ և ես մինչև այսօր չկրցանք հասկընալ։

— Խօսէ՛, Պարոն Կիւրոս, պատասխանեց նաւորդը։

— Լաւ ուրեմն, ըսաւ այն ատեն չափազէտը, կարող եղա՞ք հասկընալ թէ ինչպէս ծովեզրը նետուելէն ետև՝ կղզւոյն ներքին կողմը մէկ քառորդ մղոնի չափ հեռու գտնուեցայ, առանց գիտնալու թէ ինչպէս եղեր էր այս փոխադրութիւնը։

— Միայն թէ նուաղած լինելով... ըսաւ Բէնքրոֆ։

— Այդ հաւատալի չէ, պատասխանեց չափագէտը։ Բայց թո-ղունք այս կէտը։ Միթէ հասկըցա՞ք թէ ինչպէս Թօփ գտաւ ձեր ապաստարանը քարայրէն հինգ մղոն հեռու, ուր տեղ պառկեր էի։

— Շան բնազդը... պատասխանեց Հարպէրդ։

— Զարմանալի՛ բնազդ, դիտել տուաւ թղթակիցը, քանի որ, թէեւ այն գիշերն անձրեւն ու ծովը կատաղօրէն կ'ալեկոծէին, Թօփ Կարկառները հասաւ առանց թրջուելու եւ տղմի աղտ ունենալու։

— Անդինք, վրայ բերաւ չափագէտը։ Միթէ հասկըցա՞ք թէ ինչպէս մեր շունը լճակին ջուրէն այնպէս այլանդակ կերպով դուրս նետուեցաւ, փոկ-ձուկին հետ պայքարելէն ետեւ։

— Ո՛չ. շատ բան չհասկըցայ, կը խոստովանիմ, պատասխանեց Բէնքրօֆ, եւ նոյնպէս անհասկնալի մնաց թէ ինչպէս այս կեն-դանին կողէն վիրաւորուեր էր, վէրք մ'որ կարծես թէ հատու դանակով մը տրուեր էր։

— Դարձեալ անդինք, ըսաւ Կիւրոս Սմիթ. բարեկամներս, միթէ հասկըցա՞ք, ինչպէս մեր գտած կապարի գնդակը պեկա-րիի (վայրի խոզ) մարմնոյն մէջ մտեր էր, ինչպէս սնտուկը ծովափն ընկեր էր անվնաս, թէեւ նաւաբեկութեան հետքը չկար, ինչպէս թուղթը պարունակող շիշն այնպէս պատեհ ժամանակին մեր ձեռքը հասաւ, երբ առաջին անգամ ծովու վրայ կը նաւար-կէինք, ինչպէս մեր նաւակը, իր չուանը կտրելով Մէրսիի հո-սանքին հետ իջաւ եւ մեզի միացաւ ճիշտ այն միջոցին որ անկից պէտք ունէինք, ինչպէս կապիկներու արշաւանքէն ետք՝ ելնարանն այնքան դէպ ժամանակին վար նետուեցաւ Քարեայ-Պալատին բար-ձունքէն, ինչպէս, վերջապէս, այն յետկարն որու համար Էյրդօն կ'ըսէ թէ ինք գրած չէ, մեր ձեռքն ընկաւ։»

Կիւրոս Սմիթ՝ առանց պարագայ մը մոռնալու, մի առ մի ա-ռաջ բերեր էր կղզւոյն մէջ անցած իրողութիւնները։ Հարպէրդ, Բէնքրօֆ եւ Նապ իրարու երես նայեցան պատասխան մը չգտնե-լով, վասն զի այս դիպուածներն՝ այսպէս յաջորդաբար մէջ բե-րուելով, յետին ծայր զարմանք պատճառեցին։

«Հաւատս վկայ, ըսաւ վերջապէս Բէնքրօֆ, իրաւունք ունիս, Պարոն Կիւրոս, եւ դժուարին է այս բաները մեկնել։

— Լաւ ուրեմն, բարեկամներս, վրայ բերաւ Կիւրոս Սմիթ, վերջին իրողութիւն մ'ալ գալով առաջիններուն միացաւ, եւ միւ-սներուն չափ անհասկնալի է։

— Ի՞նչ է այդ, Պարոն Կիւրոս, հարցուց Հարպէրդ աշխուժիւ։

— Երբոր Թափոր կղզիէն վերադարձաք, Բէնքրօֆ, վրայ բե-րաւ չափագէտը, ըսիք որ Լինքօլն կղզւոյն վրայ կրակ մ'երե-ցաւ ձեզի։

— Իրօք երեցաւ, պատասխանեց նաւորդը։

— Եւ միթէ բոլորովին ստո՞յգ էք որ այդ կրակը տեսաք։

— Ինչպէս որ քեզ կը տեսնեմ։

— Դուն ալ տեսար, Հարպէրդ։

— Ա՛հ, Պարոն Կիւրոս, գոչեց Հարպէրդ, առաջին կարգի մեծութեամբ աստղի մը պէս կը փայլէր այն կրակը։

— Բայց միթէ աստղ մը չէ՞ր, հարցուց չափագէտը պնդելով։

— Ո՛չ, պատասխանեց Բէնքրօֆ, վասն զի երկին խոշոր ամ-պերով ծածկուած էր, եւ աստղ մը չէր կրնար անշուշտ այնքան վար հորիզոնին վրայ երեւիլ։ Բայց եթէ Սբիլէթ մեզի պէս դի-տեց զայն, կարող է հաստատել խօսքս։

— Կ'յաւելում, ըսաւ թղթակիցը, որ այդ կրակը շատ վառ-վռուն էր եւ ելեկտրական սաւանի մը պէս կը տարածուէր։

— Այո՛, այո՛, ճիշտ այդպէս... պատասխանեց Հարպէրդ, եւ անտարակոյս Քարեայ-Պալատին բարձանց վրայ դրուած էր։

— Լաւ ուրեմն, բարեկամներս, պատասխանեց Կիւրոս Սմիթ, այն հոկտեմբերի 19էն 20 լուսնալու գիշերը, ոչ Նապ, ոչ ես կրակ չվառեցինք ծովափին վրայ։

— Դուք կրա՛կ... գոչեց Բէնքրօֆ յետին ծայր զարմանալով, եւ չկրցաւ իր խօսքն անգամ աւարտել։

— Քարեայ-Պալատէն դուրս չելանք, պատասխանեց Կիւրոս Սմիթ, եւ եթէ ծովափին վրայ կրակ մ'երեցաւ, մեր ձեռքէն տարբեր ձեռք մը զայն վառած պիտի ըլլի։»

Պէնքրօֆ, Հարպէրթ և Գեդէոն Սփիլէթ բոլորովին ապշեր էին։ Անուրջ չէր իրենց տեսածն և Հոկտեմբերի 19էն 20ի գիշերն իրապէս կրակ մ'իրենց աչքին զարկած էր։

Այժմ, ստիպուեցան խոստովանելու որ գաղտնիք մը, խորհուրդ մը կար այս անմեկնելի դիպաց մէջ։ Անիմանալի զօրութիւն մը, որ յայտնապէս նպաստաւոր կ'երևէր գաղթականներուն, թէև իրենց հետաքրքրութիւնը սաստիկ կ'զայրացընէր, զգալի էր Լինքօլն կղզւոյն մէջ և կարծես թէ դիպուկ ժամանակին կ'պատահէր։ Արդեօք կղզւոյն ամենախոր ծակերուն մէջ թաքուն էակ մը կար. որ և է կերպով այս բանը երևան հանել պէտք էր։

Կիւրոս Սմիթ իր ընկերներուն յիշեցուց նաև Թօփի ու Ժիւբի տարօրինակ ընթացքը, երբոր կ'դեգերէին ջրհորին բերնին մօտ, որ Քարեայ-Պալատը ծովուն հետ հաղորդակցութեան մէջ կը դնէր, և ըսաւ անոնց որ այդ ջրհորն իջնելով քննեց բայց կասկածելի բան մը չէր գտեր։

Վերջապէս գաղթականներն այս խօսակցութենէ ետև եզրակացութեան մը հասան, հաստատապէս որոշելով կղզւոյն ամեն ծակը ծուկը կրկտել երբոր գարունը վերադառնար։

Բայց այս օրէն 'ի վեր կարծես թէ Պէնքրօֆ մտատանջ վիճակի մէջ ընկաւ։ Այս կղզին զոր իր անձնական կալուածքը կը համարէր, այնպէս երևցաւ որ ամբողջապէս իրենը չէր և թէ ուրիշ կալուածատէր մ'անորմէ մաս ունէր, և կամայ ակամայ անոր իշխանութեան ներքև կ'գտնուէր։ Նաւ և ինք այս անբացատրելի բաներու վրայ սաէպ կ'խօսակցէին, և երկուքնին ալ, 'ի բնէ հրաշալի բաներու հակամէտ, պատրաստ էին հաւատալու թէ Լինքօլն կղզին գերբնային զօրութեան մը կ'հնազանդէր։

Սակայն մայիս ամսուն հետ դէշ օդերն հասեր էին — հիւսիսային գօտիներու նոյեմբերի ամիսը — կ'երևէր թէ խիստ ու վաղահաս պիտի լինէր ձմեռը։ Ուստի ձմերելու համար պէտք եղած գործերն անյապաղ սկսան։

Սակայն գաղթականներն այս ձմեռն ընդունելու համար լաւ

պատրաստուած էին, որչափ որ խիստ լինէր։ Թաղեայ զգեստները պակաս չէին և արտիկներն, որ այն ատեն բազմաթիւ էին, այդ տաքուկ կերպասը շինելու համար պէտք եղած բուրդը մատակարարեր էին։

Աւելորդ է ըսել որ Էյրդօն այն հանգիստ զգեստներով հոգացուեր էր։ Կիւրոս Սմիթ առաջարկեց անոր որ ձմերուան եղանակն Քարեայ-Պալատը գայ անցընէ, ուր աւելի հանգիստ բնակարան կարող էր գտնել քան թէ գոմին մօտ, և Էյրդօն խօսք տուաւ գալու, երբոր գոմին վերջին գործերն աւարտէին։

Իրօք ապրիլ ամսուն կէսին Էյրդօն Քարեայ-Պալատը դարձաւ, և այն ատենէն 'ի վեր գաղթականներուն հետ անցուց իր կեանքը, ամեն պարագայի մէջ անոնց օգնելով, բայց միշտ տրտում ու հլու, իր ընկերակիցներուն զուարճութեանց մասնակից չէր լինէր։

Այս երրորդ ձմերուան մեծագոյն մասը գաղթականները Քարեայ-Պալատին մէջ փակուած մնացին։ Շատ սոսկալի փոթորիկներ ու մրրիկներ տեղի ունեցան, որոնք կարծես թէ ապառաժներն իրենց հիմունքէն կ'խախտէին։ Ծովուն ջրերը քիչ մնաց բոլոր կղզին պիտի ծածկէին, և անտարակոյս երկաթի վրայ որ և է նաւ այն կողմերն բոլորովին պիտի ընկղմէր։ Այս փոթորիկներուն ժամանակ երկու անգամ Մէրսի վտակն այնքան յորդեց որ գաղթականները վախցան թէ կամուրջները չկործանին, և աւազափին վրայ գտնուածներն ամրացընել հարկ եղաւ, որ ջրերուն ներքև անհետ կ'լինէին, երբոր ծովն եզերքին ներսի դին կը հասնէր։

Դիւրին է երևակայել որ այսպիսի մրրիկներ, որ թաթառներու կ'նմանէին, անձրևով և ձիւնով խառն, մեծ աւերմունք պատճառեցին Մեծ-Ցեպին սարահարթին վրայ։ Մանաւորապէս ջաղացքն ու հաւնոցը մեծ վնասներ կրեցին։ Գաղթականներն ստիպուեցան շտապաւ նորոգութիւններ ընել այն տեղ, եթէ ոչ հաւերը բոլորովին պիտի կորսուէին։

Այս փոթորկալի ժամանակներու պատճառաւ մի քանի զոյգ

յովազներ և քառաձեռն կենդանեաց խումբեր մինչև սարահարթին սահմանը գալու յանդգնեցան, և վախ կար որ ամենէ ճարպիկ ու ժպիրհներն՝ անօթութենէ ստիպեալ, գետակէն անցնելու չյաջողէին, որ, սակայն, երբոր սառէր, գիւղին ճամբայ մը կ՚ներկայացընէր։

Առանց անընդհատ հսկողութեան ամեն տունկերն ու ընտանի կենդանիներն անվրէպ պիտի ջնջուէին, և ստէպ հրացան կ՚քաշէին գաղթականներն որպէս զի այս վտանգաւոր այցելուները բաւական հեռու պահեն։ Ուստի գործ պակաս չեղաւ այս ձմրուան եղանակին մէջ, և՝ 'ի բաց առեալ արտաքին աշխատանքն, Քարեայ-Պալատին մէջ հազար տեսակ կարգի դրուելու գործեր պակաս չէին։

Նոյնպէս քանի մ՚անգամ յաջող որսորդութիւններ ըրին՝ ծանր ցրտերու ատեն՝ Տադորնի ընդարձակ ճահիճներուն մէջ։ Հարպէրդ ու Գեդէոն Սրիլէդ՝ Ժիւբին ու Թօփին օգնութեամբը, միշտ որս կ՚բռնէին այն բիւրաւոր բադերու, ջրակտցարներու, մրտիմներու ու եղտիւրիկներու մէջ։

Այս որսաշատ հողին մուտքը դիւրին էր, թէ Օդապարիկի-Նաւահանգստէն, Մէրսիի կամրջէն անցնելէն ետև, թէ Բեկորքի-Հրուանդանին ժայռերէն դառնալով, և որսորդները Քարեայ-Պալատէն երկու երեք մղոնէն աւելի հեռու չէին անցներ։

Այսպէս անցան ձմրուան չորս ամիսներն, որ իրօք ցրտաշունչ եղան, այսինքն յունիս, յուլիս, օգոստոս ու սեպտեմբեր ամիսները. բայց ընդհանրապէս Քարեայ-Պալատը ժամանակին խստութենէ շատ նեղութիւն չկրեց, ինչպէս նաև գոմը, որ սարահարթէն աւելի պատսպարուած և մեծ մասամբ Ֆրանքլէնի լեռնէն ծածկուած լինելուն, միայն հովին մէկ մասը կ՚ընդունէր՝ ծովեզրեայ անտառներէն և ժայռերէն արգիլուելուն։ Ուստի այնքան մեծ չեղան աւերմունքն և Եյրդօնի ճարպիկ ու ժիր ձեռքը բաւեց զանոնք շուտ մը նորոգելու, երբ՝ հոկտեմբերի վերջին տասնհինգ օրն գոմը գնաց քանի մ՚օր անցընելու։

Այս ձմրուան մէջ անբացատրելի դիպուած մը չպատահեցաւ։

Տարօրինակ իրողութիւն մը տեղի չունեցաւ, թէև Բէնքրօֆ ու Նապ արթուն կ՚դիտէին ամենէ աննշան բաներն որ խորհրդաւոր պատճառէ մը կրնար առաջ գալ։

Թօփ ու Ժիւբ ջրհորին բոլորտիքն ալ չէին դեգերէր և մտատանջութեան նշան մը չէին յայտներ։ Ուստի կ՚երևէր որ գերբնային դիպուածներու շարքն ընդհատեր էր, թէև Քարեայ-Պալատին մէջ երկար գիշերներ ստէպ կ՚խօսակցէին և հաստատ ուրոշեր էին կղզւոյն ամենէ դժուարին կողմերը խուզարկել։ Բայց կարգէ դուրս կարևոր դէպք մ՚որու հետևանքը կրնար աղէտալի դառնալ, ժամանակ մ՚արգիլեց որ Կիւրոս Սմիթ ու իր ընկերներն 'ի գործ դնեն իրենց խորհուրդներն։

Ընթերցողը կ՚յիշէ որ Գեդէոն Սրիլէդ ու Հարպէրդ մի քանի անգամ Լինքօլն կղզւոյն տեսարաններուն լուսագրական նկարներն առեր էին։

Արդ՝ հոկտեմբեր ամսուն 17ին՝ երեկոյեան ժամն երեքին մօտ՝ Հարպէրդ՝ երկնից յստակութենէ հրապուրուելով միտքը դրաւ Միութեան-Նաւահանգիստը նկարել, որ Մեծ-Տեսքին սարահարթին դիմացը կ՚իյնար, Մանդիպուլի-Գլխէն մինչև Ճիրանի-Գլուխը։

Հորիզոնն սքանչելի տեսիլ մ՚ունէր, և ծովը՝ թեթև քամիէ մը գեղածփալով հեռուէն լճակի մը ջրերուն անշարժութիւնը կը ներկայացընէր, ասդին անդին լուսաւոր գծերով։

Լուսանկար գործին Քարեայ-Պալատին մեծ սրահին մէկ պատուհանը դրուած էր, և հետևապէս աւազափին ու Նաւահանգիստին վրայ կ՚նայէր։ Հարպէրդ՝ ինչպէս որ սովոր էր՝ լուսանկարը քաշեց, և գնաց Քարեայ-Պալատին մէկ մութ սենեկին մէջ դրուած նիւթերով նկարը դրոշմել։

Երբոր լուսին դարձաւ Հարպէրդ սկսաւ քննել նկարն և անոր վրայ դիտեց գրեթէ աննշմարելի կէտ մ՚որ ծովուն հորիզոնը կ՚աւրատէր, փորձ փորձեց զայն սրբել նորէն լուալով, բայց չյաջողեցաւ։

«Ապակիին վրայ է այդ պակասութիւնը» մտածեց ինքնիրեն։

Եւ այն ատեն հետաքրքիր եղաւ այս պակասութիւնը քննել ոսպնակերպ ապակիով մը զոր հանեց գիտակներուն մէջէն ։

Բայց հազիւ թէ գիտեց զայն, որ աղաղակ մ'արձակեց այնպէս որ քիչ մնաց լուսանկարն իր ձեռքէն վար պիտի ընկնէր ։

Շուտ մը Կիւրոս Սմիթին զանուած սենեակը վազելով լուսանկարն ու ոսպնակերպ ապակին չափագիտին երկնցուց, պզտիկ բիծն անոր ցոյց տալով ։

Կիւրոս Սմիթ այդ կէտը քննեց, ապա իր հեռադիտակն առնելով, դէպ 'ի պատուհանը վազեց ։

Հեռադիտակն՝ հորիզոնին վրայ ծանր ծանր շարժելէն ետև՝ վերջապէս կասկածելի կէտին վրայ կեցաւ, և Կիւրոս Սմիթ, զայն վար առնելով՝ միայն այս բառն արտասանեց. «Նաւ» ։

Եւ իրաւ՛ հեռուն Լինքօլն կղզւոյն դիմացը նաւ մը կար ։

ՎԵՐՋ
ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ

ՑԱՆԿ ԳԼԽՈՑ
Բ. ՀԱՏՈՐԻ

ԳԼՈՒԽ	Երես
Ա. Կապարէ հատիկին վրայ — Մակոյկի մը շինութիւնը — Որսորդութիւններ — Կորիին կատարը — Մարդու ներկայութիւնը յայտնող բան մը չկայ — Նապի ու Հարպերթի մէկ յինորդութիւնը — Դարձած կրիայ — Անյայտ եղած կրիայ — Կիւրոս Սմիթին բացատրութիւնը	3
Բ. Մակոյկին առաջին փորձը — Բեկորք ծովեզերին վրայ — Բեկորքին ծայրը — Սնտուկին պարունակը — Գործիք, զէնք, գործիք, զգեստներ, գիրքեր, անօթներ — Բենքրոֆին պէտք եղածը — Աւետարանը — Սուրբ գիրքէն տուն մը.	16
Գ. Չուն — Ջուրը կ'բարձրանայ — Կնձիներ և լօտոսներ — Այլ և այլ տունկեր — Ցախսամար — Անտառին տեսքը — Հսկայական եւկալիպտոսներ — Ինչո՞ւ համար «տենդաբոյծ ծառեր» կ'անուանին — Կապիկներու երամակներ — Ջրավէժ — Գիշերուան համար օթեւան	24
Դ. Դէպ 'ի ծովեզերը քնալու ատեն — Կապիկներու քանի մը խումբեր — Նոր գետակ մը — Ինչո՞ւ համար ջուրը չէր ելներ — Իբրև եղերք՝ անտառ մը — Սողունի հրուանդանը — Գեդէոն Սպիլէտ Հարպերթի նախանձը կ'գրգռէ — Հնդկեղէգնի շչիւն	38
Ե. Հարաւային ծովափէն դառնալու առաջարկութիւն — Ծովեզերին ձևը — Կարծեցեալ նաւաբեկեալներու — Օդին	

ԳԼՈՒԽ — Երես

Մեքենիկոր մը — Բնական պզտիկ նաւահանգիստ մը կ'գտնուի — Սեւ փեղկերին Մերսի գետին եզրը — Նաւակ մ'որ կը շեղէ 49

Զ. Բէնքրօֆի աղաղակները — Կարկառներուն մէջ գիշեր մը — Հարպերթի Նէպը — Կիւրոս Սմիթին խորհուրդը — Անակնկալելի լուծում մը — Քարեայ-Պալատին մէջանցքը — Ի՞նչպէս նոր աղաւնատուր մը փոխադրականներուն ծառայութեան կ'մտնէ 62

Է. Գործադրելիք խորհուրդներ — Մերսիի վրայ կամուրջ մը — Մեծ-Տեսքին սարահարթը կղզի մը շինել — Շարժական կամուրջ — Ցորենի բերք — Գետակ — Պզտի կամուրջներ — Հաւնոց — Աղաւնոց — Երկու ճակ — Լծուած սայլակը — Օդապարիկի Նաւահանգիստ արշաւան մը . . 75

Ը. Ճերմակեղէն — Փոկի կաշիէ մուճակներ — Հրաճայթի շինութիւն — Այլ եւ այլ սերմանիք — Ձկնորսութիւն — Կրիայի հաւկիթներ — Վարպետ Ժիւփին յառաջդիմութիւնը — Գոմը — Արշաւներու որս — Բուսական եւ կենդանական նոր հարստութիւններ — Հեռաւոր հայրենեաց յիշատակներ 86

Թ. Վատ օդ — Ջրաբաշխական վերհան — Պատուհանի ապակի եւ բաժակներ կ'շինեն — Հացի ծառ — Գոմը ստէպ կ'այցելեն — Տաւարին լուանալը — Թղթակցին մէկ հարցումը — Լինքօլն կղզւոյն ճշգրիտ դիրքը — Բէնքրօֆի առաջարկութիւնը 98

Ժ. Նաւակին շինութիւնը — Ցորենի երկրորդ բերք — Քօալաներու որսը — Նոր տունկն աւելի ախորժելի քան օգտակար — Կէտ մը կ'տեսնուի — Վինյարտի երեքժանի — Կէտին ջարդը — Ձկնկուայի գործածութիւնը — Մայիս ամսուան վերջը — Բէնքրօֆ ալ փափաքելու բան չունի . . 110

ԺԱ. Ձմեռ — Բուրդ թաւել — Աղօրին — Բէնքրօֆի մէկ հաստատ փափաքը — Ձկնկաներն — Ի՞նչ բանի կրնայ ծառայել ալպատրոս մը — Աղացային այրելին — Թօփ ու Ժիւփ — Փոթորիկներ — Հաւնոցին մէջ աւերածներ —

ԳԼՈՒԽ — Երես

Ճահիճին կողմը արշաւան մը — Կիւրոս Սմիթ միայնակ — Ջրհորին քննութիւնը 122

ԺԲ. Նաւուն կազմակերպը — Աղուէսներու յարձակում մը — Ժիւփ կ'վիրաւորուի — Ժիւփ կ'խնամուի — Ժիւփ կ'բժշկուի — Նաւակին շինութիւնը կ'լմննայ — Բէնքրօֆի յաղթանակը — Պանամանդակ — Առաջին փորձ կղզւոյն հարաւակողմը — Անակնկալելի յետկոյթ մը 134

ԺԳ. Ձիւն կ'որոշուի — Ենթադրութիւններ — Պատրաստութիւններ — Երեք նաւորդներ — Առաջին գիշեր — Երկրորդ գիշեր — Թաբոր կղզին — Աւազուտին վրայ խուզարկութիւններ — Անտառներուն մէջ խուզարկութիւններ — Մարդ չկայ — Կենդանիներ — Տունկեր — Բնակարան մը — Ամայի 150

ԺԴ. Կահակիր — Գիշեր — Մի քանի նամակներ — Խուզարկութիւնները կ'շարունակուին — Տունկեր ու կենդանիներ — Հարպերթ մեծ վտանգի մը կ'հանդիպի — Նաւակին մէջ — Ձուն — Գէշ օդ — Բնազդի նշոյլ մը — Ծովու վրայ կորսուած — Պատեհ ժամուն վառուած կրակ մը . . . 161

ԺԵ. Վերադարձ — Վիճաբանութիւն — Կիւրոս Սմիթ եւ անծանօթը — Օդապարիկի-Նաւահանգիստը — Երրորդ բերքը — Հովաղաց աղօրի մը — Առաջին ալիւրն ու առաջին հացը — Զոհաբերին անձնուիրութիւնը — Սրտաշարժ փորձ մը — Քանի մ'արտասուք ալ կ'թափին 174

ԺԶ. Պարզուելու կարօտ փաստանք մը — Անծանօթին առաջին խօսքերը — Կղզեկին մէջ տասն երկու տարի — Ակամայ խոստովանութիւններ — Անհետացութիւն — Կիւրոս Սմիթի վստահութիւնը — Աղօրիի մը շինութիւնը — Առաջին հացը — Անձնուիրութեան գործ մը — Պարկեշտ ձեռքեր . . 184

ԺԷ. Միշտ հեռու կ'կենայ — Անծանօթին մէկ հարցումը — Գոմին մօտ շինուած ագարակը — Տասն երկու տարի կայ — ԲՐԻՏԱՆԻԱյի տէր նաւապետը — Թաբոր կղզին լքումը — Կիւրոս Սմիթին ձեռքը — Խորհրդաւոր յետկոյթը . . . 197

30 MAY 2013

ԳԼՈՒԽ Երես

ԺԸ. Խօսակցութիւն — Կիւրոս Սմիթ ու Գեդէոն Սբիլէթ — Զա-փոդերին մէկ խորհուրդը — Ելեկտրական հեռագիրը — Թելեր — Ելեկտրակոյտ — Այբուբէն — Աղուոր եղանակ — Գաղթականութեան բարօրութիւնը — Լուսանկար — Ձիւնի մէկ արդիւնքը — Երկու տարի Լինքօլն կղզւոյն մէջ. 209

ԺԹ. Հայրենեաց յիշատակներ — Ապագայ յաջող դիպուածներ — Կղզւոյն ափերուն վրայ քննութիւն ընելու խորհուրդը — Ապրիլ 16ին լուռ — Օձապտոյտ թերակղզին, ծովան-տեւը — Արևմտեան եզերքին երկաթակոյտները — Գեղ օր — Գիշերը կ'հանի — Նոր դիպուած 221

Ի. Գիշերը ծովու վրայ — Շահայլան-Ծովածոցը — Մահերմա-կան խօսակցութիւնք — Ձմրուան համար պատրաստու-թիւններ — Գեղ եղանակի վաղահասութիւն — Սառոյն ցուրտեր — Ներքին աշխատանք — Վեց ամսէ ետք — Լուսանկարչական պատկեր — Անակնկալելի դիպուած . 232

ՊԵՏ ՀԱՆ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0568590

46330